

**ԱՐՅԱԽՅԻ ԱՆՎԱՆԻ
ԳՈՐԾԻՉՆԵՐ**

**ՄԱՐՏԱԿԵՐՏԻ
ԵՐԶԱՆ**

ԳԻՐԲ Ե

9(47.925)

ՆԻ-48

ԱՐՅԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ԱՐՅԱԽՅԻ ԱՆՎԱՆԻ
ԳՈՐԾԻՉՆԵՐ**

**ՄԱՐՏԱԿԵՐՏԻ
ՆՐՁԱՆ**

ԳԻՐՔ II

6462

Կազմողներ՝

Դադայան Ս. Վ.

Միրզոյան Լ. Է.

Ավագիմյան Ն. Վ.

Ստեփանակերտ

2021



ՀՏԴ 929:94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ա 948

Աշխատանքը տրամադրված է
երաշխավորվել Արցախի գիտական
կենտրոնի գիտխորհրդի կողմից

Խմբագիր՝ Վ.Ռ.Բալայան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կազմողներ՝ Գաղայան Ս.Վ. (խմբի ղեկավար), Միրզոյան Լ.Է.,
Ավագիմյան Ն.Վ.,

Ա 948 Արցախցի անվանի գործիչներ: Մարտակերտի շրջան: Գիրք II,
Ստեփանակերտ, 2021, 248 էջ:

«Արցախցի անվանի գործիչներ» գրքի երկրորդ հատորը նվիրված է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանին: Գրքում տեղ են գտել Մարտակերտի շրջանում կամ այլ վայրում մարտակերտցու ընտանիքում ծնված հասարակական - քաղաքական կյանքի, գիտության, մշակույթի, սպորտի և այլ բնագավառների ճանաչված ներկայացուցիչներ, որոնք վայելել են հեղինակություն, արժանացել են Խորհրդային Միության, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի, Արցախի Հանրապետության և այլ երկրների բարձր կոչումների, մրցանակների և շքանշանների:

ՀՏԴ 929:94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN978-9939-1-1160-5

© Արցախի գիտական կենտրոն, 2021

ԳՐԱՐԱՆԻ ԿՐԻՍՏՈՒՄ

ՔՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից.....	4
Նախարանի փոխարեն.....	5
Անվանական ցանկ.....	7
Ցանկ շրջանի անվանի մարդկանց անունների, որոնց կենսագրական տվյալները գրքի հրատարակման պահին չի հաջողվել հավաքագրել	243
Օգտագործված գրականություն.....	246

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԵՑ

«Արցախցի անվանի գործիչներ» երկրորդ գիրքը նվիրված է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանին: Գրքում տեղ են գտել Մարտակերտի շրջանում կամ մարտակերտցու բնտանիքում ծնված հասարակական - քաղաքական կյանքի, գիտության, մշակույթի, սպորտի և այլ բնագավառների ճանաչված ներկայացուցիչներ, որոնք վայելել են հեղինակություն, արժանացել են Խորհրդային Միության, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի, ինչպես նաև Արցախի Հանրապետության բարձր կոչումների, մրցանակների և շքանշանների:

Գիրքը կազմողները ձգտել են ապահովել նյութի ամբողջականությունը, որը դժվարություն ներկայացնող խնդիր է, հատկապես Մարտակերտի շրջանի հետ կապված: Դա պայմանավորված է պատերազմական գործողություններով, ինչպես նաև համապատասխան աղբյուրների բացակայությամբ: Ուստի, դիմելով ընթերցողներին՝ գիրքը կազմողները խնդրում են բացթողումների դեպքում նյութը ներկայացնել Արցախի գիտական կենտրոն գրքի վերահրատարակման համար:

Նկատենք, որ հեղինակներին հաջողվել է ցույց տալ ինչպես հայ, այնպես էլ օտար ընթերցողներին, որ հայոց երկրի այդ հատվածում հազարամյակների ընթացքում ապրել են մարդիկ, որոնք հայրենանվեր մեծ գործ են կատարել և կարևոր դերակատարություն ունեցել համաշխարհային արժեքների ստեղծման գործում:

Նպատակահարմար է նմանատիպ գործերը թարգմանվեն նաև այլ լեզուներով:

Վ. ԲԱՆԱՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հարգելի ընթերցող, գիրքը որը Ձեր ձեռքում է, «Արցախցի անվանի գործիչներ» շարքից երկրորդն է: Այն նվիրված է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում ծնված անվանի գործիչներին: Գիրքը տպագրության է պատրաստվել Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատողների կողմից:

Մարտակերտի շրջանը տեղադրված է պատմական Ջրաբերդի, մասամբ, Խաչենի մելիքությունների տարածքում: Այն հարուստ է հնագույն ճարտարապետական կոթողներով: Այդ տարածքում տեղի են ունեցել ողջ հայության համար կարևոր պատմական իրադարձություններ: Այդ ամենը ստեղծել ու իրականացրել են կոնկրետ մարդիկ, որոնք հպարտ են, որ մի մասն են կազմում հարազատ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի: Մարտակերտի շրջանում ծնված մարդիկ պատմության ամբողջ ընթացքում եղել են հայության ազգային ազատագրական շարժման առաջին շարքերում: Նրանց թվում առկա են նույն գիտության, մշակույթի և նյութական արժեքների ստեղծողներ, անգուցական արտադրության կազմակերպիչներ: Այդ մարդկանց մասին հիշատակը վառ պահելը կարևոր է, հատկապես հիմա, երբ հայությունը 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կրեց իր ողբերգական տառապանքները Թուրքիա-Ադրբեջան դաշինքի կողմից սանձազերծած Արցախի դեմ պատերազմում, որի հետևանքով թշնամուն անցավ Մարտակերտի շրջանի որոշակի մասը: Պետք է նշել, որ Մարտակերտի շրջանը որչափ պատմության ընթացքում չի ունեցել ոչ մի աղբյուրային գյուղ: Որոշ գյուղերում բռնի բնակեցրել են աղբյուրայիններին: Սակայն արցախցին չի մերվել նրանց հետ ու միշտ պահել է ազգայինը: Ղարաբաղի, այդ թվում և Մարտակերտի շրջանի շատ զավակներ հայրենի եզերքից հեռու են արարել, որոնց անունները տարբեր պատճառներով հայտնի չէին հանրության լայն շրջանակներին: Բայց որտեղ էլ որ

նրանք արարել են, անջնջելի հետք են թողել որպես անվանի գործիչներ: Լինելով ԽՍՀՄ կոչվող մեծ երկրի համար ռազմական տեխնիկայի ստեղծողների առաջին շարքերում՝ նրանք չէին կարող պատկերացնել, որ նման երկիրն անգամ կարող է կործանվել: Իսկ Մայր հայրենիքը մեկն է, որի մարմինը թշնամու շար մտադրությամբ մասնատվեց, և աշխարհով մեկ ցրված դուստրերով ու որդիներով պայքարում է հայրենի օջախի վերածննդի գործին: Նրանք հպարտ են, որ արցախցի են: Իսկ մենք՝ ավելին, որ մեր երկրամասը նման անվանի մարդկանց ծննդավայրն է: Ազգի հարատևման ու գոյակցման բարոյական հիմքը եղել է և կմնա հիշողությունը (հիշատակը) հարազատ ժողովրդի պատմությունը կերտող մարդկանց նկատմամբ:

Նյութերի հավաքագրմանն օգնելու համար շնորհակալություն ենք հայտնում Մարտակերտի կենտրոնական գրադարանի տնօրեն Ի. Բաղրյանին, գրադարանավար Ռ. Միրզոյանին, Մեծ Շեն գյուղի համայնքապետ Դ. Անանյանին, համագյուղացիներ Վ. Յուզբաշյանին, Բ. Եսայանին, Մոխրաթաղ գյուղի բնակիչներ Ա. Մելքոնյանին, Վ. Ղահրամանյանին, Մադավուզ գյուղի դպրոցի տնօրեն Վ. Ավանեսյանին, Կուսապատ գյուղի բնակիչ Բ. Նալբանդյանին, բոլոր նրանց, ովքեր նպաստել են գրքի հրատարակմանը:

Ա Ղ Ա Մ Ա Ն Ա Ն

Արքայապետ Գրիգոր Գրիգորի 17
 Արքայապետ Վահրամ Գևորգի 17
 Աղանյան Աշոտ Փարավոնի 18
 Աղանյան Կառլեն Նիկոլայի 19
 Աղանյան Հայկազ Իսահակի 19
 Աղանյան Վաղիմ Մովսեսի 20
 Աղանյան Փարավոն Մեսրոպի 21
 Աղյան Լևոն Ռսկանի 22
 Ազարյան Ռոբերտ Նիկոլայի 23
 Աթաբեկյան Ալեքսանդր Մովսեսի 23
 Աթաբեկյան Անժելա Երվանդի 24
 Աթաբեկով Իոսիֆ Գրիգորի 25
 Աթաբեկյան Լևոն Նիկողայոսի 26
 Աթաբեկյան Հովսեփ Ներսեսի 27
 Աթաբեկյան Մելիք-Վանի Հարությունի 28
 Աթաբեկյան Վանի Հովսեփի 29
 Աթաբեկով Անդրեյ Աղամի 30
 Աթաբեկով Գրիգոր Հովսեփի 30
 Աթաբեկովա Անահիտ Հովսեփի 31
 Աթանեսյան Վահրամ Մերգեյի 32
 Աթոյան Վանիկ Հայկոյի 33
 Ալեքսանյան Արկաղիա Արամի 33
 Ահարոնյան Ռոմա Ասատուրի 34
 Աղաբաբյան Աշոտ Արմենի 34
 Աղաբաբյան Արմեն Հայրապետի 35
 Աղաբեկյան Վաղարշակ Հայրապետի 36
 Աղալովյան Լենսեր Աբգարի 37
 Աղասյան Առաքել Պետրոսի 38
 Աղասյան Արամայիս Բախշիի 38
 Աղասյան Մուսաննա Արամայիսի 39
 Այվազյան Միրզա Սարգսի 39
 Անանուն Դավիթ (Տեր-Դանիելյան) 40
 Անաստասյան Կարապետ Բալասանի 40

Ա Ն Վ Ա Ն Ա Վ Ա Ն Ց Ա Ն Կ

Արքահամայան Արամ Վերդիի 17
 Արքահամայան Վահրամ Գևորգի 17
 Աղանյան Աշոտ Փարավոնի 18
 Աղանյան Կառլեն Նիկոլայի 19
 Աղանյան Հայկազ Իսահակի 19
 Աղանյան Վաղիմ Մովսեսի 20
 Աղանյան Փարավոն Մեսրոպի 21
 Աղյան Լևոն Ռսկանի 22
 Ազարյան Ռոբերտ Նիկոլայի 23
 Աթաբեկյան Ալեքսանդր Մովսեսի 23
 Աթաբեկյան Անժելա Երվանդի 24
 Աթաբեկով Իոսիֆ Գրիգորի 25
 Աթաբեկյան Լևոն Նիկողայոսի 26
 Աթաբեկյան Հովսեփ Ներսեսի 27
 Աթաբեկյան Մելիք-Վանի Հարությունի 28
 Աթաբեկյան Վանի Հովսեփի 29
 Աթաբեկով Անդրեյ Աղամի 30
 Աթաբեկով Գրիգոր Հովսեփի 30
 Աթաբեկովա Անահիտ Հովսեփի 31
 Աթանեսյան Վահրամ Մերգեյի 32
 Աթոյան Վանիկ Հայկոյի 33
 Ալեքսանյան Արկաղիա Արամի 33
 Ահարոնյան Ռոմա Ասատուրի 34
 Աղաբաբյան Աշոտ Արմենի 34
 Աղաբաբյան Արմեն Հայրապետի 35
 Աղաբեկյան Վաղարշակ Հայրապետի 36
 Աղալովյան Լենսեր Աբգարի 37
 Աղասյան Առաքել Պետրոսի 38
 Աղասյան Արամայիս Բախշիի 38
 Աղասյան Մուսաննա Արամայիսի 39
 Այվազյան Միրզա Սարգսի 39
 Անանուն Դավիթ (Տեր-Դանիելյան) 40
 Անաստասյան Կարապետ Բալասանի 40

Անաստասյան Միխայիլ Նիկոլայի 41
Անաստասյան Յուրի Գուրգենի 41
Անաստասյան Նելլի Սամսոնի 42
Անաստասյան Ներսես Հարությունի 42
Անաստասյան Սամսոն Բալասանի 43
Անաստասյան Սուրեն Ներսեսի 44
Անաստասյան Վլադիմիր Ներսեսի 44
Անտոնյան Գուրգեն Գերասիմի 44
Առաքելյան Արմեն Թալիշի 45
Առաքելյան Բեհբուդ Հակոբի 45
Առաքելյան Կամո Ալբերտի 46
Առաքելյան Սլավիկ Բեհբուդի 46
Առաքելյան Վալերի Բեյբուդի 47
Առաքելյան Վալերի Միրայելի 47
Առուշանյան Աշոտ Ռուբիկի 48
Առուշանյան Ռաշիդ Իսաջանի 48
Առուշանյան Ռուբեն Գրիգորի 49
Առուշանյան Միրանուշ Միրականի 49
Առստամյան Արթուր Էլմիրի 50
Առստամյան Մարինե Սերգեյի 51
Առստամյան Ռիտա Սերգեյի 51
Առստամյան Սերգեյ Ռազմիկի 52
Ասրյան Հովհաննես Արտեմի 52
Ավագյան Թալիշ Մխիթարի 53
Ավագյան Պետրոս Բախշիի 53
Ավագյան Սերգեյ Մովսեսի 54
Ավակովա-Գրիգորյան Նելլի 54
Ավանեսյան Էդիկ Սերգեյի 55
Ավանեսյան Իսկուհի Նիկոլայի 55
Ավանեսյան Մարգո Ալեքսանդրի 56
Ավանեսյան Սլավա Լազրի 57
Ավանեսյան Վահե Նելսոնի 57
Ավթանդիլյան Անդրանիկ Լենդրուշի 58
Ավթանդիլյան Եվգենի Անդրանիկի 59
Ավթանդիլյան Թարիել Անդրանիկի 59
Ավթանդիլյան Թեմիկ Հովհաննեսի 60

Ավթանդիլյան Մարգիս Ստեփանի 60
Ավթանդիլյան Մարինա Բենիկի 61
Բաբայան Ասծատուր Հունանի 62
Բաղայան Գրիշա Միսակի 63
Բաղունց Յաշա Հովսեփի 64
Բազյան Բորիս Խորենի 64
Բազյան Գուրգեն Հայրապետի 65
Բազյան Էլենա Հայրապետի 65
Բազյան Թամարա Հայրապետի 65
Բազյան Հայրո Ռուբենի 66
Բազյան Հասմիկ Հայրապետի 66
Բազյան Նելսոն Ռուբենի 66
Բազյան Ռուբեն Հայրապետի 67
Բազյան Խորեն Հայրապետի 68
Բազյան Սուրեն Հայրապետի 68
Բալայան Աշոտ Կարապետի 69
Բալայան Գաբրիել Կիմի 69
Բալայան Գաբրիել Հարությունի 70
Բալայան Կիմ Գաբրիելի 71
Բալայան Տիգրան Կիմի 72
Բալայան Ռոման Գուրգենի 73
Բալայան Վլադիմիր Ալեքսեյի 74
Բալուդյան Սոնյա Հարությունի 75
Բախշունի Աբրահամ 75
Բաղդասարյան Արմինե Ռուբիկի 76
Բաղդասարյան Ռաֆայել Ներսեսի 76
Բաղունց Գագիկ Միքայելի 77
Բարսեղյան Վանյա Ռաֆայելի 78
Բեգլարյան Լևոն Անդրեյի 79
Բեգլարյան Ներիկ Անդրանիկի 79
Բեգլարյան Վիկտոր Ասծատուրի 80
Բեկզադյան Ալեքսանդր Արտեմի 81
Բեկզադյան Պետրոս Արտեմի 82
Բեկզադյան Ռուբեն Արտեմի 83
Բունիաթյան Արցախ Ասլանի 83
Բունիաթով Ստեփան Ահարոնի 84

Բունտման Սերգեյ Ալեքսանդրի	85
Գաբրիելյան Դերենիկ Աբրամի	86
Գաբրիելյան Կարեն Կառլենի	86
Գաբրիելյան Վահան Միքայելի	87
Գասպարյան Գեորգի Շահնազարի	88
Գասպարյան Ժորա Սահակի	88
Գասպարյան Շահեն Շահնազարի	89
Գասպարյան Շահնազար Սարգսի	89
Գասպարյան Պատլեն Արսենի	90
Գասպարյան Սուրեն Տիգրանի	91
Գյուլարյան Գեորգի Սամվելի	91
Գյուրջյան Նիկոլայ Հովսեփի	92
Գրիգորյան Արամայիս Վաղարշակի	92
Գրիգորյան Արիս Արսենի	93
Գրիգորյան Բորիս Վարդանի	94
Գրիգորյան Եղիշ Պետրոսի	94
Գրիգորյան Սերգեյ Սամսոնի	95
Գրիգորյան Սերգեյ Գրիգորի	96
Գրիգորյան Սերգեյ Կոնստանդի	97
Դանիելյան Աբգար Սարգսի	98
Դանիելյան Արարատ Աշոտի	99
Դանիելյան Բորիս Շահենի	100
Դանիելյան Գայանե Լեյնադի	100
Դանիելյան Լեյնադ Երվանդի	101
Դանիելյան Լուսինե Լեյնադի	102
Դանիելյան Հրանտ Արամի	102
Դանիելյան Մուշեղ Ներսեսի	103
Դանիելյան Նորայր Էդուարդի	104
Դանիելյան Շահեն Բորիսի	104
Դանիելյան Ժաննա Իվանի	105
Դանիելյան Ջիվանշիր Սևիի	105
Դանիելյան Ռուբեն Իսահակի	106
Դանիելյան Սամվել Մայիկի	106
Դանիելյան Սերգեյ Սեդրակի	107
Դավթյան Վլադիմիր Ռաֆիկի	108
Եդիգարյան Յուրա Մովսեսի	109

Ենիկոլայան Էմմա Սերգեյի	110
Ենիկոլայան Նիկողայոս Սերգեյի	110
Ենիկոլայով Գրիգորի Նիկոլայի	111
Ենիկոլայով Սերգեյ Նիկոլայի	112
Եսայան Արմեն Կառլենի	113
Եսայան Լազր Կառլենի	114
Եսայան Կառլեն Լազրի	115
Եսայան Սառա Մանթաշի	116
Երիցյան Աշոտ Միրզաջանի	116
Զաքարյան Աիդա Սարգսի	117
Թադևոսյան Զամալ Մակիչի	117
Իզմայիլյան Հակոբ Սարգսի	118
Իզմայիլյան Ներսես Մովսեսի	119
Իոսիֆյան Անդրանիկ Ղևոնդի	119
Իսկանդարյան Լուսինե Էդուարդի	120
Իսրայելյան Ռուդոլֆ Գերասիմի	121
Լազարյան Զոյա Մամվելի	122
Լազարյան Միլվա Սերգեյի	123
Լազարյան Վյաչեսլավ Պավելի	123
Լալայան Հեղուշ Հայկի	124
Խալափյան Զորայր Երվանդի	125
Խալափյան Մելիտա Երվանդի	126
Խաչատրյան Աշոտ Բոգդանի	126
Խաչատրյան Վաղիկ Ռուբենի	127
Խոնդկարյան Գարեգին Շահենի	127
Խոնդկարյան Հովակիմ Ավետի	128
Խոնդկարյան Շահեն Գարեգինի	128
Կարապետյան Բակուր Ավանեսի	129
Կարապետյան Եփրաքսյա Արշակի	130
Կոստանդյան Նիկոլայ Հայրապետի	130
Կամարի (Բեջանյան) Հակոբ Մինայի	131
Հակոբյան Արտաշես Բախշիի	132
Հակոբյան Հրայր Սամվելի	132
Հակոբյան Վեներա Սուրենի	133
Հայրապետյան Գրիգոր Միքայելի	133
Հայրապետյան Լևոն Գուրգենի	134

Հայրապետյան Վալերիկ Սերգեյի 135
 Հայրապետյան Վահրամ Տորիկի 136
 Հասան-Ջալալյան Բաղդասար 136
 Հասան-Ջալալյան Եսայի 137
 Հասան-Ջալալյան Ստեփան Հովհաննեսի 138
 Հարությունյան Ալբերտ Բախշիի 139
 Հարությունյան Արինա Երեմի 140
 Հարությունյան Արմեն Շուրայի 141
 Հարությունյան Բենիկ Նիկոլայի 142
 Հարությունյան Գրիշա Համբարձումի 143
 Հարությունյան Հրանուշ Արսենի 143
 Հարությունյան Մարատ Մարգսի 144
 Հարությունյան Ներսես 144
 Հարությունյան Պյոտր Իվանի 145
 Հարությունյան Սլավիկ Մուսվի 145
 Հարությունյան Քաջիկ Արսենի 146
 Հարությունով Ռոման Սերգեյի 147
 Հյուսնունց Ռուդիկ Լևոնի 148
 Հյուսնունց Մլավիկ Սամվելի 148
 Հովհաննիսյան Միլենտա Արմենի 149
 Հովհաննիսյան Սուրեն Ջաքարի 149
 Հովհաննիսյան Ստեփան Սուրենի 150
 Հովսեփյան Գարեգին Ա 151
 Դալայան Լավրենտ Բահաբուրի 152
 Դուլյան Լենա Բախշիի 152
 Դուլյան Էդուարդ Կառլենի 153
 Դուլյան Սերգեյ Աթանեսի 153
 Դուկասյան Արտուշ Ապրեսի 154
 Դուկասյան Գրիգոր Մովսեսի 155
 Դուկասյան Էդիկ Իշխանի 155
 Դուկասյան Հարություն Վանեսի 156
 Դուկասյան Մարգարիտ Մամիկոնի 157
 Դուկասյան Յուրա Մարգսի 157
 Դուկասյան Ներսես Առաքելի 158
 Դուկասյան Վարդան Իշխանի 158
 Մաղաքեյան Ալյոշա Միքայելի 159

Մամունց Երվանդ Սարգիսյանի 160
 Մամունց Սամվել Վանիի 160
 Մայիլյան Լևոն Մինասի 161
 Մանասյան Վոլոդյա Շմավոնի 162
 Մանուկյան Թևոս Անդրեյի 162
 Մանուչարյան Ջինավոր Ներսեսի 163
 Մանուչարով Թևոս Ալեքսանի 163
 Մարկոսյան Սերգեյ Գրիգորի 164
 Մարության Բրինա Սեդրակի 164
 Մարության Լենա Սեդրակի 165
 Մարտիրոսյան Բորիս Պաստիրոի 165
 Մարտիրոսյան Յուրի Վաչագանի 166
 Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի 167
 Մարտիրոսյան Ռուդոլֆ Գեորգիի 168
 Մեծունց Բագրատ Խաչատուրի 169
 Մեծունց Բարմիկ Խաչատուրի 170
 Մելիքյան Արիկ Արտավազի 170
 Մելքունյան Ալինա Գրիգորի 171
 Մելքունյան Աշոտ Գալուստի 171
 Մելքունյան Գրիգորի Արսենի 172
 Միխայիլովիս Իլյա Իվանի 172
 Մինասյան Միլվա Աշոտի 173
 Միրզաբեկյան Արագ Գենադիի 174
 Միրզաբեկյան Թևատրոս Կոնստանդինի 174
 Միրզոյան Ալեքսանդր Արեստի 175
 Միրզոյան Բենիամին Սիմոնի 175
 Միրզոյան Վոլոդյա Սիմոնի 176
 Միրզոյան Փարավոն Պողոսի 177
 Միքայելյան Իլյա Աբիդոնի 178
 Միքայելյան Միշա Կարապետի 178
 Մյսիքարյան Աստղիկ Ջինավորի 179
 Մյսիքարյան Արգիկ Միքայելի 180
 Մոսունց Մլավա Միքայելի 181
 Մովսիսյան Ահարոն 181
 Մովսիսյան Արփեն Բախշիի 182
 Մովսիսյան Գրիշա Հակոբի 183

Մովսիսյան Էսթեր Արրահամի 184
 Մովսիսյան Լավրենտի Ալեքսանդրի 184
 Մովսիսյան Լերմոնտ Մուշեղի 185
 Մովսիսյան Միքայել Առուստամի 186
 Մովսիսյան Յուրի Մովսեսի 186
 Մովսիսյան Սերգեյ Հովհաննեսի 187
 Մուսայելյան Հովիկ Գաստելյոյի 188
 Յախշիյան Սայիկ Ասատուրի 189
 Յաղուբյան Ֆյոդոր Սարուխանի 189
 Յուզբաշյան Էյլեր Սերգեյի 189
 Յուզբաշյան Մարիոս Արամի 190
 Նալբանդյան Գառնիկ Բենիկի 190
 Նալբանդյան Գուրգեն Ասծատուրի 191
 Նանագույան Գառնիկ Աշոտի 192
 Նարիմանյան Հենրիկ Լևոնի 192
 Նարինյան Նիկոլայ Արտեմի 193
 Ներսիսյան Աշոտ Հարությունի 194
 Ներսիսյան Միքայել Դավթի 194
 Ներսիսյան Փաշա Դավթի 195
 Շահինջանյան Աշոտ Գրիգորիի 195
 Շեկյան Համլետ Գուրգենի 196
 Շիրինյան Գրիգորի Հովսեփի 196
 Շիրինյան Մհեր Արմոյի 197
 Շիրինյան Վիգեն Միրզաջանի 198
 Ոսկանյան Ռուբեն Մնացականի 198
 Չալյան Յուրի Աշոտի 199
 Չալյան Ռուբեն Ավոյի 199
 Չիլինգարով Նորբերտ Սուրենի 200
 Չոբանյան Գարիկ Արմենակի 200
 Չոբանյան Ժորա Արմենակի 201
 Պետրոսյան Լիզա Արտեմի 201
 Պետրոսյան Արմեն Միքայելի 202
 Պետրոսյան Գարիկ Պետակի 202
 Պետրոսյան Գոհար Արտեմի 203
 Պետրոսյան Զոյա Յուլակի 203
 Պետրոսյան Թամարա Արտեմի 204

Պետրոսյան Թամարա Պետակի 205
 Պետրոսյան Կառլեն Ռուբենի 205
 Պետրոսյան Ռադիկ Սերգեյի 206
 Պետրոսյան Ռազմիկ Միրզայի 206
 Պետրոսյան-Ռումի Վիկտորիա Արտեմի 207
 Պետրոսյան Վալերի Սամսոնի 207
 Պետրոսյան Վիկտորյա Ավանեսի 208
 Պետրոսյան Վիդեոտա Մուշեղի 209
 Պողոսյան Արամ 209
 Պողոսյան Արիս Սարգսի 210
 Պողոսյան Արտեմ Մովսեսի 210
 Պողոսյան Արտեմ Խաչատուրի 211
 Պողոսյան Լյուդմիլա Արտեմի 212
 Պողոսյան Հենրիկ Անդրեյի 213
 Պողոսյան Միքայել Մովսեսի 213
 Պողոսյան Նատաշա Միքայելի 214
 Պողոսյան Նիկիտա Բուդդանի 215
 Պողոսյան Նոնա Ռաֆայելի 215
 Զավադյան Լենա Բագրատի 216
 Զավադյան Վալերի Սարգսի 216
 Ռազլոզով Կիրիլ Էմիլի 217
 Սահակյան Աիդա Ներսեսի 217
 Սահակյան Բորիկ Հայկազի 218
 Սահակյան Յուրի Հակոբի 219
 Սադյան Աշոտ Սերոբի 219
 Սադյան Բորիս Զինավորի 220
 Սադյան Սուրեն Ռուբենի 221
 Սամվելյան Արկադի Լևոնի 221
 Սարգսյան Անյուտա Վալերիի 222
 Սարգսյան Արարատ Զիվանշիրի 222
 Սարգսյան Արտեմ Տանիելի 223
 Սարգսյան Կարինե Շահենի 223
 Սարգսյան Ռասիմ Գեղեոնի 224
 Սարգսյան Ռոմանոս Մարտիրոսի 225
 Սարգսյան Սերժիկ Հակոբի 225
 Սարուխանյան Արմեն Վահանի 226

- Սարուխանյան Իգոր Արմենի 227
- Սաֆարյան Սարգիս Համբարձումի 227
- Սաֆարյան Սուրեն Սարգսի 228
- Սիմոնյան Խաչատուր Բախչիի 229
- Ստեփանյան Վոլոդյա Ռաֆայելի 229
- Վանյան Միքայել Գրիգորի 230
- Վանյան Հոմեր Ռուբենի 231
- Տեր-Գրիգորյան Արգար Եփրեմի 232
- Տեր-Գրիգորյան Ալեքսանդր Լևոնի 232
- Տեր-Գրիգորյան Ջալալ Հովհաննեսի 233
- Տեր-Գրիգորյան Վինիկ Ջալալի 233
- Տեր-Եղիազարյան Գեորգի Մովսեսի 234
- Տեր-Սահակյան Վարդան Հուսիկի 234
- Քոչարյան Կառլեն Սուրենի 235
- Օհանյան Գագիկ Սերգեյի 236
- Օհանյան Շուրա Սուրենի 237
- Օհանյան Սերգեյ Մոավի 238
- Օհանյան Տիգրան 238
- Օհանջանյան Աշոտ Գավրուշայի 239
- Օհանջանյան Գագիկ Սերգեյի 240
- Օհանջանյան Շահեն Նիկոլայի 241
- Օհանջանյան Սեդրակ Կարապետի 241
- Ֆանյան Ջալալ Սողոմոնի 242

ԱՐԱՎԱՄՅԱՆ ԱՐԱՄ ՎԵՐԳԻԻ

(1933)



Արամ Վերդիի Արրահամյան (ծնվ.՝ 1933, գ.Մոխրաթաղ), մանկավարժ, մեթոդիստ, մանկավարժական գիտությունների դոկտոր (1996), պրոֆեսոր (2002):

1956թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1965-1976թթ. եղել է ՀԽՍՀ Լուսնախարարության մանկավարժական գիտությունների ԳՀԻ-ի ավագ գիտաշխատող, 1976թ.-ից՝ Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտի աշխատակից, 2003թ.-ից՝ «Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիա» հասարակական կազմակերպության հիմնադիր-ղեկավար:

Հեղինակել է դպրոցական ուսումնամեթոդական ձեռնարկներ և դասագրքեր:




ԱՐԱՎԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳԻ



Վահրամ Գևորգի Արրահամյան (ծնվ.՝ գ.Թալիշ), տնտեսագիտության դոկտոր (2014), պրոֆեսոր:

1970-1975թթ. սովորել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ «Մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկա և կազմակերպում» մասնագիտությամբ, 1979-1982թթ.՝ Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական համալսարանի ասպիրանտուրայում:

1975-1979թթ., 1983-2003թթ. աշխատել է Երևանի հաստոցաշինական արտադրական միավորումում (ԲԸ): 2006թ. եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի ղոցենտ:



Դասախոսում է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում՝ «Կառավարչական որոշումների ընդունում», «Լոգիստիկա», «Ռիսկերի կառավարում» թեմաներ:



ԱԳԱՄՅԱՆ ԱՇՈՏ ՓԱՐԱՎՈՆԻ
(1962)



Աշոտ Փարավոնի Աղամյան (ծնվ.՝ 1962, Ստեփանակերտ) (կոճողուցի վաստակավոր բժիշկ Փարավոն Մեսրոպի Աղամյանի որդին), վնասվածքաբան-օրթոպեդ:

1987թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1989-1992թթ. աշխատել է որպես մանկական վնասվածքաբան-օրթոպեդ: 1992-1998թթ. ծառայել է ՊԸ կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալում:

1998թ.-ից եղել է Հանրապետական մանկական հիվանդանոցի, 2001թ.-ից, միաժամանակ, ԼՂՀ առողջապահության նախարարության գլխավոր վնասվածքաբան-օրթոպեդ, 2002-2010թթ.՝ վնասվածքաբան-օրթոպեդ՝ Հանրապետական հիվանդանոցում: 2011-2012թթ. աշխատել է «Քանաքեռ-Զեյթուն» բուժմիավորման պոլիկլինիկական բաժնի գլխավոր բժշկի տեղակալ, 2012թ.-ից՝ վնասվածքաբան-օրթոպեդ «Երևան» բժշկական կենտրոնում: 1991-1994թթ. կամավոր մասնակցել է ԼՂՀ ինքնապաշտպանությանը. հատուկ ստորաբաժանման կազմում կատարել է հետախուզական դիվերսիոն աշխատանքներ, Խոջալուի և Սրիսավենդի ռազմական գործողությունների ժամանակ ապահովել է բուժսպասարկումը: Կենտրոնական զինվորական և մարտական գործողությունների առաջին գծի (Չղրան, Ավդալ-Գյուլպիլու, Ֆիզուլի, Քելբաջար) ռազմադաշտային շարժական հոսպիտալներում վիրահատել է հարյուրավոր ազատամարտիկների ու խաղաղ բնակիչների: Հեղինակել է գիտական հոդվածներ:



ԱԳԱՄՅԱՆ ԿԱՌԵՆ ՆԻԿՈՒԱՅԻ

(1934)



Կառլեն Նիկոլայի Աղամյան (ծնվ.՝ 1934, գ.Մաղավուզ), ճարտարագետ, էներգետիկ-մեխանիկ, տեխնիկական գիտությունների դոկտոր (2001), պրոֆեսոր (1997), ՀՃԱ ակադեմիկոս (1997), ՌԴ որակի հիմնախնդիրների (1998) և Չափագիտության (1999) ակադեմիաների ակադեմիկոս:


1957թ. ավարտել է Մոսկվայի տեքստիլ ինստիտուտի էներգոմեխանիկական ֆակուլտետը:

1957-1969թթ. աշխատել է Երևանի մահուդի և բրդյա նուրբ գործվածքների գործարանում, 1965-1969թթ.՝ որպես տնօրեն: 1969-1971թթ. եղել է ՀԽՍՀ թեթև արդյունաբերության նախագծային և կոնստրուկտորական ինստիտուտի տնօրեն: 1974թ. նշանակվել է ՀՍՍՀ թեթև արդյունաբերության փոխնախարար, 1979թ.՝ ՀՍՍՀ Հայպետստանդարտի նախագահի տեղակալ, 1998թ.՝ «Ստանդարտների Ազգային ինստիտուտ»-ի փոխտնօրեն: 2000-2002թթ. եղել է Արցախի պետական համալսարանի ռեկտոր, այնուհետև՝ պրոռեկտոր, 2004թ.-ից՝ Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի պրոռեկտոր: Հեղինակել է ավելի քան 120 գիտական հոդված, 3 մենագրություն, բազմաթիվ ուսումնական ձեռնարկներ և 4 գյուտ: Հանդես է եկել Մոսկվայի Դինամոյի, Երևանի Մպարտակի ֆուտբոլային թիմերից, շուրջ 20 տարի ղեկավարել Երևանի ֆուտբոլի ֆեդերացիան:



ԱԳԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԻՍԱՀԱԿԻ

(1914-1999)



Հայկազ Իսահակի Աղամյան (ծնվ.՝ 1914, գ.Մաղավուզ - մահ.՝ 1999, Երևան), երկրաբանական գիտությունների թեկնածու (1949, Մոսկվա), ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան (1967), Հայաստանի լրագրողների միության անդամ:

1920-1930թթ. աշխատել է Լենինականի տեքստիլ կոմբինատում և միա-
ժամանակ ստացել միջնակարգ կրթություն: 1933-1936թթ. ծառայել է Կար-
միր բանակի առաջին հայկական գնդում: 1936-1941թթ. սովորել է ԵՊՀ
երկրաբանության ֆակուլտետում: Աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Երկ-
րաբանության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Մասնակ-
ցել է Հայրենական պատերազմին: 1949թ. նշանակվել է ՀԽՍՀ Երկրաբա-
նության ինստիտուտի գիտաբարոտղար և երկրաբան-հետախույզ, ուսում-
նասիրել Մեդրու շրջանի երկրաբանական կառուցվածքը: 1950թ. աշխա-
տանքի է տեղափոխվել ԵՊՀ՝ և աշխատել մինչև 1999թ., նախ՝ որպես Երկ-
րաբանական ֆակուլտետի միներալոգիայի և պետրոգրաֆիայի ամբիոնի
դոցենտ, ապա՝ ֆակուլտետի ղեկանի տեղակալ: 1963-1967թթ. եղել է ԵՊՀ
գիտահետազոտական բաժնի վարիչ, 1967-1979թթ.՝ երեկոյան և հեռակա
ուսուցման գծով պրոռեկտոր, կյանքի վերջին տարիներին՝ ԵՊՀ Պատմու-
թյան թանգարանի ավագ գիտաշխատող: Գիտական հետազոտություննե-
րը հիմնականում վերաբերում են Հայաստանի հարավային տարածքի
երկրաբանական կառուցվածքին: Հեղինակել է «Պետրոլոգիա» դասագիր-
քը (Եր., 1970), բազմաթիվ հոդվածներ, կազմել տարբեր շրջանների խոշոր
մասշտաբների երկրաբանական-պետրոգրաֆիական քարտեզներ, ռուսե-
րենից թարգմանել դասագրքեր և ձեռնարկներ, խմբագրել ԵՊՀ պատմու-
թյանը վերաբերող գրքեր և ժողովածուներ: Հեղինակել է նաև գեղարվես-
տական ստեղծագործություններ՝ Արցախ գրական ծածկանունով:



ԱԳԱՄՅԱՆ ՎԱԳԻՄ ՄՈՎՍԵՍԻ

(1938)



Վաղիմ Մովսեսի Աղամյան (ծնվ.՝ 1938, Օդեսա, մադավուզեցու ընտանիքում), ֆիզիկոս տեսաբան, ֆիզմաթ գիտությունների դոկտոր (1977), պրոֆեսոր (1979), Ամերիկյան մաթեմա-
տիկոսների, Ուկրաինայի ֆիզիկոսների, կիրա-
ռական մաթեմատիկայի և մեխանիկայի միու-
թյունների անդամ:

1956-1961թթ. սովորել է Օդեսայի շինարարական համալսարանում,
1961-1964թթ.՝ նույն ինստիտուտի ասպիրանտուրայում: 1964-1966թթ. աշ-
խատել է Օդեսայի Լոմոնոսովի անվան տեխնիկական ինստիտուտում՝ որ-
պես ավագ գիտաշխատող: Դասավանդել է Օդեսայի շինարարական ինս-
տիտուտի մաթեմատիկայի ամբիոնում: 1967-1975թթ. ղեկավարել է Օդե-
սայի պետական համալսարանի ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիան:
1979թ. նշանակվել է Օդեսայի համալսարանի տեսական ֆիզիկայի ամբի-
ոնի վարիչ: Աշխատել է Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Գերմանիայի և
Իսպանիայի համալսարաններում: Աշխատանքները վերաբերում են ցր-
ման տեսության, գծային օպերատորների տեսության, ֆունկցիաների տե-
ստության կապակցված հարցերին:



ԱԳԱՄՅԱՆ ՓԱՐԱՎՈՆ ՄԵՍՐՈՊԻ

(1935)



Փարավոն Մեսրոպի Աղամյան (ծնվ.՝ 1935, գ.Կոճողոտ), վիրաբույժ-ուռուցքաբան, ԼՂՀ վաստակավոր բժիշկ (2015), բժշկական ծառա-
յության ավագ լեյտենանտ (1961):

1953թ. ավարտել է Ստեփանակերտի բժշ-
կական ուսումնարանը, 1959թ.՝ Երևանի պե-
տական բժշկական ինստիտուտը: 1959-
1963թթ. եղել է Մարտակերտի շրջանի Սրիա-
վենդի գյուղական բուժամբուլատորիայի, 1960-
1963թթ.՝ Ասկերանի շրջանի առողջապահության բաժնի վարիչ: 1963թ.-ից
աշխատել է ԼՂՀ ուռուցքաբանական դիսպանսների գլխավոր բժիշկ-տնօ-
րեն, միաժամանակ՝ 1963-1970թթ.՝ ԼՂ առողջապահության բաժնի վարիչ,
1963թ.-ից՝ Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի դասախոս: 1988-
1994թթ. մարզային հիվանդանոցում և մարզկոմի նկուղային հարկում տե-
ղակալված զինվորական հոսպիտալում վիրահատել է հարյուրավոր վիրա-
վոր ազատամարտիկների և խաղաղ բնակիչների: Պարգևատրվել է ԼՂՀ
«Վաչագան Բարեպաշտ» մեդալով, արժանացել այլ պարգևների:



ԼԵՎՈՆ ԼԵՎՈՆ ՈՍԿԱՆԻ

(1940)

Լևոն (Լավրենտի) Ոսկանի Աղյան (ծնվ.՝ 1940, գ.Չլդրան), արձակագիր, բարգմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ, ԽՍՀՄ, ՌԴ, Հայաստանի, Ամերիկայի հայ գրողների և ԱՀ գրողների միությունների անդամ:

Ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը, աշխատանքի անցել Սունգալիթի խողովակագլանման գործարանում՝ որպես թրվածնա-

լին արտադրամասի ապարատավար: 1960թ. ընդունվել է Արթեջանի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի ցերեկային բաժինը: Երկրորդ կուրսից տեղափոխվել է Երևան և ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում: 1964-1989թթ. աշխատել է Բաքվում հրատարակվող «Գրական Աղբյուր» հանդեսում՝ որպես արձակի բաժնի վարիչ, 1979-1981թթ.՝ հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնակատար: Եղել է հանդեսի խմբագրական կոլեգիայի անփոփոխ անդամը, Աղբյուր-ՍՀ մամուլի պետական կոմիտեի խմբագրական խորհրդի անդամ, «Արմյանսկի վեստնիկ» ռեզիդնալ քերթի գլխավոր խմբագիր, Պյատիգորսկ քաղաքի հայկական համայնքի նախագահի տեղակալ: Բաքվի 1990թ. ջարդերից հետո տարագրվել է Ռուսաստան, ապրել Լենինգրադում, Պյատիգորսկում, Մոսկովում: Ապրում և ստեղծագործում է Մանկտ-Պետերբուրգում: Հեղինակել է տասնյակ աշխատություններ, որոնք լույս են տեսել նաև այլ լեզուներով: Կատարել է նաև գրքերի բարգմանություններ: Աղյանի աշխատություններից «Հեռացող եզերք» վեպի հիման վրա ԱՄՆ-ում գեղարվեստական ֆիլմ է նկարահանվում:



ԱԶԱՐՅԱՆ ՌՈՐԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ

(1941)



Ռորերտ Նիկոլայի Ազարյան (ծնվ.՝ 1941, գ.Ջազիկ), ԽՍՀՄ սպորտի վարպետ (1965), մանկավարժական գիտությունների դոկտոր (1989), պրոֆեսոր (1990):

1964թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը (ՖԿՀՊԻ), 1973-1974թթ.՝ ասպիրանտուրան:

1980-1996թթ. եղել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ, 1996-2007թթ.՝ ՖԿՀՊԻ Հ. Շահինյանի անվան մարմնամարզության ամբիոնի վարիչ: 1989թ. նշանակվել է Սպորտային մարմնամարզության հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահ, 1991թ.՝ «Մարմնամարզություն» հանդեսի գլխավոր խմբագիր: 2007թ.-ից Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխատակից է: 2012թ. նշանակվել է հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական դաստիարակության տեսության խնդիրներին:



ԱԹԱՐԵԿՅԱՆ ԱԼԵԲՍԱՆԴՐ ՄՈՎՍԵՍԻ

(1868-1933)



Ալեքսանդր Մովսեսի Աթաբեկյան (ծնվ.՝ 1868, Շուշի՝ կուսապատեցու ընտանիքում, Հովսեփի Աթաբեկյանցի հորեղբորորդին, Աթաբեկյանների մելիքական տոհմի շառավիղ բժշկի ընտանիքում- մահ.՝ 1933, Մոսկվա), քաղաքական գործիչ, բժիշկ, բժշկության դոկտոր (1896, Ժնն):

1886թ. ավարտել է Շուշիի ռեալական ու-

սումնարանը: 1889-1896թթ. սովորել է Ժնևի համալսարանի բժշկական ֆակուլտետում, անդամակցել հայկական սոցիալ-դեմոկրատական «Հնչակյան» կուսակցությանը, սակայն դուրս է եկել դրա կազմից և դարձել անիշխանական: Ժնևում դասավանդել է անարխիստական գրականություն՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: 1891թ. բուլղարական անարխիստ Պ.Ստոյանովի հետ միասին մեկնել է Լոնդոն՝ Պյոտր Կրոպոտկինի մոտ՝ հրատարակչական մախազների մասին պայմանավորվելու: 1894թ. եղել է հայկական «Համայնք» թերթի խմբագիրը: 1896թ. Ժնևում թեկնածուական տիտղոսաթերթի վրա ներկայացել է «որպես բժիշկ Ռուսական Հայաստանի Շուշի քաղաքից»: Հետագայում, գտնվելով վտարանդիության մեջ, ակտիվ քաղաքական գործունեությունից հեռացել է: 1914թ.-ից եղել է ռուսական բանակի բժիշկ, կովկասյան ճակատի հոսպիտալում հրամանատար: Ապրել է Բուլղարիայում, Պարսկաստանում, զբաղվել բժշկական գործունեությամբ: 1917թ. ժամանել է Մոսկվա, վերականգնել կապերը անարխիստների հետ: 1920թ. ձերբակալվել է: 1921թ. մասնակցել է Մոսկվայում Պ. Կրոպոտկինի թանգարանի ստեղծմանը: 1922թ. թողել է կուսակցական գործունեությունը և վերադարձել բժշկական գործունեությանը:



ԱԹԱՔԵԿՅԱՆ ԱՆԺԵԼԱ ԵՐՎԱՆԴԻ

(1938)



Անժելա Երվանդի Աթաքեկյան (ծնվ.՝ 1938, Երևան, կուսապատգու ընտանիքում), քանոնահարուհի, երաժշտագետ, ՀՀ ժողովրդական արտիստ (1968), Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր (2003), Մելիքաց Միություն ՀԿ հիմնադիր անդամ (2012):

Մերում է Արցախի պատմական Ջրաբերդի հայտնի Աթաքեկյանների իշխանական տոհմից: 1955թ. ավարտել է Երևանի Ռ.Մելիքյանի

անվան երաժշտական ուսումնարանը, 1983թ.՝ Երևանի պետական կոնսերվատորիան:

1956-1993թթ. եղել է ՀՀ Հեռուստառադիոյի՝ Ա.Մերանգույանի անվան

ժողովրդական գործիքների անսամբլի մենակատարը: 1959-2000թթ. դասավանդել է Ռ.Մելիքյանի անվան ուսումնարանում, 1983թ.-ից նաև՝ Երևանի պետական կոնսերվատորիայում:

1972թ. ստեղծել է «Աթաքեկյան քույրեր» վոկալ-գործիքային անսամբլը:

Կազմել, խմբագրել է 2 ժողովրդական մեթոդական ձեռնարկներ: Եղել է Համամիութենական մի շարք փառատոների, էստրադայի արտիստների համամիության մրցույթի (1958) դափնեկիր է:



ԱԹԱՔԵԿՈՎ ԻՌՍԻՖ ԳՐԻԳՈՐԻ

(1934)



Իրսիֆ Գրիգորի Աթաքեկով (ծնվ.՝ 1934, Թիֆլիս, կուսապատգուի Հովսեփ Ներսեսի Աթաքեկյանի բռնը՝ աղջկա՝ Գաբրիելի որդին: Հայրը եղել է ազգությամբ գերմանացի՝ Օտտո ազգանվամբ, աքսորվել է Ղազախստան: Իրսիֆ Աթաքեկովին որդեգրել է Գրիգոր Աթաքեկովը՝ քեռին, քանի որ ծնողները շուտ են մահացել): Կենսաբանական գիտությունների դոկտոր (1971), ՄՊՀ-ի պրոֆեսոր (1973), Եվրոպայի ակադեմիայի ակադեմիկոս (Լոնդոն, 1994), Վիրուսների տաքսոնոմիայի միջազգային կոմիտեի անդամ, ՌԴ բարձրագույն կրթության վաստակավոր աշխատակից:

1956թ. ավարտել է Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան: 1965թ. եղել է Մոսկվայի պետական համալսարանի վիրուսաբանության ամբիոնի, միաժամանակ՝ ՄՊՀ Բելոգերսկու անվան ֆիզիոմիական կենսաբանության ինստիտուտի բույսերի վիրուսների կենսաքիմիայի բաժնի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Մանրեաբանության ինստիտուտի վիրուսաբանության լաբորատորիայի վարիչ:

Փորձարարական ճանապարհով հիմնավորել և զարգացրել է վարակված բույսերում վիրուսային գենետիկական նյութի միջբջջային փոխադրման հիմնադրույթը՝ որպես վիրուսային գենոմի մեջ ծածկագրված ակտիվ

գործառույթ: Նույնացրել է ծխախոտի խայտաբղետության վիրուսի 30K գենը և ցույց տվել, որ օտարածին վիրուսների փոխադրող սայտակուցները փոխադարձաբար փոխարինելի են: Արժանացել է «Մոսկվայի 850-ամյակի հիշատակի» մեդալի, ՌԴ պետական (1994) և Լոմոնոսովի անվան մրցանակների, Բարեկամության շքանշանի:



**ԱԹԱԲԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ
ՆԻԿՈՂԱՅՈՍԻ
(1877-1918)**



Լևոն Նիկողայոսի Աբաբեկյան (ծնվ.՝ 1877, Շուշի - մահ.՝ 1918, Բաքու) (սերուն է Արցախի Ջրաբերդի շրջանի՝ Կուսապատ գյուղի մելիքական տոհմից), բանաստեղծ, բժիշկ, հասարակական գործիչ:

Կրթությունն ստացել է ծննդավայրի ռեալական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Գերմանիայում՝ ուսումնասիրել սոցիալական գիտություններ, Շվեյցարիայում՝ բժշկություն: Բժշկական կրթությունն ստացել է Բեռլինի և Ցյուրիխի համալսարաններում:

1903թ.-ից բժշկական և հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալել Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Գանձակում, Շուշիում և այլուր: Բաքվում նրա ջանքերով հիմնադրվել է թոքախտավորների առաջին հիվանդանոցը:

1909-1912թթ. ընդհատակյա կուսակցական գործունեության համար ձերբակալվել է ցարական ժանդարմերիայի կողմից և արգելափակվել Դոնի Ռոստովի, Գանձակի, Նովոչերկասկի և Սանկտ Պետերբուրգի բանտերում:

1917թ.՝ փետրվարյան հեղափոխությունից հետո, ընտրվել է Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա՝ Անդրկովկասյան Սեյմի անդամ: 1917թ. դեկտեմբերին եղել է Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի փոխնախագահը, այնուհետև՝ շարքային անդամը: 1900-ական թվականների

սկզբներից գրել է խոհական, քաղաքական քառյակներ, բանաստեղծություններ և ժողովրդական մոտիվներով գրույցներ, որոնք լույս են տեսել պարբերական մամուլում:

Չոհվել է 1918թ. Բաքվի հայկական ջարդերի ժամանակ:



**ԱԹԱԲԵԿՅԱՆ ՀՈՎՍԵՓ
ՆԵՐՍԵՍԻ
(1871-1916)**



Հովսեփ Ներսեսի Աբաբեկյան (ծնվ.՝ 1871, Կուսապատ - մահ.՝ 1916, Կարս), հրապարակախոս, թարգմանիչ, սոցիալ-դեմոկրատ, մասնագիտությամբ՝ գյուղատնտես: Հայտնի բժիշկ Ալեքսանդր Աբաբեկյանի հորեղբոր որդին է:

Թիֆլիսում ավարտել է գիմնազիա, ապա սովորել Սանկտ Պետերբուրգի համալսարանում և Հոհենհայմի (Գերմանիա) գյուղատնտեսական ակադեմիայում: Գերմանիայում ուսումնառության տարիներին ծանոթացել է գիտական սոցիալիզմի ուսմունքին, կապեր հաստատել Կ. Կաուցկու, Կլարա Ցետկինի, Հ. Պարվուսի հետ, նրանց մասնակցությամբ կազմել Թուրքիայում հայկական ջարդերը դատապարտող կոչեր, որոնք տպագրվել են գերմանական և ավստրիական մամուլում: Աբաբեկյանի դեկավարությամբ քննարկից առաջին անգամ հայերեն է թարգմանվել Ֆ.Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումն ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությունը, որը հրատարակվել է 1894թ.-ին՝ «Գիտական սոցիալիզմ» խորագրով: Նույն թվականին նրա մասնակցությամբ թարգմանվել է Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»:

1894թ. նամակով դիմել է Ֆ.Էնգելսին՝ «Մանիֆեստի» հայերեն հրատարակության համար առաջաբան գրելու խնդրանքով, որը, սակայն Ֆ. Էնգելսը մերժել է՝ պատճառաբանելով, որ չի կարող գրել մի գրքի նախաբան, որի լեզուն իրեն անծանոթ է: Հիշյալ նամակում Աբաբեկյանը Էնգելսին հաղորդել է տեղեկություններ հայոց պատմության, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների մասին: 1904թ. վերադարձել է Հա-

յաստան: Հեռանալով սոցիալ-դեմոկրատներից, ընտրվել է (Կարսի կայա-
զորի կողմից) 2-րդ պետական դումայի անդամ, հարել նրա սահմանադրա-
կան-դեմոկրատական (կադետական) ֆրակցիային: Հետագա տարիներին
Հայաստանում զբաղվել է գյուղատնտեսությամբ: 1914թ.՝ որպես սպա, զո-
րակոչվել է բանակ: 1916թ. հունվարի 15-ին անհայտ պատճառներով ինք-
նասպան է եղել Կարս քաղաքում:



ԱԹԱՔԵԿՅԱՆ ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1766-1854)

Մելիք-Վանի Հարությունի (Թունիի) Աբաբեկյան (ծնվ.՝ 1766, Կուսա-
պատ -մահ.՝ 1854, Կուսապատ), ռազմական գործիչ, Ջրաբերդ գավառի
վերջին մելիքը (1814-1854):

Պատանեկությունն անցել է հայրենի Կուսապատում, որտեղ ղեկավա-
րել է Աբաբեկյանների տոհմական ալրադացները և ոսկերչական արհես-
տանոցը: Սակայն դեռևս երիտասարդ տարիներին թողել է այդ զբաղմուն-
քը և անցել ռազմական գործունեությանը: Առաջնորդելով Ջրաբերդ իշխա-
նության մելիքական հեծելազորը, մելիք Վանին ակտիվորեն մասնակցել է
1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմին, իր հաշվին՝ Կուսապա-
տում գտնվող Աբաբեկյանների ալրադացներից ռուսական կորպուսին ա-
պահովել սննդամթերքով: 1805թ. իր հեծելազորով մասնակցել է Տրտուի
(Թարթառ) ճակատամարտին: Աչքի է ընկել նաև իր քաղաքական-դիվա-
նագիտական հմտություններով: 1805թ., չկարողանալով գրավել պաշար-
ված Շուշին, պարսից արքայազն Աբաս-Միրզան, զայրացած Արցախի
հայ բնակչության վրա սկսել էր անհնազանդ հայերի համատարած կոտո-
րածը: Սակայն մելիք Վանին, որը ձերբակալվել էր և բերվել Շոշ՝ Աբաս-
Միրզայի ռազմական ճամբար, համոզեց վերջինին դադարեցնել կոտորա-
ծը, ակնարկելով. «Եթե դու համարում ես, որ Ղարաբաղը քոնն է, ապա ին-
չո՞ւ եմ պարսիկները կոտորում քո հպատակներին: Այդպես եմ վարվում
օտար և բշմամի երկրում: Երբեք թագավորը չի կոտորում իր հպատակնե-
րին, այլ ընդհակառակը՝ ձգտում է բազմացնել իրանց թիվը: Որքան ավելի
շատ հպատակներ, այնքան էլ ավելի հզոր և փառապանծ է թագավորու-
թյունը»: Ի պատասխան մելիք Վանու այդ իմաստուն խոսքերին, Աբազ-

Միրզան հրամայեց դադարեցնել հայերի կոտորածը, և նվիրեց Վանիին
քանկարժեք խալաթ ու անձամբ սուր կապեց Վանու գոտքին: 1812թ. Պար-
սից շահի անունից, Շուշիի խանը Ջրաբերդի մելիքությունը ժառանգաբար
հանձնեց Վանի Աբաբեկյանին: Մելիք Վանիի իշխանությունը տևել է 42
տարի: Ամուսնացած էր եկեղեցական գործչի դուստր Վարդուհու հետ:
Զույգը ունեցել է չորս արու զավակ՝ իշխաններ Հովսեփ, Սարգիս, Աբաբեկ
և Միքայել:



ԱԹԱՔԵԿՅԱՆ ՎԱՆԻ ՀՈՎՍԵՓԻ

(1898-1976)

Վանի Հովսեփի Աբաբեկյան (ծնվ.՝ 1898, Բաբու, արմատներով կուսա-
պատեցու ընտանիքում - մահ.՝ 1976, Ֆրանսիա), հրետանու սպա, ինժե-
ներ-նավթագործ:

Ավարտել է Կոնստանտինոպոլի հրետանու ուսումնարանը: Մասնակցել
է 1-ին Համաշխարհային պատերազմին: Ծառայել է Կովկասյան ռազմա-
նակատում: Արտագաղթել է Ֆրանսիա: Ուսումնասիրել է պլաստիկ իրերի
արտադրությունը: Հիմնել է գործարան, եղել տնօրենը: Պլաստիկ իրերի
արտահանմամբ Եվրոպայում զբաղեցրել է առաջին տեղը: Հայ-սպա միու-
թյան անդամ էր: 1971թ. պարգևատրվել է «Պատվավոր լեգեոն» շքանշա-
նով:

Թաղված է Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը:





ԱԹԱՔԵԿՈՎ ԱՆԳՐԵՅ ԱԳԱՍԻ

(1854-1918)

Անդրեյ Ադամի (Աթաբեկի) Աթաբեկով (ծնվ.՝ 1854, Պողոսկ, ՌԴ, կուսապատգի Մելիք-Վանի Աթաբեկյանի բոռը, գնդապետ Աթաբեկ Աթաբեկյանի որդին - մահ.՝ 1918, Մոսկվա), հրետանու զեներալ-մայոր (1904):

Ավարտել է Կիևի ռազմական գիմնազիան, 3-րդ ռազմական Ալեքսանդրովյան ուսումնարանը, 1873թ.՝ Միխայիլովյան հրետանային ակադեմիան:

1904թ. նշանակվել է Ռուսաստանի ռազմական նախարարության Կոնստանտինովյան հրետանային ուսումնարանի պետ:



ԱԹԱՔԵԿՈՎ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՍԵՓԻ

(1908-1966)

Գրիգոր Հովսեփի Աթաբեկով (ծնվ.՝ 1908, Երևան՝ կուսապատգի Աթաբեկյան Հովսեփ Ներսեսի որդին - մահ.՝ 1966, Մոսկվա), տեխնիկական գիտությունների դոկտոր (1942), պրոֆեսոր (1943), ԽՍՀՄ պետական (1950), Յաբլոչկովի անվան մրցանակների դափնեկիր (1959):

1931թ. ավարտել է Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտը: Ուսանողական տարիներից սկսել է գիտական ուսումնասիրություններ կատարել: Ավարտելուց հետո անցել է աշխատանքի Գլխավորէներգոյի Անդրկովկասյան շրջանում, աշխատել մինչև 1935թ.: Տեղափոխվել է Մոսկվա, աշխատել Մոսկ-ներգո-ում, այնուհետև Ջերմէլէկտրո նախագծում՝ համատեղելով մանկավարժական աշխատանքը Մոսկվայի գյուղմեխանիկա և էլեկտրաֆիկացիայի ինստիտուտում: 1938թ. յուրօրինակ գիտական աշխատանքների և

գյուտերի համար, առանց թեզի պաշտպանության ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 1942-1943թթ. աշխատել է Լենինգրադի Բոնչ-Բուրևիչի անվան ինժեներական ինստիտուտում: 1946թ. նշանակվել է Մոսկվայի Ավիացիոն ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ամբիոնի վարիչ:

Եղել է ԽՍՀՄ ԿԳՆ-ում գործող էլեկտրատեխնիկական հետազոտությունների հանձնաժողովի անդամ, ինչպես նաև՝ ԽՍՀՄ «Գյուտարարություն» քերթի խմբագրական կոլեգիայի անդամ: Հայտնի ու առաջատար մասնագետ է էլեկտրատեխնիկայի բնագավառում:

Հեղինակել է շուրջ 100 գիտական աշխատանքներ, այդ թվում՝ 7 մենագրություն և դասագիրք:



ԱԹԱՔԵԿՈՎ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓԻ

(1903-1991)

Անահիտ Հովսեփի Աթաբեկովա (արմատներով կուսապատգի Հովսեփ Ներսեսի Աթաբեկովի դուստրը) (ծնվ.՝ 1903, Բաբու - մահ.՝ 1991, Մոսկվա) կենսաբան, անատոմ, Տիմերյազևի անվան ակադեմիայի պրոֆեսոր:

1922թ. աշխատել է Թիֆլիսի բուսաբանական այգու սերմերի ստուգման կետում: 1930թ. դասավանդել է Մոսկվայի Տիմերյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում (նախկինում Ռուսաստանի պետական ագրարային ինստիտուտ): 1934-1936թթ. Մոսկվայի պետական համալսարանում դասավանդել է բջջաբանություն: Եղել է Նիկոլայ Վավիլովի աշակերտուհին, որի մասին գրել է հուշեր:





ՎՎԱՆԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍԵՐԳԵՅԻ

(1959)

Վահրամ Սերգեյի Աբանեսյան (ծնվ.՝ 1959, Առաջածոր), լրագրող, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ:

Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, 1981թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը:

1981-1988թթ. աշխատել է Առաջածորի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, եղել դպրոցի տնօրենի արտադասարանական աշխատանքների գծով տեղակալ, 1989թ.՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի Մարտակերտի շրջանի սեփական թղթակից:

1989թ. ԼՂԻՄ բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրվել է Արցախի Ազգային խորհրդի անդամ, այդ կարգավիճակով մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Արցախի Ազգային խորհրդի 1989թ. դեկտեմբերի 1-ի համատեղ նստաշրջանին: 1989-1994թթ. աշխատել է «Ազատ Արցախ» թերթի խմբագրությունում, 1992-1994թթ. եղել գլխավոր խմբագիրը, 1995-1996թթ.՝ «Մարտիկ» թերթի գլխավոր խմբագիրը: 1994-1995թթ. եղել է ԼՂՀ Կառավարությանն առընթեր լրատվության և մամուլի դեպարտամենտի բաժնի վարիչ, 1998-2000թթ.՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակից, 2001-2012թթ.՝ «Հայրենիք» թերթի հիմնադիր-խմբագրող:

Եղել է Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, «Ժողովրդավարություն» խմբակցության ղեկավար, ապա՝ քարտուղար:



ԱԹՈՅԱՆ ՎԱՆԻԿ ՀԱՅԿՈՅԻ

(1938)



Վանիկ Հայկոյի Արոյան (ծնվ.՝ 1938, գ.Հաբերք), ֆիզ/մաթ գիտությունների թեկնածու (1989), դոցենտ (1990):

1961թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ ֆիզիկա մասնագիտությամբ:

Աշխատանքի է անցել Չայլո գյուղի դպրոցում՝ որպես ուսուցիչ: 1962-1964թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1966թ.-ից դասախոսել է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտում, այնուհետև՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: 2003թ.-ից աշխատանքի է անցել մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես դոցենտ: Հեղինակել է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներ և ուսումնական ձեռնարկներ:



ԱԼԵԿՍԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻԱ ԱՐԱՄ

(1933)



Արկադիա Արամի Ալեքսանյան (ծնվ.՝ 1933, Բաքու, Ներքին Հոռաքաղեցու ընտանիքում), գյուղատնտեսական գիտությունների թեկնածու (1972):

1942թ. հաճախել է Բաքվի ռուսական դպրոցը: Երկու տարի սովորելուց հետո ընտանիքի հետ տեղափոխվել է գյուղ Գյուլաթաղ (մայրը Գյուլաթաղից է), ուսումը շարունակել տեղի դպրոցում: 1952թ. ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի ագրոնոմիայի բաժինը: 1956թ. աշխատանքի է ընդունվել Մարտակերտի շրջանի գիտահետազոտական կա-

յանում: 1967թ. ընդունվել է Երևանի գյուղինստիտուտը: Ավարտելուց հետո աշխատել է նույն գիտահետազոտական կայանում: Աշխատելուն զուգընթաց ընդունվել է Բաքվի ասպիրանտուրան:

Մինչև 1992թ. աշխատել է գիտահետազոտական կայանում՝ որպես փոխտնօրեն: Բռնի տեղահանությունից հետո ապրում է Բաշկիրիայում:



ԱՀԱՐՈՆՅԱՆ ՌՈՍՏ ԱՍՏԱՏՈՒՐ

(1885-1990)

Ռոմա Ասատուրի Ահարոնյան (ծնվ.՝ 1932, գ.Դրմբոն - մահ.՝ 1990), մանկավարժ, մաթեմատիկոս:

1950թ. ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը: Ընդունվել է Բաքվի՝ Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժինը: Եղել է Մարտակերտի գիշերօթիկ դպրոցի տնօրեն, այնուհետև՝ Մարտակերտի միջնակարգ դպրոցի ուսուցիչ:



ԱՂԱԲԱԲՅԱՆ ԱՇՈՏ ԱՐՄԵՆԻ

(1959)



Աշոտ Արմենի Աղաբաբյան (ծնվ.՝ 1959, ք.Ստեփանակերտ) (Մարտակերտի շրջանի Հայադ գյուղից Արմեն Հայրապետի Աղաբաբյանի որդին), տեխնիկական գիտությունների դոկտոր (1994), պրոֆեսոր (1997), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (1998), ՌԴ բնական ԳԱ անդամ (1998):

1976-1981թթ. սովորել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում՝ «Կաթի և կաթնամթերքների ինժեներ տեխնոլոգ»-ի մասնագիտությամբ, 1982-1984թթ.՝ ԵԱՄԻ ասպիրանտուրայում, 1990-1993թթ. դոկտորանտուրայում՝ Մոսկվայի սննդի արդյունաբերության ակադեմիա և

ԵԱՄԻ: 1985-1998թթ. աշխատել է ՀԳԱ-ում, 1985-1986թթ.՝ որպես ԵԱՄԻ ավագ գիտաշխատող: 1986-1989թթ. եղել է ԵԱՄԻ կաթի պրոբլեմային լաբորատորիայի վարիչ, 1989-1994թթ.՝ կաթի տեխնոլոգիայի և ֆիզքիմիայի տեխնոլոգիայի վարիչ, 1994-1998թթ.՝ նույն ինստիտուտի գիտության բաժնի վարիչ: 1997թ.-ից ՀԱԱՀ Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր է: 1998-2002թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Ագրոգիտություն» ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում: 2002թ. նշանակվել է Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի փոխտնօրեն: 2006թ. նշանակվել է ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ղեկավար: Աշխատանքները վերաբերում են պանիրների անթափուն արտադրության մեջ կաթնաթթվային մանրէների կենսաբանական ակտիվ պատրաստուկների կիրառության տեսական հիմնավորումներին և գործնական հետևանքներին: Մշակել է հողանդակային խմբի պանիրների ստացման տեխնոլոգիա՝ տեխնոլոգիական պարամետրերի միասնականացման եղանակով:

Հեղինակել է 67 գիտական աշխատանք, 13 հեղինակային վկայական, 16 տեխնիկական-նորմատիվային փաստաթղթեր և 3 ուսումնական ձեռնարկ:



ԱՂԱԲԱԲՅԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1925-1974)

Արմեն Հայրապետի Աղաբաբյան (ծնվ.՝ 1925, գ.Հայադ - մահ.՝ 1974, Երևան), կաթնագործության բնագավառի գիտնական, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր (1972), պրոֆեսոր (1972):

1953թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: 1956-1960թթ. եղել է ԼՂԻՄ Մարտունու շրջանի գյուղվարչության պետական գործկոմի նախագահ, 1961-1974թթ.՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի կաթի տեխնոլոգիայի հիմնախնդրային լաբորատորիայի կաթի ֆիզքիմիայի բաժնի վարիչ:

Ուսումնասիրել է (առաջինը Հայաստանում) շվեյցարական, չանախ և հայկական պանիրների հասունացման շարժընթացում էլեկտրոնային դաշտի ազդեցության տակ սպիտակուցային ֆրակցիաների անջատումը, աղաջրային պանիրների հասունացման վրա միկրոտարրերի տարբեր խառնուրդների ազդեցությունը:



ՎԱՎՐԱՄՅԱՆ ՎԱՎՐԱՄՅԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
(1920-...)

Վաշարշակ Հայրապետի Աղաբեկյան (ծնվ.՝ 1920, գ.Հաթերք), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1937թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Հեռակա կարգով ավարտել է Շուշիի (հետագայում՝ Ստեփանակերտի) երկամյա ուսուցչական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը, և միաժամանակ դասա-

վանդել Զագիկի տարրական և Հարությունագոմերի յոթամյա դպրոցներում: 1939թ. անցել է զինծառայության, քանակում ծառայել 7 տարի՝ մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին: Չորսգրվելուց հետո ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը, որից հետո աշխատանքի է անցել հայրենի գյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Ապա եղել է Մարտակերտի շրջանային կրթության բաժնի մեթոդկարիչների վարիչը, Հարությունագոմերի միջնակարգ դպրոցի ուսնավարը, Հաթերքի ու Չափարի դպրոցների տնօրենը: 1964թ. նշանակվել է Մարտակերտի կրթության շրջանային բաժնի վարիչ, Մարտակերտի գիշերօթիկ դպրոցի տնօրեն և ևս մեկ անգամ Հաթերքի դպրոցի տնօրեն մինչև թոշակի անցնելը (1979թ.): Մանկավարժական աշխատանքին զուգահեռ՝ մշտապես գրել և հրատարակել է ազգագրական, ռազմահայրենասիրական, հոբելյանական, հոգեբանական հոդվածներ, հուշապատմւմներ և այլն: Աշխատանքային գործունեության և Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած արիության համար պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի» 1-ին, «Կարմիր աստղի» 2-րդ աստիճանների և «Պատվո նշան» շքանշաններով, «Արիության համար» և այլ մեդալներով:



ԱՂԱԼՈՎՅԱՆ ԼԵՆՍԵՐ ԱՐԳԱՐԻ
(1940)



Լենսեր Արգարի Աղալովյան (ծնվ.՝ 1940, գ.Քոլատակ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1980), պրոֆեսոր (2002), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996), ՌԴ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ (1995), ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ (2000), Եվրամիության գիտական փորձագետ (2000), «Միջազգային կիրառական մեխանիկա» ամսագրի խմբագրական հանձնաժողովի անդամ (2003), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2010), ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (2016), Կառուցվածքների հսկման Եվրոպական ասոցիացիայի անդամ (ACS), Ժողովուրդների անվտանգության հիմնահարցերի Միջազգային ակադեմիայի անդամ:

1961թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆակուլտետը:

1961-1963թթ. եղել է ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնի ասիստենտ, 1966-1969թթ.՝ ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի ավագ դասախոս, 1969-1987թթ.՝ ավագ գիտաշխատող: 1969թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում: 1987-2006թ. վարել է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնը: 2006թ. նշանակվել է ինստիտուտի «Բարակապատ համակարգերի մեխանիկա» բաժնի վարիչ, ապա՝ ինստիտուտի տնօրենի խորհրդական: 1992-1996թթ. եղել է «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության հիմնադիր-նախագահ:

Աշխատանքները վերաբերում են անիզոտրոպ հեծանների, սալերի և թաղանթների ախիմպտոտիկ տեսության կառուցման, կառուցվածքների վրա սեյսմիկ ալիքների ազդեցության ուսումնասիրման և այլ հարցերի:



ԱՂԱՍՅԱՆ ԱՌԱՔԵԼ ՊԵՏՐՈՍԻ
(1885-1931)

Առաքել Պետրոսի Աղասյան (ծնվ.՝ 1885, Մարտակերտ - մահ.՝ 1931, Մարտակերտ), «Գեորգիյան խաչի» շքանշանակիր:

Ավարտել է Կուսապատի երկրայա դպրոցը: Մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին (1914-1918), կռվել Կովկասյան ճակատում: Ծառայել է 7 տարի: Արժանացել է «Գեորգիյան խաչ» շքանշանի, որից 2-ը ոսկե, 2-ը՝ արծաթե:



ԱՂԱՍՅԱՆ ԱՐԱՄՅԱՆ ԲԱԽՇԻԻ
(1936)

Արամյան Բախշի Աղասյան (ծնվ.՝ 1936, գ.Քոլատակ), անասնաբուժական գիտությունների թեկնածու (1974), դոցենտ (1996):

1951թ. ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական ֆակուլտետը: 1955-1960թթ. սովորել է Երևանի անասնաբուժական ֆակուլտետում: 1965թ. ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը և ստացել միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցչի որակավորում:

Աշխատանքի է անցել Թալիշ գյուղի կոլտնտեսությունում՝ որպես գլխավոր անասնաբույժ: 1965-1971թթ. աշխատել է Ստեփանակերտի անասնաբուժական լաբորատորիայում՝ որպես անասնաբույժ-համաճարակաբան: 1975թ.-ից աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: Եղել է քիմիկենսաբանության ամբիոնի վարիչ և ֆակուլտետի ղեկան: Հեղինակել է ավելի քան 60 գիտական և գիտամեթոդական աշխատանքներ, ձեռնարկներ:

Պարգևատրվել է մի շարք մեդալներով:



ԱՂԱՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐԱՄՅԱՆԻ
(1961)

Սուսաննա Արամյանի Աղասյան (ծնվ.՝ 1961, գ.Քոլատակ), կենսաբանական գիտությունների թեկնածու (1998), դոցենտ (2005):

1978-1983թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի քիմիկենսաբանական բաժնում: 1983-1993թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 10 միջնակարգ դպրոցում: 1993թ. աշխատում է Արցախի պետական համալսարանում՝ որպես դասախոս:

Հեղինակել է ավելի քան 45 գիտական հոդվածներ և մեթոդական աշխատանքներ:



ԱՅՎԱԶՅԱՆ ՄԻՐՉԱ ՍԱՐԳՍԻ
(1887-1927)

Միրզա Սարգսի Այվազյան (ծնվ.՝ 1887, Մարտակերտ - մահ.՝ 1927, Մարտակերտ), «Գեորգիյան խաչ» շքանշանակիր:

Առաջին աշխարհամարտում (1914-1918) վիրավորվել է թունավոր գնդակից: 1918-1920թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ զենք էր հայթայթում ինքնապաշտպանության համար:





ԱՐՍԵՆ ԱՎԱԿԻԹ (ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ)

(1879-1942)

Դավիթ Անանուն (Տեր-Դանիելյան) (ծնվ.՝ 1879, գ.Մեծ Շեն - մահ.՝ 1942, Աստրախան), հրապարակախոս, պատմաբան, հասարակական գործիչ:

Աշխատակցել է Թիֆլիսում և Երևանում հրատարակվող հայ պարբերական մամուլին: 1920-1926թթ. եղել է Երևանի հեղափոխության բանգարանի տնօրեն: Հեղինակել է հայ ժողովրդի նոր պատմության հարցերի, ազգամիջյան հարաբերությունների վերաբերյալ աշխատություններ: «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության մեջ շարադրել է Արևելյան Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման պատմությունը:

Կալանավորվել է և մեղադրվել հակախորհրդային խմբին պատկանելու մեջ, 3 տարով արտրվել Բաշկորտոստանի ՍՍՀ: Աքտրավայրում կրկին ձերբակալվել է՝ հակախորհրդային քարոզչություն իրականացնելու մեղադրանքով: 1941թ. դատապարտվել է 10 տարվա ազատազրկման կալանավորների շրջանում հակախորհրդային քարոզչություն իրականացնելու համար: Հետմահու արդարացվել է 1989թ.:



ԱՐԱՏԱՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԲԱԼԱՍՆԻ

(1880-1928)

Կարապետ Բալասանի Անաստասյան (Էդուարդ Ղուլյանի պապը) (ծնվ.՝ 1880, Մարտակերտ - մահ.՝ 1928, Բաքու), հասարակական գործիչ:

Մասնակցել է ռուս-ճապոնական (1905), Առաջին համաշխարհային (1914-1918) պատերազմներին: Եղել է ցարական բանակի զեներալ, կռվել է ռուս-թուրքական ճակատում: 1918-1920թթ. Թարթառում (Ելիզավետպոլի նահանգի Զիվանջիի կենտրոն, հետագայում Աղդուս՝ Միր Բաշիրի շրջ-

կենտրոն) ուներ ֆիրմա, որտեղ վաճառում էր Գերմանիայից ստացած «Զինգեր» կարի մեքենաներ՝ առաջինը Կովկասում:

Առեղծվածային հանգամանքներում թունավորվել է և մահացել Բաքվի հիվանդանոցում:



ԱՐԱՏԱՍՅԱՆ ՄԻՍԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԻ

(1936)

Միխայիլ Նիկոլայի Անաստասյան (ծնվ.՝ 1936, Մարտակերտ), ինժեներ-մավթագործ, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Ապրել է Բաքվում: 1960թ. տեղափոխվել է Մոսկվա: Աշխատել է Մոսկվայում Նավթի և գազի էկոնոմիկայի ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ:



ԱՐԱՏԱՍՅԱՆ ՅՈՒՐԻ ԳՈՒՐԳԵՆԻ

(1946-2006)

Յուրի Գուրգենի Անաստասյան (ծնվ.՝ 1946, Ստեփանակերտ՝ մարտակերտցու ընտանիքում - մահ.՝ 2006, Ստեփանակերտ), ֆիզ/մաթ. գիտությունների թեկնածու (1975), դոցենտ (1980):

1965թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 6 գիշերօթիկ դպրոցը: 1965-1970թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխմաթ ֆակուլտետի կիբեռնետիկայի բաժնում: 1970թ. աշխատանքի է նշանակվել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում: Թեկնածուական թեզը պաշտպանել է Կիևի կիբեռնետիկայի ինստիտուտում: 1967թ.-ից դասախոսական աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթե-



մատիկայի ամբիոնում: 1977-1978թթ. աշխատել է ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի պաշտոնում: 1982-1996թթ. եղել է նույն ֆակուլտետի հանրահաշվի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ:

Հեղինակել է շուրջ 20 գիտական հոդվածներ:



ԱՆԱՏԱՍՅԱՆ ՆԵԼԻ ՍԱՄՍՈՆԻ

(1931)

Նելի Սամսոնի Անաստասյան (ծնվ. 1931, Բաքու՝ մարտակերտցու ընտանիքում), երաժիշտ:

Միջակարգ կրթությունն ստացել է Բաքվում: 30 տարի աշխատել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի կոնցմայստեր-դաշնակահարների ամբիոնում:



ԱՆԱՏԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(185.-...)

Ներսես Հարությունի Անաստասյան (Ալ.Բեկզադյանի քրոջ՝ Աննա Բեկզադյանի ամուսինը), (ծնվ.՝ 185., Մարտակերտ), բժիշկ:

Ավարտել է Մանկոտ Պետերբուրգի բժշկական ակադեմիան: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին (1914-1918): 1930-ական թվականներին Ալեքսանդր Բեկզադյանի հանդեպ հետապնդումների ժամանակ հալածվել է նաև Ն.Անաստասյանը՝ դեղաբույսերով բուժման և դեղահաբերը մերժելու համար, որով «զգալի վնաս էր հասցնում սոցիալիզմ կառուցող խորհրդային ժողովրդի առողջությանը»:



ԱՆԱՏԱՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԲԱԼԱՍԱՆԻ

(1897-1964)



Սամսոն Բալասանի Անաստասյան (ծնվ.՝ 1897, Մարտակերտ- մահ.՝ 1964, Բաքու), բժիշկ, հասարակական-քաղաքական գործիչ:

1906թ. ավարտել է Կուսապատի երկդասյա դպրոցը: 1910թ. տեղափոխվել է Բաքու և ուսումը շարունակել այնտեղ: Չրկվելով ապրուստի միջոցներից տեղափոխվել է Գանձակ: Մասնակցել է 1917թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխական ցույցին և հեռացվել զիմնագիսյից: 1918-1920թթ. հայ-ադրբեջանական ազգամիջյան ընդհարումների պատճառով 1918թ. լեռնային արահետով Գանձակից հասել է Մարտակերտ: Ընտրվել է Մարտակերտի Հեղկոմի առաջին նախագահ, Ադրբեջանի կոմկուսի պատգամավոր: 1922թ. գործուղվել է Ադրբեջանի բժշկական ինստիտուտ, միաժամանակ մինչև 1928թ. աշխատել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին կից գործող հանձնաժողովում, որպես կուսվերահսկիչ: 1928թ. նշանակվել է Ղուբայի, 1930թ.՝ Լենքորանի օկրուգային առողջապահական բաժնի վարիչ: 1931թ. գործուղվել է Մոսկվա՝ ուսանելու կարմիր պրոֆեսուրայի փիլիսոփայության ու բնագիտության ինստիտուտում: Վերադարձել է Բաքու, նշանակվել Սոցիիզինայի ինստիտուտի տնօրեն: 1933թ. նշանակվել է ԼՂԻՄ առողջապահության բաժնի վարիչ (նախարար): Այդ տարիներին է կառուցվել մարզային հիվանդանոցը: 1936թ. տեղափոխվել է Բաքու, փորձել պաշտպանել բժշկական գիտությունների թեկնածուականը: Երբ թեզն արդեն պատրաստ էր, սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: 1941-1946թթ. եղել է ճակատային հոսպիտալի պետ, բանակի թերապևտ, որն ի պաշտոնն հավասարագոր էր պրոֆեսորի աստիճանին և բուժճառայության գնդապետի կոչմանը: Գիտական աշխատանքը շարունակելու նպատակով զորացրվել է բանակից, սակայն չի հաջողվել պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: 1947թ.-ից մինչև կյանքի վերջը Բաքվում «Լենինավթ» տրեստի բուժճառայության գլխավոր բժիշկն էր (7 տարի), այնուհետև Լենինյան շրջանի հիվանդանոցային կլինիկական միավորման գլխավոր բժշկի տեղակալը: «Պատվո՛ւն նշանի՛» շքանշանակիր էր, անհատական թոշակառու:

ԱՆԱՏԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՆԵՐՍԵՍԻ

(1902-1994)

Սուրեն Ներսեսի Անատասյան (ծնվ.՝ 1902, Մարտակերտ - մահ.՝ 1994, Բիշքեկ), անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի դոկտոր, պրոֆեսոր:

Որդին՝ Վիլենը բժիշկ է, ապրում է Մոսկվայում:



ԱՆԱՏԱՍՅԱՆ ՎԼԱԳԻՄԻՐ ՆԵՐՍԵՍԻ

(1899-1981)

Վլադիմիր Ներսեսի Անատասյան (ծնվ.՝ 1899, գ.Կուսապատ - մահ.՝ 1981, գ.Կուսապատ), Հանրապետության վաստակավոր ուսուցիչ, Լենինի շքանշանակիր:

Երկար տարիներ եղել է Կուսապատի դպրոցի տնօրենը:



ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳԵՐԱՍԻՄ

(1911-1984)

Գուրգեն Գերասիմի Անտոնյան (ծնվ.՝ 1911, գ.Կուսապատ - մահ.՝ 1984, Բաքու), բանասիրական գիտությունների դոկտոր (1955), պրոֆեսոր (1955), ԱդրԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

1933թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը:

1947-1974թթ. աշխատել է որպես Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի

և գրականության, 1974-1984թթ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նույն ամբիոնի վարիչ:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ԹԱԼԻՇԻ

(1951)

Արմեն Թալիշի Առաքելյան (ծնվ. 1951, ք.Մարտակերտ) իրավաբանական գիտությունների թեկնածու (1999), գնդապետ:

Ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1984թ. ընդունվել է ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության Կիևի Ձերժինսկու անվան Բարձրագույն դպրոցի իրավաբանական ֆակուլտետը: Սովորել է Լենինգրադի իրավաբանական ակադեմիայում:

ՌԴ Պլատիզորսկ քաղաքի պետհամալսարանի իրավաբանական մասնաճյուղի ամբիոնի վարիչ է, կովկասյան առողջարանային գոտու քաղաքների մերթին գործերի ծառայության օպերատիվ վարչության պետ:

Ծննդյան 50-ամյակի կապակցությամբ անվանական ժամացույց է ստացել ՌԴ նախագահ Վ.Վ. Պուտինից:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԲԵՀՐՈՒԴ ՀԱԿՈՒԲ

(1918-...)

Բեհրուդ Հակոբի Առաքելյան (ծնվ.՝ 1918, Մարտակերտ -մահ.՝ Մարտակերտ), Հանրապետության վաստակավոր մանկավարժ (1969):

Ավարտել է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Մանկավարժական գործունեությունը սկսել է 1937թ.՝ Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1943-1946թթ. աշխատել է Կուսապատի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1946թ. աշխատանքի է անցել Մարտակերտի թիվ 1 դպրոցում՝ որպես ուսումնական մասի վարիչ, 1969-1978թթ.՝ դպրոցի տնօրեն:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՄՈ ԱԼԲԵՐՏԻ

(1964)

Կամո Ալբերտի Առաքելյան (ծնվ.՝ 1964, Մարտակերտ), դերասան:

1982թ.-ից եղել է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի դերասան: 1992թ. ավարտել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը (ղեկավար՝ Ռ. Ջրբաշյան) և ստացել դրամատիկ թատրոնի ու կինոյի դերասանի որակավորում:

Խաղացած դերերն են՝ «Երջանիկ արքայազն» (պրոֆեսոր և սիրահարված տղա), «Անահիտ» (դժոխքի բանտարկյալ), «Ազատ շարադրություն» (Կոստա Բուրբաքե), «Սեղադրական եզրակացություն» (քննիչ Խելածն), «Մեր և խորհրդավանք» (ոստիկան), «Չար ոգի» (Չոփուռ), «Բուրատինոյի արկածները» (Կարաբաս) և այլն:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԼԱՎԻԿ ԲԵՀՐՈՒԳԻ

(1949-2015)

Սլավիկ Բեհրուգի Առաքելյան (ծնվ.՝ 1949, Մարտակերտ - մահ.՝ 2015, Մարտակերտ), կենսաբանական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Մարտակերտի 11-ամյա դպրոցը: Ընդունվել է Երևանի պետական ինստիտուտը: Որպես գրագետ ուսանող, ուսանելու տարիներին ման դասախոսել է: Ավարտելուց հետո անցել է աշխատանքի Երևանի պետական համալսարանում:

1990-ականներին օգնել է հայրենակիցներին: Երջանի ազատագրումից հետո վերադարձել է ծննդավայր: Փորձել է ստեղծել սեփական տնտեսություն: Անցել է աշխատանքի Մարտակերտի թիվ 1 դպրոցում՝ որպես ուսուցիչ, միաժամանակ դասախոսել է Ստեփանակերտի պետական համալսարանում:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ ԲԵՅՐՈՒԳԻ

(1946)

Վալերի Բեյրուգի Առաքելյան (ծնվ.՝ 1946, Մարտակերտ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1994):

1970թ. ավարտել է Խարկովի (Ուկրաինա) պոլիտեխնիկական ինստիտուտը:

1975թ.-ից աշխատում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, 1990թ.-ից՝ որպես առաջատար գիտաշխատող, 2001թ.-ից՝ միաժամանակ ման ճառագայթային կենսաֆիզիկայի լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են տեսական ֆիզիկային, մասնավորապես՝ բաց համակարգերի ֆիզիկային:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ

(1946)

Վալերի Միքայելի Առաքելյան (ծնվ.՝ 1946, Մարտակերտ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (1982):

1964-1969թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: 1969-1971թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1971թ. աշխատանքի է անցել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդչային նյութերի և սարքերի ԳՀ լաբորատորիայում՝ որպես գիտաշխատող: 2000թ. նշանակվել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդչային նյութերի ու սարքերի ԳՀ լաբորատորիայի վարիչ, 2007թ.-ից՝ նույն լաբորատորիայի բազայի վրա ստեղծված կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն, միաժամանակ՝ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամ-



բիռնի դոցենտ: Հեղինակել է 120-ից ավելի գիտական հոդվածներ և 2 գյուտ: Գիտական գործունեության հիմնական բնագավառներն ընդգրկում են՝ արեգակնային էներգիայի փոխակերպիչների, թունավոր, պայթյունավտանգ և հրավտանգ գազերի ու գոլորշիների գերզգայուն տվիչների ստեղծումն ու հետազոտումը և այլն: Խորհրդային տարիներին մասնակցել է արեգակնային էներգիայի փոխակերպման ֆոտոէլեկտրաքիմիական կայանքի ստեղծմանը: Պարգևատրվել է մի շարք մեդալներով, պետական պարգևներով:



ԱՌՌՇԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՌՈՒԲԻԿԻ

Աշոտ Ռուբիկի Առուշանյան (ծնվ.՝ Երևան), (ղազարահողերի) տեխնիկական գիտությունների պրոֆեսոր Ռուբեն Առուշանյանի որդին), բժշկական գիտությունների թեկնածու (2005), սրտանոթային վիրաբույժ: Ապրում է Մոսկվայում:



ԱՌՌՇԱՆՅԱՆ ՌԱՇԻԳ ԻՍԱԶԱՆԻ (1928-2007)

Ռաշիգ Իսաջանի Առուշանյան (ծնվ.՝ 1928, գ.Ղազանչի - մահ.՝ 2007, Ստեփանակերտ), կենսաբանական գիտությունների թեկնածու (1973), դոցենտ (1991):

1944թ. ավարտել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը:

Աշխատանքի է անցել Ստեփանակերտի անտառային տնտեսությունում՝ որպես ինժե-



ներ: 1950-1955թթ. սովորել է Մոսկվայի անտառտնտեսական ինստիտուտում:

1955-1973թթ. աշխատել է ԼՂ տարբեր շրջաններում, 1974թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում:



ԱՌՌՇԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐԻ

Ռուբեն Գրիգորի Առուշանյան (ծնվ.՝ գ.Ղազարահող), տնտեսական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: 1996թ. հիմնադրել է Երևանի մենեջմենթի համալսարանը:



ԱՌՌՇԱՆՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՅՇ ՍԻՐԱԿԱՆԻ (1960)

Սիրանույշ Սիրականի Առուշանյան (ծնվ.՝ 1960, գ.Հաթերք), ազատամարտիկ:

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցի իններորդ դասարանը և աշխատանքի անցել «Նոր կյանք» կոլտնտեսությունում: 1960թ. տեղափոխվել է քաղաք Մումգայիթ և աշխատանքի անցել շինարարությունում՝ որպես ծեփագործ: Այնուհետև աշխատանքի է անցել Բաքվի «Նավթային քարեր» նավթահանքում՝ որպես պարետ: 1988թ. Բաքվից վերադարձել է Մումգայիթ: Ականատես է եղել 1988թ. փետրվարի 27-29-ը Մումգայիթում տեղի ունեցած ողբերգություններին: Աղբրեջանցիների հաշվառումից խուսափել է այդ օրերին «Նավթային քարերում» գտնվելու շնորհիվ: Վերադարձել է Հաթերք, կամավորագրվել Արցախյան շարժմանը: Ապա ընդգրկվել է ինքնապաշտպանական ջոկատում: Ստացած առաջին հանձնարարությունը պատվով է կատարել. զենք և զինամթերք է տեղա-



փոխել Երևանից՝ ռուս զինվորականների մոտ կասկած անգամ չհարուցելով: Մասնակցել է Հաթերքի, Մաղավուզի, Ջազիկի մարտերին: Ծանր վիրավորվել է Մարսանգի համար մղվող մարտերում: Երևանի հոսպիտալում բուժվելուց հետո վերադարձել է և ընդգրկվել Մաղավուզի զորամասում, մասնակցել Թալիշի, Մաղավուզի, Լեռնարիսի, Լյուլյասազի, Մատաղիսի, Ջրաբերդի և Օմարի բարձունքների ազատագրմանը: Ծառայության տարիներին նա ոչ միայն ազատամարտիկ էր, այլև բուժբույր, խոհարար, լվացարուհի: Նրա հանդեպ մեծ հարգանք էին տածում՝ կոչելով «աքա»:



ԱՌՍԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԷԼՄԻՐ

(1961)



Արթուր Էլմիրի Առստամյան (ծնվ.՝ 1961, գ.Հաթերք), ճարտարագետ-շինարար:

1967թ. ընդունվել և գերազանց գնահատականներով ավարտել է Հաթերքի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճանապարհաշինարարական ֆակուլտետը:

1982թ. քաղաքացիական և արդյունաբերական շենքերի ինժեներ-շինարարի որակավորումով գործուղվել է Երկոմուն-շին գլխավոր վարչություն՝ որպես երիտասարդ մասնագետ: 1983թ.-ից աշխատել է վերոհիշյալ վարչության քաղջրմուղկոյուղշին շինարարական վարչությունում, 1989-1993թթ. Երբաղխորհրդի կապիտալ շինարարության գլխավոր վարչությունում՝ որպես առաջատար ինժեներ: 1996թ. նշանակվել է Երևանի քաղաքապետարանի ճանապարհների և հատուկ կառույցների պետական ձեռնարկությունների կապիտալ շինարարության բաժնի պետ, 2003թ.՝ Երևանի քաղաքապետարանի «Շինարարություն, բարեկարգում» ՓԲԸ տնօրեն: Արժանացել է շնորհակալագրերի, պատվոգրերի:

Արցախյան շարժման նվիրյալներից է: Հետախուզական ջոկատի անդամ էր: Շահումյանի շրջանի տարբեր գյուղերում մասնակցել է մարտական գործողությունների: Արժանի ներդրում ունի «Հաթերք» բարեգործա-

կան հիմնադրամի ստեղծման գործում: Որպես ինժեներ, նա առավել ակտիվ մասնակցել է Արցախյան գոյապայքարում նահատակված հաթերքցիների հիշատակը հավերժացնող կոթող-հուշահամալիրի նախագծի, տեղանքի ընտրության և կառուցման գործում:



ԱՌՍԱՄՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՍԵՐՂԵՅԻ

(1962-2011)



Մարինե Սերգեյի Առստամյան (ծնվ.՝ 1962, գ.Լենինական - մահ.՝ 2011, Ստեփանակերտ), քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (2008):

Ավարտել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1982-1987թթ. սովորել է Ստավրոպոլի մանկավարժական ինստիտուտի քանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնում:

Աշխատանքի է անցել Ստավրոպոլի մարզում՝ որպես ուսուցչուհի, 1994թ.՝ ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնում՝ որպես դասախոս:



ԱՌՍԱՄՅԱՆ ՌԻՏԱ ՍԵՐՂԵՅԻ

(1964)



Ռիտա Սերգեյի Առստամյան (ծնվ.՝ 1964, ք.Ստեփանակերտ՝ լենինականցու ընտանիքում), իրավաբանական գիտությունների թեկնածու (2003), դոցենտ (2006):

1981թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1989թ.՝ Ստավրոպոլի

պետական մանկավարժական ինստիտուտը՝ պատմություն, հասարակագիտություն և խորհրդային իրավունք մասնագիտությամբ: Աշխատել է Ստավրոպոլի կապի էլեկտրատեխնիկումում: 1997թ. աշխատանքի է անցել ԱրՊՀ փիլիսոփայության և իրավունքի ամբիոնում՝ որպես դասախոս, եղել իրավունքի ամբիոնի վարիչ:



ԱՌՍՏԱՄՅԱՆ ՍԵՐՂԵՅ ՌԱԶՄԻԿԻ
(1969)

Սերգեյ Ռազմիկի Առստամյան (ծնվ.՝ 1969, Մարտակերտ), նեյրովիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ:

1986թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 դպրոցը: 1987թ. ընդունվել է Բաքվի բժշկական ինստիտուտը: 1988թ. տեղափոխվել է Երևանի բժշկական համալսարանը:

1992-1994թ. ծառայել է ԼՂՀ բանակում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա: Աշխատում է Մոսկվայի Բուրդենկոյի անվան նեյրովիրաբուժական ինստիտուտում: 2010թ.-ից նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող է:



ԱՍՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԵՄԻ
(1920-1969)

Հովհաննես Արտեմի Ասրյան (Օհան Ասլանյան) (ծնվ.՝ 1920, գ.Վանք - մահ.՝ 1969, գ.Վանք), Ֆրանսիական Դիմադրության շարժման մասնակից, «Ստալինգրադ» պարտիզանական ջոկատի հիմնադիրներից:

Մասնակցել է 1941-1945թթ. Հայրենական պատերազմին: 1942թ. վիրավոր գերի է ընկել Սևաստոպոլի պաշտպանական մարտերի ժամանակ:

Համակենտրոնացման ճամբարից 6-րդ փախուստից հետո հասել է Փարիզ: Ջոկատի հետ ոչնչացրել է ֆաշիստական պահակախումբը, Փարիզի

էյֆելյան աշտարակի վրայից հանել Գերմանիայի զինանշանն ու դրոշը և կանգնեցրել Ֆրանսիայի պետական դրոշը:

1945թ. գորացրվելուց հետո եղել է ծննդավայրի մշակույթի տան տնօրեն: Նրա ջանքերով կանխվել է Բաքվի կարգադրությամբ Գանձասար վանքի Ս.Հովհաննես Սկրտիչ եկեղեցու պայթեցումը:



ԱՎԱԳՅԱՆ ԹԱԼԻՇ ՄԽԻԹԱՐԻ
(1923-2013)

Թալիշ Մխիթարի Ավագյան (ծնվ.՝ 1923, Մարտակերտ - մահ.՝ 2013, Սգրան, ՌԳ), խաղողագործ, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր (1971), Լենինի եռակի շքանշանակիր:

Ավարտել է տեղի դպրոցը: Հայրենական պատերազմի տարիներին Բաքվում աշխատել է կարի ֆաբրիկայում՝ զինվորականների համար կարել համազգեստ: Վերադարձել է Մարտակերտ: Աշխատել է սայլապան, բամբակագործ, ջրվոր:

Մարտակերտի կուսակցության 22-րդ համագումարի անվան սովխգոմ աշխատել է որպես խաղողագործ: 1971թ. մեկ հեկտարից ստացել է 170ց, 1973թ.-ին՝ 240ց, իսկ 1979թ. 289ց խաղող:



ԱՎԱԳՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԲԱՆՇԻԻ
(1956)

Պետրոս Բախշիի Ավագյան (ծնվ.՝ 1956, գ.Մոխրաթաղ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳ Պետական մրցանակի դափնեկիր՝ գիտության և տեխնիկայի բնագավառում:

Ավարտել է Պոլիտեխնիկական ինստիտուտը: Ապրում է Մոսկվայում:





ԱՎԱԳՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԵՍԻ

(1916)

Սերգեյ Մովսեսի Ավագյան (ծնվ.՝ 1916, Մարտակերտ - մահ.՝ 1990, Երևան), բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր (1972):

1941թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը:

1959-1974թթ. եղել է «Կանազի» թիվ 2 բժշկասանիտարական մասի քիթ-կոկորդ-ականջաբանության բաժանմունքի վարիչ, 1963-1989թթ.՝ միաժամանակ աշխատել է ԵԲԿԻ

քիթ-կոկորդ-ականջաբանության ամբիոնում: 1963-1982թթ. եղել է Երևանի գլխավոր քիթկոկորդականջաբանը: Աշխատանքները վերաբերում են քիթ-կոկորդականջի և կերակրափողի ֆիզիոլոգիայի, ձևաբանության, ախտաբանության և բուժման հարցերին:



ԱՎԱԿՈՎԱ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԵՆԼԻ

(1949)



Նելլի Ավակովա-Գրիգորյան (ծնվ.՝ 1949, Բաքու՝ արձատներով մադավուզեցու ընտանիքում), բանաստեղծուհի:

Ընտանիքը մի քանի տարի ապրել է Ստեփանակերտում, որտեղ 1966թ. ավարտել է Ա.Ս.Գրիբոյեդովի անվան թիվ 3 դպրոցը: Ընդունվել է Բաքվի Մ.Ֆ.Ախունդովի անվան լեզվի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը (ռուսերեն-գերմաներեն լեզուներ):

Ավարտելով այն՝ աշխատել է Բաքվի տաբեր դպրոցներում: 1989թ. ընդունվել է ՀԱՄԿԻ Մոսկվայի Մ. Շվերնիկի անվան բարձրագույն դպրոցի (հետագայում՝ ՀԱՄԿԻ աշխատանքի ակադեմիա) «Էկոնոմիկա և աշխատանքի սոցիոլոգիա» ֆակուլտետի հեռակա բաժինը:

1989թ. ընտանիքով տեղափոխվել է Հայաստան, ապա՝ Ռուսաստան, Ուկրաինա: 2004թ. բնակություն են հաստատել ԱՄՆ-ում (Լոս Անջելես): Հեղինակ է բանաստեղծական 3 ժողովածուի՝ «Ախ, կարտախտ» (Մոսկվա, 2002), «Աշնան տերևաքափ» (Մոսկվա, 2003), «Քո կանգառը չէ» (Լոս Անջելես, 2006): 2005թ. մասնակցել է Լոս Անջելեսի «Ոսկե գրիչ» մրցանակաբաշխությանը և հաղթել՝ «Բանաստեղծություն» անվանակարգում՝ կիսելով առաջին տեղը:



ԱՎԱՆԵՍՅԱՆ ԷԴԻԿ ՍԵՐԳԵՅԻ

(1940)

Էդիկ Սերգեյի Ավանեսյան (ծնվ.՝ 1940, Գորչայ (Ադր. ԽՍՀ)՝ մոխրաթաղեցու ընտանիքում - մահ.՝ 2006, Ուզբեկստան), բժշկական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Մոսկվայի բժշկական ինստիտուտը: Աշխատել է Միջին Ասիայում: Եղել է ԽՍՀՄ բանակի բժշկական ծառայության սպա:



ԱՎԱՆԵՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ ՆԻԿՈԼԱՅԻ

(1982)



Իսկուհի Նիկոլայի Ավանեսյան (ծնվ.՝ 1982, գ.Վանք), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

1999թ. ավարտել է Վանք գյուղի միջնակարգ դպրոցը: 1999-2003թթ. սովորել է Արցախի պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետի պատմության բաժնում: 2005թ. ավարտել է նույն բաժնի մագիստրատուրան: 2015թ. ավարտել է ԱրՊՀ Հայոց պատմություն բաժնի ասպիրանտուրան: 2004-2008թթ. աշխատել է ԱԺԿ «Հայրենիք» թերթի թղթագրող:

քակից: 2008-2013թթ. եղել է ԱՀ Ազգային ժողովի «Ժողովրդավարություն» խմբակցության գործավար: 2013-2014թթ. եղել է ԱՀ Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ, 2014-2015թթ.՝ ԱՀ ԱԺ նախագահի օգնական: 2016-2020թթ. աշխատել է ԱԺ «Ժողովրդավարություն» խմբակցությունում: 2020թ. նշանակվել է ԱՀ ԱԺ Փորձագիտական ծառայության առաջատար մասնագետ:

2016թ.-ից ժամավճարային հիմունքներով աշխատում է ԱրՊՀ պատմության ամբիոնում: 2020թ.-ից Մեսրոպ Մաշտոց համալսարանի պատմության և կովկասագիտության ամբիոնի վարիչն է: Հեղինակել է 13 գիտական հոդված, մեկ ուսումնական ձեռնարկ:



ԵԼԵՆԱ ԵՂՅԱՆ
ՍԱՐԳՈ
(1928-1968)

Մարգո Ալեքսանդրի Ավանեսյան (ծնվ.՝ 1928, գ.Չղրան - մահ.՝ 1968, Բաքու), քիմիական գիտությունների թեկնածու:

1945թ. ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը: 1946-1950թթ. սովորել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի քիմիական ֆակուլտետում:

1950-1953թթ. դասախոսել է նույն ինստիտուտի ռուսական և հայկական ֆակուլտետներում: 1953թ. ընդունվել է Ադրբեջանի գիտա-հետազոտական ինստիտուտի նավթատեխնիկական բաժինը:

Աշխատանքի է անցել նույն ինստիտուտում՝ որպես գիտաշխատող:

Նրա աճյունը Բաքվից տեղափոխվել և ամփոփվել է Չղրանի գերեզմանատանը:



ԱՎԱՆԵՍՅԱՆ ՍԼԱՎԱ ԼԱՁՐԻ

(1947)

Սլավա Լազրի Ավանեսյան (ծնվ.՝ 1947, Մարտակերտ), Հայաստանի և Արցախի պետական գործիչ, ԼՂՀ ՊԲ զննչապետ (1998):

1976թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1967-1971թթ. աշխատել է ԼՂԻՄ դատախազության համակարգում: 1971-1980թթ. աշխատել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի ավտոտեխասարկման և զբոսաշրջության վարչությունում: 1990-1994թթ. ՀՀ-ում կազմակերպել է շուրջ 2 հազար բռնագաղթածների տեղավորման, վիրավոր ազատամարտիկների բուժապասարկման աշխատանքները: Արցախ է ուղարկել սննդամթերք: Ձինադադարից հետո ընդհանրացրել և ԼՂՀ իշխանություններին ու Անվտանգության խորհրդին է ներկայացրել հանրապետության ներքին և արտաքին անվտանգության վիճակի, պաշտպանունակության, ռազմատեխնիկական համագործակցության տեղեկատվավերլուծական հիմնահարցերը: 1991-1997թթ. եղել է ՀՀ զբոսաշրջության ընկերակցության վարչության պետ, 1998-2000թթ.՝ ԼՂՀ անվտանգության խորհրդի քարտուղար, 2000-2005թթ.՝ ՀՀ վարչապետի խորհրդական, 2005թ.-ից՝ Երևանի քաղաքապետի տեղակալ:



ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱՀԵ ՆԵԼՍՈՆԻ

(1980)

Վահե Նելսոնի Ավանեսյան (ծնվ.՝ 1980, գ.Թալիշ), հաղորդավար, լրագրող, Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի (IFJ) և Ռուսաստանի ժուռնալիստների միության անդամ:

1999-2001թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում: Այնուհետև ուսումը շարունակել է Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական հա-



մալսարանում: 2004թ. գերազանցությամբ ավարտել է ՄՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը, 2007թ.՝ ասպիրանտուրան:

2001-2004թթ. աշխատել է Եվրասիա-Մեդիա լրատվամիջոցների ուսումնասիրության փորձագիտական կենտրոնում՝ որպես տեղեկատվական կենտրոնի ղեկավար: Միաժամանակ տպագրվել է ռուսական դաշնային պարբերականներում՝ հիմնականում լրագրության արդիական խնդիրների վերլուծությամբ, հայկական քերթերում՝ Ռուսաստանի հայ համայնքին վերաբերող լրատվական նյութերով: 2004թ.-ից համագործակցում է «Շանթ» հեռուստաընկերության հետ: Համատեղ ջանքերով Մոսկվայում կանոնավոր սկսել է գործել հեռուստաընկերության բրադկցական կետը, 2009թ.-ից «Շանթ»-ի մոսկովյան ներկայացուցչությունը գործում է որպես լիիրավ բաժանմունք:

2007թ. հիմնել է «Որակ-Մեդիա» ընկերությունը, որի գործունեության հիմնական ուղղությունը մեդիա կոնտենտի արտադրությունն է: 2008-2010թթ. ղեկավարել է Ռուսաստանի հայերի միության տեղեկատվական ծառայությունը:



ԱՎԹԱՆԳԻՆՅԱՆ ԱՆԳՐԱՆԻԿ ԼԵՆԳՐՈՒՇԻ

(1921-1999)

Անդրանիկ Լենդրուշի Ավթանդիլյան (ծնվ.՝ 1921, Մարտակերտ - մահ.՝ 1999, ք.Մոսկվա), փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

Ավարտել է տեղի դպրոցը, այնուհետև մանկավարժական տեխնիկումը: 1950-ական թվականներին սովորել է Բաքվի կուսակցական դպրոցում:

Դասավանդել է Լևոնարխի միջնակարգ դպրոցում՝ կնոջ՝ Վարդուշ Միրզայի Գյուրջյանի հետ:

1953թ. ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանը: Այն ավարտելուց հետո մնացել է Մոսկվայում և դասախոսել տարբեր ԲՈՒՀ-երում:



ԱՎԹԱՆԳԻՆՅԱՆ ԵՎԳԵՆԻ ԱՆԳՐԱՆԻԿԻ

(1961)

Եվգենի Անդրանիկի Ավթանդիլյան (ծնվ.՝ 1961, Մոսկվա՝ մարտակերտցի Անդրանիկ Լենդրուշի Ավթանդիլյանի ընտանիքում), փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը:



ԱՎԹԱՆԳԻՆՅԱՆ ԹԱՐԻԷԼ ԱՆԳՐԱՆԻԿԻ

(1942)

Թարիել Անդրանիկի Ավթանդիլյան (ծնվ. 1942, ք.Մարտակերտ), լրագրող-օպերատոր:

1966թ. եղել է Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսության օպերատոր: «OPT» առաջին ծրագրով ներկայացնում էր ռուսաստանյան պաշտոնական և այլ իրադարձություններ:

1980-ական թվականներին ապրել է Բուդապեշտում: Գործուղվել է Եվրոպա, Ամերիկա, Հնդկաստան, Աֆրիկա:

Եղել է մի շարք ֆիլմերի ռեժիսոր:

Որդին՝ Արսեն Թարիելի Ավթանդիլյանը, Ռուսաստանյան հեռուստատեսության առաջին ալիքի ռեժիսոր է:





**ԱՎԹԱՆԳԻԼՅԱՆ ԹԵՄԻԿ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**
(1923-1945)

Թեմիկ Հովհաննեսի Ավթանդիլյան (ծնվ.՝ 1923, ք.Մարտակերտ - մահ.՝ 1945, Քլայն, Գերմանիա), ԽՍՀՄ հերոս (1945):

1942թ. ավարտել է Բաքվի հետևակային ուսումնարանը: 1942թ. զորակոչվել է խորհրդային բանակ: Ստացել է լեյտենանտի կոչում, նշանակվել հայկական 89-րդ դիվիզիայի հրաձգային դասակի հրամանատար: 1942թ.

նոյեմբերին մասնակցել է Մալգոբեկ քաղաքի, 1943թ. հոկտեմբերին՝ Վերինեբրականսկ ավանի ազատագրման ռազմագործողություններին: 1945թ. հունվարին Սլուսյա-Նովայի շրջանում գրավել է հակառակորդի դիրքերը: 1942թ. օգոստոսին Լեհաստանի Կելեյն քաղաքում ոչնչացրել է հակառակորդի կրակակետերը: 1943թ. վիրավորվել է, կրկին վերադարձել մարտադաշտ՝ Առաջին ուկրաինական ճակատ: 1945թ. հունվարին Ավթանդիլյանի վաշտը մարտեր է վարել Լեհաստանի շրջանում: Հերոսի կոչման արժանացել է գերմանական Քլայն քաղաքի զրավման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:



ԱՎԹԱՆԳԻԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԻ
(1920-2010)

Սարգիս Ստեփանի Ավթանդիլյան (ծնվ.՝ 1920, ք.Մարտակերտ - մահ.՝ 2010, ք.Մարտակերտ), վիրաբույժ, Բարձր կարգի որակավորմամբ բժիշկ (1966):

1940թ. զորակոչվել է Խորհրդային բանակ: 1941թ. ընդունվել է Լենինգրադի ավիացիոն տեխնիկական ռազմական ուսումնարանը, որը պատերազմի պատճառով տեղափոխվել է



Ֆինլանդիա, վերակազմավորվել որպես զորամաս՝ Լենինգրադի պաշտպանության համար: Լենինգրադի մոտ վիրավորվել է, բուժվել: Տեղափոխվել է Մագնիտագորսկ, որտեղ գերազանց գնահատականներով ավարտել է ավիացիոն տեխնիկական ուսումնարանը: Հայրենական մեծ պատերազմին, նաև՝ Լենինգրադի շրջափակման մասնակցության համար արժանացել է 10-ից ավել մեդալների:

1947-1953թթ. սովորել է Տաշքենդի բժշկական ինստիտուտում: Նույն բժշկանին ընդունվել է ասպիրանտուրան, սակայն ընտանեկան պայմաններից ելնելով ուսումը թողել է կիսատ, վերադարձել Մարտակերտ: Նույն բժշկանին անցել է աշխատանքի Մարտակերտի հիվանդանոցում՝ որպես վիրաբույժ: 1960-1992թթ. եղել է հիվանդանոցի վիրաբուժության բաժնի վարիչ, 1947-2010թթ.՝ գլխավոր վիրաբույժ:

Արցախյան գոյապայքարի ընթացքում մնացել է առողջապահական համակարգում: 1992թ. սեպտեմբերից հրամանով զորակոչվել և ծառայել է մինչև 2001թ.:



ԱՎԹԱՆԳԻԼՅԱՆ ՍԱՐԻՆԱ ԲԵՆԻԿԻ
(1967)

Սարինա Բենիկի Ավթանդիլյան (ծնվ.՝ 1967, ք.Մարտակերտ), խմբավար, երաժշտագետ, «Սպեղանի» կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր:

1993թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, 1999թ.՝ նույն կոնսերվատորիայի ասպիրանտուրան: 1994-2002թթ. եղել է Հայաստանի երաժշտական ընկերության Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախմբի խմբավար, 1993թ.-ից, միաժամանակ դասավանդում է Երևանի Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցում, 2001թ.-ից՝ Երևանի Ռոմանո Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1996թ. հիմնադրել ու ղեկավարում է զոհված և անհայտ կորած ազատամարտիկների զավակներից կազմված «Սպեղանի» երգչախումբը: 2004թ. Արեցո քաղաքում անցկացվող ConcorsoPolifonicoInternationale փառատոնում «Սպեղանին» ստացել է երկրորդ մրցանակ:

2005թ. ապրիլի 24-ին Հայոց եղեռնի նահատակների հիշատակին Շուշիի Սուրբ Ղազանչեցոց վանքում երգչախումբը կատարել է Կոմիտասի «Պատարագը»: «Մաեղանու» կատարմամբ Հայաստանում առաջին անգամ հնչել են Բերտրանի, Անիսույանի, Մարենցիոնի, Կոստելեյի, Սուինի, Ռաուտավարանի ստեղծագործությունները, ինչպես նաև հայ ժամանակակից կոմպոզիտոր Երվանդ Երկանյանի «Սիրիուս» ստեղծագործությունը:

Մարինա Ավրանդիլյանի ամուսինը՝ Գագիկ Օսիպյանը, գոհվել է 1992թ. Շուշիի ազատագրման ժամանակ: Նույն թվականի հուլիսի 4-ին՝ Մարտակերտի տեղահանության ժամանակ, նրա մայրը, տատը և պապը անհայտ կորել են: Դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:



ԲԱԳԱՅԱՆ ԱՍԾԱՏՈՒՐ ՀՈՒՆԱՆԻ

(1915-198.)

Ասծատուր Հունանի Բաբայան (ծնվ.՝ 1915, գ.Մոխրաթաղ - մահ.՝ 198., Երևան), ազգային-ազատագրական շարժման գործիչ, փոխգնդապետ, մանկավարժ:

Ստացել է բարձրագույն կրթություն: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Երևանի թիվ 106 միջնակարգ դպրոցում դասավանդել է հայոց լեզու և նախնական զինվորական պատրաստություն առարկաները:

Մասնակցել է «Հանուն հայրենիքի» ինքնահրատարակվող ամսագրի հրատարակմանը: 1965թ. վտարվել է Կոմկուսի շարքերից՝ «հակախորհրդային քարոզչության համար»: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1950-1980-ական թվականների ազգային-ազատագրական շարժմանը:

1969թ. ձերբակալվել է ՀԽՍՀ Գերագույն դատարանի որոշմամբ և դատապարտվել 6 տարի ազատազրկմամբ:



ԲԱԳԱՅԱՆ ԳՐԻՇԱ ՄԻՍԱԿԻ

(1948)



Գրիշա Միսակի Բաղայանը (ծնվ.՝ 1948, գ.Մաղավուզ), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, ԽՍՀՄ երիտասարդ նկարիչների միության անդամ:

1965թ. ավարտել է Մաղավուզի միջնակարգ դպրոցը: 1967-1970թթ. սովորել է Երևանի Խ.Արովյանի անվան ինստիտուտի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի նկարչագործական բաժնում: Ավարտելուց հետո՝ 1970թ., մասնագիտությամբ աշխատել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1971թ. զորակոչվել է Խորհրդային բանակի շարքերը: 1972-1975թթ. միաժամանակ աշխատել է Մարտակերտի և Մաղավուզի դպրոցներում՝ որպես գծագրության և նկարչության ուսուցիչ: 1975թ. տեղափոխվել է Մաղավուզի միջնակարգ դպրոց: Մինչև 1987թ., միաժամանակ, եղել է գյուղի մշակույթի տան տնօրենը: Երկար տարիներ եղել է կրթության շրջանային բաժնի արտահաստիքային տեսուչը: Մաղավուզի դպրոցը՝ որպես հենակետային դպրոց, նրա նկարներով ներկայացվել է ԽՍՀՄ ԺՏՆՑ-ին և արժանացել բրոնզե մեդալի: Դպրոցի՝ նրա ղեկավարած խմբակի անդամները մշտական մասնակցություն են ունեցել շրջանային և հանրապետական ցուցահանդեսներին և գրավել առաջնակարգ տեղեր: Արցախյան շարժման սկզբից ընտրվել է գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար: 1993թ. «Արծիվ 23» գումարտակի շտաբի պետն էր և մասնակցել է շրջանի տասնյակ բռնազավթված գյուղերի ազատագրմանը: Աշխատում է հայրենի գյուղի վերաբացված դպրոցում որպես զինղեկ, նկարչության և գծագրության ուսուցիչ: Եղել է ԼՂՀ ԳԽ պատգամավոր: Արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ»-ի պատվավոր կոչմանը: Պարգևատրվել է պատվոգրերով:





ԲԱԳՈՒՆՅ ՅԱՇԱ ՀՈՎՍԵՓԻ

(1928-2006)

Յաշա Հովսեփի Բաղունց (ծնվ.՝ 1928, Մարտակերտ - մահ.՝ 2006), կուսակցական-պետական գործիչ, Մարտակերտի կուսշրջկոմի նախկին առաջին քարտուղար (1966-1982):

Աշխատանքային կենսագրությունը սկսվել է 1946-1947թթ., Մարտակերտի կոլտնտեսությունում, որպես շարքային կոլտնտեսական: 1948-1953թթ. սովորել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում:

Ավարտելուց հետո աշխատել է որպես կոլտնտեսության գլխավոր անասնաբույժ: 1959թ. ընտրվել է նույն կոլտնտեսության վարչության նախագահի տեղակալ, կուսկոմիտեի քարտուղար: 1961թ. ընտրվել է կուսշրջկոմի քարտուղար: 1964-1966թթ. սովորել է ԽՄԿԿ Կենտկոմի կից Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցում, 1966թ.՝ ընտրվել կուսշրջկոմի առաջին քարտուղար և շուրջ 16 տարի ղեկավարել շրջանը: 1983թ. նշանակվել է մարզային գյուղվարչության պետ: 1986թ.-ից նշանակվել է Մարտակերտի շրջագրոարդի պետ: 1988թ., չնայած կենսաբուժական էր, բայց շարունակում էր մասնագիտական գործունեությունը մարզային գյուղվարչության կառույցներում:



ԲԱԶՅԱՆ ԲՈՐԻՍ ԽՈՐԵՆԻ

(1942)

Բորիս Խորենի Բազյան (ծնվ.՝ 1942, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ Մոսկվա), կենսաբանական գիտությունների դոկտոր (1993), ՌԲԳԱ Նյարդաբանական գիտական կենտրոնի Նեյրոկիբեռնետիկայի լաբորատորիայի վարիչ (2006թ.-ից):

Հեղինակել է 112 գիտական հոդված, 1 մենագրություն, 30 գիտաժողովի զեկույց, 123 թեզիս, 2 արտոնագիր:

ԲԱԶՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1914-1942)

Գուրգեն Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1914, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 1942, Մոսկվա), ինժեներ-շինարար:



ԲԱԶՅԱՆ ԵԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1912)

Ելենա Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1912, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ Մոսկվա), թերապևտ, բժշկական գիտությունների թեկնածու:

Պատերազմի տարիներին աշխատել է Մարտակերտի շրջանային զինկոմիսարիատում՝ որպես բժշկական հանձնաժողովի անդամ, ապա՝ նախագահ: 1960-ական թվականներին ամուսնու հետ գործուղվել է Միջին Ասիա, տեղափոխվել Աշխաբադ: Աշխատել է Աշխաբադի տուրքիսպանսերում:

Որդին՝ Միքայելը, բժշկական գիտությունների թեկնածու է, աշխատել է Մոսկվայի հիվանդանոցներից մեկում՝ որպես լաբորատորիայի վարիչ:



ԲԱԶՅԱՆ ԹԱՄԱՐԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1916-2016)

Թամարա Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1916, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 2016), զինեկուղոգ, բժշկական գիտությունների թեկնածու, բանաստեղծուհի:

Աշխատել է Բաքվի Ծեխովի հիվանդանոցում, ապա տեղափոխվել Մեծ Շեն: Արցախյան պատերազմի ժամանակ տեղափոխվել է Մեծամոր:



ԲԱԶՅԱՆ ՀԱՅՐՈ ՌՈՒԲԵՆԻ

(-2015)

Հայրո Ռուբենի Բազյան (ծնվ.՝ գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 2015), բժիշկ-պրակտիկոս, պրոֆեսոր: Աշխատել է Երևանում:



ԲԱԶՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1924)

Հասմիկ Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1924, գ.Ներքին Հոռաթաղ), բժիշկ-ատամնաբույժ:

1943-1948թթ. սովորել է Երևանի ատամնաբուժական, ապա՝ Երևանի բժշկական ինստիտուտում:

Աշխատանքի է անցել Շուշիի զինվորական հոսպիտալում, ապա՝ Մարտակերտի հիվանդանոցում: Երկար տարիներ Ստեփանակերտի պոլիկլինիկայում աշխատել է որպես ատամնաբույժ:



ԲԱԶՅԱՆ ՆԵԼՍՈՆ ՌՈՒԲԵՆԻ

(1950)



Նելսոն Ռուբենի Բազյան (ծնվ.՝ 1950, գ.Ներքին Հոռաթաղ), տնտեսագիտության դոկտոր (2003), պրոֆեսոր, ՌԴ վաստակավոր շինարար (1989), Ռուսաստանի մունիցիպալ ակադեմիայի իսկական անդամ (2000), Միջազգային հարաբերությունների ակադեմիայի իսկական քոթակից անդամ (2001) և մրցանակակիր (2012), ռուսաստանյան մի շարք ակադեմիաների ակադեմիկոս, «Մեզապոլիս» միջազգային ասոցիացիայի նախագահ:

Բարձրագույն կրթություն է ստացել Մոսկվայում: 1972թ. ավարտել է ուսումը, անցել աշխատանքի: 1973թ. ընդունվել է ասպիրանտուրա, սկսել զբաղվել գիտական գործունեությամբ: 1990թ.-ից զբաղվում է ձեռնարկատիրությամբ: Մասնակցել է Մոսկվայում մի շարք եկեղեցիների շինարարությանը, դրանց ֆինանսավորմանը: Հեղինակել է տասնյակ աշխատություններ՝ մենեջմենտի, մարքեթինգի, ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ: Ռուսաստանյան շուկայի համալիր ուսումնասիրումը համատեղում է պրակտիկ գործունեության հետ: Նրա ղեկավարած ասոցիացիային 1994-1995թթ. շնորհվել է «Շինարարական օլիմպ» դիպլոմը: Արժանացել է բազմաթիվ պետական և ոչ պետական պարգևների:



ԲԱԶՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1918-)



Ռուբեն Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1918, գ.Ներքին Հոռաթաղ), վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու, խորհրդային բժշկագիտության ականավոր գործիչ: 1937թ. ավարտել է Կուսապատի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Բաքվի Ս.Մ. Կիրովի բանֆակում: 1938թ. ընդունվել է Ադրբեջանի պետական բժշկական ինստիտուտը, 1941թ.՝ Սարատովի ռազմաբժշկական ակադեմիան:

Ավարտելուց հետո մտնում է գործող բանակ ու նրա շարքերում որպես բժիշկ ծառայում տարբեր վայրերում տեղակայված հոսպիտալներում: 1945-1947թթ. Ստեփանակերտում աշխատել է որպես վիրաբուժական բաժնի օրդինատոր, այնուհետև՝ մարզային դատաբժշկական ծառայության փորձագետ-վիրաբույժ: Նույն թվականին տեղափոխվել է Ն. Հոռաթաղ, աշխատել որպես շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: 1952թ. տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել երկրորդ հիվանդանոցում: 1953թ. գործուղվել է Չինաստանի ժողովրդավարական Հանրապետություն, աշխատել որպես վիրաբուժական բաժնի վարիչ: 1955թ. վերադարձել է Երևան և 13 տարի աշխատել որպես բուժօժով գլխավոր բժշկի տեղա-

կալ: 1972թ. տեղափոխվել է Մարտակերտ և մինչև 1986թ. աշխատել որպես շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Այստեղ հիմնել է հիվանդանոց, որը կրում է նրա անունը: Արժանացել է ԽՍՀՄ 5, ՉԺՀ 3 մեդալների:



ԲԱԶՅԱՆ ԽՈՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1906)



Խորեն Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1906, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ Ստեփանակերտ), մաշկաբան, բժշկական գիտությունների թեկնածու, ԼՂԻՄ առողջապահության նախարար:

1932թ. ավարտել է Ադրբեջանի Նարիմանովի անվան բժշկական ինստիտուտը: Հայրենական պատերազմից առաջ եղել է մարզի առողջապահության բաժնի վարիչը: Հայրենական պատերազմի տարիներին եղել է Շուշիի հոսպիտալի պետ, ստացել մայրոքի կոչում: Եղել է Ադրբեջանի հոսպիտալի գլխավոր բժիշկը: Հետպատերազմյան տարիներին նույնպես երկար տարիներ աշխատել է որպես Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի առողջապահության բաժնի վարիչ: Թշուկի անցնելուց հետո մինչև կյանքի վերջն աշխատել է մարզային հիվանդանոցում:



ԲԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1908-1996)

Սուրեն Հայրապետի Բազյան (ծնվ.՝ 1908, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 1996, Մոսկվա), ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու: Աշխատել է Բաքվում:



ԲԱԼԱՅԱՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԻ

(1906-1961)



Աշոտ Կարապետի Բալայան (ծնվ.՝ 1906, գ.Առաջածոր - մահ.՝ 1961, Մոսկվա), ինժեներ, ռադիոլուկացիայի ոլորտի մասնագետ, ԽՍՀՄ Ռազմածովային նավատորմի առաջին ռադիոլուկացիոն կայանների գլխավոր կոնստրուկտոր, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր (1946, 1949):

1934թ. ավարտել է Մոսկվայի էներգետիկական ինստիտուտը՝ ինժեների մասնագիտությամբ: 1922-1929թթ. աշխատել է Բաքվի Արևմտյան երկաթուղու դեպոյում, 1933-1934թթ.՝ Մոսկվայի կապի և էլեկտրամեխանիկայի ԳՀԻ-ում՝ որպես ինժեներ, 1934-1943թթ.՝ Մոսկվայի N192 գործարանում, 1943-1961թթ.՝ Մոսկվայի «Ալտաիր» ծովային ԳՀԻ-ում՝ որպես ավագ ինժեներ, այնուհետև՝ լաբորատորիայի ղեկավար: Պարգևատրվել է մեդալներով, շքանշաններով:



ԲԱԼԱՅԱՆ ԳԱՐՐԻԵԼ ԿԻՄ

(1977)



Գարրիել Կիմի Բալայան (ծնվ.՝ 1977, Երևան) (ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ներքին հոռաթաղի Կիմ Գարրիելի Բալայանի որդին), իրավագետ-սահմանադրագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու (2009), դոցենտ, Հայաստանի փաստաբանների պալատի անդամ (2010), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավաբանության ամբիոնի դոցենտ (2014):

1994-1999թթ. սովորել է ԵՊՀ պատմության, 2001-2005թթ.՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետներում:

2001-2005թթ. աշխատել է ՀՀ հարկային ծառայության օպերատիվ-հետախուզական վարչությունում՝ որպես օպերիվագոր, 2006-2009թթ.՝ Եվրախորհրդի մարդու իրավունքների ծրագրի ազգային փորձագետ: 2005-2012թթ. եղել է ԵՊԼՀ իրավական, ֆինանսական և վարչական գծով պրոնեկտոր, 2012-2013թթ.՝ Համաշխարհային բանկի իրավախորհրդատու, 2012-2013թթ.՝ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալի աշխատակազմի գլխավոր իրավախորհրդատու:

2013-2014թթ. աշխատել է ԱՄՆ Կոնգրեսի իրավաբանական գրադարանում և Ամերիկյան համալսարանի Վաշինգտոնի քոլեջում՝ որպես հետազոտող Ֆուլբրայթ ծրագրի շրջանակներում, 2014-2015թթ.՝ ԵԱՀԿ զին-ծառայողների համար մարդու իրավունքների ծրագրի հրահանգիչ, 2015թ.՝ ԼեզալԼաթ իրավաբանական կազմակերպության գլխավոր իրավախորհրդատու, Եվրախորհրդի ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովի անդամ, 2015-2016թթ.՝ ԵԱՀԿ ներկայացուցչության մարդու իրավունքների բաժնի հրահանգիչ:

2015թ.-ից ղեկավարում է «Մենտիա Լեզալ» կազմակերպությունը: 2014թ.-ից դասախոսում է Հայաստանի ամերիկյան համալսարանում և ԵՊԼՀ ռազմաբժշկական ֆակուլտետում:



**ԲԱԼԱՅԱՆ ԳԱՐԻԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
(1923-1995)**



Գարիել Հարությունի Բալայան (ծնվ.՝ 1923, Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 1995, Մարտակերտ), հասարակական գործիչ:

Սովորել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում: 1941թ. 10-րդ դասարանից կամավոր զորակոչվել է բանակ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1944թ. վիրավորվել է և ուղարկվել թիկունք: Աշխատել է Կուսապատի միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ, 1947-1953թթ.՝ Ներքին Հոռաթաղի կոլտնտեսությունում որպես դաշտավարական բրիգադի բրիգադավար,

1954-1957թթ.՝ Մարտակերտի կուսըջկոմում՝ որպես կազմբաժնի հրահանգիչ: Այդ տարիներին կուսըջկոմի երաշխավորությամբ ընդունվել է Ադրբեջանի գյուղինստիտուտի ագրոնոմիական բաժինը և ավարտել 1960թ.:

1957-1961թթ. ղեկավարել է Չղրանի, 1963-1969թթ. Ճանկաթաղի կոլտնտեսությունները, 1969-1989թ.՝ Ներքին Հոռաթաղի կոլտնտեսությունը: Հայտնի հեղինակություն էր ոչ միայն ԼՂԻՄ-ի տարածքում, այլ նրա սահմաններից դուրս: Որպես սովխոզային արտադրության հմուտ կազմակերպիչ, պարգևատրվել է ՀՍՀՄ կառավարական շքանշաններով ու մեդալներով:

Արցախյան շարժման առաջին տարիներին նյութական աջակցություն է ցուցաբերել ինքնապաշտպանության գործին:



**ԲԱԼԱՅԱՆ ԿԻՄ ԳԱՐԻԵԼԻ
(1947)**



Կիմ Գարիելի Բալայան (ծնվ.՝ 1947, գ.Ներքին Հոռաթաղ), քաղաքական գործիչ, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ (2003):

1966-1977թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1972-1975թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ որպես ավագ լաբորանտ և դասախոս: 1975-1977թթ. աշխատել է որպես ՀԽՍՀ արդարադատության նախարարության դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիայի դատահետաքննական և ձգաբանական փորձաքննությունների բաժնի ավագ փորձագետ, 1977-1990թթ.՝ նույն բաժնի պետ: 1990-1995թթ. եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար, Գերագույն խորհրդի նախագահության անդամ, նույն հանձնաժողովի նախագահ: 1999թ. եղել է ՀՅԴ Գերագույն մարմնի իրավաբանա-

կան ծառայության բաժնի պետ, 2000-2003թթ. և 2003-2004թթ.՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:



ԲԱԼԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԿԻՄ

(1977)



Տիգրան Կիմի Բալայան (ծնվ.՝ 1977, Երևան), (ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ներքին հռաքաղցի Կիմ Գաբրիելի Բալայանի որդին), պատմական գիտությունների բեկնածու (2003), դոցենտ (2014), դիվանագետ, Քիմիական զենքի արգելման կազմակերպությունում Հայաստանի մշտական ներկայացուցիչ (2018, նստավայրը՝ Հաագա):

1994-1999թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետում, 1999-2002թթ.՝ նույն ֆակուլտետի ասպիրանտուրայում՝ ստանալով ի գիտական աստիճան, 2000-2002թթ.՝ ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետում:

1997-2000թթ. աշխատել է Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում՝ որպես մշտական ներկայացուցչի օգնական, 2000-2002թթ. ՌԴ-ում ՀՀ դեսպանատանը՝ որպես Քաղաքական բաժնի ղեկավարի օգնական: 2002-2004թթ. դասախոսել է Հայ-ռուսական (ալավոնական) համալսարանում: 2002-2003թթ. եղել է կցորդ ՀՀ ԱԳՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում, 2003-2004թթ.՝ ՀՀ ԱԳՆ Սպառազինությունների վերահսկողության և միջազգային անվտանգության վարչության ՆԱՏՕ-ի բաժնում, 2004-2007թթ. երրորդ, ապա երկրորդ քարտուղար Բելգիայի թագավորությունում ՀՀ դեսպանությունում, 2007-2008թթ.՝ ՀՀ ԱԳՆ Մամուլի և տեղեկատվության վարչության Լրատվամիջոցների հետ կապի բաժնի վարիչի պաշտոնակատար: 2007-2018թթ. դասավանդել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 2008-2010թթ. աշխատել է որպես ՀՀ ԱԳՆ մամուլի և տեղեկատ-

վության վարչության պետի, ինչպես նաև մամուլի քարտուղարի պաշտոնակատար, 2010-2018թթ.՝ ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ: 2018թ. նշանակվել է Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Հեղինակել է բազմաթիվ գիտական հոդվածներ, ինչպես նաև «Լեռնային Դարաբաղի խնդիրը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.» մենագրության, «Բազմակողմ Դիվանագիտություն» դասախոսությունների ժողովածուն: Հայաստանի պատվիրակությունների կազմում մասնակցել է բազմաթիվ զագաթաժողովների և համաժողովների:

Արժանացել է ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի դիվանագիտական աստիճանի, պարգևատրվել ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի շնորհակալագրերով, ՀՀ վարչապետի անվանական ժամացույցով, ԼՂՀ ԱԳՆ 20-ամյակի հուշամեդալով, ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան» և Մխիթար Գոշի մեդալներով (2016), ԱՀ «Երախտագիտության մեդալով» և ՀՀ ԱԳՆ պատվո մեդալով:



ԲԱԼԱՅԱՆ ՌՈՄԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ

(1941)



Ռոման Գուրգենի Բալայան (ծնվ.՝ 1941, գ.Ներքին Հռաքաղ), կինոռեժիսոր, ԽՍՀՄ Պետական մրցանակակիր (1987), Ուկրաինայի ժողովրդական արտիստ (1997), Ուկրաինայի Արվեստի ակադեմիայի ակադեմիկոս:

1961-1964թթ. սովորել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 1969թ. ավարտել է Կիևի թատերական ինստիտուտի կինոռեժիսուրայի բաժինը:

1959-1961թթ. եղել է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի դերասան: 1969թ.-ից աշխատել է որպես Կիևի Դովժենկոյի անվան կինոստուդիայի ռեժիսոր:

Որպես ռեժիսոր՝ իր առաջին ֆիլմը ստեղծել է 1973թ.: Նրան հատկապես մեծ հռչակ է բերել 1982թ. ստեղծված «Թոփչներ երազում և արթննի» ֆիլմը:

Արժանացել է «Ոսկե խոյ» մրցանակի (1966), «Տարածաշրջանի առա-

ջատար «ծրագրի դափնեկիր (2002), «Սկյութական եղջերու»-ի՝ Ուկրաինայի նախագահի կողմից (2008), ուկրաինական «Ծառայությունների համար» երկրորդ կարգի շքանշանի (2008), «Փարաջանովյան թալեր»-ի՝ համաշխարհային կինոյում ունեցած մեծ վաստակի և ներդրման համար (2011): Մշտական աջակցություն է ցուցաբերում «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային կինոփառատոնին: 2013-2014թթ. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում վարել է բարձրագույն դասընթաց կինոռեժիսորների համար: Բնակվում է Կիևում և Մոսկվայում:



ԲԱՆԱՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԵԲՍԵՅԻ

(1958-1992)



Վլադիմիր Ալեքսեյի Բալայան (ծնվ.՝ 1958, գ.Մոխրաթաղ - մահ.՝ 1992, Չայլու), Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս (2019):

Նախնական կրթությունը ստացել է Աղաբեկախի տարրական, միջնակարգը՝ Ներքին Հռաբաղի դպրոցներում: Մարտակերտի խմբագրությունում աշխատել է որպես տպագրիչ:

Ծառայել է Խորհրդային բանակում: Ջորաջովելուց հետո ընդունվել է 1983թ. ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը: Աշխատանքի է անցել հայրենի գյուղի տնտեսությունում որպես գյուղատնտես: 1985թ. աշխատել է Մարտակերտի անտառտնտեսությունում: Արցախյան պատերազմի առաջին օրերից առաջնագծում էր՝ որպես ջոկատի հրամանատար: Եղել է «Ազատագրական բանակ»-ի «Արցախի ճակատ»-ի հրամանատարը: Մասնակցել է Բուզլուխի, Մանաշիդի, Էրբեջի, Ղարաչինարի, Իմ. Քերվենդի, Ծամձորի, Տողի, Աղղաբանի, Մարաղայի, Սրխավենդի, Օրթափայայի, Բաշ-Գյունեփայայի, Մանիբլուի պաշտպանական ու ազատագրական մարտերին: Միայն 2 անգամ իր ջոկատով մասնակցել է Մարտակերտի ազատագրմանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով: Հուշարձան է կանգնեցվել նրա անունը կրող Մարտակերտի դպրոցում:

ԲԱԼՈՒՂՅԱՆ ՍՈՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1907-1992)

Սոնյա Հարությունի Բալուդյան (ծնվ.՝ 1907, գ.Աղաբեկախից - մահ.՝ 1992, Երևան), բանրակագործուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1948):

1931թ. եղել է Մարտակերտի Ֆրունզեի անվան կոլտնտեսության օղակավարուհի: 1948թ. 6 հեկտար հողատարածքի մեկ հեկտարից ստացել է 88,3ց բանրակ: Կիրառել է բանրակի մշակման նոր մեթոդներ՝ կախված կլիմայական պայմաններից:

Արժանացել է «Մուրճ և մանգաղ» ոսկե մեդալի և Լենինի շքանշանի:



ԲԱՆՇՈՒՆԻ ԱՐԲԱՀԱՄ

(1915-2005)

Արահամ Բախշունի (Բախշի Դավիթի Արահամյան) (ծնվ.՝ 1915, գ.Թալիշ - մահ.՝ 2005, Երևան), բանաստեղծ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1952):

Սովորել է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում:

1934-1935թթ. որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, աշխատել է Աղբրեջանի՝ Խանլարի շրջանի Չովղար գյուղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ծառայել է խորհրդային բանակում: 1937-1940թթ. եղել է Խանլարի շրջանի «Ազնիվ աշխատանք» թերթի պատասխանատու քարտուղարը, 1940թ.-ից՝ խմբագիրը: 1942-1946թթ. աշխատել է որպես Աղբրեջանի կոմկուսի Խանլարի շրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1946-1947թթ.՝ Դաշքեսանի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար, 1947-1974թթ.՝ Բաքվի «Կոմունիստ» (հայերեն) թերթի սեփական թղթակիցը Կիրովաբադի գոտու հայաբնակ շրջաններում:

Հեղինակել է բազմաթիվ ստեղծագործություններ, ուսերեն առանձին գրքով լույս է տեսել նրա «Այրվող միջօրե» բանաստեղծությունների ժողովածուն (Մոսկվա, 1973):





ԱՐՄԻՆԵ ՌՈՒՐԻԿԻ
(1972)

Արմինե Ռուրիկի Բաղդասարյան (ծնվ.՝ 1972, գ.Չայլու), մանկավարժական գիտությունների թեկնածու (2006):

1989-1993թթ. սովորել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի «Նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն» բաժնում:

1995թ. աշխատել է Գորիսի շրջանի Վաղատուր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 1998թ. աշխատել է Շուշիի «Գրիգոր Մագիստրոս» համալսարանում, 2002-2003թթ.՝ ԱրՊՀ-ում, 2004-2008թթ.՝ Շուշիի Ա.Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում: 2008թ.-ից դասախոսում է ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում: Հեղինակել է մի շարք հոդվածներ:

1995թ. աշխատել է Գորիսի շրջանի Վաղատուր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 1998թ. աշխատել է Շուշիի «Գրիգոր Մագիստրոս» համալսարանում, 2002-2003թթ.՝ ԱրՊՀ-ում, 2004-2008թթ.՝ Շուշիի Ա.Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում: 2008թ.-ից դասախոսում է ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում: Հեղինակել է մի շարք հոդվածներ:



ԱՐՄԻՆԵ ՌՈՒՐԻԿԻ
(1930-)

Ռաֆայել Ներսեսի Բաղդասարյան (ծնվ.՝ 1930-մահ.՝ 201., գ.Գյուլաթաղ (Վարդաձոր) 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Սովորել է Գյուլաթաղի յոթամյա, այնուհետև Կուսապատի միջնակարգ դպրոցներում: 1948թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի քիմիա-կենսաբանական ֆակուլտետը:

1950թ. մանկավարժական աշխատանքի է անցել գյուղի յոթամյա դպրոցում: 1952թ. նշանակվել է «Մոցիալիզմի ուղիով» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1953թ. ընտրվել է ԼԿԵՄ Մարտակերտի շրջ-

կոմի առաջին քարտուղար: 1961թ. նշանակվել է Ջանյաթաղի ութամյա դպրոցի տնօրեն: Աշխատանքին զուգահեռ՝ 1963թ. հեռակա կարգով ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: 1964թ. աշխատանքի է հրավիրվել շրջանային կրթության բաժնի՝ որպես դպրոցական տեսուչ: 1965-1978թթ., միաժամանակ, եղել է շրջանի լուսավորության աշխատողների արհևույնի նախագահ: 1988-1994թթ. աշխատել է որպես շրջողկրթբաժնի վարիչ: Աշխատանքի ընթացքում մանկավարժական թեմաներով պարբերաբար տպագրվել է շրջանային և հանրապետական պարբերականներում: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Աշխատանքի արիության համար», «Աշխատանքի գերազանցության համար», «Աշխատանքի վետերան» մեդալներով: Արժանացել է «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել պատվոգրերով և գովասանագրերով:



ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ
(1964)

Գագիկ Միքայելի Բաղդունց (ծնվ.՝ 1964, ք.Մարտակերտ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (1990), դոցենտ:

1980թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1980-1985թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: 1985թ. ընդունվել է ՍՄԳԱ Սքոնոլորտի ֆիզիկայի ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան: 1990թ. աշխատանքի է ընդունվել Երևանի ճարտարագիտական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք՝ որպես ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ: 1992-1997թթ. ծառայել է ՊԲ շարքերում՝ որպես ՀՕՊ գնդի շտաբի պետ: 1993թ. ընտրվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան: 1998թ. աշխատել է որպես ՀՀ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ԼՂՀ բաժանմունքի պետի տեղակալ, 2003թ.՝ ԱրՊՀ հրատարակչության բաժնի վարիչ: 2009թ.



1992-1997թթ. ծառայել է ՊԲ շարքերում՝ որպես ՀՕՊ գնդի շտաբի պետ: 1993թ. ընտրվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան: 1998թ. աշխատել է որպես ՀՀ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ԼՂՀ բաժանմունքի պետի տեղակալ, 2003թ.՝ ԱրՊՀ հրատարակչության բաժնի վարիչ: 2009թ.

ընտրվել է ճարտարագիտական ֆակուլտետի ղեկան: 2015թ. ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:



ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՆՅԱ ՌԱՖԵՍԵԼԻ

(1959)



Վանյա Ռաֆայելի Բարսեղյան (ծնվ.՝ 1959, Մատաղիս), մեքենագետ, մեխանիկոս, Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (2000), պրոֆեսոր (2002):


1980-1985թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխամաթ ֆակուլտետի մեխանիկայի բաժնում: 1989-1991թթ. եղել է Երևանի պետական համալսարանի տեսական մեխանիկայի ամբիոնի կրտսեր գիտաշխատող.

1991-1993թթ.՝ ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնի ասիստենտ, 1993-2001թթ.՝ ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնի դոցենտ, 1996-2000թթ.՝ ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետի ղեկանի տեղակալ, 2003-2007թթ.՝ ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ, 2007թ., միաժամանակ՝ ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, 2004-2007թթ.՝ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, 2008-2009թթ.՝ ՀՀ գիտության պետական կոմիտեի գիտական քաղաքականության վարչության պետ, 2009թ. ՀՀ ԳԱԱ նախագահության սփյուռքի բաժնի պետ: Աշխատանքները վերաբերում են խաղային խնդիրներին՝ գրավիտացիոն դաշտում, շարժում համակարգերի ղեկավարմանն ու դիտմանը՝ հակամարտության իրավիճակներում և կիրառությանը՝ մեխանիկայի համակարգերի համար: Հեղինակել է մի շարք ուսումնական ձեռնարկներ:



ԲԵԳԼԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՆԳՐԵՅԻ

(1951)



Լևոն Անդրեյի Բեգլարյան (ծնվ.՝ 1951, գ.Լենինավան), մաթեմատիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր (1990), պրոֆեսոր (1992), ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի քոբակից (2004):

1968թ. ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պետական համալսարանը: Որոշ ժամանակ սովորելուց հետո տեղափոխվել է Մոսկվա և 1974թ. գերազանցությամբ ավարտել Մոսկվայի պետական համալսարանը: 1974-1978թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Հաշվիչ կենտրոնի ասպիրանտուրայում: Եղել է ՌԴ ԳԱ տնտեսամաթեմատիկական ինստիտուտի գլխավոր գիտաշխատող և նույն խնդիրների «դիֆերենցիալ հավասարումներ և նրանց հավելվածները» բազային ամբիոնի վարիչը: Գիտական աշխատանքները մվիրված են կերային բնույթի ֆունկցիոնալ - դիֆերենցիալ հավասարումներին: 1997թ. հիմնադրել է վերլուծական կենտրոն, որտեղ իրականացվում են կիրառական հետազոտական աշխատանքներ:



ԲԵԳԼԱՐՅԱՆ ՆԵՐԻԿ ԱՆԳՐԱՆԻԿԻ

(1947)



Ներիկ Անդրանիկի Բեգլարյան (ծնվ.՝ 1947, գ.Հաթերք), հասարակական գործիչ, արդարադատության գնդապետ:

1965թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը:

Համակողմանի կարողությունների համար ինստիտուտի ռեկտորի կողմից աշխատանքի է

նշանակվել նույն ինստիտուտում՝ որպես ասիստենտ: Ապա ընդգրկվել է շինարարական պրակտիկ աշխատանքի մեջ: 1973-1978թթ. աշխատել է որպես աշխուղել, 1979-1981թթ.՝ շինվարչության պետ, 1981-1987թթ.՝ «Չարենցավանշին» տրեստի կառավարիչ, 1987-1990թթ.՝ Երևանի մաքեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր տնօրենի տեղակալ շինարարության գծով, 1990-1994թթ.՝ «Արվյանշին» տրեստի կառավարիչ: 1994-1999թթ. աշխատել է «Հայթեք» հայ-ամերիկյան համատեղ ձեռնարկությունում, եղել գործադիր տնօրեն: 1999թ. աշխատանքի է անցել ՀՀ Արդարադատության նախարարությունում որպես նախարարության ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ արդարադատության գնդապետի կոչումով, որտեղ էլ և աշխատում է առ այսօր:

«Հաթեք» բարեգործական հիմնադրամի խորհրդի անդամ է և իր արժանի ներդրումն է արել հիմնադրամի ֆոնդին և ակտիվ մասնակցություն ունեցել Արցախյան զոյամարտում զոհված 57 հաթերքեցիների հիշատակն հավերժացնող կոթող-հուշահամալիրի շինարարության գործում:



ԲԵՂԱՐՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԱՍԾԱՏՈՒԻ

(1936)

Վիկտոր Ասծատուրի Բեգլարյան (ծնվ.՝ 1936, գ.Հաթեք), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ (1989):

1943-1955թթ. սովորել է Հաթեքի միջնակարգ դպրոցում: 1955թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը՝ ստացել մաթեմատիկոսի և միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում: Ֆիզմաթ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ աշխատանքի է անցել նույն ֆակուլտետի «Երկրաչափություն և բարձրագույն հանրահաշիվ» ամբիոնում՝ որպես ասիստենտ: 1966-1989թթ. աշխատել է որպես ավագ դասախոս: 1973թ. ընդունվել է Քիշինևի պետական համալսարանի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո Մոլդովական ԳԱԱ-ում պաշտպանել է գիտական թեզ, ստացել ֆիզմաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մոսկվայի, Լենինգրադի, Քիշինևի, Նովոսիբիրսկի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Իրանի մասնագիտական ամսագրերում տպագրել է 18 գիտական աշխատանք: Ձեկուցումներով

հանդես է եկել ԽՍՀՄ առաջատար բուհերում: 1988թ. Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից է: Եղել է «Արցախ» բարեգործական միության նախագահության անդամ, ապա՝ փոխնախագահ:



ԲԵԿՉԱԳՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԳԻ ԱՐՏԵՄ

(1879-1939)



Ալեքսանդր Արտեմի Բեկգաղյան (ծնվ.՝ 1879, գ.Կուսապատ - մահ.՝ 1939), հեղափոխական, կուսակցական և պետական գործիչ:

Սովորել է Կուսապատի քառամյա ռուսական դպրոցում: Ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը: 1900-1902թթ. սովորել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1911թ. ավարտել է Ցյուրիխի համալսարանի հասարակաբաղաքական ֆակուլտետը: Գործում մասնակցություն է ունեցել ՌՄԴԲԿ արտասահմանյան կազմակերպությունների աշխատանքներին, սերտ կապ պահպանել 2-րդ ինտերնացիոնալի գործիչների, Եվրոպայի կուսակցությունների հետ: 1903թ. դարձել է ՌՄԴԲԿ անդամ, 1906-1914թթ.՝ վտարանդի Շվեյցարիայում: 1914թ. աշխատել է Բաքվում, ապա՝ Հս. Կովկասում: 1920թ. եղել է Հայաստանը խորհրդային հռչակող հեղկոմի անդամ, առաջին կառավարության արտգործողը: 1920թ. դեկտեմբերին և 1921թ. հունվարին Թուրքիայի կառավարությանը նուտաներ է հղել՝ պահանջելով դադարեցնել զրաված հայկական տարածքներում հայ բնակչության նկատմամբ զազանությունները, առաջարկել բանակցություններ սկսել Կարսի մարզը և Ալեքսանդրապոլը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու համար: Սակայն թուրքական կողմը պահանջել է արգելել Բեկգաղյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության մասնակցությունը 1921թ. փետրվար-մարտին Մոսկվայի բանակցություններին՝ պատճառաբանելով Հայաստանում սկսված հակախորհրդային զինված ապստամբությունը: Հետագա տարիներին կատարել է դիվանագիտական աշխատանք: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետմահու արդարացվել:



ՔԵԿՁԱԳՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐՏԵՄ

(1895-1938)

Պետրոս Արտեմի Բեկզադյան (ծնվ.՝ 1895, գ.Կուսապատ - մահ.՝ 1938), պետական գործիչ:

1913թ. ընդունվել է Թիֆլիսի պատանեկան գիմնազիան, 1914թ.՝ Խարկովի պետական համալսարանը:

Երրորդ կուրսից գորակոչվել է բանակ: 1916թ. սեպտեմբերին գտնվում էր Ցարիցինո քաղաքի ուսանողական գումարտակում:

1916թ. տեղափոխվել է Թիֆլիսի ուսանողական դպրոց: 1917թ. դարձել է Ախալքալաքի 116-րդ վաշտի կրտսեր սպա: 1917թ. տեղափոխվել է Կովկասյան ռազմաճակատ: Մարիդամիշում նշանակվել է հայկական 7-րդ դիվիզիայի հրամանատար: 1918թ. մայիսին վիրավորվել է գերի է ընկել Ալեքսանդրապոլում՝ նահանջի ժամանակ: Գերության մեջ մնացել է մինչև 1918թ. օգոստոս: Բուժվել է Թիֆլիսում: Այստեղ հայերի և վրացիների միջև տեղի ունեցած բախումից հետո պետք է լքեր Թիֆլիսը: 1920թ. սկզբին նշանակվել է Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարի տեղակալ: 1922թ. հայկական պատվիրակության կազմում գործուղվել է Մոսկվա: 1924թ. ընդունվել է Լենինգրադի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի միջազգային հարաբերություններ բաժինը: 1925թ. տեղափոխվել է Մոսկվա: Նշանակվել է Մոսկվայում Վրաստանի ներկայացուցչի ավագ խորհրդատու: 1937թ. ձերբակալվել է հեղափոխական-նացիոնալիստական կազմակերպության անդամի մեղադրանքով: Գնդակահարվել է 1938թ. սեպտեմբերի 15-ին, հետմահու արդարացվել 1958թ.:



ՔԵԿՁԱԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՐՏԵՄ

(1885-1938)



Ռուբեն Արտեմի Բեկզադյան (Ալ.Բեկզադյանի եղբայրը), (ծնվ.՝ 1885, գ.Կուսապատ - մահ.՝ 1938, Կոմունարկա), իրավաբան, հասարակական գործիչ:

Ստացել է բարձրագույն իրավաբանական կրթություն:

Երկար տարիներ եղել է ԽՍՀՄ տեղական արդյունաբերության Գլխավոր քիմիական արտադրության ժողկոմի իրավաբան-խորհրդատու: Ձերբակալվել է 1938թ. ապրիլի 20-ին հակահեղափոխական-նացիոնալիստական կազմակերպության անդամի մեղադրանքով: Գնդակահարվել է 1938թ. սեպտեմբերի 15-ին, հետմահու արդարացվել 1956թ.:



ՔՈՒՆԻԱԹՅԱՆ ԱՐՅԱԽ ԱՍԼԱՆԻ

(1939-2012)



Արցախ Ասլանի Բունիաթյան (մայրը Մեծշեն գյուղից է, հայրը՝ ՀՀ Աշտարակի Կոչ գյուղից), (ծնվ.՝ 1939, գ.Մեծշեն - մահ՝ 2012, ք.Երևան), վաստակավոր բժիշկ (2008, ԼՂՀ նախագահի հրամանագրով), գրող, տարեգիր, ազգային-ազատագրական շարժման մասնակից, Հայաստանի գրողների միության անդամ (2007):

Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1950թ. ընտանիքը տեղափոխվել է Արմավիր քաղաք: 1952թ. ավարտել է Արմավիրի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1959-1962թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում:

1965-1968թթ. աշխատել է Ցեխնոգրադի մարզի Աղբասարի քաղաքա-

յին հիվանդանոցում որպես վիրաբույժ: Հայաստան վերադառնալուց հետո աշխատել է Լենինականի երկաթգծի հիվանդանոցում: 1968թ. աշխատանքի է անցել Արուսյանի քաղաքային հիվանդանոցում:

Տպագրել է վիրաբուժությանը, ինչպես նաև հիվանդների հոգեբանական վիճակի կարգավորմանը նվիրված 30-ից ավելի գիտական և շուրջ 60 հանրամատչելի հոդվածներ: 1988թ. Արցախյան շարժման Արուսյանի ակտիվ մասնակից էր, 1990թ.՝ ՀՅԴ անդամ: 1992-1995թթ. եղել է Մարտակերտի ռազմադաշտային շարժական հոսպիտալի գլխավոր վիրաբույժը: Մասնակցել է բոլոր ռազմական գործողություններին: 1996թ. եղել է Զաշաթաղի Բերձոր քաղաքի բուժմիավորման գլխավոր բժիշկը: Գրել է «Նժդեհի վերադարձը» (Երևան, 1999) գիրքը և օրագիր, նվիրված Արցախում տեղի ունեցած ռազմական գործողություններին: Հեղինակել է նաև «Արյունոտ օրեր, Մարտակերտ, 1992թ.» (Երևան 2000), առաջին, «Արյունոտ օրեր, Մարտակերտ, 1992-1993թթ.» (Երևան, 2001) երկրորդ գրքերի: «Արյունոտ օրեր» 3-րդ գիրքը արժանացել է ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակի:



ԲՈՒՆԻԱԹՈՎ ՍՏԵՓԱՆ ԱՀԱՐՈՆԻ

(1932)

Ստեփան Ահարոնի Բունիաթով (ծնվ.՝ 1932, գ.Կիշան), ֆիզիկոս-գիտնական, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր (1947), պրոֆեսոր (1982):

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը: 1978թ.-ից աշխատել է Դուբնա քաղաքի միջուկային հետազոտությունների լաբորատորիայում՝ որպես փոխտնօրեն և փոքրագույն մասնիկների էներգիայի հետազոտության ֆիզիկայի բաժնի ղեկավար: Մեծ աշխատանք է իրականացրել միջուկային ֆիզիկայի բնագավառում: Մի շարք գյուտերի հեղինակ է:



ԲՈՒՆՏԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱԼԵՔՍԱՆԳՐԻ

(1956)

Սերգեյ Ալեքսանդրի Բունտան (Պետրոս Բեկզադյանի թոռը՝ մայրական կողմով), (ծնվ.՝ 1956, Մոսկվա), լրագրող, թարգմանիչ, ռադիոհաղորդավար, մանկավարժ, խմբագիր:



1979թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզուներ բաժինը:

Դասավանդել է անգլերեն և ֆրանսերեն:

Մոսկվայի թիվ 875 դպրոցում գործող թատերական ստուդիայի ղեկավարն է: Շուրջ 10 տարի Սերգեյ Կորզունի հետ եղել է «Մոսկովյան ռադիո» միջազգային թերթի բանախոսը: 1990թ.-ից աշխատել է Ս.Կորզունի հիմնած «Մոսկվայի արձագանքը» ռադիոյում: 1990թ. եղել է մշակութային բաժնի ղեկավար, 1996թ.՝ հաղորդումների հեռարձակման տնօրեն, 1998թ.՝ գլխավոր խմբագրի տեղակալ:

2005թ. արժանացել է Բորիս Վաքսմանի անվան մրցանակի՝ Ժակ Ռուբրոյի գիրքը թարգմանելու համար, 2008թ.՝ «Ռուսաստանի ոսկե փետուր» մրցանակի՝ Ռ.Դ. ժուռնալիստների միության կողմից:

2011թ. այցելել է Ղարաբաղ, որից հետո աղբյուրաբանական իշխանությունների կողմից հայտնվել է «սև ցուցակում»:





ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ԳԵՐԵՆԻԿ ԱՐԲԱՍԻ

(1944)

Գերենիկ Արրասի Գարրիելյան (ծնվ.՝ 1944, գ.Մատաղիս), ՀԽՍՀ և ՀՀ մարզական գործիչ, ՀԽՍՀ բռնցքամարտի քառակի չեմպիոն (1966-1969), ԱԻԲԱ-ի միջազգային բարձրագույն կարգի մրցավար (1988), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ (1990), ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող (1999), մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական

ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ (2009):

Ավարտել է Մատաղիսի միջնակարգ դպրոցը, 1983թ.՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1981-1984 թթ. աշխատել է ՀԽՍՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեում որպես պետական մարզիչ, ապա՝ վարչության պետ: 1988թ.-ից եղել է Օլիմպիական հերթավաճառի հանրապետական ուսումնարանի տնօրենը, 2002թ.-ից՝ Եվրոպայի բռնցքամարտի ընկերակցության գործկոմի անդամ և մրցավարական հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ, 2008թ.-ից՝ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահ:

Արժանացել է մի շարք մեդալների և շքանշանների:



ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ ԿԱՌԼԵՆԻ

(1963)

Կարեն Կառլենի Գարրիելյան (ծնվ.՝ 1963, գ.Քոլատակ), դատախազ, իրավաբանության ավագ խորհրդական, «ՌԴ դատախազության պատվավոր աշխատող»:

1986թ. ավարտել է ԽՍՀՄ ՊՆ Ռ-ազմական ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատանքի է անցել դատախազության

համակարգում: Աշխատել է քննիչ, Թուրքմենական ԽՍՀ Աշխաբադի կայազորի ռազմական դատախազի օգնական, Կիզըլ-Արվատի կայազորի ռազմական դատախազ, Բալքյան նավատորմի ռազմական դատախազության ընդհանուր հսկողության բաժնի ռազմական դատախազ, սահմանային զորքերի Կալինինգրադյան խմբի ռազմական դատախազ, Հյուսիս-արևելյան սահմանամերձ շրջանի ռազմական դատախազ, Ալանիայում՝ Հյուսիսային Օսեթիայի հանրապետությունում, դատախազության ֆեդերատիվ օրենսդրության պահպանմանը հետևող բաժնի պետ, հանրապետության դատախազի ավագ օգնական և տեղակալ: 2011թ. նշանակվել է Կարելիայի հանրապետության դատախազ: Պարգևատրվել է մի շարք մեդալներով:



ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ

(1936-199.)

Վահան Միքայելի Գարրիելյան (ծնվ.՝ 1936, Մարտակերտ -մահ.՝ 199., Ռիգա), պետական գործիչ:

Գյուղատնտեսական կրթություն ստանալուց հետո ղեկավար պաշտոններ է վարել ԼԿԵՄ Ղարմարզկոմում, կուսմարզկոմում: Ընտրվել է Մարտունու, Մարտակերտի շրջանային կուսկոմիտեների առաջին քարտուղար: 1988թ. սեպտեմբերին նորից ընտրվել է Մարտակերտի կուսշրջկոմի նախագահ, ԽՍՀՄ գերագույն խորհրդի պատգամավոր (1989): Նրա նախաձեռնողական տաղանդի շնորհիվ Մարտակերտ ավանը քաղաքի տեսք ստացավ: Հակամարտության պայմաններում կառուցվեց օդակայան, որը պիտի ընդուներ «Յակ-40», սակայն օդանավակայանը ավերվեց արտակարգ իշխանության պատժիչ ջոկատների կողմից: Մեծապես աջակցել է Ադրբեջանի բանտերում կալանավորված պատանդների վերադարձին:

Մարտակերտի տեղահանությունից հետո հանգրվանել է Ռիգայում՝ դառնալ մոտ:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՇԱՀՆԱԶԱՐԻ

(1921-)

Գեորգի Շահնազարի Գասպարյան (ծնվ.՝ 1921, գ.Կուսասպատ), ավիացիայի կոնստրուկտոր:

Բաքվի ինդուստրիալ ինստիտուտի 3-րդ կուրսից փոխադրվել է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Եղել է օդաչու: «ՌԻ-2» ինքնաթիռով մարտական թռիչքներով մասնակցել է Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հարավային Ավստրիայի ազատագրմանը: Մերտ կապ է պահպանել տոհմակիցների հետ: 1955թ. երկու ընկերների հետ մոտոցիկլետով Մոսկվայից հասել է հայրենի Կուսասպատ գյուղ, մի քանի օր մնացել գյուղում: Այնուհետև մոտոցիկլավոր եղյակը Կուսասպատից կտրել և անցել է Քելրեջար-Վարդենիս-Սևան-Երևան-Վրաստան, Մոչի-Մոսկվա ճանապարհը: Աշխատել է Լըքկարիմո քաղաքի գիտահետազոտական ինստիտուտում:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ ՍԱՀԱԿԻ

(1942)

Ժորա Սահակի Գասպարյան (ծնվ.՝ 1942, գ.Զարդախաչ), ԼՂՀ ՊԲ գեներալ-մայոր (1996), Արցախի հերոս (2006):

1966թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը: 1966-1988թթ. ծառայել է ԽՍՀՄ ՁՈւ Անդրբայկալյան, Կիևի զինվորական օկրուգներում, Գերմանիայում տեղակայված զորամասերում: 1991թ. Զարդախաչի կամավորական ջոկատի կազմում մասնակցել է Զարդախաչի և Չափարի ինքնապաշտպանական

մարտերին: 1992թ. փետրվարին ստանձնել է հրետանային ստորաբաժանումների ստեղծման աշխատանքները: 1992թ. սեպտեմբերին նշանակվել է ԼՂՀ ՊԲ հրետանու պետ: Մասնակցել է գրեթե բոլոր ռազմական գործողություններին՝ Արաքս գետից մինչև Օմարի լեռնանցք: 1999-2000թթ. եղել է ԼՂՀ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ, 2000-2002թթ.՝ ԼՂՀ ՊԲ հրետանու պետ: 2002թ. զորացրվել է: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ ՇԱՀՆԱԶԱՐԻ

(1925-2002)



Շահեն Շահնազարի Գասպարյան (ծնվ.՝ 1925, Մարտակերտ - մահ.՝ 2002, Մոսկվա), ինժեներ-կոնստրուկտոր:

Ավարտել է Բաքվի ինդուստրիալ ինստիտուտը՝ ինժեներ-կոնստրուկտորի մասնագիտությամբ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել կործանիչ վաշտի հրամանատար-օդաչու: Ավարտել է մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանը: Միաժամանակ հաճախել է որսի շան փորձագետների դասընթացների: Նա փորձագետ էր ոչ միայն տեխնիկական գիտությունների մեջ, այլև ազգային, տնտեսական-քաղաքական կյանքի բնագավառներում:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇԱՀՆԱԶԱՐ ՍԱՐԳՍԻ

(1893-1967)

Շահնազար Սարգսի Գասպարյան (ծնվ.՝ 1893, Մարտակերտ-1967, Մոսկվա), ինժեներ-կոնստրուկտոր:

1912թ. Գորիում ավարտել է անդրկովկասյան սեմինարիան ու որպես պարտադիր պետական պայման՝ 6 տարի ուսուցչավարել կրթական մարմինների նշանակմամբ:

1912-1915թթ. եղել է Սեյսուլան գյուղի վերակացուն: 1915-1917թթ. աշխատել է Շուշիի առաջին տարրական ուսումնարանում, 1917-1918թթ.՝ Ներքին Հոռաթաղի դպրոցում, 1918-1920թթ.՝ Մարտակերտում: Մինչև 1922թ. եղել է Մարտակերտի ժողկրթբաժնավար: 1917թ. Շուշիում հանձնել է ռեալական 6-դասյա ուսումնարանի դասընթացների



ծրագրով նախատեսված քննությունները ու ստացել ժամանակին հռչակ վայելող այդ ուսումնարանի վկայականը:

1922թ. տեղափոխվել է Բաքու, դասավանդել տեղի հայկական դպրոցներում, զբաղվել ինքնակրթությամբ, որակավորվել բուհերում, լուսավորության և բուհական մարմիններում: Նրա նորարարական միտքը գրավել է նավթարդյունաբերության ղեկավարների ուշադրությունը, առաջ է քաշվել որպես առաջատար ինժեներ-կոնստրուկտոր: 1951թ. ԽՍՀՄ նավթարդյունաբերության նախարարության կարգադրությամբ Բաքվից տեղափոխվել է Նեբեսդադ (Թուրքմենիա): «Թուրքմենպրոյեկտ»-ում աշխատել է որպես մեխանիկական խմբի ղեկավար: 1965թ. վիրավորվել է մոտոցիկլետի վրա-երթից: Թողել է Նեբեսդադն ու անցել թոշակի: Ապրել է Մերձմոսկովյան Լըբկարինո քաղաքում: Դուստրը՝ Էմմա Շահնազարին, ծնված՝ 1937թ., ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետհամալսարանի ֆիզիկայի ինստիտուտը: Աշխատել է ֆիզիկայի ինստիտուտում:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ՊԱՍԷՆ ԱՐՄԵՆԻ

(1928-)

Պատկերն Արսենի Գասպարյան (ծնվ.՝ 1928, Մարտակերտ), նկարիչ, քանդակագործ, կենդանագիր:

Կրթությունը ստացել է Լենինգրադում: 1950-1990թթ. իր գեղարվեստի արհեստանոցով վերադարձել է Մարտակերտ: Հեղինակ է շրջանի մի քանի գյուղերում 1941-1945թթ. պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձան-կոթողների:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ

(192. -...)

Սուրեն Տիգրանի Գասպարյան (ծնվ.՝ 192.), Հանրապետության վաստակավոր ուսուցիչ:

Մարտակերտի թիվ 1 դպրոցում երկար տարիներ դասավանդել է քիմիա: Հայրենական մեծ պատերազմի շքանշանակիր է:



ԳՅՈՒԼԱՐՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՍԱՄՎԵԼԻ

(1950-2012)

Գեորգի Սամվելի Գյուլարյան (Գեորգի «Արցախ») (ծնվ.՝ 1950, գ.Լենինական - մահ.՝ 2012, ք.Կորույով, Մոսկվայի մարզ), կրկեսային և էստրադային դերասան, աճապարար, ռեժիսոր:

Ընդունվել է Ստեփանակերտի մեխանիկա-ինժեներական տեխնիկումը: Այնուհետև մեկնել է Կիև՝ ընդունվելու կրկեսային ստուդիա: Ութ տարի աշխատել է Կիևի պետական կրկեսում՝ գլխավոր ռեժիսոր Բորիս Չայցկի ղեկավարությամբ, հյուրախաղերով հանդես եկել ԽՍՀՄ-ում և այլ երկրներում: Ապա աշխատել է Մոսկվայի կրկեսում՝ որպես բեմադրող-ռեժիսոր և էստրադային արվեստի Համամիութենական ստեղծագործական արհեստանոցում: Մշտական բնակություն է հաստատել Մերձմոսկովյան շրջանում, զբաղվել մանկավարժական և ռեժիսորական գործունեությամբ:





ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐԻ
(1963-...)

Սերգեյ Գրիգորի Գրիգորյան (ծնվ.՝ 1963, Մարտակերտ - մահ.՝ Ուկրաինա), միլիցիայի գնդապետ:

Գերազանցությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1981թ. գորակոչվել է Խորհրդային բանակ, ծառայել Աֆղանստանում: Աֆղանական հանրապետությունում «իր ինտերնացիոնալ պարտքի կատարման գործում ցուցաբերած արիության համար» ԽՍՀՄ ԳԽ

հրամանագրով պարգևատրվել է «Պատվո նշան» և «Կարմիր աստղ» շքանշաններով: Ջորաջվելուց հետո վերադարձել է գյուղ: Այնուհետև ընդունվել և 1988թ. ավարտել է ՈւկրխՍՀ Դոնեցկ քաղաքի ՆԳ գծով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը: 1989-1992թթ. սովորել է ՆԳ գծով Կիևի բարձրագույն ուսումնական հաստատությունում, որը հետագայում անվանվել է ակադեմիա: Արցախյան պատերազմի տարիներին վերադարձել է Արցախ, զինվորագրվել և կազմավորել 14 հոգուց բաղկացած հետախուզական ջոկատ և ստանձնել հրամանատարի պարտականությունը: Ջոկատը կատարել է մի շարք կարևոր հանձնարարություններ: Պատերազմից հետո վերադարձել է Ուկրաինա: Ընդունվել է աշխատանքի Դոնեցկի մարզում կազմակերպված հանցագործության դեմ պայքարի բաժնում՝ որպես ավագ լիազոր, աշխատել մինչև 1998թ., 1998-2001թթ. նույն բաժնում՝ որպես բաժնի պետի տեղակալ: 2001-2005թթ. եղել է Դիմիտրով քաղաքի միլիցիայի պետ, 2005-2007թթ. Ուկրաինական Հանրապետության ՆԳ նախարարությունում հատուկ նշանակության բաժնի ավագ լիազոր, իսկ 2007թ.՝ նույն բաժնի պետ: Ստացել է կառավարական 16 պարգևներ՝ շքանշաններ, մեդալներ և պատվոգրեր: Ներքին գործերի մարմիններում օրինակելի ծառայության համար պարգևատրվել է «Փառքի խաչ», «Ժողովուրդների անվտանգություն», «Օրենք և պատիվ» շքանշաններով, 11 մեդալներով:

Մահացել է ավտովթարից:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՆՍԱՆԿԻ
(1938)



Սերգեյ Կոնստանդի Գրիգորյան (ծնվ.՝ 1938, գ.Հաթերք), ֆիզքիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր (1986), պրոֆեսոր (1987), ՀՃԱ ակադեմիկոս (1999), ՀՀ քիմիական ընկերության անդամ, Քիմիա-տեխնոլոգիական ասոցիացիայի անդամ, Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

1959թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1961-1964թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1973, 1975, 1977, 1981, 1985թթ. վերապատրաստում է անցել Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում: 1959թ. եղել է ԵՊՀ լաբորանտ, 1960-1961թթ.՝ «Կանազ»-ի ինժեներ-հետազոտող: 1965-1989թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդալային քիմիայի ամբիոնում. 1965-1967թթ.՝ որպես գիտաշխատող, ասիստենտ, 1967-1972թթ.՝ ավագ դասախոս, 1967-1969թթ.՝ դեկանի տեղակալ: 1989-2007թթ. զբաղեցրել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը: Հեղինակել է տասնյակ գիտական աշխատություններ, հոդվածներ, արտոնագրեր: Աշխատանքները վերաբերում են ջրաօրգանական միջավայրում մետաղիոնների և նրանց կոմպլեքսների հետ հիդրոգերոսիդների փոխազդեցությանը և դրանց հիման վրա պոլիբլորոպրենի կայունացմանը: Մշակել է քլորոպրենային կաուչուկների և լատեքսների ջերմա- և լուսակայունացման, ցածրջերմաստիճանային սոսինձների ստացման եղանակներ:





ԳՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՐ ՍԱՐԳՍԻ

(1918-2002)

Արգար Սարգսի (Սիրեկանի) Դանիելյան (ծնվ.՝ 1918, գ.Կոճողոտ -մահ.՝ 2002, Ստեփանակերտ), արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, լրագրող, ԽՍՀՄ (1963) և ԼՂԻՄ (1989) ժուռնալիստների միությունների անդամ:

Սովորել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում: 1953թ. ավարտել է Բարսիլի կուսակցական դպրոցը, 1964թ.՝ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի

պատմության հեռակա բաժինը:

1939թ., աշխատել է «Երիտասարդ բոլշևիկ» թերթում: Մասնակցել է Խորհրդա-ֆիննական (1939) և Հայրենական մեծ պատերազմներին (1942-1944), վիրավորվել: 1946թ. եղել է «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության նամակների բաժնի վարիչ, 1946-1950թթ.՝ գրական աշխատող, 1950-1951թթ.՝ Մարտակերտի շրջանային «Սոցիալիզմի ուղիով» թերթի պատասխանատու խմբագիր, 1954-1959թթ.՝ կուսշրջկոմի երկրորդ քարտուղար, 1958-1966թթ.՝ կուսակցական կյանքի բաժնի վարիչ, 1966-1976թթ.՝ խմբագրի տեղակալ, 1979-1991թթ.՝ սեփական թղթակից, 1976-1979թթ.՝ ռադիոհաղորդումների մարզային կոմիտեի նախագահ: Հեղինակել է բազմաթիվ պատմվածքներ, «Գոհար» վիպակը և «Այրող պատիվ» պիեսը, որը բազմիցս բեմադրվել է Ստեփանակերտի պետական թատրոնում:



ԳՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՇՈՏԻ

(1958)



Արարատ Աշոտի Դանիելյան (1958, Ստեփանակերտ՝ գյուլաթաղեցու ընտանիքում), իրավագետ, քաղաքական և պետական գործիչ:

1964-1974թթ. սովորել է Ստեփանակերտի Քիվ 8 դպրոցում, 1977-1981թթ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: 1990թ. ընդունվել է Մոսկվայի Համամիութենական իրավաբանական ինստիտուտը, տեղափոխվել Երևանի պետական համալսարան, 1999թ. ավարտել այն իրավագետի որակավորմամբ: 1981-1983թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1983-1988թթ. աշխատել է կոմերիտական կազմակերպություններում: 1989-1990թթ. զբաղեցրել է ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի նախագահի ընդունարանի քարտուղարի պաշտոնը: 1990-1991թթ. աշխատել է Մարզպալատի կազմակերպությունում՝ որպես իրավախորհրդատու: 1991-1992թթ. եղել է ԼՂԻՄ պլանային տնտեսական գլխավոր վարչության պետի օգնական: 1992-1994թթ. աշխատել է ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահի, ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի օգնականի պաշտոններում: 1994-2004թթ. եղել է ԼՂՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար, 1994-1997թթ.՝ նաև ԼՂՀ անվտանգության խորհրդի քարտուղար: 1994-1997թթ., միաժամանակ, ղեկավարել է ԼՂՀ Նախագահին կից մերման հարցերի հանձնաժողովը: 2004-2007թթ. եղել է ԼՂՀ փոխվարչապետ, 2007-2010թթ.՝ ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահ, 2010-2011թթ.՝ ԼՂՀ Նախագահի խորհրդական: 2011թ. ապրիլին նշանակվել է ԼՂՀ Նախագահի խորհրդական, ԼՂՀ Ազգային ժողովում Նախագահի մշտական ներկայացուցիչ, 2012թ. սեպտեմբերի 22-ին՝ ԼՂՀ արդարադատության նախարար:





ԳԱՆԻԵԼՅԱՆ ԲՈՐԻՍ ՇԱՀԵՆԻ

(1950)

Բորիս Շահենի Գանիելյան (ծնվ.՝ 1950, գ.Ներքին Հոռաթաղ), վիրաբույժ-ուրուլոգ, ՊԲ բժշկական ծառայության փոխգնդապետ (1997), ԼՂՀ վաստակավոր բժիշկ (2010):

Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը:

1975-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի ուռուցքաբանական դիսպանսերում, քաղաքային պոլիկլինիկայում, շտապ բուժօգնությունում, մարզային հիվանդանոցում: 1992-1995թթ. եղել է կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալի պետի տեղակալ, 1995թ.-ից՝ պետ: 1988-1990թթ. նկուղային հարկերում ընդհատակյա բուժօգնություն է ցուցաբերել կամավոր ազատամարտիկներին: 1992-1994թթ. Շահումյանի, Մարտակերտի, Ֆիզուլիի և այլ ռազմադաշտային շարժական հոսպիտալներում վիրահատել է հարյուրավոր ազատամարտիկների և խաղաղ բնակիչների: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԼԵՅՆԱԳԻ

Գայանե Լեյնադի Գանիելյան (ծնվ. Երևան՝ Մաղավուզ գյուղից ֆ/մ.գ.թ. Լեյնադ Երվանդի Գանիելյանի դուստրը), մանկավարժական գիտությունների թեկնածու (2008), ԵՊՀ Ռոմանո-գերմանական ֆակուլտետի անգլերենի ամբիոնի դոցենտ:

1980-1985թթ. սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բաժնում (անգլերեն լեզու)՝ բանասերի, թարգմանչի, ուսուցչի մասնագիտությամբ: 2005-2007թթ.

եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայցորդ:

1985-1991թթ. դասավանդել է Երևանի թիվ 135, 1991-1993թթ.՝ Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցներում: 1993-2009թթ. աշխատել է որպես ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի դասախոս, 2009թ.-ից՝ նույն ամբիոնի ասիստենտ: Անցել է դասախոսների որակավորման բարձրացման դասընթաց «Անգլիական բանասիրություն» մասնագիտությամբ (2005, 2009):

Հեղինակել է մեկ մենագրություն, շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածներ:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՅՆԱԳ ԵՐՎԱՆԳԻ

(1939)

Լեյնադ Երվանդի Գանիելյան (ծնվ.՝ 1939, գ.Մաղավուզ), ֆիզմաթ. գիտությունների թեկնածու (1972), պրոֆեսոր (2000):

1957-1962թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետում, 1968-1972թթ.՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1972-1977թթ. վերապատրաստումներ է անցել ԵՊՀ-ում, Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում, Ուկրաինայի գյուղատնտեսական ակադեմիայում:

1962-1972թթ. աշխատել է ԵՊՀ-ում, 1963-1972թթ.՝ համատեղության կարգով նաև՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, 1975-1994թթ.՝ որպես ֆիզմաթ ամբիոնի բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի սեկտորի վարիչ: 1994թ. նշանակվել է հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների հիմքի վրա ստեղծված Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ, առ այսօր աշխատում է նույն ամբիոնում:

Հեղինակել է ավելի քան 35 գիտական աշխատություն, 30 գիտամեթոդական աշխատանք, բարձրագույն մաթեմատիկայի 1 դասագիրք: Պարգևատրվել է կրթության և գիտության նախարարության, ԵԱԱԻ պատվոգրերով, ՀԳԱ ոսկե մեդալով:





ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԼԵՅՆԱԳԻ

Լուսինե Լեյնադի Դանիելյան (ծնվ.՝ Երևան՝ Մադավուզ գյուղից ֆ/մ.գ.թ. Լեյնադ Երվանդի Դանիելյանի դուստրը), անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, Հայաստանի անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների միության (1996), Եվրոպայի անեսթեզիոլոգների ասոցիացիայի (2009) անդամ:

1988-1994թթ. սովորել է Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական ինստիտուտում, 1994-1995թթ.՝ նույն բուհի ինտերնատուրայում՝ անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա մասնագիտությամբ: 1997թ. մասնագիտական որակավորում է անցել առողջապահության ազգային ինստիտուտում, 2013թ.՝ գիտա-պրակտիկ ուսուցողական սեմինար մասնկաբաժնությունում:

1995-1999թթ. աշխատել է որպես բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ «Էրեբունի» բ/կ վերակենդանացման բաժանմունքում, 1999-2001թթ.՝ որպես անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ անեսթեզիոլոգիայի և վերակենդանացման բաժանմունքում: 2001թ.-ից գրադեցնում է «Էրեբունի» բ/կ ծննդատան անեսթեզիոլոգիայի և վերակենդանացման բաժանմունքի վարիչի պաշտոնը: 2009-2010թթ. դասախոսել է Երևանի պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի, ռեանիմատոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնում: Հեղինակել է մի շարք գիտական հոդվածներ, 4 թեզ:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՐԱՄԻ

(1926-2003)



Հրանտ Արամի Դանիելյան (ծնվ.՝ 1926, գ.Մեծ Շեն-մահ.՝ 2003, Երևան), ռենտգենաբան, բժշկական գիտությունների դոկտոր (1975), պրոֆեսոր (1977):

1951թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժ-կանխարգելման ֆակուլտետը:

1955-1956թթ. եղել է Կիրովականի թիվ 1 հիվանդանոցի ռենտգենաճառագայթաբանության բաժանմունքի վարիչի տեղակալ: 1957թ.-ից աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտի ռենտգենաճառագայթաբանության ամբիոնում, 1957-1994թթ.՝ որպես ամբիոնի վարիչ: Անդամակցել է Բժշկական ախտորոշման Հայկական ասոցիացիայի խորհրդին:

Առաջարկել է կերակրափողի հետազոտման կողմնադրության եղանակ: Հաստատել է նշանոցով ռենտգենագրության հետ զուգակցված ռենտգենահեռուստատեսային լուսադիտումը՝ որպես կերակրափողի հիվանդությունների տարբերակիչ ախտորոշման արդյունավետ եղանակ:

Հեղինակել է շուրջ 135 հրատարակումներ:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԵՍԻ

(1900-1938)



Մուշեղ Ներսեսի Դանիելյան (ծնվ.՝ 1900, գ.Գյուլաթաղ (այժմ՝ Վարդաձոր) - մահ.՝ 1938), քաղաքական գործիչ:

1918թ. կարմիր բանակի շարքերում մասնակցել է Բաքվի կոմունայի համար մղված մարտերին: 1921-1928թթ. ԼՂԻՄ-ում կատարել է կոմերիտական աշխատանքներ: 1931-1933թթ. եղել է Ադրբեջանի Կ(բ)Կ կենտկոմի բաժնի վարիչ, 1933-1934թթ.՝ ԱԿ(բ)Կ Գանձակի քաղկոմի քարտուղար, 1936թ.՝ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար, 1937թ.՝ ՀԽՍՀ Ժողկոմ-Խորի նախագահ:

Անհիմն բռնադատվել է և զնդահարվել, 1955թ.՝ հետմահու արդարացվել:





ԳԱՆԻԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԷԳՈՒԱՐԳԻ

(1967-1993)

Նորայր Էդուարդի Դանիելյան (ծնվ.՝ 1967, գ.Վարդաձոր - մահ.՝ 1993, գ.Խաչեն), ազատամարտիկ, Արցախյան ազատամարտի հերոս, Արցախի պաշտպանության բանակի փոխգնդապետ (1993), ԼՂՀ ԳԽ պատգամավոր (1993 թվականից): 1984-1989թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1988թ. մասնակցել է Մայիտակի երկրաշարժի փրկարարական աշխատանքներին: 1989թ. զինվորագրվել է Արցախյան ազատագրական պայքարին: 1990թ. վերակառուցել է Ջանյաթաղի դաշտային օթևանը, հիմնադրել Քաջավան գյուղը: 1990թ. հոկտեմբերի 4-ին գերեզմարվել է ԽՍՀՄ ՆԳՆ զինվորների կողմից, այնուհետև պահվել Շուշիի, ապա՝ Բաքվի բանտերում: 1992թ. ապրիլի վերջին փոխանակմամբ ազատ է արձակվել: 1992թ. դարձել է Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար: Մասնակցել է Մարտակերտի, Քելբաջարի և Կուրաթլուի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1993թ.-ից ընտրվել է ԼՂՀ ԳԽ պատգամավոր: 1993թ. հոկտեմբերի 18-ին Խաչենում սպանվել է դավադրաբար՝ հայերի ձեռքով: Հետմահու արժանացել է Արցախի Հանրապետության «Մարտական խաչ» I-ին աստիճանի շքանշանի:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ՇԱՀԵՆ ԲՈՐԻՍ

Շահեն Բորիսի Դանիելյան (ծնվ.՝ Ստեփանակերտ) (ԼՂՀ վաստակավոր բժիշկ Բորիս Շահենի Դանիելյանի որդին), ուրուլոգ, բժշկական գիտությունների թեկնածու (2007), Հայաստանի Ուրուլոգների ասոցիացիայի անդամ (2000), Ուրուլոգների Եվրոպական ասոցիացիայի անդամ (2000): 1994-2000թթ. սովորել է Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, 2000-2003թթ.՝ ակադե-

միկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի ուրուլոգիայի ամբիոնում (Ռեզիդենտուրա), 2003-2006թթ.՝ նույն ամբիոնի ասպիրանտուրայում: 1995-1996թթ. աշխատել է ԼՂՀ կենտրոնական ռազմական հոսպիտալում, 2000-2003թթ.՝ որպես Կլինիկական օրդինատոր-ուրուլոգ՝ Միքայելյան վիրաբուժության ինստիտուտում, 2003-2007թթ.՝ ուրուլոգ՝ «Քանաքեռ-Չեյթուն» բուժփավորման ուրուլոգիայի կլինիկայում: 2007թ.-ից աշխատում է «Իզմիրյան» գիտաբժշկական կենտրոնում:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ԺԱՆՆԱ ԻՎԱՆԻ

(1947)

Ժաննա Իվանի Դանիելյան (ծնվ.՝ 1947, Բաքու՝ մոխրաթաղեցու ընտանիքում), տեխնիկական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտը: Արցախյան շարժման ժամանակ տեղափոխվել է ՌԴ:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ՋԻՎԱՆՇԻՐ ՍԵՎԻԻ

(1937-2007)

Ջիվանշիր Սևիի Դանիելյան (ծնվ.՝ 1937, գ.Չլդրան - մահ.՝ 2007, Երևան), ռազմական գիտությունների թեկնածու (Խարկով):

1956թ. գերազանցությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ուղեգրվել Տուապսե՝ ռազմական կրթություն ստանալու: 1960թ. վերադարձել է հայրենիք, գործուղվել Մինգեչաուր և աշխատանքի ընդունվել որպես զենիթահրթիռային համակարգի մասնագետ: 1965թ. տեղափոխվել է Խարկով, ուսումը շարունակել Խարկովի ռազմական ակադեմիայում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա, մի քանի տարի աշխատելուց հետո տեղափոխվել Թբիլիսի, ապա՝ Բաքու: 1989թ. մշտական բնակություն է հաստատել Երևանում և աշխատանքի ընդունվել Վ.Սարգսյանի անվան բարձրագույն ռազմական ինստիտուտում՝ որպես դասախոս:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԻՍԱՀԱԿԻ

(1900-1976)

Ռուբեն Իսահակի Դանիելյան (ծնվ.՝ 1900, գ.Թալիշ-մահ՝ 1976), գյուղատնտեսական գիտությունների դոկտոր:

1926թ. ավարտել է Տաշքենդի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը:

Աշխատանքի է անցել Լենինգրադի գյուղատնտեսական ինստիտուտում: 1933-1947թթ. դասախոսել է Ադրբեջանի գյուղատնտեսական ինստիտուտում, ստացել դոցենտի կոչում: 1948-1958թթ. աշխատել է Էջմիածնի տեխնիկական կուլտուրաների ինստիտուտում: Հեղինակել է շուրջ 90 հոդված: Պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԱՅԻԿԻ

(1951)



Սամվել Սայիկի Դանիելյան (ծնվ.՝ 1951, Երևան՝ թալիշեցու ընտանիքում), ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու (1988), դոցենտ (1992), Երևանի գլխավոր ճարտարապետ (2004-2011):

1968-1974թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետա - շինարարական ֆակուլտետում: 1973-1975թթ. աշխատել է որպես Երևանի պոլիտեխնիկա-

կան ինստիտուտի լաբորատորայի ինժեներ, 1975-1983թթ.՝ ճարտարապետության և շինարարական արդյունաբերության ամբիոնի ասիստենտ: 1983-1990թթ. դասախոսել է նույն ամբիոնում: 1990-1996թթ. եղել է ճարտարապետության ֆակուլտետի ղեկանի տեղակալ, 1996թ.՝ Երևանի գլխավոր ճարտարապետի տեղակալ: 1998-2000թթ. զբաղեցրել է ՀՀ Կառավարության աշխատակազմի քաղաքաշինության և բնական ռեսուրսների վարչության պետի տեղակալի, 2000-2003թթ.՝ ճարտարապետության ֆակուլտետի ղեկանի, 2003-2004թթ.՝ Երևանի քաղաքապետարանի ճարտա-

րապետության և քաղաքաշինական վարչության պետի պաշտոնները: 2011թ. նշանակվել է "Classic AD" դինամիկ զարգացող ճարտարապետական արվեստանոցի գլխավոր ճարտարապետ: Նախագծել է բնակելի շենքեր Սալիտակի շրջանի Լեռնանցք համայնքում, Երևանում, Լուսակերտում, Բյուրականում, Ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիան՝ Արագած լեռան մոտ, Առողջապահական համալիր Աբովյանում և այլ կառույցներ:



ԳԱՆԻԵԼՅԱՆ ՍԵՐՊԵՅ ՍԵԳՐԱԿԻ

(1928)



Սերպեյ Սեդրակի Դանիելյան (ծնվ.՝ 1928, գ.Մեծ Շեն), ՀՀ վաստակավոր երկրաբան (1981):

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1947-1952թթ. սովորել է Բաքվի Ազիգբեկովի անվան ադրբեջանական ինդուստրիալ ինստիտուտում՝ երկրաբանություն և նավթի, գազի հանքավայրերի հետախուզություն մասնագիտությամբ՝ ստանալով լեռնային ինժեներ-երկրաբանի որակավորում:

Ուսանելու տարիներին՝ 3-րդ կուրսից սկսած համատեղել է ուսումը դասավանդման հետ. դասավանդել է Բաքվի հիդրոմեխորատիվ և նավթային տեխնիկումներում:

Ինստիտուտն ավարտելուց հետո 1952-1955թթ. աշխատել է «Կաբրիստաննեֆտեռագվեդկա»-ում որպես ինժեներ, ապա՝ ավագ ինժեներ: 1955թ. տեղափոխվել է Երևան, որտեղ աշխատել է «Հիդրոնախագիծ» համամիութենական ինստիտուտի հայկական բաժանմունքում՝ որպես Որոտանի ինժեներաերկրաբանական արշավախմբի ինժեներային երկրաբանության բաժնի երկրաբան, ավագ երկրաբան, տեխնիկական ղեկավար և գլխավոր ինժեներ:

1966թ. կազմել է «Որոտանի կասկադի» ամենահզոր կայանի Շամբի ՀԷԿ-ի, ինչպես նաև՝ 1968թ. Գեղի ամենաբարձր պատվարը հանրապետությունում: 1970թ. նշանակվել է «Հայհիդրոէներգանախագիծ» ինստիտուտի ինժեներային երկրաբանության բաժնի պետ: Աշխատանքի ըն-

բացքում իրականացրել և անմիջական մասնակցություն է ունեցել հանրապետությունում նախագծվող և կառուցվող բազմաթիվ հիդրոտեխնիկական, ջրատնտեսական և այլ օբյեկտների: 1974թ. Մոսկվայի կողմից գործուղվել է Շրի Լանկա՝ ամերիկյան և ավստրալիական ընկերությունների կողմից իրականացված «Մամանալ-Վեվ» հիդրոհանգույցի ինժեներները րարանական աշխատանքների փորձագիտության անցկացման նպատակով: 1988թ.-ից եղել է «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ գլխավոր երկրարանը:

Հեղինակել է մի շարք հոդվածներ, արժանացել է մեդալների և պատվոգրերի:



ԳՎՎԹՅԱՆ ՎԼԱԳԻՄԻՐ ՌԱՅԻԿԻ
(1952)



Վլադիմիր Ռաֆիկի Դավթյան (ծնվ.՝ 1952, գ. Վերին Հոռաթաղ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (1988):

Գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի ֆիզմաթ թեքումով գիշերօթիկ դպրոցը: 1969-1974թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում, ապա՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աս-

պիրանտուրայում, որտեղից գործուղվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ ուսումը շարունակելու: 1978թ.-ից աշխատում է Երևանի ժողինստիտուտում: Արցախյան շարժման տարիներին վերադարձել է հայրենիք: 1992թ. մասնակցել է Հաթերքի ազատագրմանը: Գերազանցությամբ ավարտել է մեդալներով, գովասանագրերով:



ԵԳԻՊՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԱ ՄՈՎՍԵՍԻ
(1943-201.)



Յուրա Մովսեսի Եղիգարյան (ծնվ.՝ 1943, գ.Մաղավուզ-մահ.՝ 201., Մարտակերտ), վաստակավոր մանկավարժ:

1948-1959թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, 1959-1962թթ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեխանիզացիայի բաժնում: 1963-1968թթ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը: 1968-1970թթ. աշխատել է Մաղավուզի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 1970-1976թթ. եղել է ուսումնական մասի վարիչ, 1976-1992թթ.՝ դպրոցի տնօրեն: 1993-1998թթ. եղել է Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի տեղակալ, իսկ 1998թ. կրթության բաժնի վարիչ: Բազմիցս հանդես է եկել մարզային և հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Նրա ղեկավարած դպրոցը եղել է մարզի և հանրապետության հեռակետային դպրոցներից մեկը: Ուսումնասիրել և Մաղավուզի միջնակարգ դպրոցում արմատավորել է երկարօրյա դպրոցներում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման փորձը և հասել շոշափելի հաջողությունների: Նրա տնօրինության ժամանակ երկարօրյա դպրոցի 8 խմբերում սովորող մոտ 250 աշակերտ սնվել է դպրոցի օժանդակ տնտեսությունից ստացված եկամուտների հաշվին: Աշխատանքային ուսուցման և դաստիարակության, սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշման բնագավառում ունեցած հաջողությունների համար Մաղավուզի՝ նրա ղեկավարած դպրոցը ներկայացվել է ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսին, որտեղ արժանացել է արծաթե մեդալի, իսկ դպրոցի մի շարք ուսուցիչներ՝ ցուցահանդեսի մասնակցի պատվավոր կոչման: Արժանացել է ԽՍՀՄ «Լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքի արիության համար» մեդալով:



ԵՆԻԿՈԼՈԳՅԱՆ ԷՄՍԸ ՍԵՐԳԵՅԻ

(1918-2001)

Էմմա Սերգեյի Ենիկոլոպյան (Նիկոլայ Ենիկոլոպյանի քույրը), (ծնվ.՝ 1918, գ.Կուսապատ - մահ.՝ 2001, Երևան), ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ:

Որդին՝ Հակոբ Ահարոնի Մատնիշյանը, ծնված՝ 1941թ., քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:



ԵՆԻԿՈԼՈԳՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ

ՍԵՐԳԵՅԻ

(1924-1993)

Նիկողայոս Սերգեյի Ենիկոլոպյան (Նիկոլայ Ենիկոլոպով) (ծնվ.՝ 1924, գ.Կուսապատ - մահ.՝ 1993, ք.Հայդեյբերգ, Գերմանիա), քիմիական գիտությունների դոկտոր (1960), պրոֆեսոր (1961), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1966), ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1976), ԽՍՀՄ պատվավոր քիմիկոս (1984):

1945թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1946-1981թթ. աշխատել է որպես ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1953-1993թթ. դասավանդել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: 1959թ. եղել է ԽՍՀՄ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի պոլիմերման պրոցեսների գծով գիտական խորհրդի նախագահ, 1968-1993թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և տեխնիկական քիմիայի բաժանմունքին կից բարձրամոլեկուլային միացությունների լաբորատորիայի վարիչ, 1973թ.՝ պոլիմերների և կոմպոզիցիոն նյութերի բաժնի վարիչ: 1981-1993թթ. ղեկավարել է ՌԳԱ Սինթետիկ պոլիմերային նյութերի ինստիտուտը (1998թ.՝ Ն.Մ.Ենիկոլոպովի անվան), 1982թ.՝ Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի բարձր ամրության պոլիմերային համակարգերի ֆիզիկայի ամբիոնը:

Հեղինակել է 1300 գիտական աշխատություն և մենագրություն, 30 հայտնագործություն և արտոնագիր: Նրա աշխատանքները արտոնագր-

ված են 10 երկրում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, ԳՖՀ-ում, Ճապոնիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում: Աշխատանքները վերաբերում են ամֆապրաժինների օքսիդացման շղթայական և իոնային պոլիմերման ռեակցիաների կինետիկայի ու մեխանիզմի, մակրոնոլեկուլների առաջացման ու փոփոխման վրա ֆիզիկական տարբեր ազդակների ներգործության ուսումնասիրությանը:

Մահացել է Գերմանիայում, թաղվել Մոսկվայի Նովոդևիչիե գերեզմանատանը:



ԵՆԻԿՈԼՈԳՈՎ ԳՐԻԳՈՐԻ

ՆԻԿՈԼԱՅԻ

(1952)

Գրիգորի Նիկոլայի Ենիկոլոպով (ծնվ.՝ 1952, Երևան), (կուսապատցի Նիկողայոս Սերգեյի Ենիկոլոպյանի որդին), կենսաբանական գիտությունների թեկնածու (1978), պրոֆեսոր, ԱՄՆ և Եվրոպայի հիմնական գիտական ֆոնդերի գրանտներ շնորհող փորձագիտական մի շարք հանձնաժողովների անդամ, բիոտեխնոլոգիական մի շարք ընկերությունների խորհրդատու:

1974թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մոլեկուլյար կենսաբանության ֆակուլտետը: Աշխատանքի է անցել ԽՍՀՄ ԳԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտում, այնուհետև դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում: 1989թ. աշխատում է ԱՄՆ Քոլդ Սփրինգ Հարբոր լաբորատորիայում՝ պրոֆեսորի պաշտոնում, Սթոունի Բրուկ համալսարանի ներդրման ֆակուլտետի, գենետիկայի և մոլեկուլյար կենսաբանության, ֆարմակոլոգիայի մի շարք ծրագրերում: 2011թ. ղեկավարել է Մոսկվայի ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտի նախնա-բիո-տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի ուղեղի ցողունային բջիջների լաբորատորիան: Հեղինակել է ավելի քան 120 գիտական աշխատանքներ, ԱՄՆ 6 արտոնագիր: Արժանացել է ԱՄՆ, Ռուսաստանի գիտական ֆոնդերի մրցանակների:





**ԵՆԻԿՈԼՈՊՈՎ ՍԵՐԳԵՅ
ՆԻԿՈԼՅԻ
(1948)**

Սերգեյ Նիկոլայի Ենիկոլոպով (ծնվ.՝ 1948, Երևան), (կուսապատգի Նիկոլայոս Սարգսի Ենիկոլոպյանի որդին), հոգեբանական գիտությունների թեկնածու (1984), դոցենտ (1995), Ռուսաստանի բժշկա-տեխնիկական Ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանի քրեագիտական ասոցիացիայի անդամ: 1968-1972թթ. սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի ան-

վան պետական համալսարանի հոգեբանության ֆակուլտետում: 1971-1983թթ. աշխատել է ԽՍՀՄ դատախազության հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցների մշակման Համամիութենական ինստիտուտում, 1983թ.՝ ԽՍՀՄ (1991թ.՝ Ռուսաստանի) բժշկական գիտությունների ակադեմիայի հոգեկան առողջության գիտական կենտրոնում, 1989թ.՝ ԽՍՀՄ ԲԳԱ ՀԱԳԿ սոցիալ-հոգեբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: 1996-2001թթ. եղել է Մոսկվայի Մ.Ա.Շոլոխովի անվան պետական հումանիտար համալսարանի կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ, 1998թ.՝ միաժամանակ, ՌԲԳԱ ՀԱԳԿ կլինիկական հոգեբանության բաժնի վարիչ: 2005թ.-ից ղեկավարում է Մոսկվայի քաղաքային հոգեբանա-մանկավարժական համալսարանի իրավաբանական հոգեբանության ֆակուլտետի քրեական հոգեբանության ամբիոնը:

Հեղինակել է ավելի քան 250 գիտական աշխատություններ:



**ԵՍԱՅԱՆ ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ
(1972)**



Արմեն Կառլենի Եսայան (ծնվ.՝ 1972, Երևան) (Մեծչենից ՀՀ վաստակավոր բժիշկ Կառլեն Լազարի Եսայանի որդին), իրավաբանական գիտությունների դոկտոր (2011), պրոֆեսոր (2012), ՌԳ Պետական կառավարման համալսարանի քրեական իրավունքի և դատափարության ամբիոնի պրոֆեսոր (2014), արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական (2009), միջազգային կարգի պարտի վարպետ, Արևելյան մարզածների միջազգային կարգի մրցավար: 1989-1994թթ. սովորել է ԵՊՀ իրավաբանական, 1990-1992թթ.՝ հասարակական մասնագիտությունների ֆակուլտետներում, 2006-2010թթ.՝ ՌԳ ՆԳՆ կառավարման ակադեմիայի դոկտորանտուրայում: 2012 և 2013թթ. ԱՄՆ Հարվարդի համալսարանի Ջ.Ֆ.Քենեդու անվան կառավարման դպրոցում ավարտել է բարձրաստիճան պաշտոնյաների ծրագրի հատուկ դասընթացներ: 1994-1996թթ. աշխատել է որպես ՀՀ արտասահմանյան տուրիզմի ասոցիացիայի վարչության իրավախորհրդատու, 1996-1997թթ.՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարի աշխատակազմի ղեկավար, 1997-1999թթ.՝ ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, 1999-2007թթ.՝ ՀՀ գլխավոր դատախազի օգնական, 2007-2011թթ.՝ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, 2011-2013թթ.՝ ՀՀ գլխավոր դատախազության հատուկ հանձնարարությունների հարցերով ավագ դատախազ, 2013թ.՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գլխավոր խորհրդական, ՀՀ փաստաբանների պալատի գիտաուսումնական խորհրդի նախագահ: Ընդգրկված է ՀՀ և ՌԳ մի շարք գիտա-գործնական և տեղեկատվական հանդեսների խմբագրական կազմում: Հեղինակել է 50 գիտական հոդվածներ, մենագրություններ: Պարգևատրվել է մեդալներով, պետական պարգևներով:





ԵՍԱՅԱՆ ԼԱՉՐ ԿԱՌԼԵՆԻ
(1969)

Լազր Կառլենի Եսայան (ծնվ.՝ 1969, Երևան), (Մեծ Շենից ՀՀ վաստակավոր բժիշկ Կառլեն Լազարի Եսայանի որդին), բժշկական գիտությունների թեկնածու (2001), «Հայաստանի ատամնաբույժների ասոցիացիայի» կառավարման խորհրդի անդամ (2000), Միջազգային ստոմատոլոգիական ակադեմիայի անդամ (2009):

1987-1992թթ. սովորել է Երևանի պետական բժշկական համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետում:

1992-1999թթ. աշխատել է Երևանի N2 ստոմատոլոգիական պոլիկլինիկայում, 1998-2004թթ.՝ N14 պոլիկլինիկայում՝ որպես ատամնաբույժ:

1999-2003թթ. աշխատել է ԵՊԲՀ թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբիոնում, 2004-2006թթ.՝ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում՝ որպես բժիշկ-ատամնաբույժ, միաժամանակ՝ համալսարանական ստոմատոլոգիական N1 կլինիկայի ղեկավար և գլխավոր բժիշկ: 2006-2007թթ. եղել է ԵՊԲՀ թերապևտիկ ստոմատոլոգիայի, 2007-2010թթ.՝ ընտանեկան ստոմատոլոգիայի ամբիոնների վարիչ, 2008-2010թթ.՝ «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն» ասոցիացիայի նախագահ: 2010թ. ստեղծել և ղեկավարել է «ԿԼԱՆՍԵ» ստոմատոլոգիական ԲԿ-ն: 2010թ. նշանակվել է ՀՀ Առողջապահության նախարարության, 2011թ.՝ ԵՊԲՀ գլխավոր ատամնաբույժ, այնուհետև՝ ԵՊԲՀ ստոմատոլոգիական մասնագիտությունների մեթոդական հանձնաժողովի նախագահ, Ստոմատոլոգիական ֆակուլտետի ղեկավար:

Հեղինակել է 60-ից ավելի գիտական աշխատանքներ, 9 մեթոդական ձեռնարկներ, դարձել մի շարք նորարարությունների և արտոնագրերի հեղինակ և համահեղինակ: Պարգևատրվել է մեդալներով:



ԵՍԱՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԼԱՉԱՐԻ
(1933 - 2014)



Կառլեն Լազարի Եսայան (ծնվ.՝ 1933, ՔՄեծ Շեն - մահ.՝ 2014, Երևան), բժիշկ, ՀՀ վաստակավոր բժիշկ (2006), Եվրոպայի Բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (2006), Երևան քաղաքի պատվավոր բժիշկ (2013), բարերար:

1951-1953թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետում:

1953-1954թթ. դասավանդել է Թալիշի, 1958թ.՝ Դրսբունի դպրոցներում: 1954-1957թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1958-1964թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում: 1962-1979թթ. եղել է բուժաշխատողների արհմիության կոմիտեի անդամ, 1964-1976թթ.՝ ՀՀ արհմիության կոմիտեի պատասխանատու քարտուղար: 1977-2003թթ. աշխատել է Երևանի 8-րդ բուժմիավորումում՝ որպես գլխավոր բժշկի փորձագիտական գծով տեղակալ, 2003-2004թթ.՝ «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոնի տնօրենի փորձագիտական գծով տեղակալ, 2004-2014թթ. «Դավիթ Անհաղթ» ԲԿ-ի ԲՓՀ նախագահ:

Կնոջ՝ ՀՀ վաստակավոր բժիշկ Սառա Եսայանի հետ բազմաթիվ բարեգործություններ է իրականացրել Հայաստանում և Արցախում. Ֆ.Նանսենի բանգարանը Երևանում, Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված հուշարձան-կոթողը, Արցախյան ազատամարտում և Աֆղանական պատերազմում զոհված ազատամարտիկների, 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված խաչքարերը, Ջորջ Գորդոն Բայրոնի արձանը, «Նանսենի անձնագրի» հուշարձանը, Երևանի «Կ.Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ շենքը (2016), Մեծ Շենում՝ զոհված ազատամարտիկների հուշահամալիրը, բազմաթիվ շինություններ, մաս՝ Մարտակերտում:

Պարգևատրվել է մի շարք հուշամեդալներով:





ԵՄԱՅԱՆ ՄԱՌԱ ՄԱՆԹԱՇԻ

(1946)

Մառա Մանթաշի Եսայան (ծնվ.՝ 1946, Մարտակերտ), ՀՀ վաստակավոր բժշիկ (2010), Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի իսկական անդամ (2010), «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» (2016), «Էջմիածին քաղաքի պատվավոր քաղաքացի» (2016), բարերար, ՀՀ վաստակավոր բժիշկ Կառլեն Լազարի Եսայանի կինը:

1964թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1970թ.՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Աշխատել է թիվ 1 և թիվ 2 կլինիկական հիվանդանոցներում, 1973թ.՝ թիվ 14 պոլիկլինիկայում: 1978-1984թթ. մասնակցել է Մոսկվայում, Վիլնյուսում կայացած ուսման ընթացքի միջազգային համագումարներին: 2006թ. ից աշխատում է «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում՝ որպես բժիշկ-ուսման ղեկավար: Տիրապետում է արևելյան բուժման (չինական և կորեական) մասնագիտություններին և մեթոդներին: Պարգևատրվել է մեդալներով, հուշամեդալներով և պատվոգրերով: «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ կողմից ստացել է «Լավագույն բժիշկ» պատվոգիր:



ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏ ՄԻՐՉԱՋԱՆԻ

Աշոտ Միրզաջանի Երիցյան (ծնվ.՝ գ.Մեծ Շեն), հասարակական գործիչ, Անդրկովկասյան սառնարանային կոմբինատի վարիչ, Դավիթ Անանունի եղբոր որդին:

Ընտանիքը՝ որպես կուլակ հետապնդվել է, հայրը՝ արտորվել: Տեղափոխվել է Թիֆլիս, ստացել բարձրագույն կրթություն: Ջրաղեցրել է տարբեր պաշտոններ: Չեքոսլովակիայում է տրոցկիստական լինելու մեղադրանքով:

Որդին՝ Գրիշան, ստացել է բարձրագույն կրթություն, երկար տարիներ եղել է «ՀրազդանՄաշ»-ի գլխավոր տնօրեն:

ԶԱԲԱՐՅԱՆ ԱԲԿԱ ՍԱՐԳՍԻ

(1945)

Աիդա Սարգսի Զաբարյան (ծնվ.՝ 1945, գ.Քոլատակ), մանկավարժական գիտությունների թեկնածու (2007):

Ավարտել է Բարսիլի Թումանյանի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցը: 1962-1966թթ. սովորել է Աղբյուրեանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետում:

Աշխատել է Մարտակերտի շրջանի Դրմբոնի, Մարտակերտի գիշերօթիկ և թիվ 1 միջնակարգ դպրոցներում: 1992թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ նախ որպես ավագ լաբորանտ, ապա՝ դասախոս: Հեղինակել է ավելի քան 20 գիտական և գիտամեթոդական հոդվածներ:



ԹԱԳԵՎՈՍՅԱՆ ՋԱՄԱԼ ՄԱԿԻՉԻ

(1938)

Ջամալ Մակիչի Թաղևոսյան (ծնվ.՝ 1938, գ.Կոճողոտ), բանասեր, լրագրող, Արցախի ժողովրդականության միության անդամ:

Ավարտել է Հարությունագոմերի միջնակարգ դպրոցը, Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը:

Աշխատել է որպես ավագ մեթոդիստ՝ ԼՂԻՄ ժողովրդական ստեղծագործության տանը, որպես խմբագիր՝ Մարտակերտի շրջանային «Բարեկամություն», Գարմեն-տաքսկոմբինատի «Մետաքսագործ», բողարկու խմբագիր՝ «Մովետական



Ղարաբաղ» թերթերում, ԼՂԻՄ պատմաներկրագիտական բանգարանի ավագ գիտաշխատող, ԼՂԻՄ ժողովրդական ստեղծագործության տան տնօրեն, Ստեփանակերտի բնակչահագործման գրասենյակի մանկավարժ-կազմակերպիչ, հուշարձանների պահպանության ԼՂԻՄ ընկերության գործադիր տնօրեն:

Եղել է ԼՂԻՄ դատարանի ատենակալ, քաղաքային խորհրդի անչափահասների հանձնաժողովի անդամ, «Գիտելիք» մարզային և քաղաքային միավորումների դասախոս, ժողովրդական վերահսկողության քաղաքային կոմիտեի ու դրամինայի խորհրդի անդամ:

1986-1987թթ. ակտիվորեն ներգրավվել է Արցախյան ազգային ազատագրական շարժմանը:

Հեղինակել է բազմաթիվ բանաստեղծություններ, հոդվածներ, ակնարկներ:



ԻԶՄԱՅԻԼՅԱՆ ՀԱԿՈՐ ՍԱՐԳՍԻ

(1924-...)

Հակոր Սարգսի Իզմայիլյան (ծնվ.՝ 1924, Մարտակերտ), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1948):

1948թ. եղել է Մարտակերտի՝ Ստալինի անվան կոլտնտեսության ֆերմայի հովիվ, 1970թ.՝ Մարտակերտի կուսակցության 22-րդ համագումարի անվան սովխոզի հովիվ: Անասնաբուծության ոլորտում ստացել է բարձր ցուցանիշներ: Ոչխարաբուծության և բրդի արտադրու-

թյան ոլորտում ձեռք բերած հաջողությունների համար արժանացել է աշխատանքային հերոսի կոչման: Պարգևատրվել է «Մուրճ և մանգաղ» ոսկե մեդալով և Վ.Ի. Լենինի շքանշանով:



ԻԶՄԱՅԻԼՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՄՈՎՍԵՍԻ

(1922-1998)

Ներսես Մովսեսի Իզմայիլյան (ծնվ.՝ 1922, Մարտակերտ - մահ.՝ 1998, Ռ-Գ), գնդապետ:

1942թ. զորակոչվել է Խորհրդային բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Եղել է 89-րդ Թամանյան դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի ավագ սերժանտ: Դրիմի մարտերում ցուցաբերած խիզախության համար աժանացել է երկու մարտական շքանշանի: Կերչի և Սևաստոպոլի մարտից հետո աչքի է ընկել նաև Լեհաստանի, Գերմանիայի համար ճնշվող մարտերում: 1945թ. լեյտենանտ Իզմայիլյանը 526-րդ հրաձգային գնդի հրամանատարության կողմից ներկայացվել է ԽՍՀՄ հերոսի կոչման: Որոշումն հաստատվել է դիվիզիայի կողմից: Սակայն 38-րդ հրաձգային կորպուսի հրամանատարությունը որոշել է պարզևատրել «Կարմիր աստղ» շքանշանով: 1950թ. ավարտել է Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը (Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ակադեմիան):



ԻՈՍԻՖՅԱՆ ԱՆԳԻՐԱՆԻԿ ՂԵՎՈՆԳԻ

(1905-1993)

Անդրանիկ Ղևոնդի Իոսիֆյան (ծնվ.՝ 1905, գ.Ծմակահող -մահ.՝ 1993, Մոսկվա), ճարտարագետ-էլեկտրատեխնիկ, գյուտարար, տեխնիկական գիտությունների դոկտոր (1941), պրոֆեսոր (1941), ՀԽՍՀ ԳԱ բոքակից անդամ (1946), ՀԽՍՀ ԳԱ անդամ (1950), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1962), Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1965), ԽՍՀՄ պետական մրցանակի (1950, 1979) դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1961):



5 տարեկանում ընտանիքի հետ տեղափոխվել է Թեմրիխանշուր (Բուլ-նաքս) քաղաք, 1918թ.՝ Թուրքմենստան, այնուհետև՝ հայրենի Ծմակահող գյուղ: 1922թ. կամավոր զինվորագրվել է կարմիր բանակին: Աշխատել է խորհրդային առաջին էլեկտրական երկաթուղու վրա որպես էլեկտրամոն-տաժող: 1930թ. ավարտել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1943-1975թթ. ղեկավարել է իր նախաձեռնությամբ կազմակերպված էլեկտրամեխանիկայի ՀամԳՀԻ-ն (1996թ.-ից՝ Ա.Իոսիֆյանի անվան): 1950-1955թթ., 1971-1975թթ., 1981-1986թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, 1982-1986թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ հատուկ ԿԲ տնօրեն, 1980-1989թթ.՝ ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր: Դեռևս ուսանողական տարիներին կատարած էլեկտրական թնդանոթի գյուտի համար ուղեգրվել է Համամիութենական էլեկտրատեխնիկական ինստիտուտ, ղեկավարել լաբորատորիա, այնուհետև՝ կոնստրուկտորական բյուրո: Մասնակցել է «Կոսմոս» մակնիշի արբանյակների, տիեզերական առաջին էլեկտրատեխնիկական լաբորատորիաների ստեղծմանը: Եղել է օդերևութաբանական մի շարք արբանյակների գլխավոր կոնստրուկտորը: Էլեկտրատեխնիկական ՀամԳՀԻ բաժանմունքներ է ստեղծել Սանկտ Պետերբուրգում, Տոմսկում, Երևանում և այլուր: Հեղինակել է բազմաթիվ գիտական աշխատանքներ, արտոնագրել 34 գյուտ, այդ թվում՝ առանց կոնտակտների էլեկտրամեքենա, խորհրդային առաջին թվային փոքրածավալ հաշվողական մեքենան՝ Մ3-ը:



**ԻՍԿԱՆԳԱՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ԷԳՈՒԱՐԳԻ**

(1970)

Լուսինե Էդուարդի Իսկանդարյան (ծնվ.՝ 1970, գ.Հաբերք), մանկաբարձ-գինեկոլոգ, բժշկական գիտությունների թեկնածու:

1987թ. արժաթե մեդալով ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1988թ. ընդունվել է Երևանի Մ.Հերացու անվան բժշկական ինստիտուտը: 1997թ. ավարտել է ինտերնատուրան՝ ստանալով մանկաբարձ-գինեկոլոգի որակա-



փորում: 1991-2001թթ. աշխատել է Մարտակերտի շրջանային հիվանդանոցում որպես մանկաբարձ-գինեկոլոգ: 2001-2004թթ. եղել է Ս.Խ. Աղաբեկյանի անվան Ազգային առողջապահական ինստիտուտի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի ասպիրանտ: Ջուգահեռ եղել է նաև Երևանի մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական աշխատությունների: 2008թ.-ից շրջանային հիվանդանոցի մանկաբարձ-գինեկոլոգ է:



**ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՌՈՒԳՈԼՅ
ԳԵՐԱՍԻՄ**

(1940)



Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյան (ծնվ.՝ 1940, Ստեփանակերտ, մոխրաթաղեցու ընտանիքում, Վանի Աթաբեկյանի տոհմից), շինարար, ինժեներ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

1958թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը, ավարտել 1963թ. և ստացել «Արդյունաբերական քաղաքացիական շինարարության» ճարտարապետ-շինարարի որակավորում: Արտադրական գործունեությունը սկսել է Ստեփանակերտի N59 շինարարական վարչությունում: 1963-1994թթ. աշխատել է տարբեր պաշտոններում, եղել շինվարչության և տրեստի գլխավոր ճարտարագետ, տրեստի կառավարիչ, ԼՂՀ նախագծաշինարարական վարչության գլխավոր պետ, ԼՂՀ պետշին-ի նախագահի տեղակալ: Ստեղծել է շինարարական արտադրական բազա, բարելավվել սոցիալական, բնակարանային և կենցաղային պայմանները: Նրա նախաձեռնությամբ կապեր են հաստատվել Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, շինարարական ու գիտական կազմակերպությունների հետ: 70-ից ավել ռացիոնալիզատորական աշխատանքների հեղինակ է, որոնցից մի քանիսը կիրառվել են նոր տեխնիկայի պլանով ԽՍՀՄ բոլոր հանրապետություննե-

րում և ցուցադրվել տարբեր ցուցահանդեսներում: Արժանացել է ԽՍՀՄ ռազմաօդային ու զբոսաշրջության գերազանցիկ կոչման, իսկ իր կողմից ղեկավարվող ԼՂ-ի նախագծաշինարարական միավորումը՝ Եվրոպայի «Ոսկե կամար» միջազգային պարգևին: Հեղինակել է 30-ից ավելի գիտական աշխատանքներ և մեկ աշխատություն:



ԼԱՁԱՐՅԱՆ ՋՈՅԱ ՄԱՆՎԵԼԻ
(1956)



Ջոյա Մանվելի Լազարյան (ծնվ.՝ 1956, գ.Չղրան), բժիշկ:

1973թ. ոսկե մեդալով ավարտել է Չղրանի միջնակարգ դպրոցը, 1981թ.՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Աշխատանքի է անցել Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում՝ որպես տեղամասային թերապևտ, 1985թ.՝ գլխավոր բժշկի տեղակալ, այնուհետև գլխավոր բժիշկ: 1995թ. նշանակվել է ԼՂՀ

առողջապահության նախարարի տեղակալ, 1997թ.՝ ԼՂՀ առողջապահության նախարար: 1998-1999թթ. աշխատել է որպես Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայի բժիշկ: 1999-2007թթ. եղել է ԼՂՀ առողջապահության նախարար: 2007թ. նշանակվել է ԼՂՀ ԱՆ «Արմինե Փակոմյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ գործադիր տնօրեն: Ընտրվել է ԼՂՀ 4-րդ (2008) և 5-րդ (2010) գումարման ԱԺ պատգամավոր: Եղել է ԱԺ սոցիալական ոլորտի հարցերի (2012թ.-ից՝ սոցիալական և առողջապահության հարցերի) մշտական հանձնաժողովի նախագահ: 2012թ. նշանակվել է ԼՂՀ առողջապահության նախարար, 2014թ.՝ ԼՂՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ, 2016թ.՝ ԼՂՀ նախագահի խորհրդական, Ազգային ժողովում ԼՂՀ նախագահի մշտական ներկայացուցիչ:



ԼԱՁԱՐՅԱՆ ՍԻՎԱ ՍԵՐՊԵՅԻ
(1951)



Սիվա Սերպեյի Լազարյան (ծնվ.՝ 1951, գ.Չղրան), մանկավարժական գիտությունների թեկնածու, Սանկտ Պետերբուրգի գիտնականների կրթական միության խորհրդի անդամ:

1968-1974թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետում՝ ինժեներ-մեխանիկի մասնագիտությամբ: 1999թ. մասնագիտական վերապատրաստում է անցել Սանկտ Պետերբուրգի մանկավարժական վարպետության պետական համալսարանում, ստացել հանրակրթական համակարգի մանկավարժ-հոգեբանի մասնագիտություն:

Աշխատել է Պետերբուրգի էլեկտրատեխնիկայի համամիութենական ԳՀԻ-ում՝ որպես ինժեներ: Դասավանդել է տեղի N495 դպրոցում: Աշխատել է Լազարյանների անվան ուսումնադաստիարակչական կենտրոնում՝ որպես ավագ դասատու, ապա նաև՝ տնօրեն:



ԼԱՁԱՐՅԱՆ ՎՅԱԶԵՍԼԱՎ ՊՆՎԵԼԻ
(1948)



Վյաչեսլավ Պավելի Լազարյան (ծնվ.՝ 1948, գ.Դրմբոն), տեխնիկական գիտությունների թեկնածու, ավտոտրանսպորտի վաստակավոր աշխատող, Ռուսաստանի միջազգային փոխադրողների ասոցիացիայի անդամ, Սանկտ Պետերբուրգի հայկական տարածաշրջանային Ազգային-մշակութային ինքնավարության առաջին նախագահ (2000):

Դպրոցն ավարտելուց հետո աշխատել է Մինգչաուրի մեքենաների գործարանում: Ծառայել է Լենինգրադի շրջանի

երկաթուղային գործերում: 1970թ.-ից հաստատվել է Լենինգրադում: Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1974թ. նշանակվել է N15 գլխավոր Լենավտոտրանս բեռնատար ավտոձեռնարկության, 1975թ.՝ N2 ավտոձեռնարկության շահագործման աշխատանքներով պետի տեղակալ: 1981-1984թթ. եղել է Լենինգրադյան տրանսպորտային հանգույցի ավտոփոխադրման սպասարկման վարչության շահագործման և առևտրային աշխատանքների գծով պետի առաջին տեղակալ, 1984թ.՝ Լենինգրադի պտուղ-բանջարեղենի գլխավոր արտադրության պետի տեղակալ: 1990թ. նշանակվել է «Խորհրդային տրանսավառ» արտաքին առևտրային միավորման «խորհրդային ավտո-Լենինգրադ» միջազգային բեռնափոխադրող արտադրական միավորման տնօրեն, այլա՝ «Խորավտո-Սանկտ Պետերբուրգ» ԲԲԸ գլխավոր տնօրեն:




ԼԱԼԱՅԱՆ ՀԵՂՈՒՆ ՀԱՅԿԻ
(1918-...)

Հեղուշ Հայկի Լալայան (ծնվ.՝ 1918, գ.Դոբրոն), բամբակահավաք, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1971), ԱդրՆՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1937-1944թթ. եղել է կթվորուհի, կաթնամթերային ֆերմայի վարիչ, 1944թ.-ից՝ օղակավարուհի, 1969թ.-ից՝ բամբակագործական բրիգադի բրիգադավար, 1975թ.-ից՝ Մարտակերտի շրջանի «Բարվի աշխատավոր» կոլտնտեսության խաղողագործ: Ստացել է բամբակի բարձր բերք՝ հեկտարից 30ց՝ 18ց նորմայի փոխարեն: 1969թ. ղեկավարելով հետ մնացող բրիգադը, հասցրել է կոլտնտեսության առաջատար բրիգադներից: «Սոցիալիստական աշխատանքի հերոս»-ի կոչման հետ միաժամանակ արժանացել է «Մուրճ և մանգաղ» ոսկե մեդալի և Լենինի շքանշանի:



ԽԱԼԱՓՅԱՆ ՉՈՐԱՅՐ ԵՐՎԱՆԿԻ
(1933-2008)



Չորայր Երվանդի Խալափյան (ծնվ.՝ 1933, գ.Թալիշ - մահ.՝ 2008, Երևան), արձակագիր, դրամատուրգ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1964), Հայաստանի գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան, ՀՀ կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաքևոսյան» և «Ոսկե եղեգն» նախագահական մրցանակների դափնեկիր:

1951թ. ավարտել է Թալիշի միջնակարգ դպրոցը, 1956թ.՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ ինժեներ կոնստրուկտորի մասնագիտությամբ: 1956-1967թթ. որպես նախագծող ինժեներ աշխատել է Երևանի գիտահետազոտական ինստիտուտում՝ էլեկտրամեքենաշինության բնագավառում: 1994-1996թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: 1962թ. հրատարակել է առաջին երկը՝ «Հեղեղ» վիպակը: Բեմադրվել են Ջ.Խալափյանի «Հրաշք երեխա» (1966, Երևանի երիտասարդական «Արշալույս» քատրոն), «Երիցուկի թերթիկներ» (1969), «Մեր բակի մարդիկ» (1972, Երևանի հեռուստատեսությամբ), «Օրորոցային» (1972, Լենինգրադ, Պյառնու, Շյաուլայ), «Հայրական տուն» (1975, Լենինական, 1977, Երևան), «Տարբեր նվագներ» (1973, Լենինական, 1974, Ռիգա, 1977, Բլագոնգրադ՝ Բուլղարիա) և այլ պիեսներ: «Թքեցին» պատմվածքի հիման վրա նկարահանվել է համանուն կինոնկարը (ռեժիսոր՝ Գ. Մելքոնյան): Ամենասիրված գործերից են՝ «Որտե՞ղ էիր, մարդ աստծո», «Եվ վերադարձնելով Չեր դիմանկարը» ստեղծագործությունները, որոնք թարգմանվել են մասն ալ լեզուներով: 2009թ. իրանական «Աֆրագ» հրատարակչությունը «Հայկական պիեսներ» մատենաշարով լույս է ընծայել Խալափյանի «Ասպետն ու իր զինակիրը» գիրքը (թարգմանիչ՝ Անդրանիկ Խելումյան):





**ԽԱԼԱՓՅԱՆ ՄԵԼԻՏԱ
ԵՐՎԱՆԴԻ**

Մելիտա Երվանդի Խալափյան (ծնվ.՝ գ.Թալիշ), տնտեսագիտական գիտությունների թեկնածու, «Թալիշ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Երևանի մենեջմենթի համալսարանի ռեկտոր:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ ԲՈՂՂԱՆԻ

(1913-...)

Աշոտ Բողղանի Խաչատրյան (ծնվ.՝ 1913, գ.Մարալյան Սարով), փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1965), պրոֆեսոր (1965):

1940թ. ավարտել է Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտը, 1949թ.՝ ԽՍՀՄ ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտի ասպիրանտուրան:

1949-1964թթ. աշխատել է Մոսկվայի մանկավարժության ինստիտուտում: 1964-1988թթ. եղել է Մոսկվայի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են փիլիսոփայության, մասնավորապես, 18-19-րդ դարերի հայ փիլիսոփայության պատմության հարցերին:



**ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԼԱԳԻԿ ՌՈՒԲԵՆԻ
(1961)**



Վլադիկ Ռուբենի Խաչատրյան (ծնվ.՝ 1961, գ.Դամիրու), պաշտպանության բանակի գեներալ-մայոր (2004): 1982թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Չայլուի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1988-1992թթ. անդամագրվել է Չայլու գյուղի կանավորական ջոկատին: 1992-1993թթ. եղել է Մարտակերտի Պաշտպանության շտաբի հրետանային դիվիզիոնի հրամանատար, ապա՝ հրետանու պետ, 1994-1996թթ.՝ Պաշտպանության բանակի հրետանու շտաբի, 1996-1997թթ.՝ Մարտակերտի Պաշտպանության շտաբի հրետանու պետ, 1997-1999թթ.՝ Պաշտպանության բանակի լեռնահրաձգային դիվիզիայի խառը հրետանային գնդի հրամանատար, 2000-2007թթ.՝ ՊԲ հրամանատարի տեղակալ, 2007-2012թթ.՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարար, 2012-2017թթ.՝ Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար, 2017-2019թթ.՝ ԱՀ Արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի տեղակալ: 2019թ. նշանակվել է ԱԻՊԾ տնօրեն: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով (1994), մի շարք մեդալներով:



ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՇԱՀԵՆԻ



Գարեգին Շախենի Խոնդկարյան (ծնվ.՝ Մոսկվա, Հովակիմ Խոնդկարյանի բողոք), նյարդաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Աշխատել է Ռուսաստանի ազգային հետազոտական Ն.Ի.Պիրոգովի անվան բժշկական համալսարանի մանկաբուժության ֆակուլտետում: Հեղինակել է 300-ից ավելի գիտական աշխատանքներ, 4 մենագրություն:



ԽՈՆԳԿԱՐՅԱՆ ՀՈՎԱԿԻՄ ԱՎԵՏԻ
(1900-1991)

Հովակիմ Ավետի Խոնդկարյան (ծնվ.՝ 1900, գ.Մոխրաթաղ - մահ.՝ 1991, Մոսկվա), նյարդաբան, բժշկական գիտությունների դոկտոր (1954), պրոֆեսոր (1958):

1920թ. ավարտել է Բաքվի առաջին արական գիմնազիան, զորակոչվել բանակ: 1922թ. ընդունվել է Բաքվի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1926թ. տեղափոխվել է Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, 1927թ. ավարտել այն: 1927-1930թթ. եղել է նույն ֆակուլտետի նյարդային հիվանդությունների կլինիկայի օրդինատոր: 1931-1935թթ. աշխատել է աշխատունակության փորձագիտական Համամիութենական ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, 1937-1956թթ.՝ Սեմաշկոյի անվան կենտրոնական կլինիկական հիվանդանոցի նյարդաբանական բաժանմունքում. 1941թ.՝ բաժանմունքի ղեկավար, 1947թ.՝ նյարդային հիվանդությունների կլինիկայի գիտական ղեկավար: Հայրենական պատերազմի տարիներին աշխատել է էվակոհոսպիտալում: 1956-1991թթ. աշխատել է ԽՍՀՄ ԲԳԱ ներքոգիայի ԳՀԻ-ում: Հեղինակել է շուրջ 167 գիտական աշխատանք, այդ թվում՝ 6 մենագրություն: Աշխատանքները վերաբերում են հիմնականում նեյրոինֆեկցիաների ուսումնասիրմանը:



ԽՈՆԳԿԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ
(1929-2006)

Շահեն Գարեգինի Խոնդկարյան (ծնվ.՝ 1929, - մահ.՝ 2006) (մոխրաթաղցի նյարդաբան, բժշկական գիտությունների դոկտոր Գարեգին Խոնդկարյանի որդին), ՌԽՖՍՀ վատակավոր բժիշկ:

Ավարտել է Ռոստովի բժշկական ինստիտուտը: 1956թ. աշխատանքի է անցել որպես

Բոլոգոյի շրջանի երկաթգծի համաճարակաբանական կենտրոնի ղեկավար: 1962թ. դարձել է շրջանի գլխավոր բժիշկ-սանիտարը: 1967թ. ղեկավարել է առողջապահության շրջանային բաժինը: Նրա օրոք Կալինինոյի մարզի բուժսպասարկումը ճանաչվել է երկրում լավագույններից մեկը: Բժշկական հաստատություններ են հիմնվել մարզի բոլոր շրջաններում և Տվերում. շրջանային կլինիկական հիվանդանոցը, ուռուցքաբանական և հոգեմայրաբանական դիսպանսերները և այլ բազմաթիվ խոշոր բուժաստատություններ: Կալինինոյի առողջապահության բաժանմունքը հետագայում դարձել է Մոսկվայի Սեմաշկոյի անվան ինստիտուտի հիմքը: Թոշակի անցնելով, շարունակել է ապրել առողջապահության խնդիրներով: 6 տարի ղեկավարել է Ռուսաստանի «Գթության առողջության ֆոնդի» Տվերի բաժանմունքը: Արժանացել է բազմաթիվ շքանշանների, պետական պարգևների:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԿՈՒՐ ԱՎԱՆԵՍԻ
(1941)

Բակուր Ավանեսի Կարապետյան (ծնվ.՝ 1941, գ.Մարգուշավան), արձակագիր, հրապարակախոս, Հայաստանի լրագրողների և նկարիչների միությունների անդամ, Հայաստանի գրողների միության անդամ (1986):

Ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: Աշխատել է «Ազատամարտ» թերթում: Աշխատում է Երևանի մենեջմենտի համալսարանում՝ որպես ամբիոնի վարիչ: Նաև դասախոսում է ԵՊՀ լրագրության ֆակուլտետում: 1967թ.-ից հեղինակել է հոդվածներ՝ թերթերում և ամսագրերում՝ արցախահայության կյանքի, միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ, պատմվածքներ: 1988թ. Արցախյան շարժման ժամանակ հեղինակել է մի շարք փաստավավերագրական ֆիլմեր: Կազմակերպել է գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես՝ Նկարչի տանը, Շուշիի և Քաշաթաղին նվիրված լուսանկարների ցուցահանդես՝ Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում:





ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՓՐԱՔՍՅԱ ԱՐՇԱԿԻ
(1930)

Եփրաքսյա Արշակի Կարապետյան (ծնվ.՝ 1930, գ.Ղազանչի), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1950թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, աշխատանքի անցել Ասկերանի շրջանի Քարազլիսի յոթամյա դպրոցում: 1954-1993թթ. աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում: Երկար տարիներ եղել է Ասկերանի շրջանային

բաժնի արտահաստիքային տեսուչը: Աշխատանքային տարիներին մշտապես եղել է շրջանի և դպրոցի տարրական դասարանների առարկայական հանձնաժողովների նախագահը: Նրա փորձն ու ձեռք բերած հաջողությանները հաճախ են լուսարանվել թերթերում և ամսագրերում: 1960թ. որպես պատգամավոր մասնակցել է ուսուցիչների հանրապետական 9-րդ համագումարի աշխատանքներին: Կրթության ասպարեզում ունեցած անախընթաց հաջողությունների համար 1970թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, 1976թ. «Պատվո նշան» շքանշանով: 1981թ. արժանացել է «Ավագ ուսուցիչ» կոչմանը: 1986թ. ընտրվել է մարզխորհրդի պատգամավոր: Արցախյան զոյամարտի տարիներին (1992-1993թթ.) Ստեփանակերտում՝ բնակելի շենքերից մեկի նկուղում, պարապել է դպրոցականների հետ:



ԿՈՍՏԱՆԳՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
(1880-1960)

Նիկոլայ Հայրապետի Կոստանդյան (ծնվ.՝ 1880, գ.Կոսապատ - մահ.՝ 1960, Երևան), պետական գործիչ:

1906թ.-ից եղել է բուլշևիկյան կուսակցության անդամ և ընդգրկվել կոմունայի ղեկավար կազմում: Հայաստանի խորհրդայնացումից



հետո եղել է Չանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղար, հետագայում՝ Հայաստանի շինարարության նախարար:

1936թ. բանտարկվել է որպես «ժողովրդի թշնամի»: Կարողացել է խուսափել գնդակահարությունից Բաքվի 26 կոմիսարների գնդակահարության ժամանակ՝ կնոջ՝ Ժենյայի շնորհիվ, ով կիրք անձնավորություն էր և տիրապետում էր լեզուների: Նա հանդիպել էր Միկոյանի հետ, ստույգ ապացույցներով փրկել ամուսնուն: Այսպես Ն.Կոստանդյանը ազատ է արձակվել, արդարացվել և վերականգնվել աշխատանքի: Անհատական բոշակառու էր: Հողին է հանձնվել պանթեոնում:



ԿԱՄԱՐԻ (ԲԵՋԱՆՅԱՆ) ՀԱԿՈՒ ՄԻՆԱՅԻ
(1889 -1930)

Հակոբ Մինայի Կամարի (Բեջանյան) (ծնվ.՝ 1889, գ.Վարնկաթաղ - մահ.՝ 1930, Չանգեզուր), լրագրող, պետական գործիչ:

1903թ. ընդունվել է Գորիի ուսուցչական սեմինարիան: Չբաղվել է հեղափոխական գործունեությամբ: 1909թ.-ից ղեկավար մասնակցություն է ունեցել Կովկասի բուլշևիկյան գրեթե բոլոր թերթերի և ամսագրերի հրատարակմանը: 1909-1912թթ. աշխատել է Թիֆլիսի, ապա՝ Բաքվի կուսակցական կազմակերպությունում: 1915-1916թթ. դասավանդել է Գանձակում: 1915թ. եղել է «Պայքար» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ: 1916թ.-ից աշխատել է Բաքվում, հեղափոխական աշխատանքներ տարել նավթահանքերի բանվորների շրջանում: 1917թ. եղել է «Մոցիալ-դեմոկրատ» թերթի պատասխանատու քարտուղարը, 1918-1919թթ.՝ Թիֆլիսում «Կոմունիստ» թերթի խմբագիրը: 1920-1921թթ. կուսակցական ղեկավար աշխատանքներ է կատարել Չանգեզուրում, այնուհետև՝ Լեռնային Ղարաբաղում: 1920թ. մայիսին եղել է Չանգեզուրի կոմունիստական կազմակերպության ժամանակավոր ԿԿ-ի նախագահը: Չանգեզուրում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո ընտրվել է գավառի Հեղկոմի նախագահ:





**ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ԲԱՆՇԻ**
(1932-1998)

Արտաշես Բախշիի Հակոբյան (ծնվ.՝ 1932, գ.Մաղավուզ - մահ.՝ 1998, ք.Երևան), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սկզբնական կրթությունը ստացել է Մաղավուզի 7-ամյա դպրոցում, ուսումը շարունակել Ստեփանակերտի բժշկական տեխնիկումում: Ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի վիրաբուժական բաժինը: Երկար տարիներ աշ-

խատել է Երևանում:



ՀԱԿՈՐՅԱՆ ՀՐԱՅՐ ՍԱՄՎԵԼ
(1975)

Հրայր Սամվելի Հակոբյան (ծնվ.՝ 1975, գ.Մաղավուզ), ուռուցքաբան-վիրաբույժ:

1982-1992թթ. սովորել և ոսկե մեդալով ավարտել է Մաղավուզի միջնակարգ դպրոցը, 1993-1999թթ.՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, 1999 - 2001թթ.՝ Երևանի պետական բժշկական համալսարանի ուռուցքաբանության ամբիոնի օրդինատուրան: 2002թ.-ից աշխատում է ՀՀԱՆ Ուռուցքաբանության ազգային կենտրոնի ընդհանուր ուռուցքաբանության բաժանմունքում: 2016թ. նշանակվել է ՀՀ ԱՆ Ուռուցքաբանության ազգային կենտրոնի պոլիկլինիկական ծառայության ղեկավար: 2019թ. արժանացել է «Որակի նշան» մրցանակի:



ՀԱԿՈՐՅԱՆ ՎԵՆԵՐԱ ՍՈՒՐԵՆԻ
(1961)

Վեներա Սուրենի Հակոբյան (ծնվ.՝ 1961, Մաղավուզ), բժշկական գիտությունների դոկտոր (2009):

1968-1978թթ. սովորել է Մաղավուզի միջնակարգ դպրոցում: 1990-1995թթ. սովորել է Ն.Ա.Սեմաշկոյի անվան բժշկական ատամնաբուժական ինստիտուտի բուժական բաժնում: 1997թ.՝ ավարտել է օրդինատուրան՝ «Վիրաբուժություն» մասնագիտությամբ: Աշխատանքի է անցել նույն ինստիտուտի վիրաբուժական հիվանդությունների ամբիոնում որպես ավագ բժիշկ-լաբորանտ: 2001-2014թթ. աշխատել է Մոսկվայի պետական բուժատամնաբուժական համալսարանի վիրաբուժական հիվանդությունների և կլինիկական անգիոգրաֆիայի ամբիոնում որպես ասիսենտ: 2014թ. մրցույթով ընտրվել է դոցենտի պաշտոնում: Հեղինակել է 68 գիտական հոդված և զեկույց:



**ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼԻ**
(1914 -1998)



Գրիգոր Միքայելի Հայրապետյան (ծնվ.՝ 1914, գ.Մինգրելսկ - մահ.՝ 1998, Երևան), Խորհրդային բանակի փոխգնդապետ, ԽՍՀՄ հերոս (1940):

1939թ. ավարտել է կրտսեր հրամանատարական դասընթացները, 1944թ.՝ «Վիստրել» դասընթացները (Մոսկվա), 1952թ.՝ Մ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1939-1940թթ. խորհրդա-ֆիննական պատերազմում որպես դասակի (756-րդ Հրաձգային գունդ) հրամանատար աչքի է ընկել Մաներիայի գծի ճեղքման ժամանակ հրամանատարության առաջադրանքները կատարելիս, որի համար և ար-

ժանացել է հերոսի կոչման: 1940թ. օգոստոսից եղել է հետևակային ուսումնարանի (Լենինգրադ) դասակի հրամանատար: 1941թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է Հյուսիսային Կովկասում մղված մարտերին, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը, Նարվայի և Լուգայի պաշտպանությանը: 1942թ. դեկտեմբերին մասնակցել է Կուրսնի ազատագրմանը, 1943թ.՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի ազատագրմանը, Դ-նեպրի, Դ-նեստրի, Բուգի գետանցմանը, հասել Բուդապեշտ: 1951-1955թթ. ծառայել է Անդրկովկասյան ռազմական օկրուգում: 1955թ.-ից դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռազմական ամբիոնում: Աշխատել է որպես Երևանի ռելեի և ավտոգործարանների պահպանության պետ, 1975-1985թթ.՝ ՀՀ արխիվային վարչությունում որպես քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ: Չորացրվել է 1959թ.:



**ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԼԵՎՈՆ
ԳՈՒՐԳԵՆԻ
(1949-2017)**



Լևոն Գուրգենի Հայրապետյան (ծնվ.՝ 1949, գ.Վանք - մահ.՝ 2017, ՌԴ), գործարար, բարերար:

Սովորել է Մոսկվայի իրավաբանական ինստիտուտում: Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: Աշխատել է «Կոմսոմոլսկայա պրավդա», «Սովրեմեննիկ» պարբերականներում, եղել

«Սոբեսեդնիկ» հրատարակչության հիմնադիրը: Վերակառուցել է Գանձասարի վանքը: Նա մեծ գումարներ է ներդրել Արցախի զարգացման համար: Հայրենի Վանք գյուղում հիմնադրել է փայտամշակման գործարան, հիմնել է հյուրանոցային համալիրներ, բանկեր, հանդիսությունների սրահ: 2008թ. հոկտեմբերի 16-ին, Ստեփանակերտում, Շուշիում և Գանձասարում կազմակերպել է 700 երիտասարդ զույգ նորապսակների համատեղ պսակադրություն: Այդ արարողությունը իր տեսակով առաջինն էր ոչ

միայն Արցախում, այլև ողջ Հայաստանում: Վերակառուցել է Արցախի բազմաթիվ միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ: Բարերարի առաջնային ծրագրերից էր նաև Արցախում ռազմական ակադեմիայի հիմնումը, որի նպատակն էր Արցախում բարձրաստիճան սպայակազմի պատրաստումը, որն այդպես էլ չհասցրեց կյանքի կոչել:



**ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ
ՍԵՐԳԵՅԻ
(1948)**



Վալերիկ Սերգեյի Հայրապետյան (ծնվ.՝ 1948, գ.Վաղուհաս), ֆիզմաթ գիտությունների թեկնածու (1984), դոկտոր (2009):

1966-1970թթ. սովորել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում: Մինչև 1972թ. աշխատել է Վաղուհասի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1973թ. տեղափոխվել է ՌԴ Նովոսիբիրսկ քաղաք: Գիտական գործունեությունը սկսել է որպես ավագ լաբորանտ՝ Սիբիրի գիտությունների ակադեմիայի բաժանմունքում: 1985թ. Նովոսիբիրսկի ֆիզիկայի ամբիոնում անցել է դասախոսական աշխատանքի: Գիտական հետազոտությունները վերաբերվում են լազերային ֆիզիկայի, ոչ գծային օպտիկայի քվանտական էլեկտրոնիկայի հարցերին: Հեղինակել է մի շարք մենագրություններ, ութ տասնյակից ավելի գիտական հոդվածներ:





ՎԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՏՈՐԻԿԻ (1970)

Վահրամ Տորիկի Հայրապետյան (ծնվ.՝ 1970, գ.Մաղավուզ, կենսաբանական գիտությունների դոկտոր (2014), պրոֆեսոր (2018):

Սովորել է Վարնկաթաղի 8-ամյա դպրոցում: 1988թ. ավարտել է Մաղավուզի միջնակարգ դպրոցը: 1988-1990թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1991թ. ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուծության ֆակուլտետը: 1997թ.

ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի անասնաբուժական-անասնաբուժական ֆակուլտետը: 2001-2003թթ. սովորել է ԱրՊՀ ասպիրանտուրայում: 1997թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում, աշխատել որպես զինղեկ, ապա դասախոս, 2001-2005թթ.՝ մույն քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 2003թ. ժամավճարային հիմունքներով դասախոսել է ԱրՊՀ կենսաբանության ամբիոնում: 2005թ. տեղափոխվել է ԱրՊՀ կենսաբանության ամբիոն՝ որպես դասախոս: 2008-2011թթ. ղեկավարել է Կենսաբանության ամբիոնը: 2011թ. աշխատանքի է անցել ՀՊԱՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում, որպես տնօրենի պաշտոնակատար: Հեղինակել է 71-ից ավելի գիտական և գիտամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ 6 ուսումնամեթոդական ձեռնարկ: Հեղինակել և ղեկավարել է Արցախի կենդանիների «Կարմիր գրքի» ստեղծման աշխատանքները: Այժմ «Կանաչ Արցախ» ՊՈԱԿ-ի տնօրենն է:



ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԲԱՂՎԱՍՏ (1775-1854)

Բաղդասար Հասան-Ջալալյան (ծնվ.՝ 1775, գ.Վանք - մահ.՝ 1854, Շուշի), եկեղեցական, հասարակական գործիչ: Սերում է Արցախ-Խաչենի Հասան-Ջալալյան իշխանական տոհմից:

Կրթությունը ստացել է Գանձասարում: Հովհաննես կաթողիկոսի նահատակությունից հետո հոր՝ Դանիել բեկի և հորեղբոր՝ Սարգիս Ջալալյանցի հետ փախել է Գանձասարի վանքից, ապաստանել Գանձակում՝ Ջավադ խանի մոտ: 1808թ. վերադարձել է Ղարաբաղ: 1815թ. Գանձասարի կաթողիկոսության վերացումից հետո մետրոպոլիտ Սարգիս Հասան Ս.Ջալալյանի կողմից ուղարկվել է Էջմիածին, 1820թ. ձեռնադրվել որպես եպիսկոպոս: 1830թ. Հովհաննես Ը Կարբեցու կողմից կարգվել է Ղարաբաղի թեմի առաջնորդ: Նրա ջանքերով Գանձասարի վանքին վերադարձվել են ավելի քան 60 գյուղ և կալվածք, հիմնվել է մասնավոր դպրոց, կառուցվել առաջնորդարան, վերականգնվել Ամարասի վանքի սեփականատիրական իրավունքները: 1837թ. տեղափոխվել է թեմի կենտրոն Շուշի: 1839թ. հրատարակել է Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմությունը», վերադարձրել պարսիկ բեկերի սեփականացրած ու հափշտակած ընդարձակ կալվածքները, կառուցել Շուշիից մինչև Քոլատակ գյուղը ձգվող Արցախի ամենաերկար ճանապարհը (ժողովուրդն այն կոչել է Բաղդասար մետրոպոլիտի ճանապարհ): 1939թ. արժանացել է Ռուսաստանի Ս.Աննայի առաջին աստիճանի թագազարդ շքանշանի: Ամփոփված է Գանձասարի վանքում:



ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԵՍԱՅԻ (...-1728)

Եսայի Հասան-Ջալալյան (ծ. թ. անհայտ-մահ.՝ 1728), 17-18-րդ դարի հայ նշանավոր հոգևորական, պատմագիր, մատենագիր, հայ ազատագրական շարժման ակնառվոր գործիչ, Արցախի Հասան-Ջալալյան իշխանական տոհմից:

1701-1728թթ. եղել է Գանձասարի կաթողիկոս: Միավորել է Ս.Էջմիածնին ենթակա Աղվանից պառակտված կաթողիկոսական աթոռը: Կաթողիկոսանալուն պես Եսայի Հասան-Ջալալյանը Գանձասարը դարձրել է քաղաքական կենտրոն և Արցախի լեռնային իշխողների խորհրդարան, որտեղ մշակվում էին դիվանագիտական հարաբերություններ և քննվում ռազմական ծրագրեր: Նրան են ենթարկվել Ղարաբաղը, Բարդան (Պարտավը), Շամախին, 1720թ.-ից՝ նաև Գանձակը, Շաքին, Ղարալան (Կասպաղա-

կը) և այլն: Իսրայել Օրու մահից (1711) հետո գլխավորել է ազատագրական շարժումը, բանակցություններ վարել ռուսական կառավարության հետ: 1716թ. Գանձասարում ընդունել և եպիսկոպոս է ձեռնադրել Այսրկովկաս Պետրոս 1-ի ուղարկած Մինաս Վարդապետին և կարգել ռուսահայոց հոգևոր առաջնորդ: Արցախահայության անունից հատուկ նամակով Պետրոս 1-ին է փոխանցել Ռուսաստանի հովանավորությունը «յոժար սրտի» ընդունելու ցանկությունը: Նրա կազմած զորամասը վրացական զորքի հետ 1722թ. պարտության է մատնել Դաղստանի լեռնականներին: Նույն թվականին Եսայի Հասան-Ջալալյանը Գանձակում և Թիֆլիսում Վրաց թագավոր Վախթանգ 6-րդի հետ մշակել է պարսկական տիրապետության դեմ համատեղ պայքարի ծրագիր: 1724թ. թուրքական զորքի՝ Արցախ արշավելու ժամանակ Եսայի Հասան-Ջալալյանը մերժել է Ամենայն հայոց կաթողիկոսի՝ թուրքերին հպատակվելու առաջարկը և օգնություն հայցող դիմումներ իղել ռուսական արքունիք: Որպես Դարաբաղի մելիքների ապստամբության (1700-1728) պարագլուխներից մեկը, գրել է իր ժամանակի անցքերի մանրամասն պատմությունը, «Պատմություն Աղուանից» գործը, որի համառոտ տարբերակը 1839թ. լույս է տեսել Շուշում: Երկը լույս է տեսել նաև ֆրանսերեն (1876), վրացերեն (1971), ռուսերեն (1989):



**ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ՍՏԵՓԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
(1983)**



Ստեփան Հովհաննեսի Հասան-Ջալալյան (ծնվ.՝ 1983թ. գ.Դրմբոն Արցախի ամենահին՝ Հասան-Ջալալյանների թագավորական իշխանական գերդաստանում), քաղաքական գործիչ: 2000թ. ավարտել է Երևանի թիվ 118 միջնակարգ դպրոցը, նույն տարում զուգահեռ ավարտել է նաև Երևանի թիվ 22 երաժշտական դպրոցը: 2004թ. ավարտել է Երևանի պետական

համալսարանի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը՝ ստանալով սոցիալական աշխատանքի բակալավրի աստիճան,

մասնագիտացել է սոցիալական քաղաքականության բնագավառում: Ծառայել է ԱՀ Պաշտպանության բանակում: Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար պաշտպանության է ներկայացրել «Հասան-Ջալալյան իշխանական տոհմի դերը հայոց պատմության մեջ XIII-XVI դարերում» ատենախոսությունը: 2008-2017թթ. աշխատել է ՀՀ Ազգային Ժողովում՝ որպես փորձագետ: 2007-2009թթ. հեղինակել և Հայաստանի Հանրային ռադիոյի «Մեր պատմությունը» հաղորդաշարի եթերում պարբերաբար ներկայացրել է 40 ռադիոհաղորդում Արցախի քաղաքական պատմության առավել ուշագրավ և հիշարժան դրվագների վերաբերյալ: 2009-2011թթ. ընթացքում հեղինակել և նկարահանել է երեք փաստավավերագրական ֆիլմ Արցախի քաղաքական պատմության վերաբերյալ: 2017թ. մարտի 14-ին հիմնադրել է «Հասան-Ջալալյանների խորհուրդ» պատմամշակութային, ազգագրական հասարակական կազմակերպությունը, որն էլ նախագահում է մինչօրս: 2017թ. մայիսին հրատարակել է «Արցախի աշխարհիկ և հոգևոր առաջնորդ Հասան-Ջալալյանները» վերնագրով սովորածավալ մեմագրությունը կից Առանշահիկների և Հասան-Ջալալյանների տոհմաձեռքով: Հեղինակել է մոտ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածներ, որոնք հրատարակվել են Հայաստանում և Հայաստանից դուրս գործող գիտական հանդեսներում և ինտերնետային կայքերում:



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ԲԱՆՇԻԻ
(1935)**



Ալբերտ Բախշիի Հարությունյան (ծնվ.՝ 1935, գ.Մեծ Շեն), ԼՂՀ վաստակավոր նկարիչ, Նկարիչների միության անդամ, Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի:

Ավարտել է Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի քանդակի բաժինը: Մասնակցել է 1957թ. Մոսկվայում կայացած

նկարիչների միջազգային փառատոնին: 1996-1997թթ. Ստեփանակերտում կազմակերպած սիմպոզիումների մասնակից է: Մասնակցել է հանրապետական և համամիութենական մի շարք ցուցահանդեսների: Բազմաթիվ մոնումենտալ հուշարձանների հեղինակ է, որոնք գտնվում են ԱՀ տարածքում՝ «Մայր Ղարաբաղ», «Մուրացան» (Շուշի), «Աղմիրալ Իսակով» (Ստեփանակերտ), «Նուան ծառ» (Ստեփանակերտ), «Ա. Խանփերյանց» (Հաղորթի շրջան): ԼՂՀ կառավարության Եղիշեի ամենամյա մրցանակի դափնեկիր է:



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԻՆԱ
ԵՐԵՄԻ**
(1951-2004)



Արինա Երեմի Հարությունյան (ծնվ.՝ 1951, գ.Մոխրաթաղ - մահ.՝ 2004, Ստեփանակերտ), համաճարակաբան:

1974թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը:

1975-1983թթ. աշխատել է մարզային համաճարակաբանության, Ասկերանի հիգիենային ծառայություններում: 1983թ.-ից եղել է մարզային (հանրապետական) հիգիենային համաճարակաբանական ծառայության գլխավոր բժիշկ, միաժամանակ նաև՝ գլխավոր սանիտարական բժիշկ: Արցախյան պատերազմի տարիներին Ա. Հարությունյանի ղեկավարությամբ մշակվել են պատերազմական իրավիճակին համապատասխան համաճարակային միջոցառումներ՝ կանխելու վարակիչ հիվանդությունների տարածումն ինչպես զինծառայողների, այնպես էլ խաղաղ բնակչության շրջանում:



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՇՈՒՐԱՅԻ**
(1964)

Արմեն Շուրայի Հարությունյան (ծնվ.՝ 1964, Երևան՝ մեծշենացու ընտանիքում), իրավաբանական գիտությունների դոկտոր (1997), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր (2015), Ֆրանսիայի հայ իրավաբանների միության պատվավոր անդամ:

1981-1986թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1986թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան: 1993-1997թթ. ուսանել է ՌԴ Պետական ծառայության ակադեմիայի դոկտորնատուրայում:

1989թ.-ից դասավանդում է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնում: 2001-2005թթ. եղել է ՀՀ Սահմանադրության բարեփոխումների հարցով ՀՀ Նախագահի ներկայացուցիչ, 2000-2002թթ.՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ղեկան: 2002-2006թթ. զբաղեցրել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ղեկավորի, 2006-2011թթ.՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնները: 2011թ. նշանակվել է Կենտրոնական Ասիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ: Ջեկույցներով հանդես է եկել Հարվարդի և Միչիգանի համալսարաններում: Հեղինակել է ավելի քան 80 գիտական աշխատանք, 2 դասագիրք և 7 մենագրություն:





ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԵՆԻԿ ՆԻԿՈԼԱՅԻ
(1946)

Բենիկ Նիկոլայի Հարությունյան (ծնվ.՝ 1946, գ.Հաթերք), վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր (1991), պրոֆեսոր (1992), Միջազգային միջակադեմիական խորհրդի «Գիտության և արվեստի ասպետ» (1999):

1970թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, 1970-1972թթ.՝ Մայրսիզմ-լենինիզմի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը:

1977-1979թթ. սովորել է Մոսկվայի Բժիշկների կատարելագործման կենտրոնական ինստիտուտում, 1987-1989թթ.՝ Մոսկվայի Ի.Մ.Սեչենովի անվան առաջին Բժշկական ինստիտուտի ընդհանուր վիրաբուժության գծով դոկտորանտուրայում:

1970-1972թթ. եղել է Խորհրդային բանակի գնդի ավագ բժիշկ, 1980-1983թթ.՝ Մալիի հանրապետությունում հոսպիտալի ավագ վիրաբույժ: 1992-1993թթ. ղեկավարել է Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի աղետների բժշկության ամբիոնը, 1993-1995թթ.՝ ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչությունը, 1996-1997թթ.՝ ԵՊԲՀ ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնը: 2001թ.-ից աշխատել է որպես ՌԴ բժշկատեխնիկական ԳԱ հայկական բաժանմունքի նախագահ, 2002թ.-ից՝ Կուրորտաբանության և ֆիզիկայի բժշկության ԳՀԻ տնօրեն, 2003-2011թթ.՝ ՀՀ ԱՆ Ս.Խ.Ավդալբեկյանի անվան Առողջապահության Ազգային ինստիտուտի վերականգնողական թերապիայի և կուրորտաբանության ամբիոնի վարիչ: 2010թ. նշանակվել է ՀՀ Պաշտպանության նախարարի ռազմա-բժշկական հարցերով խորհրդական: 2011թ. ղեկավարել է Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի ռեաբիլիտալոգիայի, ֆիզիոթերապիայի և սպորտային բժշկության ամբիոնը: Աշխատանքները վերաբերում են վնասվածքների բուժման արագացմանը, խթանման հարցերին:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻՀԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ
(1942-2018)

Գրիշա Համբարձումի Հարությունյան (ծնվ.՝ 1948, գ.Վաղուհաս - մահ.՝ 2018, Ստեփանակերտ), մանկավարժական գիտությունների թեկնածու (1978), դոցենտ (1984), դոկտոր (2002), պրոֆեսոր (2003):

1969թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը, 1976թ.՝ Խ.Արոլյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայի հեռակա բաժինը:

1969-1974թթ. դասավանդել է Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Խունգուբալայի, Հարությունագոմերի դպրոցներում: 1974-1992թ. աշխատել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտում, 1992-2011թթ. ԱրՊՀ-ում՝ ամբիոնի վարիչ, մանկավարժական ֆակուլտետի ղեկավար: Այնուհետև անցել է աշխատանքի Գր.Նարեկացի համալսարանում, եղել մանկավարժական ամբիոնի վարիչ: Հեղինակել է ավելի քան 60 գիտական հոդված, մեկ տասնյակից ավելի աշխատություն, մեթոդական ձեռնարկներ:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՆ ԱՐՏԵՄ
(1932)



Հրանուշ Արտեմի Հարությունյան (ծնվ.՝ 1932, Մարտակերտ), Վաստակավոր ուսուցչուհի (2009):

1940-1950թթ. սովորել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում: 1950թ. ընդունվել է Աղբեջանի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1954թ. ավարտել է ինստիտուտը և անցել

աշխատանքի Միր-Բաշիրի շրջանի Բ.Մարովի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: Այնուհետև տեղափոխվել է Մարտակերտ և աշխատանքի անցել կոմերիտշրջկոմում՝ որպես ընդհանուր բաժնի վարիչ: 1961թ.-ից դասավանդել է Մարտակերտի թիվ 1 դպրոցում: 1971թ. մասնակցել է Ադրբեջանի ուսուցիչների 6-րդ համագումարին որպես պատգամավոր և պարգևատրվել պատվոգրով: 1979թ. հաղթել է նույն մրցույթում և պարգևատրվել մեդալով: 1986թ. պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԱՏ ՍԱՐԳՍԻ

(1926-1999)

Մարատ Սարգսի Հարությունյան (ծնվ.՝ 1926, Մարտակերտ - մահ.՝ 1999, Մոսկվա), տեխնիկական գիտությունների թեկնածու, ինժեներ-կոնստրուկտոր, նորարար:

Եղել է «Բուրան» տիեզերական կայանքի համահեղինակ:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԵՐՍԵՍ

(...-1974)

Ներսես Հարությունյան (Թունև) (ծնվ.՝ գ.Մաղավուզ - մահ.՝ 1974, Մոսկվա), պետական գործիչ:

Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, 1916-1917թթ.՝ Ղարսի, Էրզրումի համար մղվող մարտերին: 1917թ. Դեբրեճուրում ընտրվել է բանվորագյուղացիական բանակի պատգամավոր: 1920թ. Ղափանի շրջանում ծավալել է ընդհատակյա գործունեություն: 1923թ. եղել է գյուղի գործկոմի նախագահ, 1932թ.՝ Առաջածորի և Հաթերքի սպառողական ընկերությունների ղեկավար: 1933-1934թթ. սովորել է Մոսկվայի Սվերդլովի անվան կուսակցական դպրոցում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պարգևատրվել է մեդալներով և շքանշաններով: Երկար տարիներ Մոսկվայում վարել է տարբեր պատասխանատու պաշտոններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՊՅՈՏՐ ԻՎԱՆԻ

(1919-1992)

Պյոտր Իվանի Հարությունյան (ծնվ.՝ 1919, գ.Մոխրաբաղ - մահ.՝ 1992, Երևան), անասնաբույժ-անատոմ, անասնաբուժական գիտությունների դոկտոր (1970), պրոֆեսոր (1972):

1941թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: 1964-1992թթ. եղել է նույն ինստիտուտի կազմաբանության (անատոմիայի) ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են հանրապետությունում բուծվող եղջերավոր կենդանիների և ընտանի թռչունների ցեղային, տիպային, հասակային, ինչպես նաև համեմատական կազմաբանության խնդիրներին:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՄՈՍԿՎԱ


(1965)



Սլավիկ (Ավիկ) Մոսկվի Հարությունյան (ծնվ.՝ 1965, գ.Չլդրան), բանաստեղծ, տեսաբան, կինոսցենարիստ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր (2008), Ռուսաստանի Գրողների Միության անդամ (1998), «Ռուս-Ֆիլմ» կինոընկերության գլխավոր պրոդյուսեր (2005-2016):

1982թ. ավարտել է Չլդրանի միջնակարգ դպրոցը, ընդունվել Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1983-1985թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1990թ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի հեռուստատեսությունում: 1990թ. եղել է «Արցախյան շաբաթ» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիրը: 1992-1993թթ. մասնակցել է Արցախյան պատերազմին: 1994-1995թթ. աշխատել է ՀՆԳ-ի «02» ծառայությունում: 1995-1997թթ. Մոսկվայում սովորել և ավարտել է Համառուսաստանյան կինեմատոգրաֆիայի ինստիտուտի կինոդրամատուրգիայի ֆակուլտետը, 1997-2000թթ.՝ Մոսկ-

վայի մշակույթի և արվեստների համալսարանի ասպիրանտուրան: Առաջին անգամ տպագրվել է 15 տարեկանում՝ «Պիոներ կանչ» թերթում: 1989թ. Երևանում տպագրել է «Ուշացած հեռագրեր» բանաստեղծությունների ժողովածուն: Հեղինակել է 20-ից ավելի գիտական հոդվածներ և երկու մենագրություն: Մասնակցել է ավելի քան մեկ տասնյակ ֆիլմերի արտադրության՝ հայերեն, ռուսերեն, իսպաներեն լեզուներով: 2016թ. տեղափոխվել է Բարսելոնա՝ մշտական բնակության: Հանդիսանում է ժամանակակից եվրոպական պոեզիայի առաջատար բանաստեղծներից մեկը:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՔԱՋԻԿ ԱՐՍԵՆԻ
(1948)

Քաջիկ Արսենի Հարությունյան (ծնվ.՝ 1948, գ.Քոլլատակ), դերասան, վաստակավոր արտիստ (1982), ԼՂՀ ժողովրդական արտիստ (2004):

1962թ. ավարտել է Եռուզիի թիվ 2 գիշերօթիկ դպրոցի 8-րդ դասարանը և ընդունվել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեխանիզացիայի բաժինը: 1964թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի Մ.Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես սկսնակ դերասան և, միաժամանակ, երկու տարի սովորել է երեկոյան դպրոցում: 1968-1970թթ. ծառայել է խորհրդային բանակում: Չորսըսուց հետո կրկին վերադարձել է Ստեփանակերտի պետական թատրոն: 1971-1973թթ. սովորել է Մոսկվայի Կրուպսկայայի անվան արվեստի համալսարանի թատերական բաժնում: 1988թ. Արցախյան շարժման նախաշեմին ստեղծել է պոեզիայի թատրոն: Թատրոնում խաղացել է 150-ից ավելի դերեր, որոնցից 100-ը՝ կենտրոնական կամ գլխավոր: Ինքնագործ թատերական խմբերում բեմադրել է 50-ից ավելի պիեսներ, որոնցից 5-ը՝ պետական թատրոնում: Բեմադրել է «Աղջիկը փեսացու է փնտրում», «Չգուշացեք, դա դեռ կա», «Լույս քեզ տեսնողին» պիեսները: Արժանացել է մի շարք մեդալների, մրցանակների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ ՌՈՍԱՆ ՍԵՐԳԵՅԻ
(1934)



Ռոման Սերգեյի Հարությունով (ծնվ.՝ 1934, գ.Մարալյան Սարով), գեներալ-մայոր (1976), Մոսկվայի հայ համայնքի գործադիր կոմիտեի նախագահ (1990):

1958թ. ավարտել է Բաքվի ռազմական ուսումնարանը: 1960թ. նշանակվել է ք.Գրոզնու հրաձգային գնդի հրամանատար: 1966թ. ավարտել է Մ.Վ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Մոսկվայից տեղափոխվել է ք.Չերաբկուլ, նշանակվել Ուրալի զինվորական օկրուգի մոտոհրաձգային դիվիզիայի մոտոհրաձգային վաշտի հրամանատար: 1967թ. նշանակվել է ուսումնական բաժնի տնօրենի տեղակալ, այնուհետև նույն դիվիզիայի տանկային գնդի շտաբի պետ: 1969-1971թթ. աշխատել է որպես օպերատիվ վարչության պետ, բաժնի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: 1971-1973թթ. եղել է գնդի հրամանատար, 1973-1974թթ.՝ դիվիզիայի շտաբի պետ, 1974-1979թթ.՝ դիվիզիայի հրամանատար, 1979-1984թթ.՝ 8-րդ գվարդիական բանակի հրամանատարի տեղակալ, 1984-1986թթ.՝ Մոսկվայի զինվորական օկրուգի վարչության պետի տեղակալ: 1986-1990թթ. ղեկավարել է Մոսկվայի մարզի քաղաքաշտապանության բարձրագույն սպայական դասընթացը: Արժանացել է մի շարք մեդալների:





ՀՅՈՒՄՆՈՒՆՅ ՌՈՒԳԻԿ ԼԵՎՈՆԻ
(1963)

Ռուդիկ Լևոնի Հյուսնունց (ծնվ.՝ 1963, Մարտակերտ), քաղաքական գործիչ:

1980թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1983-1985թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1988թ. ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանը, 1993թ.՝ Երևանի Խ.Արուլյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մշակութա-լուսավորա-

կան աշխատանք և մեթոդիկա բաժինը: 1988-2005թթ. եղել է Արցախի Հայ եկեղեցասիրաց եղբայրակցության միության պատասխանատուն: Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի, կամավորական շարժման ակտիվ մասնակից է: 1992-1993թթ. եղել է ԼՂՀ Պաշտպանության բանակի քաղբաժնի պետը: 1994թ. ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: 2005թ. խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԼՂՀ չորրորդ գումարման Ազգային Ժողովի պատգամավոր, Ազգային Ժողովի նախագահի տեղակալ, 2010թ.՝ ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային Ժողովի պատգամավոր: Եղել է Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ:



ՀՅՈՒՄՆՈՒՆՅ ՍԼԱՎԻԿ ՍԼԱՎԵԼԻ
(1959)


Սլավիկ Սամվելի Հյուսնունց (ծնվ.՝ 1959, Ստեփանակերտ՝ մարտակերտցու ընտանիքում), գեներալ-մայոր (2002):

1981թ. ավարտել է Կիևի բարձրագույն տանկային ինժեներական ուսումնարանը: 1976-1992թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում, 1992թ.՝ ԼՂՀ պաշտպանության բանակում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻԼԵՏԱ ԱՐՄԵՆԻ
(1948-2017)

Միլետա Արմենի Հովհաննիսյան (ծնվ.՝ 1948, Մարտակերտ), վաստակաշատ բժշկուհի:

1955-1966թթ. ոսկե մեդալով ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1972թ. ավարտել է Մ. Հերացու անվան բժշկական ինստիտուտը՝ բուժական գործ մասնագիտությամբ: Նույն թվականին աշխատանքի է անցել Ստեփանակերտի պոլիկլինիկայում՝ որպես տեղամասային քերապետ, միաժամանակ շտապօգնության կայանի բժշկուհի: 1974թ.-ից աշխատել է Մարտակերտի շրջանային հիվանդանոցում՝ որպես քերապետ: Պատերազմի տարիներին աշխատել է նկուղ-հիվանդանոցում: Բռնագաղթի ժամանակ տեղափոխվել է Երևան և աշխատել շտապօգնության կայանում: Արցախից տեղափոխված վիրավոր ազատամարտիկներին տեղափոխել է համապատասխան բուժման վայր: Մարտակերտի ազատագրումից հետո անմիջապես վերադարձել է Մարտակերտ: Երկար տարիներ աշխատել է որպես քերապետ:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԶԱՔԱՐԻ
(1920-...)

Սուրեն Զաքարի Հովհաննիսյան (ծնվ.՝ 1920, Ալեքսանդրապոլ), (ծնողները՝ Արցախի Մարտակերտի շրջանի Կիչան գյուղից, աղբյուր-ջանական բռնություններից փրկվելու համար տեղափոխվել էին ՀՀ), վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր (1965), պրոֆեսոր (1966):

1942թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Մասնակցել է Հայրենական մեծ

պատերազմին: 1966թ. եղել է ՀՀ առողջապահության նախարարության 4-րդ բուժվարչության վիրաբույժ-խորհրդատու, միաժամանակ, 1966-1976թթ.՝ ՀՀ գլխավոր վիրաբույժ: 1971-1985թթ. ղեկավարել է Երևանի բժշկական ինստիտուտի ֆակուլտետը, 1985-1988թթ.՝ մասնավոր վիրաբուժության ամբիոնը: Աշխատանքները վերաբերում են ստամոքս աղիքային համակարգի վիրաբուժական հիվանդությունների ուսումնասիրությանը և վիրահատական բուժման հարցերին: Հեղինակել է 108 գիտական հրատարակումներ, մեկ մենագրություն:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՍՈՒՐԵՆԻ
(1944-2008)



Ստեփան Սուրենի Հովհաննիսյան (ծնվ.՝ 1944, Երևան - մահ.՝ 2008, Երևան), (կիչանեցի վիրաբույժ, պրոֆեսոր Սուրեն Ջաքարի Հովհաննիսյանի որդին), վիրաբույժ բժշկական գիտությունների դոկտոր (1989), պրոֆեսոր (1990), ՀՀ վիրաբուժական ընկերակցության անդամ (1990), Ռ-Դ Բժշկա-տեխնիկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (2000):

1967թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, գործուղվել Աշտարակի շրջանային կենտրոնական հիվանդանոց: Սովորել է Մոսկվայի առաջին բժշկական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Աշխատանքի է անցել Երևանի շտապօգնության հիվանդանոցում՝ որպես բժիշկ-օրդինատոր: 1979-1982թթ. գործուղվել է Ալժիր, Փարիզ, Մարսել: 1976թ. ստեղծել է Հայաստանում առաջին ներստամոքսային PH-չափագրման լաբորատորիան, 1987թ.՝ «Էրեբունի» ԲԿ-ում՝ Հայաստանում առաջին մասնագիտացված վիրաբուժական համաճարակային բաժանմունքը: 1973-1991թթ. աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտի ստամոքսաղիքաբանության ԿԳՀԼ-ում, 1991թ.՝ ԵՊԲՀ վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնում, 1998թ.՝ որպես վիրաբուժական հիվանդությունների ամբիոնի վարիչ: Առաջինն է անջատել անօդակյաց կոկերի

մանրէահիմքը, որը պահեստավորված անօդակյաց միկրոօրգանիզմների առաջին բանգարանային նմուշն է ԱՊՀ-ում: Կինը՝ Իվետա Եղիկյանը, բժշկուհի է, որդին՝ Սուրեն Ստեփանի Հովհաննիսյանը, վիրաբույժ, քույրը՝ Գայանե Հովհաննիսյանը, քիթ-կոկորդաբան:




ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
(1867-1952)



Գարեգին Ա Հովսեփյան (ծնվ.՝ 1867, գ.Մաղավուզ - մահ.՝ 1952, Անթիլիաս), հայագետ, արվեստաբան, Գերմանիայի Լայպցիգ քաղաքի համալսարանի փիլիսոփայության դոկտոր (1897), Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի անդամ (1902), Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության անդամ (1912):

Սովորել է ծննդավայրի դպրոցում, ապա Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցում: 1882թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր ճեմարանը: 1889թ. ձեռնադրվել է սարկավագ: 1890թ. ավարտել է ճեմարանը: 1892թ. մեկնել է Գերմանիա, Լայպցիգի, Բեռլինի և Հալլեի համալսարաններում ուսումնասիրել աստվածաբանություն և փիլիսոփայություն: 1897թ. վերադարձել է Էջմիածին, ձեռնադրվել աբեղա: Ճեմարանում դասավանդել է Հայ մատենագրություն և Աստվածաբանություն: 1909-1910թթ. մասնակցել է Ն.Մառի ղեկավարած Գառնիի պեղումներին: 1927թ. ընտրվել է Ռուսաստանի, Ղրիմի, Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ: 1938-1943թթ. եղել է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ: 1943թ. ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Մեծ աջակցություն է ցուցաբերել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծմանը, 1946թ. հայրենադարձության կազմակերպմանը: Հավաքագրել է մինչև 1250թ. գրված ձեռագրերի 459 հիշատակարան: 1921թ. հրատարակել է «Բանբեր» ժողովածուն, 1951թ.՝ «Հիշատակարանը ձեռագրաց» բացառիկ նշանակության հատորակը:





**ՂԱԼԱՅԱՆ ԼԱՎՐԵՆՏ
ԲԱՀԱԹՈՒՐԻ**
(1938)

Լավրենտ Բահաթուրի Ղալայան (ծնվ.՝ 1938, գ.Դրմբոն), նկարիչ, քանդակագործ, Արցախի Հանրապետության զինանշանի հեղինակ:

1967թ. ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը: 1969թ.-ից դասավանդում է Արցախի պետական համալսարանում: 1994թ. ստեղծել և ղեկավարել է գծագրության և կերպարվեստի բաժինը: Ստեղծագործում է գրաֆիկայի («Խոր վիրապ», 1983, «Կատարելություն», 1984), գեղանկարի («Խոր վիրապ», 1993, «Արարատ», 1997, եռանկար), «Ղարաբաղի հորովել», 2001-05, շարք, և այլն), քանդակագործության («Վարպետ Հակոբը», 1985, դիմաքանդակ, «Մայաթ-Նովա», 2005, կոմպոզիցիա, «Վասն Հայրենյաց», 2001, համալիր-հուշարձան, Ստեփանակերտ, և այլն) քնագավառներում:



ՂՈՒԼՅԱՆ ԼԵՆԱ ԲԱՍՇԻԻ
(1935)

Լենա Բախչիի Ղուլյան (ծնվ.՝ 1935, Մարտակերտ), ԱդրեսՍՀ խորհրդի չորս գումարումների պատգամավոր:

Այրել է Լենինավանում: Եղել է կթվորուհի: Պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով: 1992թ. տեղափոխվել է Սարատով:



ՂՈՒԼՅԱՆ ԷԴՈՒԱՐԳ ԿԱՌԼԵՆԻ
(1962)

Էդուարդ Կառլենի Ղուլյան (ծնվ.՝ 1962, Բաքու՝ արմատներով Վանք գյուղից Կառլեն Կարոյի Ղուլյանի ընտանիքում, մարտակերտցի ցարական բանակի գեներալ Կարապետ Բալասանի Անաստասյանի ծոռը՝ մոր կողմով), տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Մոսկովյան «ԻնկոմՌեալԻնվեստ» խոշոր շինարարական հիմնարկի տնօրեն, հասարակական գործիչ, բարերար:

Գերազանցությամբ ավարտել է Բաքվի համալսարանը: 1988թ. որպես ինժեներ-երկրաբան գործուղվել է Մոսկվա: 1988-1990թթ. Մոսկվայի Կենտրոնական շրջանում աշխատել է որպես վարպետ-երկրաբան: Հիմնել է Ռուսաստանում առաջին մասնավոր հյուրանոցը՝ Վնուկովո օդանավակայանի մոտ: 1993-1998թթ. ղեկավարել է Մոսկվայի շինարարական կազմակերպությունները: Համագործակցում է Իսպանական մի շարք կազմակերպությունների հետ: Մեծ ներդրում ունի Արցախի զարգացման գործում: Սեփական միջոցներով կառուցել է Ստեփանակերտի ծննդատունը, ֆինանսավորել եկեղեցու կառուցումը Ստեփանակերտում, Վանք գյուղի մանկապարտեզի կառուցումը: Ֆինանսավորել է նաև 30 բժիշկների վերապատրաստումը Մոսկվայում:



ՂՈՒԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱԹԱՆԵՍԻ
(1929-1980)

Սերգեյ Աթանեսի Ղուլյան (ծնվ.՝ 1929, գ.Առաջածոր - մահ.՝ 1980, գ.Առաջածոր), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ: 1946թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: 1949-1952թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: Վերադառնալով հայրենի գյուղ՝ աշխատանքի է անցել Առաջածորի գյուղական



սպառնկերությունում որպես հաշվետար: 1954-1959թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ուսանողական տարիներից զբաղվել է լրագրությամբ, տպագրվել «Երեկոյան Երևան» և այլ պարբերականներում: 1959թ. վերադարձել է հայրենի գյուղ և աշխատանքի անցել դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1966թ.-ից մինչև կյանքի վերջը եղել է դպրոցի ուսմասվարը: Մանկավարժական գործունեությանը զուգահեռ հետաքրքրվել է հասարակական կյանքով, լրագրությամբ և գիտական ուսումնասիրություններով: Նա ոչ միայն լավ մանկավարժ էր, այլ նաև մանկավարժական գործընթացի հմուտ կազմակերպիչ: Բազմիցս հանդես է եկել ուսումնական գործընթացին և մանկավարժությանը վերաբերող դասախոսություններով և զեկույցներով: Մանկավարժական մտահղացումները հրապարակել է պարբերական մամուլում՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», «Սովետական Գարարադ», «Սովետական դպրոց», «Բարեկամություն»:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ ԱՊՐԵՍԻ
(1958)



Արտուշ Ապրեսի Ղուկասյան (ծնվ.՝ 1958, գ.Մեծ Շեն), մեխանիկ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր (1996), պրոֆեսոր (1997), Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պատվավոր պրոֆեսոր (2009), Եվրոպական բուհերի ռեկտորների միջազգային խորհրդի անդամ (2006), ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի անդամ (2010):

1975թ. ընդունվել է ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, 1980թ.՝ ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտ (Մոսկվա): 1984-1988թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում, 1988-ից՝ ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետի տեսական մեխանիկայի ամբիոնում, 1994-2002թթ.՝ ղեկավարել նույն ամբիոնը: 2002-2010թթ. եղել է Խ.Աբովյանի անվան Հայաստանի պե-

տական մանկավարժական համալսարանի ռեկտոր: 2003-2010թթ. ղեկավարել է ՀՀ ԲՈՀ-ի մասնագիտական խորհուրդը: 2016թ. ընտրվել է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր: Հեղինակել է շուրջ 90 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, նախաձեռնել է ԵՊՀ-ում «Մանիպուլյացիոն ռոբոտների մեխանիկա և ղեկավարում» մասնագիտացման համակարգի ստեղծումը:




ՂՈՒԿԱՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԵՍԻ
(1920)

Գրիգոր Մովսեսի Ղուկասյան (ծնվ.՝ 1920, Մարտակերտ), բժշկական գիտությունների թեկնածու:

1950-1970թթ. եղել է Մարտակերտի շրջանային պոլիկլինիկայի գլխավոր բժիշկը: Հետագայում տեղափոխվել է ՌԴ Ուլյանովսկ քաղաք:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ԷԳԻԿ ԻՇԽԱՆԻ
(1934-2018)



Էղիկ Իշխանի Ղուկասյան (ծնվ.՝ 1934, գ.Մեծ Շեն - մահ.՝ 2018, Ստեփանակերտ), բժշկական գիտությունների թեկնածու (1974), վիրաբույժ-ուրոլոգ, ՌԴ Բժշկատեխնիկական ԳԱ իսկական անդամ (2017), ԼՂՀ վաստակավոր բժիշկ, Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի:

1952-1958թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժապրոֆիլակտիկ ֆակուլտետում: 1958թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի մարզային հիվանդանոցում: 1971թ. նշանակվել է նույն հիվանդանոցի նորաս-

տեղծ ուրուղիական բաժանմունքի վարիչ՝ շարունակելով աշխատանքը վիրաբուժական բաժանմունքում: 1976-2009թթ. աշխատել է նախ մարզառ-բաժնի, այնուհետև՝ ԼՂՀ առողջապահության նախարարության գլխավոր վիրաբույժի պաշտոնում: 1988-1994թթ. ռազմաճակատներում, դաշտային շարժական հոսպիտալներում և քաղաքացիական բուժօգնություն կազմակերպել և մասնակցել է վիրավոր ազատամարտիկների բուժօգնու-թյան աշխատանքներին: 1993-1995թթ. ղեկավարել է Արցախի պետական համալսարանի բժշկության ամբիոնը: Եղել է «Միացում» ՀԿ համանախա-գահ, Տնօրենների խորհրդի և Ազգային խորհրդի նախագահությունների անդամ, ՀՀ ԳԽ Արցախի հարցերով հատուկ հանձնաժողովի նախագահի տեղակալ, «Հիշատակ» հիմնադրամի ղեկավար: Ընտրվել է ՀՀ ԳԽ պատ-գամավոր: Գիտական աշխատանքները վերաբերում են ընդհանուր վիրա-բուժական և ուրուղիական հիվանդությունների ախտորոշման և բուժման մեթոդներին:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԵՍԻ

(1922-...)

Հարություն Վանեսի Ղուկասյան (ծնվ. 1922, Մարտակերտ), ԽՍՀՄ հե-րոս:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Հատուկ հետախուզա-կան հանձնարարականով եղել է Պորտ Արտուրում, Սան Ֆրանցիսկոյում: Բացառիկ խիզախության համար արժանացել է ԽՍՀՄ հերոսի կոչման: Վիրավորվել է, մնացել Ռուսաստանում: Թոշակի անցնելուց հետո նշա-նակվել է Կեմերովի բանտի պետ: Չբաղվում էր նկարչությանը:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՄԻԿՈՆԻ

(1917-20..)



Մարգարիտ Մամիկոնի Ղուկասյան (ծնվ.՝ 1917, գ.Մեծ Շեն-մահ՝), գինեկոլոգ-մանկա-բարձ:

1941թ. ավարտել է Բաքվի պետական բժշ-կական ինստիտուտը: 1941-1946թթ. աշխատել է ԼՂՀ Շուշիի շրջանում, 1946-1964թթ.՝ Ստե-փանակերտի մարզային հիվանդանոցում: 1948-1964թթ. եղել է գինեկոլոգիական բաժան-մունքի վարիչ, 1964-1972թթ.՝ ԼՂԽՄ գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ, 1972թ.-ից՝ ծննդատան օրդինատոր: Ղարաբաղյան պատերազմի տարի-ներին նկուղային հարկում կազմակերպել է ծննդաբերական և գինեկոլո-գիական բաժանմունք, որտեղ ընդունել է ծնունդներ, կատարել վիրահա-տություններ՝ փրկելով բազմաթիվ մայրերի և նորածինների կյանքեր:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՅՈՒՐԱ ՄԱՐԳՍԻ

(1922-1996)

Յուրա Մարգսի Ղուկասյան (ծնվ.՝ 1922, գ.Մեծ Շեն-մահ.՝ 1996, Երևան), իրավաբան, գեներալ:

1938թ. ավարտել է գյուղի դպրոցը, ընդունվել Երևանի պետական ինս-տիտուտի իրավաբանական ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել է բանակի գեներալ: Աշխատել է ՀՀ գլխավոր դա-տախազի տեղակալ:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ԱՌԱՔԵԼԻ

(1902-1944)

Ներսես Առաքելի Ղուկասյան (ծնվ. 1902, Մարտակերտ - մահ.՝ 1944), դատավոր, հասարակական գործիչ:

Աշխատել է որպես շրջանային, մարզային դատավոր: Եղել է ԼՂ մարզ-մատակարարման բաժնի պետ, շրջհողորածնի, շրջֆինբաժնի վարիչ: Ջոհ-վել է 1944թ.: Ննչում է Ռովենսկի նահանգի Տեսնուլ գյուղի դպրոցի բակում: Արժանացել է «Կարմիր աստղ» շքանշանի:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՎԱՐԳԱՆ ԻՇԽԱՆԻ

(1947)

Վարդան Իշխանի Ղուկասյան (ծնվ.՝ 1947, գ.Մեծ Շեն), վիրաբույժ, ԼՂՀ վաստակավոր բժիշկ (2015):

1964թ. ավարտել է Մեծ Շենի միջնակարգ դպրոցը, 1971թ.՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1975-1988թթ. վերապատ-րաստվել է Մոսկվայի, Կիևի, Լենինգրադի, Երևանի տարբեր բժշկական կենտրոններում: 1971-1972թթ. եղել է Ստեփանակերտի ուռուց-



քաբանական դիսպանսերի վիրաբույժ: 1972-2006թթ.՝ մարզային (այժմ՝ Հանրապետական) հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալ, ապա՝ գլխավոր բժիշկ, 2006-2014թթ.՝ վիրաբուժական բաժանմունքի վարիչ: 2008թ. նշանակվել է ԼՂՀ ԱՆ գլխավոր վիրաբույժ: 1988-1994թթ. Հանրա-պետական հիվանդանոցում, ռազմադաշտային շարժական հոսպիտալներում (Մարտունի, Հաղբոս) վիրահատել է հարյուրավոր հիվանդ և վիրա-վոր ազատամարտիկների և խաղաղ բնակիչների: Ստեփանակերտի հրքի-ռահրետակոծությունների ժամանակ Վ.Մարությանի հետ բուժսպասար-կում է կազմակերպել մարզկոմի շենքի նկուղում: Արժանացել է մի շարք մե-դալների և պարգևների:




ՄԱՂԱՔԵԼՅԱՆ ԱԼՅՈՇԱ ՄԻՔԱՅԵԼԻ

(1953)

Ալյոշա Միքայելի Մաղաբեյան (ծնվ.՝ 1953, գ.Քոլատակ)՝ վիրաբույժ-վնասվածքաբան, ազատամարտիկ, ՊԲ բժշկական ծառայու-թյան մայոր (1997), բժշկական գիտությունների բեկնաժու (1998), դոցենտ (1999), Ռ-Բ բժշկա-տեխնիկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (2017):

1978թ. ավարտել է Երևանի պետական բժշ-կական համալսարանը: 1978-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի ու-ռուցքաբանության դիսպանսերում, մարզային հիվանդանոցում: 1992թ.-ից եղել է ՊԲ կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալի զորա-մասի հրամանատարի բուժական գծով տեղակալ, միաժամանակ նաև՝ ԱրՊՀ դասախոս: 1988թ. Ստեփանակերտում մասնակցել է կամավորա-կան ջոկատների կազմավորմանը: 1988թ. Խաչենի ձորակում ստեղծել է կամավորական ջոկատ և մասնակցել Կիչան, Սրիսավենդ գյուղերի ինքնա-պաշտպանությանը, 1994թ. ՊԲ ստորաբաժանումների կազմում՝ Տող գյու-ղի, Ղարադաղլու-Մալիբեկլու-Խոջալուի, Լեսնոյ-Շուշիի, Մարտակերտի, Աղղամի, Ֆիզուլի-Ջաբրայիլ-Կուբաթլուի ուղղությունների ազատագրա-կան մարտերին: Հոսպիտալներում վիրահատել է հարյուրավոր վիրավոր ազատամարտիկների և խաղաղ բնակիչների: Գիտական աշխատանքնե-րը վերաբերում են ակնաապայթյունային վնասվածքների բուժման հարցե-րին: Արժանացել է մի շարք մեդալների:





ՄԱՄՈՒՆՅ ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳԻՍՅԱՆԻ

(1927-2010)

Երվանդ Սարգիսյանի Մամունց (ծնվ.՝ 1927, Մարտակերտ -մահ.՝ 2010, Ստեփանակերտ), անասնաբուժական գիտությունների թեկնածու (1973), դոցենտ (1985):

1944թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1945-1950թթ. սովորել է Երևանի համամիութենական անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետում: Մինչև 1953թ. աշխատել է Մարտակերտի շրջանում՝ որպես կուլտնտեսության անասնաբույժ, անասնաբուժական տեղամասի վարիչ, շրջանի համաճարակաբան: 1953-1972թթ. աշխատել է ԼՂ մարզային գյուղատնտեսության վարչության անասնաբուժական բաժնում՝ սկզբում որպես ավագ համաճարակաբան, հետագայում՝ բաժնի վարիչ, անասնաբուժական պետական տեսուչ: 1972թ.-ից աշխատել է Ստեփանակերտի զոնալ կոմպլեքս փորձակայանի անասնաբուժական բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող, ապա՝ բաժնի պետ: 1992թ.-ից դասախոսել է ԱրՊՀ ագրարային ֆակուլտետում: Հեղինակել է 38 գիտական աշխատանք:



ՄԱՄՈՒՆՅ ՍԱՄՎԵԼ ՎԱՆԻԻ

(1925-2011)

Սամվել Վանիի Մամունց (ծնվ.՝ 1925, Մարտակերտ - մահ.՝ 2011, ք.Սարատով, ՌԴ), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1976):

1945-1947թթ. սովորել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում, 1954-1961թթ.՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի հեռակա բաժնում: 1955-1957թթ. եղել է Մարտակերտի Ստալինի

անվան կուլտնտեսության անասնաբույժ, 1964թ.՝ Մարտակերտի շրջանի կուսակցական XXII համագումարի անվան խորհրտնտեսության տնօրեն: 1963-1989թթ. ընտրվել է մարզային խորհրդի պատգամավոր, եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 7-11-րդ գումարման պատգամավոր: 1993-1999թթ. աշխատել է «Հայելեկտրոմեքենա» ԲԲԸ-ում: Արժանացել է մի շարք մեդալների և շքանշանների:



ՄԱՅԻԼՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԻՆԱՍԻ

(1891-1976)

Լևոն Մինասի Մայիլյան (ծնվ.՝ 1891, գ.Մեծ Շեն - մահ.՝ 1976, Բարքու), թերապևտ, բժշկական գիտությունների դոկտոր (1935), պրոֆեսոր (1938), ԱդրիՍՄՀ վաստակավոր բժիշկ (1939), ԱդրիՍՄՀ գիտության վաստակավոր գործիչ (1941):

1927թ. ավարտել է Ադրբեջանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1927-1938թթ. աշխատել է Ադրբեջանի բժշկական ինստիտուտի թերապիայի ամբիոնում, 1938-1976թթ.՝ ղեկավարել նույն ամբիոնը: Աշխատանքները վերաբերում են ստամոքսի և տասներկուատյա աղիքի խոցային հիվանդության վաղ ախտորոշման և ֆիզիոթերապևտիկական եղանակներով բուժման հարցերին: Եղել է Ադրբեջանի բժշկական ընկերության փոխնախագահ, Թերապևտների համամիութենական ընկերության նախագահության անդամ, Ադրբեջանի ունևատղոզների ընկերության նախագահ:





ՄԱՆԱՅԱՆ ՎՈՒՈՂՅԱ ՇՄԱՎՈՐԻ

(1949)

Վոլոդյա Շմավոնի Մանասյան (ծնվ.՝ 1949, գ.Սեյսուլան), մաթեմատիկ, դոցենտ:

1967թ. ավարտել է Ստեփանակերտի քիվ I միջնակարգ դպրոցը, 1975թ.՝ Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

1972-1977թթ. աշխատել է ԼՂ տարբեր ոլորտներում: 1977-1988թթ. դասավանդել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի

մաթեմատիկայի ամբիոնում: 1989-1997թթ. աշխատել է ԼՂՀ կադրերի վերապատրաստման և որակավորման ինստիտուտում՝ որպես մաթեմատիկայի կաբինետի վարիչ՝ համատեղելով դասախոսական աշխատանքը ԱրՊՀ-ում: 1994թ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակի հրետանային քրիզադրում՝ որպես հաշվարկիչ: 1997թ.-ից աշխատում է ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնում: Հեղինակել է մեկ ուսումնական ձեռնարկ և ավելի քան երկու տասնյակ գիտամեթոդական հոդվածներ:



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԹԵՎՈՍ ԱՆԳՐԵՅԻ

(1894-1920)



Թևոս Անդրեյի Մանուկյան (ծնվ.՝ 1894, Մարտակերտ -մահ.՝ 1920, Շուշի), ազգային-ազատագրական շարժման մասնակից, ֆիդայի:

Մասնակցել է հայ-թուրքական ընդհարումներին, Թարթառի գավառային բախումներին: 1914-1918թթ. աշխարհամարտում հեծելազորային գնդի կազմում կռվել ու հասել է Հունգարիայի սահմաններին: Պարզևատրվել է «Գեորգիյան խաչ» շքանշանով: Չոհվել և հո-

ղին է հանձնվել Շուշիում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԶԻՆՎՈՐ ՆԵՐՍԵՍԻ

(1904-1982)

Զինավոր Ներսեսի Մանուչարյան (ծնվ. 1904, գ.Ներքին Հոռաթաղ-մահ.՝ 1982, Երևան) միլիցիայի գնդապետ, Թևոս Մանուչարյանի հորեղբոր որդին:

Եղել է Երևանի Ներքին գործերի քաղվարչության պետ: 1942թ. մեկնել է Բաքու, այնուհետև ծառայել գործող բանակում, դարձել քաղղել: Հաղթանակից հետո վերադարձել է Երևան: Պարզևատրվել է Լեհիմի, մարտական Կարմիր դրոշի, երկու Կարմիր աստղի շքանշաններով:



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԹԵՎՈՍ ԱԼԵՔՍԱՆԻ

(1886-1966)

Թևոս Ալեքսանի Մանուչարով (ծնվ.՝ 1886, գ.Ներքին Հոռաթաղ - մահ.՝ 1966, Մարտակերտ), ռազմական օդաչու, Գեորգիյան խաչի շքանշանակիր, Ռուսաստանում օդաչուական դպրոց ավարտած առաջին հայը:

1894թ. ընդունվել է գյուղի երկրասյա դպրոցը: 1901թ. ընտանիքի նյութական ծանր վիճակը հաղթահարելու համար հոր հետ մեկնել է Բաքու, աշխատանքի անցել «Բախտ» գրասենյակում՝ որպես հեռախոսավար: Այդտեղ ներգրավվել է հեղափոխական շարժմանը: 1911-1912թ. ծառայել է ք.Սիմֆերոպոլի 51-րդ Լիտվական հետիոտային գնդում: Սովորել է Սևաստոպոլի ավիացիոն դպրոցում: Ուսանելու տարիներին ծանոթացել է համերկրացի ռազմական օդաչու Աբգար Մանուչարյանցի հետ, 1914թ. ուղարկվել Օդեսայի ավիացիոն վաշտ: 1914թ. պատերազմի ժամանակ կատարել է մի շարք կարևոր մարտական առաջադրանքներ: 1920թ. իր խնդրանքով ծառայությունը շարունակել է Բաքվում: 1923թ. զորացրվել է: Ապրել է Բաքվում, մինչև 1930թ. աշխատել «Ադրնավթ»-ում՝ որպես մեքենավար: 1936-1951թթ. մասնակցել է Մարտակերտի շրջանի էլեկտրոկայանների կառուցման աշխատանքներին:





ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳԲԻԳՈՐԻ
(1946)

Սերգեյ Գրիգորի Մարկոսյան (ծնվ.՝ 1946, գ.Թբղու), նկարիչ, երաժիշտ, ֆուլկլորիստ, ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ (1989), Հայկական ԽՍՀ նկարիչների միության անդամ (1990), Գեղարվեստական գործունեության համամիութենական ստուգատեսի դափնեկիր:

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ երաժշտագիտություն, կոմպոզիցիա և երգչախմբի վարում մասնագիտություններով: Ունի երաժշտության դասախոս-պրոպագանդիստի որակավորում: Երկար տարիներ դասավանդել է երաժշտական դպրոցում: Եղել է երաժշտական դպրոցների տեսուչ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արցախյան մասնաճյուղի գիտաշխատող: 1967թ.-ից զբաղվել է լրագրությամբ: Հրատարակել է ավելի քան 600 հոդվածներ համամիութենական և հանրապետական պարբերականներում, որոնցում անդրադարձել է հայկական ժողովրդական երաժշտությանը (խառկապես Արցախ-Լեռնային Ղարաբաղի շրջանի), նրա խնդիրներին: Հեղինակել է մաև գեղարվեստական գրքեր, հուշագրություններ և բանաստեղծություններ:



ՄԱՐՈՒԹՅԱՆ ԲՐԻՆԱ ՍԵՂՐԱԿԻ
(1932)

Արինա Սեղրակի Մարոսյան (ծնվ.՝ 1932, Մարտակերտ), բժիշկ-մանկաբարձ:

Գերազանցությամբ ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը և Երևանի բժշկական ինստիտուտը: Դասավանդել է Ստեփանակերտի բժշկական տեխնիկումում: Երկար տարիներ եղել է մարզային ծննդատան տնօրենը:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ԼԵՆԱ ՍԵՂՐԱԿԻ
(1930)

Լենա Սեղրակի Մարոսյան (ծնվ.՝ 1930, Մարտակերտ), մանկավարժ, վաստակավոր ուսուցչուհի:

Գերազանցությամբ ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը, 1953թ.՝ Երևանի Խ.Արովյանի անվան պետական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետը: Աշխատանքի է անցել Չայլի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: 1956թ. նշանակվել է դպրոցի ուսումնական մասի վարիչ: 1963-1985թթ. եղել է Չայլի միջնակարգ դպրոցի տնօրեն: Մինչև գյուղի տեղահանությունը դասավանդել է քիմիա և կենսաբանություն: Շուրջ 20 տարի եղել է գյուղատնտեսության պատգամավոր, կուսըջկոմի անդամ: Մեծ ներդրում ունի գյուղում դպրոցական տիպային շենքի կառուցման և կահավորման գործընթացում: Ամբասիր աշխատանքի համար արժանացել է «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Լենինի» շքանշանով: Ապրում է Սոչիի Նիժնի-Շիլովկա գյուղում:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԱՍՏԻՈՐԻ
(1955)

Բորիս Պաստիրի Մարտիրոսյան (ծնվ.՝ 1955, Բաքու, տոնաշենցի Պաստիր Վաչագանի Մարտիրոսյանի ընտանիքում), մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԿԱ ակադեմիկոս (2008), ՌԴ գիտության վաստակավոր գործիչ (2008), կրթության բնագավառում ՌԴ կառավարության դափնեկիր (2008):



Հայրը՝ Պաստիր Վաչագանի Մարտիրոսյանը ավարտել է գյուղի 8-ամյա դպրոցը: Միջնակարգ կրթությունը ստացել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում: 1962-1982թթ. աշխատել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում դոցենտի տարակարգով: Բորիս Մարտիրոսյանը ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը, աշխատել Բաքվի ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտում, որտեղից էլ գործուղվել է ասպիրանտուրա՝ Մոսկվայի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտ: 1999թ. նշանակվել է ՌԴ կրթության ակադեմիայի նախագահի տեղակալ: 2000թ. ընտրվել է Ռուսաստանի կրթության ակադեմիայի (ՌԿԱ) նախագահության անդամ: Հանդիսանում է կրթության մեջ իննուվացիսնամյա գործունեության ինստիտուտի Գիտական խորհրդի, ՌԿԱ Համալսարանի Գիտական խորհրդի անդամ, Պետական մշակութային քաղաքականության հանձնաժողովի անդամ: Ապահովում է ՌԿԱ համագործակցությունը դաշնության տարբեր կազմակերպությունների հետ: Հեղինակել է ավելի քան 60 գիտական աշխատանք:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ
(1933-1975)



Յուրի Վաչագանի Մարտիրոսյան (ծնվ.՝ 1933, գ.Տոնաշեն - մահ.՝ 1975), փիլիսոփայական գիտությունների թեկնածու (1973): 1952թ. ավարտել է Մատաղիսի միջնակարգ դպրոցը, 1957թ.՝ Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժինը: 1957-1961թթ. եղել է Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար: 1966թ. նշանակվել է

Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ: 1967-1974թթ. զբաղեցրել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնը: Հեղինակել է մի շարք գիտական աշխատանքներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱԳԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍԻ
(1936)



Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյան (ծնվ.՝ 1936, գ.Մատաղիս), ռադիոֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1980), պրոֆեսոր (1983), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990): 1958թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ: 1960թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Պ.Լ.Երեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան:

1964-1968թթ. աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1968-1970թթ.՝ լաբորատորիայի վարիչ, 1970-1980թթ.՝ գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1980-2006թթ.՝ տնօրեն: 1965թ.-ից դասավանդել է ԵՊՀ-ում: 1983-1993թթ. եղել է ԵՊՀ գերբարձր հաճախությունների ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1993-2006թթ.՝ ԵՊՀ ռեկտոր: 2006թ. ստեղծել և ղեկավարել է ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնը: 2006թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ նախագահ: Հեղինակել է ավելի քան 200 գիտական աշխատանքներ, որոնք վերաբերում են քվանտային էլեկտրոնիկայի համար արհեստական բյուրեղների ստեղծման տեխնոլոգիաների կատարելագործմանը, բարձր զգայունությամբ ընդունիչ համակարգերի մշակմանն ու ներդրմանը և այլն: Արժանացել է բազմաթիվ շքանշանների և պարգևների:





**ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԳՈՆՅ
ԳԵՈՐԳԻԻ
(1958)**

Ռուդոլֆ Գեորգիի Մարտիրոսյան (ծնվ.՝ 1958, գ.Գառնաքար), լրագրող:

1975թ. ավարտել է Ստեփանակերտի քիմ 2 միջնակարգ դպրոցը, 1980թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1981-1982թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1984թ. եղել է մարզային ռադիոյի, 1988թ.-ից՝ Արցախի հեռուստատեսության հաղորդավար, 1990թ.՝ ՀԽՍՀ հեռուստատեսության «Լրաբեր» ծրագրի Արցախի թղթակից: 1992-1993թթ. աշխատել է որպես ՀՀ հատուկ ծրագրերի պետական վարչության, ապա՝ ԼՂՀ լրատվության և մամուլի ղեկավարամենտի առաջատար մասնագետ: 1993թ. ծառայության է անցել ԼՂՀ ՊԲ-ում, 1993-1995թթ.՝ որպես ԼՂՀ ՊԲ քաղաքային սպա: Վարել է «Գոյամարտ» հեռուստատեսային և ռադիո ծրագրերը, եղել զինվորական թղթակից: 1995թ. ընտրվել է ԼՂՀ 2-րդ գումարման ԳԽ պատգամավոր: 2000թ. ավարտել է Մոսկվայի սլավոնական ինստիտուտի Երևանի մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետը: Դասախոսել է Շուշիի ժողովրդական համալսարանի իրավագիտության և լրագրության ֆակուլտետներում: 2000-2005թթ. եղել է ԼՂՀ ՆԳՆ մամուլ ծառայության պետ: 2005թ. ընտրվել է ԼՂՀ չորրորդ գումարման ԱԺ պատգամավոր: 2007թ. նշանակվել է ԼՂՀ նախագահի օգնական:



**ՄԵԺՈՒՆՅ ԲԱԳԲԱՏ
ԽԱՉԱՏՈՒՐԻ
(1942)**



Բագրատ Խաչատուրի Մեժունց (ծնվ.՝ 1942, գ.Թալիշ), գյուղատնտեսական գիտությունների դոկտոր (2011):

1959թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1970թ.՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը: 1972-1985թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտում: 1993թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում, 2005թ.-ից ղեկավարում է Կենսատնտեսագիտության և կերերի որակի բաժինը: 1998թ.-ից ղեկավարել է ՀՀ Կառավարության կողմից ֆինանսավորվող բազմաթիվ գիտական թեմաներ: 2002թ. եղել է Կովկասյան տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնի միջազգային փորձագետ, ապա՝ ՀՀ ԿԳՆ փորձագետ: 2000թ. համագործակցում է արտասահմանյան կազմակերպությունների և գիտնականների հետ. 2000, 2001 և 2003թթ. շահել է Մեծ Բրիտանիայի Թագավորական Ընկերության ու ՆԱՏՕ-ի Գիտություն համուն խաղաղության ֆոնդերի 3 միջազգային դրամաշնորհներ: 2006-2010թթ. 9 եվրոպական երկրների հետ մասնակցել է «Մարի-Կյուրի Շրջանակային գիտահետազոտական ծրագրի» իրականացմանը: 2009-2010թթ. ղեկավարել է Քեմբրիջի Ազգային գյուղատնտեսական բուսաբուծության ինստիտուտի հետ համատեղ իրականացված պայմանագրային նախագիծը: 2013թ.-ից համագործակցում է Արցախի գիտական կենտրոնի հետ: Համահեղինակ է մոտ 100 գիտական հրապարակումների, մեկ մենագրության և մեկ արտոնագրի:



ՄԵԺՈՒՆՑ ԲԱՐՍԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(1939)


Բարձիկ Խաչատուրի Մեժունց (ծնվ.՝ 1939, գ.Թալիշ), լեզվաբան, բանասիրական գիտությունների թեկնածու (1976), դոցենտ (1990):

1969թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Դասախոսել է նույն համալսարանում: Հեղինակել է մի շարք գիտական աշխատանքներ: «Շաղախի ենթաբարբառը» անտիպ ուսումնասիրության մեջ ներկայացրել է Պարսկաստանի Ղարաղաղի գավառից 1828-1830թթ. գաղթած և Արցախի Հանրության շրջանում վերաբնակված Խժաբերդ, Դոլանլար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ գյուղերի խոսվածքների (Ղարաբաղի բարբառի Շաղախի ենթաբարբառ) քննությունը՝ առանձին բաժիններով անդրադառնալով հնչյունաբառաբերական և օրինաչափություններին: Ղարաբաղի բարբառի տարբեր իրողություններին են նվիրված նրա որոշ հոդվածներ:



ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ

(1944-2009)



Արիկ Արտավազդի Մելիքյան (ծնվ.՝ 1944, Երևան՝ մարտակերտցու ընտանիքում - մահ.՝ 2009, Մոսկվա, ՌԴ), կիրառական մաթեմատիկայի բնագավառի գիտնական, ֆիզմաթ գիտությունների դոկտոր (1986), պրոֆեսոր (1991), ՌԳԱ քղթակից անդամ:

Ավարտել է Երևանի թիվ 12 ռուսական միջնակարգ դպրոցը: 1963-1969թթ. սովորել է Մոսկվայի ֆիզտեխնիկական ինստիտուտում:

1974թ. եղել է Մոսկվայի ֆիզտեխնիկական ինստիտուտի դասախոս, 1977թ., միաժամանակ՝ ՌԳԱ Մեխանիկայի հիմնախնդիրների ինստիտուտի ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ: Դասախոսություններ է կարդացել արտասահմանյան մի շարք առաջատար համալսարաններում և գիտական կենտրոններում: Աշխատանքները վերաբերում են դինամի-

կայի խաղային խնդիրներում լավարկային (օպտիմալ), այդ թվում նաև եզակի (սինգուլյար) շարժումների կառուցման հարցերին: Հեղինակել է 2 մենագրություն, շուրջ 12 գիտական աշխատանքներ:



ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱԼԻՆԱ ԳՐԻԳՈՐԻ

(1939-1995)

Ալինա Գրիգորի Մելքումյան (ծնվ.՝ 1939, գ.Մոխրաթաղ - մահ.՝ 1995, Երևան), բժշկական գիտությունների թեկնածու, սրտաբան:

Ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու, դպրոցն ավարտել Բաքվում: Ընդունվել և ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Երկար տարիներ աշխատել է որպես սրտաբան:



ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՆՈՒՍԻ

(1922-1984)

Աշոտ Գալուստի Մելքումյան (ծնվ.՝ 1922, գ.Գառնաբար - մահ.՝ 1984, գ.Գառնաբար), Փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետ (1944, 1945):

1941թ. զորակոչվել է բանակ: 1942թ. փետրվարից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Հյուսիսային Կովկասում մարտերի համար 1942թ. ամռանը պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: 1944թ. ք. Կերչում մղված մարտերում հետախուզությանը ձեռքբերած կարևոր տվյալների համար պարգևատրվել է Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով: 1944թ. մայիսի 8-ին Մապուն Գորայի շրջանում (Սևաստոպոլ) հայտնաբերել է հակառակորդի 9 գնդացրային կրակակետ, որոնց ոչնչացումից հետո բացվել է հարձակման ճանապարհը: 1944թ. հունիսի 17-ին պարգևատրվել է



Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով: 1945թ. հունվարի 15-ին գ.Ռուդայի (Լեհաստան) նոտանցել է հակառակորդի թիկունք և հայտնել կարևոր տեղեկություն, որի համար պարգևատրվել է Փառքի 1-ին աստիճանի շքանշանով: Աչքի է ընկել Բեռլինի գրավման մարտերում և պատերազմն ավարտել էրայիափին: Չորացրվել է 1946թ.: Վերադարձել է հայրենի գյուղ: 1957թ. հեռակա ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Աշխատել է որպես Առաջածորի գյուղխորհրդի նախագահ: Պարգևատրվել է մեդալներով:



ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐՍԵՆԻ

(1908-1989)

Գրիգորի Արսենի Մելքունյան (ծնվ.՝ 1908, Մոխրաթաղ - մահ.՝ 1989, Երևան), ռազմական բժիշկ:

Ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել և ավարտել է Բաքվի բժշկական ինստիտուտը: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է Բաքվի ռազմական հոսպիտալի գլխավոր բժիշկը: Հետո նշանակվել է Ադրբեջանում ԽՍՀՄ զորքերի գլխավոր բժիշկը: 1961թ. տեղափոխվել է Երևան, դասախոսել Երևանի բժշկական ինստիտուտում՝ որպես ռազմական բժշկության դասախոս:



ՄԻՆԱՅԻԼԻԳԻՍ ԻԼՅԱ ԻՎԱՆԻ

(1911-1997)

Իլյա Իվանի Միխայիլիդիս (ծնվ.՝ 1911, գ.Մեհմանա - մահ.՝ 1997), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1928թ. ավարտել է Կուսապատ գյուղի միջնակարգ դպրոցը, աշխատանքի անցել Մեհմանայի երկրաբանա-հետազոտական կազմակերպությունում որպես հանրափոր: 1932-



1933թթ. աշխատել է Մեհմանա գյուղի կոլտնտեսությունում որպես հաշվապահ և կուսղեկ: 1933-1938թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1937թ. ավարտել է Թբիլիսիի ռազմապոլիտեխնիկական ուսումնարանը: 1940-1941թթ. սովորել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: 1938-1945թթ. աշխատել է Լենինականի մանկավարժական ուսումնարանում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ և մանկավարժական գործունեությունը շարունակել Ստեփանակերտի Մ. Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1950-1953թթ. աշխատել է որպես Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցի ուսնասվար, 1962-1964թթ.՝ թիվ 4 ինտերնացիոնալ միջնակարգ դպրոցի տնօրեն, 1964-1971թթ.՝ մինչև կենսաբոլշակի անցնելը, եղել է թիվ 8 միջնակարգ դպրոցի տնօրենը: Ազգությամբ հույն Ի. Միխայիլիդիսը ամբողջ հոգով կապված էր հայ ժողովրդի հետ:



ՄԻՆԱՄՅԱՆ ՍԻԼՎԱ ԱՇՈՏԻ

(1950)

Սիլվա Աշոտի Մինասյան (ծնվ.՝ 1950, գ.Չափար), բանասիրական գիտությունների թեկնածու (1987), դոցենտ:

1965թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1968-1972թ. սովորել է Բաքվի Վ.Լ.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժնում: Աշխատանքի է անցել ԱրՊՀ հայոց լեզու և գրականության ամբիոնում՝ նախ որպես լաբորանտ և դասախոս, այնուհետև որպես ավագ դասախոս: Հեղինակել է մի շարք գիտական, գիտամեթոդական հոդվածներ և ձեռնարկներ:



ՄԻՋԱՐԵԿՅԱՆ ԱՐԱԶ ԳԵՆԱԳԻԻ

(1965)

Արազ Գենադիի Միրզաբեկյան (ծնվ.՝ 1965, ք.Ստեփանակերտ՝ լյուլասագեցու ընտանիքում), իրավաբան, փաստաբան, Մոսկվայի «Մոխիշինսկի» մարզի փաստաբանների կոլեգիայի նախագահ (2012), «Փաստաբաններ առանց սահմանի» Միջազգային ասոցիացիայի անդամ (ք. Աթենք, Հունաստան):

1989թ. ավարտել է Խարկովի Յարոսլավ Իմաստունի անվան Իրավաբանական ակադեմիան: 1986-1989թթ. աշխատել է Մոսկվայի շրջանային դատարանում, Խարկովում՝ որպես դատական կատարող, 1989-1994թթ.՝ Դատախազությունում: 1994-1996թթ. եղել է ԲՇՏ-ի, 1996-2002թ.՝ մասնավոր իրավաբանական գրասենյակների իրավաբան: 2002թ. նշանակվել է Մոսկվայի վարչական շրջանի փաստաբանական պալատի կրթության համաժողովի պատվիրակ: 2008թ. ընտրվել է ք.Մոսկվայի Մոխիշինսկիի անկախ փաստաբանների կոլեգիայի նախագահ:



ՄԻՋԱՐԵԿՅԱՆ ԹԵՎԱՏՐՈՍ

ԿՈՆՍԱՆԴԻՆԻ

(1885-1938)



Թևատրոս Կոնստանդինի Միրզաբեկյան (ծնվ.՝ 1885, գ.Լյուլասագ-մահ.՝ 1938, Բաքու), պետական գործիչ:

Ստացել է երկդասյա կրթություն: Տեղափոխվել է Բաքու: 1907թ. եղել է Կոմունիստական կուսակցության անդամ: 1928թ. վտարվել է կուսակցությունից որպես ազգայնամուլ: 1929թ. վերականգնվել է՝ ստանալով խիստ նկատողություն: 1933-1936թթ. եղել է ԱդրեսՍՀ Խանլարի շրջկոմի քարտուղար: 1937թ.՝ ստալինյան բռնաճնշումների տարիներին, ձերբակալվել է Բաքվի

Ներքին գործերի ժողկոմի կողմից, որպես հակախորհրդային տեռորիստական կազմակերպության անդամ: Դատապարտվել է գնդակահարության և գրկվել ունեցվածքից: 1938թ. գնդակահարվել է, թաղվել Բաքվում: 1958թ. հետմահու արդարացվել է:



ՄԻՋՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԵՍԻ

(1955)



Ալեքսանդր Արեստի Միրզոյան (ծնվ.՝ 1955, ք.Մինգեչաուր՝ լյուլասագեցու ընտանիքում), ռազմական գործիչ, գնդապետ:

Ծնողները տեղափոխվել են Մինգեչաուր քաղաք Մարտակերտի շրջանից՝ Մինգեչաուրի Հեկ-ի կառուցման տարիներին: Հաճախել է թիվ 3 և 10 դպրոցները: Ավարտել է Բաքվի բարձրագույն ռազմական ուսումնարանը: Տեղափոխվել է ՌԴ Ռ-յազան քաղաք: Ծառայել է Ռ-յազանի զինվորական օկրուգում: Ստեղծել է «Ծառայում են հայրենիքին» քաղաքացիների հայրենասիրական դաստիարակության հիմնադրամ և նշանակվել նախագահ:



ՄԻՋՈՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՍԻՄՈՆԻ

(1923-2017)



Բենիամին Սիմոնի Միրզոյան (ծնվ.՝ 1923, գ.Լյուլասագ (այժմ՝ Վարնկաթաղ) - մահ.՝ 2017, Երևան), սոցիոլոգ, տեխնիկական գիտությունների թեկնածու (1967), պրոֆեսոր (1990), ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ (1962):

1940թ. գերազանցությամբ ավարտել է Մար-

տակերտի միջնակարգ դպրոցը, ընդունվել ԵՊՀ Ֆիզմաթ ֆակուլտետը: 1942-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945-1950թթ. սովորել է ԵՊՀ նորարաց Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1953թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանին կից հասարակական գիտությունների դասախոսների վերապատրաստման միամյա կուրսերը: 1953-1957թթ. դասավանդել է քաղաքատնտեսություն Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1958-1967թթ. աշխատել է «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրում՝ որպես բաժնի վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար: 1968թ. դասախոսել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, 1978-1990թթ.՝ ղեկավարել քաղաքատնտեսության ամբիոնը: Այնուհետև աշխատել է ՀՊԱՀ Տնտեսագիտության տեսության ամբիոնում՝ որպես դասախոս և խորհրդատու: Հեղինակել է ավելի քան 100 գիտական և հրապարակախոսական աշխատանքներ, նաև՝ «Լեռնային Գարաբաղ» պատմավավերավերլուծական աշխատությունը, որը թարգմանվել և 1990թ. լույս է տեսել Նյու Յորքում:



ՄԻՐԶՈՅԱՆ ՎՈՒՈՂՅԱ ՄԻՄՈՆԻ

(1954)



Վոլոդյա Միմոնի Միրզոյան (ծնվ.՝ 1954, գ.Չարդախասյ), քիմիական գիտությունների թեկնածու (1989), դոցենտ (1993), ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի իսկական անդամ (2006):

1970թ. ավարտել է Հաբերքի միջնակարգ դպրոցը: 1971-1976թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում: Աշխատանքի է ընդունվել Նուրբ օրգա-

նական քիմիայի ինստիտուտի թիվ 2 լաբորատորիայում՝ որպես ավագ լաբորանտ: 1980թ. ստացել է կրտսեր գիտաշխատողի պաշտոն: 1993թ.-ից աշխատում է ԱրՊՀ-ում՝ որպես ավագ դասախոս, 1995թ.-ից՝ ղեկանի տեղակալ: 1998թ. ընտրվել է քիմիայի ամբիոնի վարիչ: 2000թ. աշխատել է որ-

պես գիտքարտուղար: 2004թ. նշանակվել է քիմկենսաբանական, ապա՝ Բնագիտության ֆակուլտետի ղեկան: Հեղինակել է 70-ից ավելի գիտական հոդվածներ:



ՄԻՐԶՈՅԱՆ ՓԱՐԱՎՈՆ ՊՈՂՈՍԻ

(1893-...)



Փարավոն Պողոսի Միրզոյան (ծնվ.՝ 1893, գ.Լյուլյասագ), բժիշկ, քիթ-կոկորդ-ականջաբան, բժշկական գիտությունների դոկտոր (1940), դոցենտ (1944):

Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվի առաջին գիմնազիայում: 1911թ. ընդունվել է Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Որպես բժիշկ ծառայել է ավստրո-գերմանական ճակատում: 1918թ. համալսարանը ավարտելուց հետո վերադարձել է Բաքու: Աշխատել է որպես Կարմիր բանակի բժշկական համճնաժողովի անդամ: Այնուհետև տեղափոխվել է Էսենդուլի, աշխատել որպես տեղամասային բժիշկ: 1920թ. ընտանիքի հետ տեղափոխվել է հայրենի գյուղ: 1920-1923թթ. ծառայել է Հյուսիս-Կովկասյան օկրուգում: 1926-1927թթ. պրոֆեսոր Լ.Ե.Կոմենդանտովի մոտ անցել է փորձառություն, մինչև 1930թ. աշխատել որպես օրդինատոր: 1941թ. եղել է Ռոստովի ինստիտուտի ամբիոնի վարիչ: 1942թ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ էվակուացվել է Ֆրունզե, 1943թ. վերադարձել Ռոստով: 1950թ. հիվանդացել է թոքախտով, 1952թ.՝ անցել թոշակի: 1967թ. Փ.Միրզոյանը՝ որպես հնուտ ու փորձառու բժիշկ, պրոֆեսոր Ա.Ռ.Խանամիրովի կողմից ներգրավվել է Ռոստովի քրոնիկ հիվանդությունների կլինիկայի պատմության մասին մեծ հոդվածի աշխատանքներին:



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԻԼՅԱ ԱՐԻՂՈՐԻ

(1935)

Իլյա Արիղոնի Միքայելյան (Իլյա Արցախեցի) (ծնվ.՝ 1935, գ.Ներքին Հոռաբաղ), արձակագիր, Հայաստանի լրագրողների, Հայաստանի (2005) և Արցախի գրողների միությունների անդամ:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է ներքին գործերի համակարգում: Եղել է «Աշխատավոր ուղիով» թերթի խմբագիր, 1991թ.՝ «Արցախի կանչ» թերթի պատասխանատու քարտուղար: Աշխատել է «Արցախ» հայրենակցական միությունում:



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՇԱ ԿԱՐԱՊԵՏԻ

(1932)

Միշա Կարապետի Միքայելյան (ծնվ.՝ 1932, գ.Վաղուհաս), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Սովորել է հայրենի գյուղի յոթամյա դպրոցում, ապա տեղափոխվել Հարությունագոմեր և 1953թ. ավարտել տեղի միջնակարգ դպրոցը: 1953-1958թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում: Սովորելու տարիներին՝ սկսած 3-րդ կուրսից, մաթեմատիկա է դասավանդել Երևանի թ. 41 դպրոցում: Համալսարանն ավարտելուց հետո մասնագիտությամբ աշխատել է Ստեփանակերտի շրջանի Շուշի միջնակարգ դպրոցում: 1959թ. տեղափոխվել է դասավանդելու Հարությունագոմերի, այնուհետև՝ Վաղուհասի միջնակարգ դպրոցներում: 15 տարի եղել է Վաղուհասի դպրոցի տնօրենը: 1974թ. նշանակվել և շուրջ 16 տարի աշխատել է որպես Խնկավանի դպրոցի տնօրեն: Հաճախակի է հանդես եկել շրջանային և հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Մշտապես տպագրվել է մամուլում: Ունի 40-ից ավելի հոդվածներ: Մեթոդա-մանկավարժական



թեմաներով և առաջադրանքներով հանդես է եկել շրջանային և հանրապետական պարբերական մամուլում: Երկար տարիներ եղել է կրթության շրջանային բաժնի արտահաստիքային տեսուչը: Արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ»-ի պատվավոր կոչմանը:



ՄԻՍԻԹԱՐՅԱՆ ԱՍՏԳԻԿ

ՉԻՆԱՎՈՐԻ

(1922-...)

Աստղիկ Չինավորի Մխիթարյան (ծնվ.՝ 1922, գ.Վաղուհաս, Արզիկ Մխիթարյանի մայրը -մահ.՝ 1922), Հայրենական պատերազմի մասնակից:

Ավելի քան 50 տարի աշխատել է որպես բուժքույր՝ իր ծառայությունը բերելով երկրամասի առողջապահության ոլորտին: 1941թ. հունիսի 22-ին՝ Հայրենական մեծ պատերազմի (1941-1945) հայտարարման օրը, քրոջ հետ դիմել են Մարտակերտի զինվորական կոմիսարիատ՝ որպես բուժքույրեր կամավոր ռազմաճակատ մեկնելու համար: Պատերազմի սկզբում՝ մի քանի ամիս, վիրավորներ են ընդունել Ստեփանակերտի, իսկ հետո Շուշիի հոսպիտալներում, այնուհետև նրանց տեղափոխել են գործող ճակատ: Անցել են պատերազմի դժվարին ճամփաներով և հաղթանակը դիմավորել Բեռլինում: Պատերազմական տարիների ընթացքում եղել է ակտիվ դոնոր, փրկել հարյուրավորների կյանքեր: Բեռլինում ծանոթացել և ամուսնացել է համերկրացի Միքայել Մխիթարյանի հետ: Նրանց և էլի հինգ զույգերի հարսանիքի թամաղան եղել է Խորհրդային Միության մարշալ Ռակատովսկին: Պարգևատրվել է ռազմաթիվ մեդալներով և այլ կառավարական մեդալներով:



**ՄՍԻԹԱՐՅԱՆ ԱՐՉԻԿ
ՄԻՔԱՅԵԼԻ
(1946)**



Արզիկ Միքայելի Միսիբարյան (ծնվ.՝ 1946, գ.Կոճողոտ), հոգեբանական գիտությունների թեկնածու (1986), ՌԴ և ՀՀ ազգային ակադեմիաների հոգեբանների միության անդամ (1986), ԱրՊՀ պրոֆեսոր (2000), ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ (2007):

1963թ. ոսկե մեդալով ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1963-1968թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

1968թ. դասավանդել է Մարտակերտի շրջանի Դրմբոնի դպրոցում, 1969թ.՝ ք.Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում: Նույն թվականին դասախոսական աշխատանքի է հրավիրվել Ստեփանակերտի սորաբաց ինստիտուտ՝ որպես հոգեբանության դասախոս: 1988թ. Արցախյան շարժման ակտիվ մասնակից է: Ընտրվել է «Կոունկ» հասարակական կազմակերպության վարչության անդամ և «Ամարաս» բարեգործական կազմակերպության փոխնախագահ: 1989թ. ընտրվել է Մանկավարժության և կենսաբանության ֆակուլտետի, 1996թ.՝ հումանիտար ֆակուլտետի ղեկան: 2010-2015թթ. եղել է մանկավարժության ֆակուլտետի ղեկան: 2015թ. ընտրվել է ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ: Հեղինակել է 2 դասագիրք և 42 գիտական հոդվածներ: Արժանացել է մի շարք մեդալների և պարգևների:



**ՄՈՍՈՒՆՅ ՍԼԱՎԱ ՄԻՔԱՅԵԼԻ
(1939-2007)**



Սլավա Միքայելի Մոսունց (ծնվ.՝ 1939, Մարտակերտ - մահ.՝ 2007, Մարտակերտ), լրագրող, հասարակական գործիչ, ԽՍՀՄ (1970-ական թթ.), ՀՀ և Արցախի գրողների միության անդամ (2003):

Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1960-ական թվականներին եղել է Մարտակերտի կոմերիտըրջկոմի առաջին քարտուղար: Աշխատել է «Բարեկամություն» և «Ջրաբերդ» թերթերի խմբագրություններում: Եղել է շրջանային ռադիոհաղորդումների գլխավոր խմբագիրը: 1973թ. արժանացել է ԼՂ գրողների միության, արհմիությունների մարզխորհրդի և ԼԿԵՄ Գարնարկոմի սահմանած գրական մրցանակի: «Ակունք» շաբաթաթերթի հիմնադիրներից է: 2006թ. հիմնադրել է «Մարտակերտ» համահայկական թերթը: «Արցախ, չմարվող պարտքեր» վերտառությամբ եռապատումի մեջ ամփոփված են «Մազից կախված կյանք», «Չյուն՝ ծաղկած ծառերին» և «Կենաց ծառեր» գրքերը:



**ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՀԱՐՈՆ
(...-1992)**

Ահարոն Մովսիսյան (ծնվ.՝ գ.Մատաղիս - մահ.՝ 1992), գյուղատնտեսական գիտությունների թեկնածու:

Սովորել է Մոսկվայում: Հեղինակել է բազմաթիվ գրքեր և հոդվածներ: Գրել է գյուղի պատմությունը՝ ստեղծման օրից մինչև 20-րդ դարի 1980-ական թվականները: Նրա ջանքերով գյուղի դպրոցում ստեղծվել է Հայրենական պատերազմի զոհերի հիշատակի անկյուն: Իր մահկանացուն կնքել է հայրենի գյուղի անկման գույժը ստանալու պահին:





ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՓԵՆ ԲԱՍՇԻԻ

(1950)

Արփեն Բախշիի Մովսիսյան (ծնվ.՝ 1950, գ.Չալու), հեռուստալրագրող:

1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: Ուսանողական տարիներից բրթակցել է հանրապետական մամուլին՝ «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Գարուն», «Արվեստ» և Ռադիոյի երիտասարդական հաղորդումների բաժնին, այնուհետև նաև «Երկիր», «Ազատամարտ» և

«Հայաստանի Հանրապետություն» պարբերականներին: 1975-1979թթ. աշխատել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում: 1980թ. աշխատակցել է Հայաստանի պետական հեռուստատեսության «Լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրին, եղել մշակութային նորությունների մեկնաբան, նաև շուրջ 15 տարի՝ սեփական բրթակցից: 1998թ.-ից վարել է «Շրջադարձ» պատմա-մշակութային հեղինակային հաղորդաշարը, որը 2002թ. արժանացել է ՄԱԿ-ի «Մշակութային արժեքների գերակայությունը հաստատող» մրցանակին, իսկ 2004թ. հաղորդաշարի հեղինակին շնորհվել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակը: 2007թ.-ից հաղորդաշարը եթեր է հեռարձակվել «Հայից հայ» խորագրի ներքո: Այս հաղորդաշարին գուզընթաց՝ 2008թ. վարել է նաև աշխարհի շուրջ ութսուն երկրում հեռարձակվող «Եզերք» հաղորդաշարը: Հեղինակել է շուրջ 700 ծավալուն հեռուստասերիալ: 2009թ. Մայրենի լեզվի օրվա կապակցությամբ, արժանացել է ՀՀ վարչապետի շնորհակալագրին՝ հայոց լեզվի պահպանման և զարգացման գործում ունեցած ակնառու վաստակի համար: 2009թ. պարգևատրվել է ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալով: Եղել է նաև «Կրթությունը և գիտությունը Արցախում» պարբերականի «լրագրություն և մշակույթի» բաժնի պատասխանատուն: Հայրենի երկրի հանրային կյանքի, ԼՂՀ կայացման գործընթացի լուսաբանման ասպարեզում ունեցած վաստակի համար արժանացել է ԼՂՀ Ազգային ժողովի պատվոգրի և Շարժման 20-ամյակի մեդալի: Իր ներդրումն ունի Սփյուռք-հայրենիք հոգևոր կամրջի լուսաբանման գործում: Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և Հայաստանի ժուռնալիստների միության «Աշխարհի հետ մեր ինքնությանը, Հայաստա-

նը համայն հայության հայրենիքն է» մրցանակաբաշխության (2009) դափնեկիր է: Արցախյան պատերազմի տարիներին աչքի է ընկել թե՛ կետերից տարբեր ազատագրական և ինքնապաշտպանական (մասնավորապես Քելբաջարի և Մարտակերտի) ընթացքը լուսաբանող ռեպորտաժներով:



ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳՐԻՇԱ ՀԱԿՈՒԻ

(1937-1991)

Գրիշա Հակոբի Մովսիսյան (ծնվ.՝ 1937, գ.Չղրան - մահ.՝ 1991), հասարակական գործիչ:

1956թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1960թ.՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական բաժնի: Աշխատանքի է անցել Լեհիստանի շրջադարձի գործկոմի ֆինանսական բաժնում՝ որպես տնտեսագետ, այնուհետև՝ բաժնի վարիչ: 1972-1987թթ. ղեկավարել է Երբաղխորհրդի գործկոմի ֆինանսական վարչությունը՝ միաժամանակ եղել հանրապետության կոլեգիայի անդամ: 1987թ. ընտրվել է Երբաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ և պլանային հանձնաժողովի նախագահ: Երկար տարիներ եղել է Երբաղխորհրդի գործկոմի անդամ: Գործնական մասնակցություն է ունեցել քաղաքային տնտեսության զարգացման, բյուջեի կազմավորման աշխատանքներին: Ընտրվել է ժողովրդական պատգամավորների մի շարք գումարումների և քաղաքային խորհուրդների պատգամավոր: Եղել է «Արցախ» հայրենակցական միության փոխնախագահ: Արժանացել է մի շարք մեդալների և շքանշանների:





ՄՈՎՍԻՍՅԱՆ ԷՍԹԵՐ ԱՔԲԱՀԱՍԻ

Էսթեր Աքրահամի Մովսիսյան (ծնվ.՝ գ.Վանք), Հանրապետության վաստակավոր մանկավարժ:

Նախնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում: Այնուհետև տեղափոխվել է Շուշի, ավարտել օրիորդաց դպրոցը, այնուհետև՝ տեղի ուսուցչական երկամյա դասընթացները: 1918թ. անցել է մանկավարժական աշխատանքի, սկզբում Վանք, այնուհետև՝ Մատաղիս և Մարտակերտ բնակավայրերում: 1928-1929թթ.

տեղափոխվել է Ստեփանակերտ և շուրջ 41 տարի աշխատել Ստեփանակերտի դպրոցներում: Երկար տարիներ զլխավորել է դասավարների Ստեփանակերտի քաղաքային մեթոդ-միավորումը: Նա հասարակական կյանքի ակտիվ մասնակիցներից է և քազմիցս ընտրվել է համաժողովների և համագումարների պատգամավոր:



ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼԱՎՐԵՆՏ ԱԼԵԲՍԱՆԳՐԻ

(1933)

Լավրենտի Ալեքսանդրի Մովսիսյան (ծնվ.՝ 1933, գ.Առաջաձոր), մեխանիկ, տեխնիկական գիտությունների դոկտոր (1973), պրոֆեսոր (1981):

1951-1956թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում: 1956թ. աշխատանքի է ընդունվել ՀՍՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում: 1959-1962թթ. ուսումը շարունակել է

Խարկովի (Ուկրաինա) ԳԱ մեքենագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: Երկար տարիներ դասախոսում է ԵՊՀ մեխանիկայի և մաթե-

մատիկայի ֆակուլտետում: Հեղինակել է 150-ից ավելի գիտական հրատարակումներ: Աշխատանքները վերաբերում են իզոտրոպ և անիզոտրոպ սալերի ու քաղաքների տատանումների և ալիքների տարածման ու մոմենտային վիճակի, խառը եզրային պայմանների և հարվածի դեպքում կայունության հարցերին:



ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼԵՐՄՈՆՏ ՄՈՒՇԵՂԻ

(1943-1995)

Լերմոնտ Մուշեղի Մովսիսյան (ծնվ.՝ 1943, գ.Հաթերք - մահ.՝ 1995, Երևան), ռադիոֆիզիկոս, Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր (1992), պրոֆեսոր (1993):

1959թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1964թ. ավարտել է համալսարանը, 1965թ. ընդունվել Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Նույն թվականին գորակոչվել է խորհրդային բանակ: Ջորաքովելուց հետո ուսումը շարունակել է ասպիրանտուրայում, ավարտել 1969թ.: 1965թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: 1975-1976թթ. վերապատրաստում է անցել ԱՄՆ Սթենֆորդի համալսարանում: 1986-1995թթ. եղել է ԵՊՀ գերբարձր հաճախությունների ֆիզիկայի ամբիոնի վարիչ: Հեղինակել է ավելի քան 40 գիտական աշխատանքներ, այդ թվում՝ էլեկտրադինամիկայի բուհական երկհատոր ձեռնարկը: Աշխատանքները վերաբերում են էլեկտրադինամիկայի, գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկային, մասնավորապես՝ էլեկտրոն-ճառագայթային փոխազդեցության հարցերին:





ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՌՈՒՍԱՄԻ
(1920-)

Միքայել Առուստամի Մովսիսյան (ծնվ.՝ 1920, գ.Տոնաշեն-), ախտաբան-ֆիզիոլոգ, ուռուցքա-իմունաբան, բժշկական գիտությունների դոկտոր (1966), պրոֆեսոր (1967):

1942թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1950-1951թթ. եղել է ռենոգենաբանության և ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտի փորձարարական բաժանմունքի, 1951-1995թթ.՝ ճառագայթակենսաբանության (1981թ.-ից՝ ուռուցքաիմունաբանության ԳՀ) լաբորատորիայի

հիմնադիր-վարիչ, միաժամանակ, 1968-1970թթ.՝ ՀՀ առողջապահության նախարարության ռադիոկենսաբանության բաժանմունքի տնօրեն: Աշխատանքները վերաբերում են կենդանիների օրգան-համակարգերի վրա իոնացնող ճառագայթների և արյունահոսությամբ զուգակցվող վնասվածքների համատեղ ներգործությանը և դրա հետևանքով առաջացած հիվանդությունների բուժմանը:



ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ ՄՈՎՍԵՍԻ
(1949)

Յուրի Մովսեսի Մովսիսյան (ծնվ.՝ 1949, գ.Թալիշ), մաթեմատիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1992), պրոֆեսոր (1992), Հայկական մաթեմատիկական միության խորհրդի անդամ, ԱՄՆ մաթեմատիկական ընկերության, Միջազգային մաթեմատիկական ասոցիացիայի GAF ընկերության անդամ:

Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանում: 1966-1969թթ. սովորել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական

ֆակուլտետում, 1969-1971թթ.՝ Քիչինևի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում, 1971-1974թթ.՝ Քիչինևի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրայում:

1974թ.-ից դասախոսում է Երևանի պետական համալսարանում: 1986-2013թթ. եղել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են հանրահաշիվներում գերնոյնությունների և գերբազմաձևությունների ուսումնասիրմանը և հիմք են ծառայել ընդհանուր հանրահաշվում գիտության նոր ուղղության համար: Հեղինակել է «Բարձրագույն հանրահաշիվ» (1983) բուհական ձեռնարկը: Հանրահաշվի բնագավառում Մովսիսյանը Հայաստանի առաջին գիտության դոկտորն է:



**ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԵՐՂԵՅ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**
(1928)



Սերգեյ Հովհաննեսի Մովսիսյան (ծնվ.՝ 1928, գ.Մեծ Շեն), կենսաբանական գիտությունների դոկտոր (1972), պրոֆեսոր (1989), ՀՀ ԳԱ ակադեմիկոս (1990), ՌԳԱ պարագիտոլոգիայի խորհրդի նախագահ, Վաշինգտոնի հեմիսֆերոլոգիայի խորհրդի անդամ, ՌԳԱ «Российский паразитологический журнал» և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի «Experimental Pathology and Parasitology» ամսագրերի խորհուրդների անդամ, ՌԳԱ Կ.Սկրյաբինի, Ե.Պավլովսկու, Գ.Մենդելի անվան մեդալակիր:

1951թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը՝ «Կենդանաբանություն, մակաբուծություն» մասնագիտությամբ: Աշխատել է Կ.Սկրյաբինի անվան ճիճվաբանության ինստիտուտում: 1959-1962թթ. եղել է որդերի մորֆոլոգիայի և կարգաբանության լաբորատորիայի վարիչ: 1976-2006թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտը: 1994թ. նշանակվել է ՌԳԱ, Ա.Սևերցովի անվան էկոլոգիայի և էվոլյուցիայի պրոբլեմների ինստիտուտի, պարագիտոլո-

գիայի գիտափորձարարական կենտրոնի գիտական ղեկավար, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն: Աշխատանքները վերաբերում են որդերի ֆաունայի, մորֆոլոգիայի կարգաբանության, կենսական զարգացման, էկոլոգիայի, ճինվային հիվանդությունների դեմ պայքարի եղանակների մշակման հարցերին:



**ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ
ԳԱՍՏԵԼԼՈՅԻ**
(1968)



Հովիկ Գաստելլոյի Մուսայելյան (ծնվ.՝ 1968, գ.Մոխրաքաղ), բանասիրական գիտությունների դոկտոր (2010), պրոֆեսոր (2010):

1985թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1987-1992թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում: 1993թ. աշխատանքի է

անցել Շուշիի «Արամ Մանուկեան» դպրոց-վարժարանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1995թ. նշանակվել է «Շուշի» շրջանային թերթի գլխավոր խմբագիր, 1996թ.՝ «Արամ Մանուկեան» դպրոց-վարժարանի տնօրեն: 2001թ.-ից դասախոսական աշխատանքի է անցել Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում, 2002թ.-ից՝ ԱրՊՀ գրականության և ժողովրդագրության ամբիոնում: Միաժամանակ, 2005-2008թթ. աշխատել է ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ»-ի ԼՂՀ մասնաճյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ: 2008թ. նշանակվել է ԱրՊՀ գիտքարտուղար: Հեղինակել է բանաստեղծական և գրականագիտական ժողովածուներ, շուրջ 15 գիտական հոդվածներ:



ՅԱԽՇԻՅԱՆ ՍԱՅԻԿ ԱՍԱՏՈՒՐԻ
(1905-1986)

Սայիկ Ասատուրի Յախշիյան (ծնվ.՝ 1905, գ.Մոխրաքաղ-մահ.՝ 1986, Բաքու), հասարակական գործիչ:

Ավարտել է Կուսապատի միջնակարգ դպրոցը: Սովորել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտում: Աշխատել է Ադրբեջանի խոշոր կազմակերպություններում, նշանակվել «Քուտ-Արաքս» ջրշինի պետ: Այնուհետև աշխատանքի է անցել Մարտակերտի Սարսանգի հիդրոէկոլոգիայում, նշանակվել պետ:



ՅԱՂՈՒԲՅԱՆ ՖՅՈՎՈՐ ՍԱՐՈՒԽՆԻ
(1910-1992)


Ֆյոդոր Սարուխանի Յաղուբյան (ծնվ.՝ 1910, գ.Մոխրաքաղ - մահ՝ 1992, Երևան), բժշկական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր բժիշկ:

Ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ որպես բժիշկ: Եղել է ք.Արմավյանի հակատուբերկլյուզային հիվանդանոցի գլխավոր բժիշկ:



**ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԷՅԼԵՐ
ՍԵՐԳԵՅԻ**
(1942)

Էյլեր Սերգեյի Յուզբաշյան (ծնվ.՝ 1942, գ.Մեծ Շեն), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:





ՅՈՒԶԲԱՆՅԱՆ ՄԱՐԻՈՍ ԱՐԱՄՒ

(1924-1993)

Մարիոս Արամի Յուզբաշյան (ծնվ.՝ 1924, Բաթումի՝ մեծշենացու ընտանիքում (մայրական կողմից, հայրը եղել է ազգությամբ լեհ) - մահ.՝ 1993, Երևան), Խորհրդային պետական գործիչ, անվտանգության գեներալ մայոր (1978), գեներալ-լեյտենանտ (1984):

1940թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Թիֆլիս: Սովորել է Ուժգորոդի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, 1943-1944թթ.՝ Թիֆլիսի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատում, ապա՝ N101 ԱԱԾ դպրոցում: 1944-1945թթ. եղել է թշնամու քիկուրում գործող պարտիզանական ջոկատի հրամանատարի տեղակալ: 1944-1988թթ. աշխատել է Անվտանգության մարմիններում: 1954թ. աշխատանքի է անցել հետախուզությունում: 1960թ. եղել է Գերմանիայում ԱԱԾ 3-րդ բաժնի տնօրեն, 1972-1978թթ.՝ ԽՍՀՄ (արտաքին) հետախուզության Առաջին գլխավոր վարչության տնօրենի տեղակալ, 1978-1988թթ.՝ ՀԽՍՀ ԱԱԾ նախագահ: 1989թ. անցել է թոշակի, ապրել Մոսկվայում: 1992թ. եղել է Երևանի քաղաքապետի խորհրդական, միաժամանակ ղեկավարել քիկնապահների մասնավոր դպրոցը: Սպանվել է 1993թ. Երևանի այգիներից մեկում մարզվելու ժամանակ: Թաղված է Մոսկվայում:



ՆԱԼԲԱՆԳՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԲԵՆԻԿԻ

(1963)



Գառնիկ Բենիկի Նալբանդյան (ծնվ.՝ 1963, Երևան՝ մարտակերտցու ընտանիքում), տեխնիկական գիտությունների թեկնածու (1992), Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ:

1980թ. ավարտել է Երևանի թիվ 112 դպրոցը, 1985թ.՝ Պոլիտեխնիկ ինստիտուտի մեխա-

նիկական ֆակուլտետը: 1985-1992թթ. աշխատել է Երևանի ավտագրեգատների գործարանում՝ որպես գլխավոր կոնստրուկտոր: 1993թ. աշխատանքի է անցել ԱրՊՀ շինարարական գործ ամբիոնում՝ որպես դասախոս, այնուհետև նույն ամբիոնի վարիչ: 1996-2000թթ. աշխատել է նույն բուհում՝ որպես ուսումնական, ապա բնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Կարճ ժամանակահատվածում աշխատել է որպես ռեկտորի պաշտոնակատար: 2000-2004թթ. աշխատել է ԱրՊՀ քաղաքաշինության ամբիոնում՝ որպես դասախոս, ապա ամբիոնի վարիչ: Այնուհետև տեղափոխվել է Երևան, նշանակվել Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: Եղել է Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի գիտության կառավարման կենտրոնի ավագ գիտաշխատող: Հեղինակել է մի շարք գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ:



ՆԱԼԲԱՆԳՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՍԾԱՏՈՒՐԻ

(1960)



Գուրգեն Ասատուրի Նալբանդյան (ծնվ.՝ 1960, Գ.Կիչան), դոցենտ:

1967-1977թթ. սովորել է Շուշիի թիվ 2 գիշերօթիկ դպրոցում: 1977-1981թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի «Մաթեմատիկա» բաժնում: 1981-1984թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի ամբիոնում՝ որպես լաբորանտ: 1993-2001թթ. դասավանդել է Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, 2002թ.՝ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնում: Մասնակցել է Արցախյան ազատագրական շարժմանը: Հեղինակել է մոտ մեկ տասնյակ գիտական հոդվածներ:



միացնող «Դրուժբա» (ռուս.) կամրջի շինարարությանը: 1961թ. նշանակվել է Վոլգա և Ուրալ գետերի ավազանների վրա կամուրջներ կառուցելու համար Սարատովում ստեղծված «Մոստոտեստ-3»-ի ղեկավար և աշխատել այդ պաշտոնում մինչև թոշակի անցնելը:



ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1945-2008)



Աշոտ Հարությունի Ներսիսյան (ծնվ.՝ 1945, գ.Մեյսուլան - մահ.՝ 2008, ք.Ստեփանակերտ) ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ (1987):

Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1961-1966թթ. սովորել է Ադրբեջանի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտում: 1969թ.-ից աշխատել է Բարձրի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես դասախոս: 1982-1990թթ. ղեկավարել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, այնուհետև՝ մաթեմատիկայի ամբիոնը: 1996-2002թթ. եղել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն: Այնուհետև դասախոսել է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնում: Հեղինակել է մի շարք գիտահետազոտական հոդվածներ:



ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՎԹԻ

(1950)

Միքայել Դավթի Ներսիսյան (ծնվ.՝ 1950, գ.Մոխրաբաղ), քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ ֆեդերացիայի Պետական մրցանակի դափնեկիր՝ գիտության և տեխնիկայի բնագավառում:

Ավարտել է գյուղի 8-ամյա դպրոցը, այնուհետև Մաղավուզի միջնակարգ դպրոցը: Ապրում է ԱՄՆ-ում:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓԱՇԱ ԴԱՎԹԻ

(1936-1989)

Փաշա Դավթի Ներսիսյան (ծնվ.՝ 1936, գ. Մոխրաբաղ-մահ.՝ 1989, Երևան), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:

Սովորել է գյուղի 8-ամյա դպրոցում, այնուհետև Կուսապատի միջնակարգ դպրոցում: Դասախոսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:



ՇԱՀԻՆՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ

(1929-1997)



Աշոտ Գրիգորիի Շահինջանյան (ծնվ.՝ 1929, գ.Առաջածոր- մահ.՝ 1997, Ստեփանակերտ), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, դասախոս:

Նախնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, միջնակարգն ավարտել Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում: 1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Հեռակա կարգով սովորել է ավարտել է Ադրբեջանի Վ.Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: 1948-1951թթ. աշխատել է Վանք և Գառնաքար գյուղերի դպրոցներում: 1951-1952թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: Չորացրվելուց հետո աշխատել է Շուշիի Լիսագոր և Ասկերանի շրջանի Շոշ գյուղերում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1961թ. աշխատանքի է հրավիրվել Ստեփանակերտի նորաստեղծ գիշերօթիկ դպրոցում: 1974թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես մաթեմատիկայի ամբիոնի դասախոս: Հեղինակել է գիտական և գիտամեթոդական հոդվածներ: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և պատվոգրերով:





ՇԻՐԻՆՅԱՆ ՎԻԳԵՆ ՄԻՐԶԱԶԱՆԻ

(1947-1992)

Վիգեն Միրզազանի Շիրինյան (ծնվ.՝ 1947, գ. Զլղրան - մահ.՝ 1992, Ստեփանակերտ), ազատամարտիկ, Արցախյան շարժման գործիչ:

1969թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1969-1975թթ. աշխատել է «Երազ» ավտոգործարանում որպես ճարտարագետ-կոնստրուկտոր, 1975-1990թթ.՝ ԼՂԻՄ Մարտունու շրջանի ջերմամատակարարման վարչությունում՝ որպես վարչության պետ:

1989թ. եղել է ՊՊԿ անդամ: 1991-1992թթ. եղել է ՀՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր և Արցախի հարցերով հանձնաժողովի անդամ: Մասնակցել է Արցախյան պաշտպանական ջոկատների ստեղծման, Մարտակերտի շրջանի սահմանային գյուղերի ինքնապաշտպանական և ջոկատների համատեղ գործողությունների ծրագրերի մշակման աշխատանքներին: Հետմահու պարգևատրվել է Արցախի Հանրապետության «Արիության համար» մեդալով:



ՈՍԿԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՄՆԱՅԱԿԱՆԻ

(1911)

Ռուբեն Մնացականի Ոսկանյան (ծնվ.՝ 1911, գ. Հաթերք), անասնաբուժական գիտությունների դոկտոր (1940), պրոֆեսոր:

Ավարտել է Կազանի անասնաբուժական ինստիտուտը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմից հետո աշխատել է որպես Մոսկվայի փորձարարական ինստիտուտի Համամիութենական կլինիկական բաժնի վարիչ և անասնաբույժների կատարելագործման դասընթացների Կենտրոնական թերապիայի և ախտորոշման բաժանմունքի վարիչ: Այնուհետև ղեկավարել է Ուզբեկստանի գյուղատնտեսական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետի կլինիկական ախտորոշման բաժինը: 1952թ. ապրել է Նովոչերկեսկում, աշխատել է կենդանաբանական այգու ինստիտուտում որպես գյուղատնտեսական կենդանիների կլինիկական ախտորոշման և թերապիայի բաժանմունքի վարիչ: Հեղինակել է ավելի քան 20 գիտական աշխատանք: Արժանացել է շքանշանների:



ԶԱԼՅԱՆ ՅՈՒՐԻ ԱՇՈՏԻ

(193.)

Յուրի Աշոտի Չալյան (ծնվ.՝ 193., Երևան՝ մարտակերտցու ընտանիքում), ռազմական գործիչ, գնդապետ:

Երևանում ավարտել է ռուսական դպրոց: Դասավանդել է Գանձակում, Ստեփանակերտում, Մարտակերտում, Մարգուշևանում: 1945թ. ծառայել է Գերմանիայում: Ուսանել է Լվովի ռազմական ուսումնարանում: Կիևում եղել է բարձրաստիճան սպա: Մովորել է ԽՍՀՄ

ներքին գործերի նախարարության մոսկովյան ակադեմիայում: Նշանակվել է Երևանի Ներքին գործերի նախարարության համակարգի ղեկավար պաշտոնում: Արցախյան շարժման տարիներին մշակել և իրագործել է հրամանատարական կադրերի ուսուցման համակարգի ծրագրեր: Երևանի ռազմական ուսումնարանի ու ակադեմիայի հիմնադիր մասնագետներից է:



ԶԱԼՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՎՈՅԻ

(1921-1999)

Ռուբեն Ավոյի Չալյան (ծնվ.՝ 1921, Մարտակերտ - մահ.՝ 1999թ., Մարտակերտ), Հանրապետության վաստակավոր տնտեսագետ:

1940-ական թվականներին եղել է շրջգործկոմի նախագահի տեղակալ, 1958-1986թթ.՝ պետբանկի շրջանցիկ բաժանմունքի կառավարիչ:





ՉԻԼԵՆԳԱՐՈՎ ՆՈՐԲԵՔՏ

ՍՈՒՐԵՆԻ

(1955)

Նորբեքտ Սուրենի Չիլինգարով (ծնվ.՝ 1955, Մոսկվա՝ մարտակերտացու ընտանիքում), քիմիական գիտությունների դոկտոր (2003), պրոֆեսոր (2007):

1980թ. ավարտել է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան քիմիական ֆակուլտետը: Աշխատանքի է ընդունվել էլեկտրոնոգրաֆիայի լաբորատորիայում: 2004թ.-ից աշխատել է որպես

գիտաշխատող: 1994-1995թթ. դասախոսել է Մոսկվայի Ն.Է.Բաումանի անվան պետական համալսարանում, 2012-2014թթ.՝ Մոսկվայի պետական ինդուստրիալ համալսարանում: Հեղինակել է շուրջ 110 հրատարակություն, որոնք տպագրվել են հայրենական և արտասահմանյան ամսագրերում:



ՉՈՐԱՆՅԱՆ ԳԱՐԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ

(1954)

Գարիկ Արմենակի Չորանյան (ծնվ.՝ 1954, գ.Ջարդախաչ), գինեկուղզ, բժշկական գիտությունների թեկնածու:

Մովորել է գյուղի 8-ամյա դպրոցում, ուսումը շարունակել Ստեփանակերտի ֆիզմաթ գիշերօթիկ դպրոցում: Ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը:



ՉՈՐԱՆՅԱՆ ԺՈՐԱ ԱՐՄԵՆԱԿԻ

(1944)

Ժորա Արմենակի Չորանյան (ծնվ.՝ 1944, գ.Ջարդախաչ), օրգանիկ-քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր (2005):

1970թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1971թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտում: 2003թ. նշանակվել է չիպեցած բնական միացությունների լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են մետաղօրգանական միացությունների սինթեզին ու քիմիական փոխարկումներին, ինչպես նաև՝ բնական ցածրամոլ, կենսակարգավորիչների (ֆերոմոններ, դեղանյութեր և այլն) ստացման ու կիրառման հարցերին:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԶԱ ԱՐՏԵՄԻ

Լիզա (Խանում) Արտեմի Պետրոսյան (ծնվ.՝ Ֆերգանա՝ մարտակերտացու ընտանիքում), բալետմեյսեր, Ուզբեկական ԽՍՀ և Կարակալպակական Ինքնավար ԽՍՀ ժողովրդական արտիստուհի:

Հիմնադրել է Կարակալպակական պարի պետական համույթը: Մեծ ներդրում է ունեցել կարակալպակական ազգային պարերի ուսումնասիրման գործում: Ուզբեկստանի կարակալպակների համար ստեղծել է իրենց սեփական պարերը՝ հիմնվելով կարակալպակական գործվածքների հարուստ զարդանախշերի վրա: Կարակալպակական պարերի մասին գրել է մենագրություն:





ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ

(1964)

Արմեն Միրաչյեյի Պետրոսյան (ծնվ.՝ 1964, Մարտակերտ), քանդակագործ, Նկարիչների միության անդամ:

Ավարտել է Սանկտ Պետերբուրգի Ռեալիստի անվան պետական ակադեմիայի քանդակի բաժինը: Մասնակցել է Սանկտ Պետերբուրգում կազմակերպված ցուցահանդեսների: Ունի աշխատանքներ ԱՀ տարածքում: Հեղինակել է Ա.Ս.Գրիբոյեդովի հուշարձանը (ք.Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի մոտ), Անհայտ կորած ազատամարտիկների հուշակոթողը (ք. Մարտակերտ), «Գարբիել հրեշտակի» արձանը (Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու զանգակատան մոտ) և այլ գործեր:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՐԻԿ ՊԵՏԱԿԻ

(1910-1965)

Գարիկ Պետակի Պետրոսյան (ծնվ.՝ 1910, գ.Մոխրաքաղ-մահ.՝ 1965, Բաքու), Ադրբեջանի նավթային արդյունաբերության տնտեսական կառավարման բարձրաստիճան պաշտոնյա, օդաչու:

Ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու: Սովորել է Բաքվի միջնակարգ դպրոցում: Ավարտել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտը, ապա՝ Բաքվի օդաչուական դպրոցը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՈՀԱՐ ԱՐՏԵՄ

Գոհար Արտեմի Պետրոսյան (Գավխար Արտեմի Ռախիմովա) (ծնվ.՝ Գորչակովո, Ուզբեկական ԽՍՀ), դերասանուհի, պարուհի, բալետմեյստեր, Ուզբեկական ԽՍՀ արտիստուհի:

13-16 տարեկանում սովորել է ուզբեկական դասական պարեր ու երգեր: 1927թ. ավարտել է դպրոցը: Ավագ քրոջ՝ Թամարա Խանումիի հետ աշխատել է Կոկանդի թատրոնում: Շրջագայել է Ուզբեկստանում, Մոսկվայում, Լենինգրադում: Զինվորական ամուսնու՝ Գուլ Ռախիմովի հետ տեղափոխվել է Սամարղանդ, այնտեղ քացել թատրոն: Հանդես է եկել որպես պարուհի, բալետմեյստեր: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ԽՍՀՄ տարբեր վայրերում շրջագայել է համերգներով: 1947-1949թթ. ղեկավարել է Ուզբեկստանի պետական ֆիլիարմոնիան: 1952-1953թթ. ընտանիքի հետ տեղափոխվել է Ֆրունզե, հանդես եկել որպես դրոգական ֆիլիարմոնիայի մեներգչուհի, բեմադրել պարեր: 1954թ. վերադարձել է Տաշքենդ, ֆիլիարմոնիային կից ստեղծել ազգային էստրադային խումբ և աշխատել մինչև 1957թ.: 1968թ. ստեղծել է «Լազգի» համույթը: Առաջին դերը խաղացել է «Ֆահրադ և Շիրին» ներկայացման մեջ:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ ՅՈՒԼԿԻ

(1948)



Զոյա Յուլկի Պետրոսյան (ծնվ.՝ 1948, գ.Մոխրաքաղ), վաստակավոր մանկավարժ (1987):

1955թ. ընդունվել է Լենինականի ութամյա դպրոցը, 1966թ.՝ ավարտել Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1967թ. հեռակա կարգով ընդունվել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտը: 1973թ. ավարտել է Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետը՝ ռուսաց լեզվի ուսուցչուհու որակավորմամբ: 1966թ. աշխատել է որպես դաստիարակչուհի: 1967-

1973թթ. աշխատել է Լենինավանի միջնակարգ դպրոցում: Ապա ընտանիքով տեղափոխվել է քաղաք Մարտակերտ, աշխատանքի անցել թիվ 1 դպրոցում որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի, աշխատել մինչև 1992թ.: Ընտրվել է ԼՂՀ ազգաբնակչության լիազորված ներկայացուցիչների համագումարի պատգամավոր:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ ԱՐՏԵՄ
(1906-1991)



Թամարա (Թամարա Խանում) Արտեմի Պետրոսյան (ծնվ.՝ 1906, Գորչակովո, այլ տվյալներով՝ Նոր Մարգելան, Ֆերգանայի մարզ, Ուզբեկստան)՝ մարտակերտցի Արտեմ Պետրոսյանի ընտանիքում - մահ.՝ 1991, Տաշքենդ, Ուզբեկստան), պարուհի, երգչուհի, բալետմեյստեր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի (1956), Ուզբեկական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի (1932), Ուզբեկստանի երաժշտադ-

րամատիկական թատրոնի բալետային ստուդիայի հիմնադիր, ԽՍՀՄ Պետական մրցանակակիր (1941): 1921թ. ընդունվել է Տաշքենդի ռուսական բալետի դպրոցը: 1925թ. ավարտել է Մոսկվայի թատերական ուսումնարանը:

1926-1928թթ. եղել է Տաշքենդի երաժշտական-ազգագրական անսամբլի պարուհի: 1928-1934թթ. մասնակցել է Ուզբեկստանի մի շարք քաղաքներում երաժշտական դրամատիկական թատրոնների հիմնադրմանը: 1935թ. Լոնդոնում անցկացվող ազգային պարերի առաջին միջազգային փառատոնին արժանացել է պատավավոր առաջին մրցանակի, անձամբ թագուհու ձեռքով պարզևատրվել ոսկե մեդալով: Պատերազմից հետո շարունակել է համերգաշարերով հանդես գալ աշխարհի տարբեր երկրներում:

1986թ. Տաշքենդում բացվել է Թամարա Խանումի տուն-թանգարանը, որտեղ ցուցադրված էին պարուհու բեմական հագուստները, լուսանկարները, չիրատարակված հուշերը՝ արտիստուհու երգերի ներքո: Արժանացել է մի շարք մեդալների և շքանշանների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ ՊԵՏԱԿ

(1911-197.)

Թամարա Պետակի Պետրոսյան (ծնվ.՝ 1911, Բաքու՝ մոխրաթաղեցու ընտանիքում, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանի կինը- մահ.՝ 197.), բժշկական գիտությունների թեկնածու:

Սովորել է Բաքվի միջնակարգ դպրոցում: Ավարտել է Բաքվի բժշկական ինստիտուտը: Աշխատել է Բաքվի տարբեր հիվանդանոցներում:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՌԼԵՆ ՌՈՒԲԵՆԻ
(1959)



Կառլեն Ռուբենի Պետրոսյան (ծնվ.՝ 1959, ք.Մարտակերտ), քաղաքական գործիչ:

1966-1976թթ. սովորել է Մարտակերտի Թ. Ավթանդիլյանի անվան միջնակարգ դպրոցում: 1981թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը: 1981-1984թթ. աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որպես ինժեներ, ապա՝ ստացիոնար ասպիրանտ: Այնուհետև աշխատանքի է անցել ԵրՊԻ Գորիսի մասնաճյուղում՝ որպես լաբորատորիայի վարիչ, մինչև 1996թ.՝ ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս, մասն.՝ ղեկավար պաշտոնակատար: 1995թ. եղել է ԼՂՀ Մարտակերտի «Գիտակ» ՊՓԲԸ-ի տնօրեն: 1996-1998թթ. Ռ-Դ Նովգորոդ քաղաքում մասնակցել է ոսկերչության դասընթացների: 1998-2000թթ. եղել է Մարտակերտի շրջանի հարկային տեսչության պետը, 2000-2001թթ.՝ ԼՂՀ հարկային պետական վարչության աշխատակազմի ղեկավարը, 2001-2003թթ.՝ Հարկային պետական վարչության մարտային բաժնի պետի պաշտոնակատարը: 2006-2007թթ. աշխատել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավար: 2008թ. նշանակվել է ԼՂՀ Վերահսկիչ պալատի խորհրդի անդամ, 2009թ.՝ ԼՂՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետ, այնուհետև՝ ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական

ենթակառուցվածքների վարչության պետ, 2011թ. ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարար, 2012թ.՝ ԼՂՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ:

Հեղինակել է գիտական երեք աշխատություն մետաղների կտրման տեսությունից: Արժանացել է մի շարք պարգևների:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԱԳԻԿ ՍԵՐԳԵՅԻ
(1949-2015)

Ռադիկ Սերգեյի Պետրոսյան (ծնվ.՝ 1949, գ.Մոխրաբաղ - մահ.՝ 2015, գ.Մոխրաբաղ), գյուղատնտեսական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Դասավանդել է նույն ինստիտուտում: Արցախյան շարժման տարիներին տեղափոխվել է հայրենի գյուղ:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ ՄԻՐԶԱՅԻ
(1940)

Ռազմիկ Միրզայի Պետրոսյան (ծնվ.՝ 1940, Մարտակերտ), մանկավարժ, հասարակական գործիչ: 1970-1992թթ. աշխատել է ԼԿԵՄ շրջկոմում, կուսշրջկոմում, ժողկրթբաժնում: Եղել է Մարտակերտի թ. 1 և 2 դպրոցների տնօրեն: Ընտրվել է շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ: Տեղափոխվել է Վորոնեժ:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒՄԻ ՎԻԿՏՈՐԻԱ ԱՐՏԵՄ

(1915-2002)

Վիկտորիա Արտեմի Պետրոսյան-Ռումի (ծնվ.՝ 1915, ք.Ֆերգանա, Ուզբեկստան, մարտակերտցու ընտանիքում, Թամարա Խանումի բույրը - մահ.՝ 2002, Ուզբեկստան), կենսաբանական գիտությունների դոկտոր (1968), պրոֆեսոր (1969):

Ավարտել է Ուզբեկստանի պետական գյուղատնտեսական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը, ուսումը շարունակել բույսերի ձևաբանական և անատոմիական ամբիոնի ասպիրանտուրայում: 1943թ. աշխատանքի է ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Ուզբեկական ԽՍՀ մասնաճյուղում և երկար տարիներ աշխատել նույն ակադեմիայում: 1961-1963թթ. ղեկավարել է ցիտոէմբրիոլոգիայի լաբորատորիան: 1968թ. խորհրդային պատվիրական կազմում մասնակցել է Փարիզում անցկացված միջազգային սիմպոզիումին, 1982թ. Բրատիսլավայում անցկացված միջազգային սիմպոզիումին:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՍԱՄՍՈՆԻ
(1942)

Վալերի Սամսոնի Պետրոսյան (ծնվ.՝ 1942, Բաքու, մարտակերտցի Սամսոն Պետրոսյանի և Թամարա Չիլինգարովայի ընտանիքում), քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր (1979), պրոֆեսոր (1981), Ռուսաստանի ԲԳԱ ակադեմիկոս (1990), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

1959-1964թթ. սովորել է Մոսկվայի պետական համալսարանի քիմիայի բաժնում: Սովորելուն զուգընթաց աշխատանքի է անցել քիմիայի լաբորատորիայում: Որոշ ժամանակ անց դասավանդել է Մոսկվայի պետական համալսարանում: 1976թ. գիտական ղեկավար Օլեգ Ռիտտովի աջակցությամբ վերապատրաստվել է Փասադենայի Կալիֆոռնիական տեխնոլոգիական հա-



մալսարանում: 1988թ. դեկավարել է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի ֆիզորգանական քիմիայի լաբորատորիան: 1992թ. Էկոլոգիայի, հատկապես՝ ջրի էկոլոգիայի ոլորտում կատարած արդյունավետ աշխատանքի համար արժանացել է Եվրոպական պարգևի: Մերտորեն համագործակցում է հայաստանյան գիտական կենտրոնների հետ, ակադեմիկոս Ա. Աղանբեկյանի հետ: Մշտապես օգնել է ինչպես Հայաստանին, այնպես էլ՝ Ռուսաստանի հայ համայնքին: Հեղինակել է շուրջ 400 գիտական աշխատանք, 25 հեղինակային վկայական:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ ԱՎԱՆԵՍԻ

Վիկտորյա Ավանեսի Պետրոսյան (ծնվ.՝ գ.Հաթերք), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1949թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի երկաձյա ուսուցչական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Աշխատանքի է անցել Հաթերքի դպրոցում: 1952-1956թթ. սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետում: Աշխատել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն, ապա՝ տնօրեն: Տարբեր թերթերում և պարբերականներում հանդես է եկել հոդվածներով և առաջարկություններով: Երկար տարիներ եղել է դպրոցի մաթեմատիկայի առարկայական հանձնաժողովի նախագահ և կրթության շրջանային բաժնի արտահաստիքային տեսուչը: Պարգևատրվել է պատվոգրերով ու զուգասանագրերով:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԻՈԼԵՏՏԱ ՄՈՒՇԵՂԻ
(1952)



Վիոլետտա Մուշեղի Պետրոսյան (ծնվ.՝ 1952, ք.Մինգեչաուր՝ մարտակերտցու ընտանիքում, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, հասարակական գործիչ:

Մանկահասակ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1974թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի մասնագիտությամբ: 1974-1989թ. աշխատել է Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանում որպես գիտաշխատող, 1986-1989թթ.՝ աստղադիտարանի գիտքարտուղար: Մոտ 150 երիտասարդ գալակտիկ օբյեկտների հայտնաբերման և ուսումնասիրության հեղինակ և համահեղինակ է (Petrosyan objects): Գիտության և հասարակական գործունեության բնագավառներում իր ուսուցիչ է համարում աշխարհահռչակ գիտնական Վ.Համբարձումյանին: 1988թ.-ից Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակիցներից է: Վ.Պետրոսյանի գործունեության տարիներին իրականացված կարևորագույն ռազմավարական ծրագրերն են Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի կառուցումն ու «Չմեռ 93-94»-ը:



ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱՄ

Արամ Պողոսյան (ծնվ.՝ Մեծ Շեն - մահ.՝ Երևան), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:

Ավարտել է Երևանի պետական ինստիտուտը: Երկար տարիներ դասավանդել է նույն համալսարանում:





ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԻՍ ՍԱՐԳՍԻ

(1930-1995)

Արիս Սարգսի Պողոսյան (ծնվ.՝ 1930, գ.Հալաղ-մահ.՝ 1995), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1949թ. ավարտել է Առաջածորի միջնակարգ դպրոցը: 1949թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժինը: Աշխատանքի է անցել Նախիջևանի Օրդուբադի շրջանի Բիստ գյուղի դպրոցում որպես ֆիզիկայի

և մաթեմատիկայի ուսուցիչ: 1952թ. գորակոչվել է ԽՍՀՄ բանակի շարքերը: 1954թ. գորացրվել է և աշխատանքի անցել Մարտակերտի շրջանի Գայու գյուղում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով սովորել և ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: 1955-1959թթ. եղել է Կոճողոտի, 1959-1962թթ.՝ Հարությունագոմերի, 1962-1965թթ.՝ Քոլատակի, 1965-1992թթ.՝ Առաջածորի դպրոցների տնօրեն: Նրա ղեկավարության տարիներին Առաջածորի դպրոցը իր հնարավորություններով մրցում էր հանրապետության լավագույն դպրոցների հետ: Արժանացել է «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքի գերազանցության համար» մեդալով:



ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԵՄ ՄՈՎՍԵՍԻ

(1910-1986)

Արտեմ Մովսեսի Պողոսյան (ծնվ.՝ 1910, գ.Կուսապան - մահ.՝ 1986, Մարտակերտ), պետական գործիչ:

Աշխատանքային գործունեությունը սկսել է որպես գյուղխորհրդի գործկոմի քարտուղար: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի եռամյա կոմունիստական գյուղատնտեսական դպրոցը: 1937թ.



ընտրվել է Ադրբեջանի ԼԿԵՄ Մարտակերտի շրջկոմի 2-րդ քարտուղար: 1939-1941թթ. աշխատել է որպես կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945թ. գորացրվել է, աշխատանքի անցել որպես կուսակցության ԼՂԽՄ մարզկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչի տեղակալ: 1946թ. ընտրվել է Մարտունու շրջգործկոմի նախագահ: 1948-1952թթ. եղել է Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար, 1952-1956թթ.՝ Բաքվի 26 կոմիսարների անվան Ղարմետաքսկոմբինատի տնօրեն: 1956թ. նորից գործուղվել է Մարտակերտի շրջան և ընտրվել կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար: Այնուհետև ավելի քան 10 տարի գլխավորել է N3 խաղողագործական սովխոզի կոլեկտիվը: Եղել է նաև շրջանային մթերման գրասենյակի տնօրեն, կյանքի վերջին տարիներին՝ շրջանային երկրագիտական քանգարանի տնօրեն: Ընտրվել է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի անդամ, Հանրապետության գերագույն խորհրդի պատգամավոր, ԼՂԽՄ մարզկոմի անդամ: Պարգևատրվել է 1-ին և 2-րդ աստիճանների, «Պատվո ճշան» շքանշաններով:



ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԵՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(1922-1988)

Արտեմ Խաչատուրի Պողոսյան (ծնվ.՝ 1922, գ.Մոխրաբաղ - մահ.՝ 1988, գ.Մոխրաբաղ), ոստիկանության գնդապետ (1963):

1940թ. գերազանցությամբ ավարտել է Մարտակերտի Ա.Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը և գորակոչվել Խորհրդային բանակ: Ծառայել է Արևմտյան Ուկրաինայի Պերեմեշլը քաղաքում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ծառայել է 99-րդ հրաձգային դիվիզիայում: Չորս անգամ վիրավորվել է Պերեմեշլի, Կիևի, Խարկովի, Ստալինգրադի համար մղվող մարտերում: Պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով: Անուսնացել է ազգությամբ ռուս Նինա Երոշկինա Ֆրոլովնայի հետ Հաղթանակի օրը՝ 1945թ. մայիսի 9-ին՝ Բուլղարիայում, ում հետ ծանոթա-



ցել էր պատերազմի տարիներին: 1946թ. վերադարձել է ԼՂԽՄ: Շուրջ 26 տարի աշխատել է Ներքին գործերի վարչությունում: 3 տարի եղել է Մարտակերտի շրջանային միլիցիայի պետ: 1952-1972թթ. եղել է Մարզային միլիցիայի վարչության պետ (1962թ.-ից Ներքին գործերի վարչություն): 1962թ. ավարտել է Մոսկվայի Ներքին գործերի ակադեմիան: Բազմիցս ընտրվել է գործադիր կոմիտեի, մարզային խորհրդի ժողովրդական պատգամավոր:



ՊՈՂՈՍՅԱՆ ԼՅՈՒՎՄԻԼԱ ԱՐՏԵՄԻ
(1948)



Լյուդմիլա Արտեմի Պողոսյան (Օնուշուկ) (ծնվ.՝ 1948, ք.Ստեփանակերտ՝ մոխրաթաղեցի Արտեմ Խաչատուրի Պողոսյանի և Նինա Ֆրոլովնա Երոշկինայի ընտանիքում), քիմիական գիտությունների թեկնածու (1975), ՌԴ ԳԱ խորհրդի անդամ անալիտիկ քիմիայի և ֆիզիկական քիմիայի բնագավառում, Ռուսաստանի Մենդելեևի անվան քիմիական ընկերակցության ֆիզիկական և կոլոիդային քիմիայի բա-

ժանմունքի նախագահության անդամ, գիտության և տեխնիկայի բնագավառում Գուբեռնսկու անվան մրցանակի դափնեկիր, «Տարվա կին-Սամարա» մրցույթի հաղթող: 1965թ. արժաթե մեդալով ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: Ավարտել է 1971թ. և ընդունվել ասպիրանտուրա: 1975թ. ուղարկվել է Կոյբեշևսկի պետական համալսարան (այժմ՝ Սամարայի Մ.Պ.Կորոլյովի անվան գիտահետազոտական համալսարան)՝ դասախոսական և գիտական աշխատանքի: Ուսումնասիրության բնագավառներն են ֆիզիկական քիմիան և անալիտիկ քրոմոտոգրաֆիան: 1977թ. նշանակվել է Սամարայի համալսարանի ֆիզիկական քիմիայի և քրոմոգրաֆիայի ամբիոնի վարիչ: Կոլլեկտիվի քիմիայի բնագավառում կատարել է մի շարք ուսումնասիրություններ: «Սամարայի տարվա կին» մրցույթի հաղթողն է: Հեղինակել է 340 տպագրված աշխատանք, 40 պատենտ:

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՆԳԻԵՅԻ
(1931-2000)




Հենրիկ Անդրեյի Պողոսյան (ծնվ.՝ 1931, Ստեփանակերտ՝ վանքեցու ընտանիքում - մահ.՝ 2000, Մոսկվա), պետական, քաղաքական գործիչ, Արցախի ազգային-ազատագրական շարժման առաջնորդներից, ԼՂԽՄ մարզկոմի քարտուղար (1988-1991), ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր (1989-1991):

1955թ. ավարտել է Մոսկվայի գյուղատնտեսական մեխանիզացիայի և էլեկտրաֆիկացիայի ինստիտուտը: 1955-1971թթ. ԼՂԽՄ-ում զբաղեցրել է տարբեր պատասխանատու պաշտոններ. 1971-1974թթ. եղել է Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահի առաջին տեղակալ, միաժամանակ՝ ազրոարդյունաբերության կոմիտեի նախագահ: 1988թ. փետրվարին ընտրվել է կոմկուսի ԼՂԽՄ մարզկոմի առաջին քարտուղար, 1989թ.՝ ԼՂ Ազգային խորհրդի անդամ: ԽՍՀՄ ԳԽ նախագահության ԼՂ-ին նվիրված 1988թ. հուլիսի 18-ին նիստում հիմնավորել է Աղբբեջանական ԽՍՀ կազմում ԼՂԽՄ մնալու-անհնարիցությունը. իր ղեկավարման ընթացքում քայլեր ձեռնարկել խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ:



ՊՈՂՈՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՄՈՎՍԵՍԻ
(1956)



Միքայել Մովսեսի Պողոսյան (ծնվ.՝ 1956, Երևան՝ մեծշենացու ընտանիքում), դերասան, սցենարիստ, ռեժիսոր, երգիչ, պրոդյուսեր, ՀՀ ժողովրդական արտիստ (2015):

1971թ. ընդունվել է Երևանի գեղարվեստի ուսումնարանի կերամիկայի բաժինը: 1979թ. ավարտել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի երաժշտական թատրոնի դե-

րասանական ֆակուլտետը: 1976-1991թթ. աշխատել է Երևանի Կամերա-
 յին թատրոնում: 1978-1992թթ. եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի դերա-
 սան, 1982-1994թթ. խաղացել է Համազգային թատրոնում: Հանդես է եկել
 «Պարոնայք, ամեն ինչ կործանվում է, բայց դեռ կարելի է ապրել և զվար-
 ճանալ», «Արալեզ» և այլ ներկայացումներում: 2002թ. Մինսկի «Լիստո-
 պաղ» միջազգային կինոփառատոնում ճանաչվել է լավագույն դերասան:
 2004թ. արժանացել է ArmenianMusicAwards-ի մրցանակին՝ լավագույն
 սկավառակի համար, 2005թ.՝ Արքայազն Զլատուի մրցանակին (Նիդեր-
 լանդներ)՝ երգիծանքի զարգացմանը նպաստելու համար, 2012թ.՝ լավա-
 գույն դերասան («Երևան ջան»)՝ «Հայակ» մրցանակի: Պարզևատրվել է
 ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով (2009), Թեքեյան մշակու-
 թային միության մրցանակով՝ լավագույն երգիծական դերակատարումնե-
 ռի համար (2011): «Եթե բոլորը...» ֆիլմին շնորհվել է Երևանի «Ոսկե ծի-
 րան» ՄԿՓ-ի «Հայկական համայնապատկեր» ծրագրի գլխավոր մրցա-
 նակը (2012): Նույն ֆիլմի գլխավոր դերակատարման համար արժանացել
 է նաև Բուխարեստի ՄԿՓ-ի մրցանակին (2012):



ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱՏԱՆ ԱՄԻՔԱՅԵԼԻ
 (1958)



Նատաշա Միքայելի Պողոսյան (ծնվ.՝ 1958,
 ք. Մարտակերտ), վաստակավոր մանկավարժ:
 Ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնա-
 կարգ դպրոցը: 1978թ. ընդունվել է Ստեփանա-
 կերտի մանկավարժական ինստիտուտի լեզ-
 վագրական ֆակուլտետը: 1982-1985թթ. աշ-
 խատել է Մարտակերտի շրջանային պիոներ-
 ական տանը՝ որպես գեղմասվար, 1985-
 1986թթ.՝ շրջկենտրոնի գիշերօթիկ դպրոցում՝
 որպես դաստիարակչուհի, 1986-1992թթ.՝ Մարտակերտի շրջանային լու-
 սավորության աշխատողների տանը՝ որպես տնօրեն: 1996թ. անցել է աշ-
 խատանքի Մարտակերտի Վ.Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝
 որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Հեղինակել է 3 գիրք:

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԻԿԻՏԱ ԲՈՒՂՂԱՆԻ
 (1953)



Նիկիտա Բուղղանի Պողոսյան (ծնվ.՝ 1953,
 գ.Մեծ Շեն), մաթեմատիկոս, անվանի մանկա-
 վարժ, ԱՊՀ երկրներում մաթեմատիկայի լա-
 վագույն ուսուցիչ:

Ավարտել է Երևանի պետական համալսա-
 րանը: Աշխատում է ԵՊՀ-ին առընթեր Ա.Շա-
 հինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական
 հատուկ դպրոցում:



ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՆԱ ՌԱՖԵԱՅԵԼԻ
 (1966)



Նոնա Ռաֆայելի Պողոսյան (ծնվ.՝ 1966,
 Մոսկվա, արմատներով կուսապատգի Ռաֆիկ
 Արտեմի Պողոսյանի դուստրը), բժշկական գի-
 տությունների թեկնածու, Մոսկվայի Ուռուցքա-
 քանական կենտրոնի առաջատար մասնագետ,
 Ռուսաստանի ուռուցքաքանական ասոցիա-
 ցիայի անդամ:

1992թ. ավարտել է Երևանի պետական բժշ-
 կական ինստիտուտի բուժական ֆակուլտետը:
 1992-1993թթ. փորձուսուցում է անցել «Ստեփանակերտի ծննդատանը»,
 ստացել «մանկաբարձ-գինեկոլոգի» որակավորում: 1994-1996թթ. անցել է
 կլինիկական օրդինատուրա Ի.Մ.Սեչենովի անվան Մոսկվայի Առաջին
 բժշկական համալսարանում՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մաս-
 նագիտությամբ: 2002թ. Ն.Ն.Բլոխինի անվան Ռուսաստանի ուռուցքաքա-
 նության գիտական կենտրոնի գինեկոլոգիայի բաժնում աշխատել է որպես
 գիտաշխատող: Հեղինակել է 37 հրատարակություններ, որոնք տպագրվել
 են ռուսական և արտասահմանյան հանդեսներում:



ՋԱՎԱԳՅԱՆ ԼԵՆԱ ԲԱԳՐԱՏԻ

(1926-1981)

Լենա Բագրատի Ջավադյան (ծնվ.՝ 1926, գ.Գյուլաթաղ -մահ.՝ 1981, Մարտակերտ), խաղողագործուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1981):

1941թ. եղել է բամբակահավաք: Աշխատանքի է անցել Մարտակերտի կուսակցության 22-րդ համագումարի անվան սովխոզում՝ որպես խաղողագործուհի: Պարգևատրվել է «Մուրճ և մանգաղ» ոսկե մեդալով, Լենինի

շքանշանով:



ՋԱՎԱԳՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՍԱՐԳՍԻ

(1946)

Վալերի Սարգսի Ջավադյան (ծնվ.՝ 1946, գ.Մոխրաթաղ), պետական գործիչ:

1953թ. հաճախել է Մոխրաթաղի 7-ամյա դպրոցը, ուսումը շարունակել Մաղավուզի միջնակարգ դպրոցում: 1966թ. անցել է ծառայության Խորհրդային բանակի շարքերում: Ծառայությունն ավարտելուց հետո աշխատել է կոմերիտմիության շրջանային կոմիտեում՝ որպես հրահանգիչ, այնուհետև կուսակցության շրջանային կոմիտեում՝ որպես հրահանգիչ, ապա գյուղբաժնի վարիչ: Հետևյալ կարգով ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը: Կուսակցական կրթություն է ստացել Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցում: Մի քանի տարի աշխատել է որպես շրջովների գործկոմի նախագահի տեղակալ, իսկ վերջին տարիներին՝ որպես նախագահ: Շրջանը թշնամու կողմից գրավելուց հետո տեղափոխվել է Մոսկվա:



ՌԱԶՆՈԳՈՎ ԿԻՐԻԼ ԷՄԻԼԻ

(1946)

Կիրիլ Էմիլի Ռազնոգով (ծնվ.՝ 1946, Մոսկվա, Ալեքսանդր Բեկզադյանի բոռը՝ մայրական կողմից), խորհրդային և ռուսական կինոգետ, արվեստաբան, քննադատ, հաղորդավար, լրագրող, մանկավարժ, արվեստագիտության դոկտոր (1976): ՌԴ կինոգետների և կինոքննադատների մասնագիտացված կազմակերպությունների նախագահ, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ (1996):

1963թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1969թ.՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, իսկ 1984թ.՝ Ներքին առևտրի ակադեմիան: 1969թ. աշխատանքի է անցել ԽՍՀՄ ֆիլմերի Պետական ֆոնդում: 1972թ. դասավանդել է ռեժիսորների և սցենարիստների բարձր կուրսերում: 1977-1988թթ. եղել է Պետֆիլմերի նախարարի խորհրդակալ: 1989-2013թթ. եղել է ՌԴ արվեստագիտության ինստիտուտի տնօրեն, 2013թ.՝ կինոարվեստի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող և համառուսական կինոարվեստի պետական ինստիտուտի պրոֆեսոր: Հեղինակել և վարել է կինոյի թեմայով մի շարք ծրագրեր: Հեղինակել է 14 գիրք, 600 գիտական աշխատանք:



ՍԱՀԱԿՅԱՆ ԱԳՎԱ ՆԵՐՍԵՍԻ

(1925-201.)

Աղյա Ներսեսի Սահակյան (ծնվ.՝ 1925, գ.Գյուլաթաղ (այժմ՝ Վարդաձոր), մահ.՝ 201., Ստեփանակերտ), համաճարակաբան, ՀԽՍՀ, ԼՂՀ վաստակավոր բժիշկ (1981, 2005):

1948թ. ավարտել է Աղբբեջանի պետական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Վերադարձել է Ստեփանակերտ և շուրջ 56 տարի աշխատել Լեռնային Ղարաբաղի տարբեր բու-



ժական հաստատություններում որպես բժշկ-համաճարակաբան: 28 տարի զբաղվել է նաև առողջապահության կազմակերպչական աշխատանքներով, միաժամանակ՝ շուրջ 30 տարի դասավանդել Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում: Այդ տարիների ընթացքում բազմիցս վերապատրաստվել է Մոսկվայում (1954, 1965 և 1979) և Սանկտ-Պետերբուրգում: Ունի բարձր կարգի բժշկի որակավորում: Մշտապես մասնակցել է համամիութենական կոնֆերանսների, գիտաժողովների: 1960-ական թվականներին կոմունիստական կուսակցության ԼՂ մարզային կոմիտեին կից Կանանց խորհրդի նախագահն էր: Բժշկության քննադատում մատուցած ծառայությունների համար արժանացել է «Աշխատանքային արիության համար» մեդալի (1970), «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանի (1971), «Կարմիր խաչ և Կարմիր մահիկ» հասարակական կազմակերպության պատվո նշանի (1976), «Հումանիտար օգնության ծառայության համար» կրծքանշանի, Ն.Ի.Պիրոգովի անվան դիպլոմի և այլ պարգևների: 2005թ.-ից անհատական կարգի թոշակառու էր: Հեղինակել է «19-20-րդ դարերի բժշկության պատմությունը ԼՂ-ում» գիրքը:



ՍԱՀԱԿՅԱՆ ԲՈՐԻԿ ՀԱՅԿԱԶԻ




Բորիկ Հայկազի Սահակյան (ծնվ.՝ գ.Թալիշ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (1975), դոցենտ:

1954-1959թթ. սովորել է Երևանի Խ.Արուսյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում, 1968-1974թթ.՝ Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1960-1962թթ. որպես լաբորանտ աշխատել է ՀՍՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստի-

տուտում: 1962-1966թթ. եղել է ԵՊՀ ասիստենտ, 1966-1979թթ.՝ ավագ դասախոս, 1981-1984թթ.՝ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1993թ.-ից աշխատում է մաթեմատիկական անալիզի ամբիոնում:

ՍԱՀԱԿՅԱՆ ՅՈՒՐԻ ՀԱԿՈՒԻ

(1937-2019)



Յուրի Հակոբի Սահակյան (ծնվ.՝ 1937, գ.Չայլու-մահ.՝ 2019, Երևան), բանաստեղծ-մանկագիր, Հայաստանի գրողների Միության անդամ (1968), ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2012):

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1966թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1971-1973թթ. մասնակցել է Մոսկվայի Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտին կից գրականության բարձրագույն դասընթացներին: Աշխատել է Երևանի հեռուստատեսության ստուդիայում, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրությունում, Հայաստանի գրքասերների ընկերությունում, «Սովետական գրող» և «Արևիկ» հրատարակչություններում: Առաջին բանաստեղծությունը տպագրել է «Սովետական Ղարաբաղ» թերթում: Նրա մի շարք բանաստեղծությունների հիման վրա գրվել են երգեր, ինչպիսիք են՝ «Սա Երևանն է», «Արվա Սևան», «Այլ աչեր», «Շարունակիր ժպտալ», «Չքնեք, տղաներ»: 1999թ. «Այբբենարանի ուղեկից» մանկական բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է ՀՀ «Ոսկե եղեգն» պետական գրական առաջին կարգի մրցանակի:



ՍԱԳՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՈՒԲ

(1957)



Աշոտ Սերոբի Սաղյան (ծնվ.՝ 1957, գ.Չափար), օրգանիկ քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր (1997), պրոֆեսոր (2003), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2013), ՀՀ «Հայկական քիմիական ասոցիացիա» ՀԿ փոխնախագահ, ՀՀ «Կենսատեխնոլոգների հայկական ասոցիացիա»

ՀԿ նախագահ, ՀՀ ԳԱԱ «Հայաստանի քիմիական հանդեսի» գլխավոր խմբագիր, Եվրոպական «Մննդի գիտություն և տեխնոլոգիա» ֆեդերացիայի դեսպան ՀՀ-ում, Եվրոպական Միության Դեկարտի անվան մրցանակակիր (2001): 1978թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1979թ. եղել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, 1986թ.՝ Կենսատեխնոլոգիա ԳՀԻ ամինաթթուների մնանակների և ածանցյալների սինթեզի լաբորատորիայի վարիչ, 2000թ.՝ տնօրեն: Միաժամանակ, 2003թ. ղեկավարել է ԵՊՀ ղեղազորական քիմիայի ամբիոնը: 2001թ. եղել է ՉԺՀ Մինցզյանի մարզի ԳԱ Մանրէաբանության ինստիտուտի գիտական խորհրդատու և ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի լաբորատորիայի հիմնադիր-ղեկավար: Աշխատանքները վերաբերում են ոչ սպիտակուցային ամինաթթուների կենսամնանակման սինթեզի բնագավառին: Սինթեզել է 80-ից ավելի ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք ներառված են արտասահմանյան հայտնի ընկերությունների քարտագրացուցակներում:



ՍԱՂՅԱՆ ԲՈՐԻՍ ՉԻՆԱՎՈՐԻ
(1941)



Բորիս Չինավորի Սաղյան (ծնվ.՝ 1941, գ.Չափար), ըմբիչ, մանկավարժ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ըմբշամարտի տեսության և մեթոդիկայի մասնագետ, մանկավարժական գիտությունների դոկտոր (1991), պրոֆեսոր (2002), ՀՀ մանկավարժական ակադեմիայի անդամ (1997), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1962), ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող (2001):

1965թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1973թ.-ից աշխատում է ՖԿՀՊԻ-ում, 1989թ.-ից՝ ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ՀՀ ազգաբնակչության ֆիզիկական զարգացման և պատրաստման հիմնահարցերին, տարբեր քաշային ըմբիչների ֆիզիկական պատրաստության խմբային առանձնահատկություններին:

ՍԱՂՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՌՈՒՔԵՆԻ
(1925-1996)

Սուրեն Ռուքենի Սաղյան (ծնվ.՝ 1925, գ.Չափար, Գորիսի գավառի Հարար գյուղից գաղթած Սաղյանների ընտանիքում), վաստակավոր մանկավարժ:

Չափարի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մեկնել է ռազմաճակատ: Բանակում ծառայել է ավելի քան 6 տարի: 1947-1951թթ. սովորել է Խ.Արթուրյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: Բուհն ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի է անցել ՀՀ Մարտունի քաղաքի դպրոցում: 1954թ. աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Հաքերքի դպրոցում: 1995-1996թթ. աշխատել է Չափարի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, փոխտնօրեն:



ՍԱՄՎԵԼՅԱՆ ԱՐԿԱԳԻ ԼԵՎՈՆԻ
(1937-2006)

Արկաղի Լևոնի Սամվելյան (ծնվ.՝ 1937, գ.Չղրդան - մահ.՝ 2006, Երևան), քիմիական գիտությունների թեկնածու (1967), դոցենտ (1973):

Գերազանցությամբ ավարտել է տեղի դպրոցը: 1956թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը, այնուհետև տեղափոխվել քիմիական ֆակուլտետ՝ ֆիզիկական քիմիա մասնագիտությամբ: Նախադիպլոմային փորձուսուցումն անցել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում՝ կատարելով իր առաջին լուրջ հետազոտությունները պոլիմերների քիմիայի բնագավառում: Աշխատանքի է անցել ՀՀ նորաստեղծ պրոբլեմային հետազոտությունների լաբորատորիայում՝ որպես ավագ լաբորանտ, ավելի ուշ՝ կրտսեր գիտաշխատող: 1969թ.-ից աշխատել է որպես ասիստենտ, ապա ավագ դասախոս: 1975թ. նշանակվել է Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտի բնական գիտությունների ամբիոնի վարիչ, այնուհետև՝ շուկայագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ: Հեղինակել է բազմաթիվ գիտական և մանկավարժական հոդվածներ:



ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ ՎԱԼԵՐԻԻ

(1984)

Անյուտա Վալերիի Սարգսյան (ծնվ.՝ 1984, ք. Մարտակերտ), տեխնիկական գիտությունների թեկնածու (2015):

2000թ. ավարտել է Մարտակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 2000-2007թթ. սովորել է Արցախի պետական համալսարանի քիմիայի և կենսաբանության ֆակուլտետում՝ անօրգանական նյութերի տեխնոլոգի մասնագիտությամբ: 2003-2008թթ. աշխատել է Դրմբունի միջ-

նակարգ դպրոցում՝ որպես քիմիայի ուսուցչուհի, 2008-2010թթ.՝ Գրիգոր Նարեկացի համալսարանում՝ որպես դասախոս: 2009-2014թթ. եղել է Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատող: 2016թ.-ից զբաղեցրել է Արցախի գիտական կենտրոնի գիտության գծով փոխտնօրենի պաշտոնը, 2020թ. նշանակվել Արցախի գիտական կենտրոնի տնօրեն: Հեղինակել է մի շարք գիտական աշխատանքներ (հոդվածներ, նաև՝ համահեղինակ 1 մեծագրության):



ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՋԻՎԱՆՇԻՐԻ

(1948-2015)



Արարատ Ջիվանշիրի Սարգսյան (ծնվ.՝ 1948, ք.Մարտակերտ - մահ՝ 2015, ք. Ստեփանակերտ), դասախոս, դոցենտ:

1966թ. ավարտել է Մարտակերտի 11-ամյա դպրոցը: 1966-1970թթ. սովորել է Աղյբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում: Աշխատանքի է անցել Ստեփանակերտի պետական մանկավարժական ինս-

տիտուտում՝ նախ որպես ֆիզիկայի լաբորատորիայի ավագ լաբորանտ, 1972թ.-ից՝ ֆիզիկայի ամբիոնի դասախոս: 1980-1982թթ. աշխատել է որ-

պես ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1989-1990թթ.՝ ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1990-1995թթ.՝ նույն ֆակուլտետի դեկան: 1998-2001թթ. դասախոսական աշխատանքին զուգահեռ եղել է վարժարանի տնօրեն: 2001թ.-ից դասախոսել է ֆիզիկայի ամբիոնում: Հեղինակել է 40-ից ավելի գիտա-մանկավարժական աշխատանքներ և 4 գիտա-մեթոդական ձեռնարկներ:



ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԵՄ ՏԱՆԻԵԼԻ

(1914-1982)

Արտեմ Տանիելի Սարգսյան (ծնվ. 1914, Մարտակերտ - մահ՝ 1982, Մարտակերտ), պետական գործիչ:

1940-1950թթ. ընտրվել է Շուշիի, Մարտակերտի կուսըջկոմների երկրորդ քարտուղար: Մինչև 1959թ. եղել է Մարտակերտի կոլտնտեսության նախագահ, այնուհետև Վաղոտասի, Վ. Հոռաթաղի, Ղազանչիի, Ջանյաթաղի, Մարտակերտի թիվ 2 դպրոցների տնօրենը: 1950-ական թվականներին հեռակա կարգով սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտում: Նրա նախագահության տարիներին Երևանից երգչախմբեր էին ժամանում Մարտակերտ (գուսան Աշոտ, Լուսիկ Քոչյան, Օֆելյա Համբարձումյան, Արև Բաղդասարյան), ինչն այն ժամանակ հազվադեպ երևույթ էր:



ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՇԱՀԵՆԻ

(1970)



Կարինե Շահենի Սարգսյան (ծնվ.՝ 1970, գ.Լենինավան), կենսաբանական գիտությունների թեկնածու (2003), դոցենտ (2010):

Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1987-1988թթ. որպես լաբորանտ աշխատել է Ղարաթաղի գիտափորձարարական բազայում: 1993թ. գերազանցությամբ ավարտել է

Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետը, 1999թթ.՝ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի ասպիրանտուրան: 1994-1999թթ. որպես լաբորանտ աշխատել է ՀԳԱ բուսաբանության, ապա՝ ընդհանուր կենսաբանության ամբիոններում: 1999-2009թթ. եղել է ՀՊԱՀ ագրոէկոլոգիայի ամբիոնի ասիստենտ, դասախոս, 2007-2011թթ.՝ ՀՊԱՀ ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2004թ. TEMPUS (Tacis) ծրագրի շրջանակներում վերապատրաստվել է Գ-Գ-Հ-ի Հոնոնհայմի համալսարանում:

Հեղինակել է 39 գիտական աշխատություններ և մեթոդական աշխատանքներ, 1 մենագրություն, համահեղինակ է մեկ ուսումնական ձեռնարկի և մեկ դասագրքի: Գիտական հետազոտությունները վերաբերում են բնապահպանական և էկոլոգիական բնույթի հիմնախնդիրներին: Գիտական զեկուցումներով հանդես է եկել Երևանում, Վրաստանում, Ռուսաստանում (Կազանում, Բառնաուլում), Ուկրաինայում (Բելալա Ցերկով):



ՍԱՐԳՍՅԱՆ ՌԱՍԻՄ ԳԵԴԵՈՆԻ

(1937)

Ռ-ասիմ Գեդեոնի Սարգսյան (ծնվ.՝ 1937, Մեծ Շեն), ագրոքիմիկ, հողագետ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու (1973):

1965թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործա-պտղա բանջարաբուստանային ֆակուլտետը՝ այգեգործ, պտղաբույծի մասնագիտությամբ: Աշխատում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ազգային ինստիտուտի հողագիտության և ագրոքիմիական ինստիտուտում:




ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՍԱՆՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ

(1939-2015)

Ռոմանոս Մարտիրոսի Սարգսյան (ծնվ.՝ 1939, գ.Թալիշ - մահ.՝ 2015, Երևան), բանաստեղծ, գրականագետ, մշակութաբան, բանասիրական գիտությունների թեկնածու (1977), պրոֆեսոր:

1966թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1988-1990թթ. եղել է արտասահմանյան քաղաքացիների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության, 1999-2003թթ.՝ «Գալիք» համալսարանի հայոց, ռուսաց լեզուների և գրականության ամբիոնների վարիչ, 2001թ.՝ ԵԹԿՊԻ դոցենտ: Հեղինակել է «Գարնանային առասպել» (1974), «Արվեստ քերթության» (1992), «Տիեզերական համանվագ» (1997), «Երկրային ճամփորդ հավերժի ճամփին» (2001) բանաստեղծությունների ժողովածուները, «Բալլադ հերոսական» (2006) պոեմը (Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի ոսկե հուշամեդալ, 2006): Արվեստաբանությանն են նվիրված «Ժամանակակից հայ պոեմի տիպաբանությունը», «Գեղագիտական հիմնական կատեգորիաները» ուսումնասիրությունները:



ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՃԻԿ ՀԱԿՈՒԻ

(1953)

Սերժիկ Հակոբի Սարգսյան (ծնվ.՝ 1953, գ.Մեծ Շեն), քիմիական գիտությունների դոկտոր (1996), պրոֆեսոր (2008):

1970-1975թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում, 1978-1981թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Ա.Ֆրումկինի անվ. էլեկտրաքիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1976թ. աշխատանքի է անցել



ՀԽՍՀ Նորր օրգանական քիմիայի ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ: 1982թ. եղել է ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1984թ.՝ ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող և «Օրգանական էլեկտրասինթեզ» խմբի ղեկավար: 1993-2004թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի քեմատիկ խումբը: 1998թ.-ից աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում: 2012թ. եղել է ՀՊՃՀ «ՋԷ և ՇՄՊ» ամբիոնի վարիչի, ապա «Բնապահպանություն և կենսատեխնոլոգիա» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: 2012թ. նշանակվել է «Բնապահպանություն և կենսատեխնոլոգիա» ամբիոնի վարիչ, 2016թ.՝ ՀԱՊՀ «Բնապահպանության և կենսագործունեության անվտանգություն» սեկտորի վարիչ: Հեղինակել է 140 գիտական և 12 գիտատեսական աշխատանքներ, այդ թվում՝ 2 դասագիրք, 4 ուսումնական ձեռնարկ, 6 լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներ:



ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՀԱՆԻ

(1930-1991)

Արմեն Վահանի Սարուխանյան (ծնվ.՝ 1930, ք.Սամարղանդ (Ուզբեկստան))՝ ծնակահողեցու ընտանիքում (Իգոր Սարուխանովի հայրը) - մահ.՝ 1991, Մոսկվա), գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Ա.Սարուխանյանի հայրը՝ մեծահարուստ Վահան Սարուխանյանը զբաղվում էր հացահատիկի արտադրությամբ, փայտամշակմամբ և քարերի մշակմամբ, ուներ ֆաբրիկաներ և գործարաններ: Ջրաղվում էր բարեգործությամբ: 1921-1922թթ. Վուլգայի շրջանի սովահարության ժամանակ իր գործարաններից գնացքներով հացահատիկ է ուղարկել սովյալներին: Ջանգվածային ռեպրեսիաների ժամանակ, ձերբակալումից և գնդակահարությունից խուսափելու համար, ոչնչացրել է բոլոր փաստաթղթերը և հրաժարվել իր սեփականությունից: 1960թ. Ա.Սարուխանյանի ընտանիքը Սամարղանդից տեղափոխվում է Մոսկվա՝ գիտական աշխատանքով զբաղվելու համար: Դասավանդել է Մոսկվայի տեխնիկական բարձրագույն ուսումնարանում:



ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

(1956)



Իգոր Արմենի Սարուխանով (ծնվ.՝ 1956, Սամարղանդ (Ուզբեկստան), արձատներով Ծնակահող գյուղից Արմեն Սարուխանյանի որդին), ՌԴ վաստակավոր արտիստ, գրողների միության անդամ, երգիչ, բանաստեղծ, կոմպոզիտոր:

1960թ. հայրը գիտական թեզի պաշտպանության համար ընտանիքի հետ տեղափոխվել է Մոսկվա: Ավարտել է Դոկտայրուդնոյի դասական կիթառի N1 դասարանը: 1979թ. ներգրավվել է «Կապույտ թռչուն», այնտեղից «Ծաղիկներ» խմբերում, աշխատել մինչև 1981թ.: Նույն թվականին ստեղծել է «Կրուգ» խումբը, որը գործել է մինչև 1984թ.: 1985թ.-ից սկսել է մենակատարի կարիերան: 1986թ. թողարկել է առաջին ձայնասկավառակը: Որպես պոետ և կոմպոզիտոր համագործակցում է տարբեր խմբերի և արտիստների հետ:



ՍԱՆԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԻ

(1898-1975)

Սարգիս Համբարձումի Սաֆարյան (ծնվ.՝ 1898, գ.Վանք - մահ.՝ 1975, Երևան), նկարիչ, հայ կինոնկարչության հիմնադիրներից, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1965):

1926թ. ավարտել է Բաքվի նկարչական ստուդիան: 1928թ. հրավիրվել է Երևան, աշխատել որպես «Հայկինո»-յի նկարիչ, ապա՝ տնօրեն, նպաստել ստուդիայի նկարիչ քեմադրական բաժնի ստեղծմանը: Չլավորել է շուրջ 20 ֆիլմ՝ «Պեպո» (1935, Միքայել Արուտչյանի, Վ. Միրոնոն-Էրիստովի հետ), «Լեռնային հեղեղ» (1939), «Անահիտ» (1947, Ալեքսեյ Դանդուրյանի, Յու. Շվեցի հետ), «Պատվի համար» (1956, Սերգեյ Արուտչյանի հետ), «Մոր սիրտը» (1957, Հ. Մեքինյանի հետ), «Նվագախմբի տղաները» (1961, Ա.Ա.Արուտչյանի հետ) և այլն:



ՍԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԻ

(1923-1988)

Սուրեն Սարգսի Մաֆարյան (ծնվ.՝ 1923, Բաքու - մահ.՝ 1988, Երևան) (Վանք գյուղից ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Սարգիս Մաֆարյանի որդին), նկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1977), պրոֆեսոր (1978):

1942թ. ավարտել է Երևանի գեղարվեստի ուսումնարանը, 1952թ.՝ Երևանի գեղարվեստի ինստիտուտը: 1962թ. դասավանդել է ԵԳԹԻ-ում: 1969-1982թթ. եղել է Հայաստանի նկարիչ-

ների միության նախագահ: Առաջին շրջանի գործերը կրել են Հայրենական պատերազմի մասնակից նկարչի վերնուշ-տպավորությունների կնիքը («Հայրենի մեղեդիներ», 1956): Պատերազմի թեման արտահայտվել է Մաֆարյանի ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում («Ազատարարները» 1960, «1945 թվականի գարնանը», 1964, նշված երեք աշխատանքի համար պարզևատրվել է Վ. Գրեկովի անվան արծաթե մեդալով, 1971, «Կառնկներ», 1979): 1960-ական թվականների վերջերից ավելի հաճախ է անդրադարձել մարդու և ժամանակի, ընդհանրապես հայ ժողովրդի պատմական ճակատագրի թեմային՝ «Հանուն գալիքի» (1960), «Սայաթ-Նովա» (1963) և այլն: Ստեղծել է մասնադիմանկարներ, բնանկարներ, արտասահմանյան ճանապարհորդությունների թեմաներով գեղանկարչական և գրաֆիկական գործեր, կատարել գրքերի ձևավորումներ: Մասնակցել է ցուցահանդեսների, անհատական՝ Էջմիածնում (1969), Լենինականում, Դիլիջանում (1970), Մոսկվայում (1981), Սիրիայում (1982): Մաֆարյանի մի շարք գործեր պահվում են ՀԱՊ-ում, Տրետյակովյան պատկերասրահում, Մոսկվայի Արևելյան ժողովուրդների արվեստի թանգարանում: 1971-1975թթ. և 1980-1985թթ. եղել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր:



ՄԻՄՈՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՆՇԻ

(1916-1995)



Խաչատուր Բախշիի Միմոնյան (ծնվ.՝ 1916, Մարտակերտ - մահ.՝ 1995, ք.Երևան), գնդապետ:

1941-1945թթ. եղել է սպա: 1950թ. նշանակվել է Լենինականի զինվորական կոմիսար: Դասախոսել է Երևանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1970-1980թթ. ՀՀ հեռուստատեսությամբ վարել է «Մարդը և օրենքը» հաղորդաշարը: Նրա մարտական ուղու մասին ակնարկներ են տպագրվել միութենական մամուլում, «Որդու վերադարձը» գրքում: Որդին՝ Լևոն Միմոնյանը, դասախոսում էր Երևանի պետհամալսարանի ֆիզմաթ ֆակուլտետում, հրավերներ էր ստանում արտասահմանյան գիտական կենտրոններից: Լավ տիրապետում էր անգլերենին: Հանկարծամահ է եղել:



ՄՏԵՓԱՆՅԱՆ ՎՈՒՈԳՅԱ ՌԱՖԱՅԵԼԻ

(1948)



Վուլոդյա Ռաֆայելի Մտեփանյան (ծնվ.՝ 1948, ք.Մարտակերտ), ԼՂՀ ներքին գործերի համակարգի գնդապետ, ԼՂՀ գրողների միության անդամ, Հայաստանի Գրողների միության անդամ (2001), Արցախի իրավապաշտպանների ասոցիացիայի անդամ:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է ԼՂՀ Ներքին գործերի համակարգում: Մասնակցել է Արցախյան ազատամարտին: Տպագրվել է Արցախի մամուլում, ՀՀ ներքին գործերի նախարարության «02» շաբաթաթերթում: Հեղինակել է «Թմրամոլի ճակատագիրը» (1993), «Մեր և արյուն» (1994), «Անավարտ կենսագրություն» (1996), «Ուշացած գղջում» (2001) և այլ ստեղծագործություններ: Արժանացել է մի շարք մեդալների:



ՎԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐԻ
(1954)

Միքայել Գրիգորի (Գրիշայի) Վանյան (ծնվ.՝ 1954, Հաթերք), բժշկական գիտությունների թեկնածու (2007):

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1976թ.՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը՝ մերոպոթոլոգի մասնագիտությամբ: Նույն թվականին աշխատանքի է ընդունվել Հայաստանի Ալավերդու շրջանի Օձուն և Ախթալա գյուղերի հիվանդանոցներում՝ որպես գլխավոր բժիշկ և ներոպոթոլոգ, իսկ հետո նշանակվել Կալինինո քաղաքի հիվանդանոցի գլխավոր բժիշկ և ներոպոթոլոգ: 1992թ. կամավոր վերադարձել է հայրենիք, անդամագրվել ինքնապաշտպանական ջոկատին, միաժամանակ աշխատանքի անցել գյուղի տեղամասային հիվանդանոցում, որպես ներոպոթոլոգ, մկիրվել ազատամարտիկների և բնակչության առողջության պահպանման գործին: Գյուղի տեղահանությունից հետո որոշ ժամանակ ապրել է Ստեփանակերտում, այնուհետև տեղափոխվել Հայաստան և աշխատանքի ընդունվել ՀՀ Արագածոտնի մարզի հիվանդանոցում, որպես գլխավոր բժիշկ:

1993թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից տեղափոխվել է Երևան՝ Սոցապնախարարություն և աշխատանքի ընդունվել որպես բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալության պետ, որտեղ աշխատել է մինչև 2013թ.: 2013թ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովում՝ որպես իրավախորհրդատու: 2014թ.-ից աշխատում է Մեծամորի հիվանդանոցում որպես գլխավոր բժիշկ:



ՎԱՆՅԱՆ ՀՈՄԵՐ ՌՈՒԲԵՆԻ
(1938-2018)



Հոմեր Ռուբենի Վանյան (ծնվ.՝ 1938, գ.Կոնողոտ - մահ.՝ 2018, Ստեփանակերտ), բանասեր, թարգմանիչ, լրագրող, ԽՍՀՄ (1991), ԼՂԻՄ (1991) և Արցախի ժուռնալիստների միությունների անդամ:

1963թ. ավարտել է Աղբրեջանի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը և ստացել պատմության, հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում: 1956-1958թթ. աշխատել է Մարտակերտի ՄՏԿ-ում, 1963-1966թթ.՝ Մարտակերտի շրջանի Գյուլաքաղ, Կուսապատ և Մարաղա գյուղերի դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1964-1965թթ.՝ Ասկերանի շրջանի Սզնեք գյուղի 8-ամյա դպրոցում: 1965-1967թթ. եղել է ԼՂԻՄ պատմաերկրագիտական թանգարանի գիտաշխատող, ավագ գիտաշխատող, 1967-1988թթ.՝ ԼՂԻՄ ռադիոհաղորդումների պետական կոմիտեում՝ որպես ռադիոհաղորդավար, խմբագիր, ավագ խմբագիր, 1988-1995թթ.՝ գրական-գեղարվեստական հեռուստահաղորդումների, տեղեկատվության խմբագրության խմբագիր, 1993-2006թթ.՝ «Մարտիկ» թերթի խմբագրությունում՝ որպես թարգմանիչ, խմբագրի տեղակալ, թրքակից, սրբագրիչ:





ՏԵՐ-ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՄՈՎՍԵՍԻ

(1925-1995)

Գեորգի Մովսեսի Տեր-Եղիազարյան (ծնվ.՝ 1925, ք.Մարտակերտ - մահ.՝ 1995, ք.Մոսկվա), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Աշխատել է Մոսկվայի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտական կենտրոնում (ՑԻՏ-Օ):



ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՐԳԱՆ ՀՈՒՄԻԿԻ

(1878-1968)

Վարդան Հումիկի Տեր-Սահակյան (ծնվ.՝ 1878, գ.Գյուլաթաղ), հոգևորական:

Սկզբնական կրթությունը ստացել է Կուսապատի հնգամյա դպրոցում: 1896-1901թթ. սովորել է Շուշիի քննական դպրոցում: 1901-1904թթ. դասավանդել է Ճանկաթաղի դպրոցում: Խրիմյան Հայրիկի կողմից հայրենի գյուղում ձեռնադրվել է քահանա: Նույն թվականին հրավիրվել է ք.Գրոզնի, շուրջ 25 տարի եղել հոգևորական և ուսուցիչ, դասավանդել ռեալական և կանանց գիմնազիաներում: Գրոզնիում կազմակերպել է տեղական բարեգործական միություն և աղքատներին ապաստան տալու հանձնաժողով: Ծխական դպրոցի համար ստեղծել է գրադարան, որտեղ սովորել են 250 աշակերտ: 1929թ. տեղափոխվել է Բաքու՝ որպես ծխական քահանա, միաժամանակ, մինչև 1945թ. դասավանդել Բաքվի հայկական ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1952թ. ստացել է վեդար և նշանակվել Թիֆլիսի ս.Գևորգ եկեղեցու վանահայր (1952-1954): 1954թ. նշանակվել է Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի միավորված թեմի առաջնորդ, այնուհետև՝ ծայրագույն վարդապետ:



պետ: Վազգեն 1-ին կաթողիկոսի կողմից ձեռնադրվել է գլխավոր վարդապետ: Ստացել է եպիսկոպոսի աստիճան, Գերագույն հոգևոր խորհրդի կողմից նշանակվել Վրաստանի հայկական թեմի առաջնորդ՝ մինչև 1956թ.: 1962թ. անցել է թոշակի: Կյանքի վերջին տարիներն ապրել է և Էջմիածնում, և Բաքվում՝ հարազատների մոտ:



ՔՈՉԱՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ՍՈՒՐԵՆԻ

(1949)

Կառլեն Սուրենի Քոչարյան (ծնվ.՝ 1949, գ.Ներքին Հոռաթաղ), ծառաբանության, կանաչապատման, լանդշաֆտային դիզայնի և գեղագարդիչ այգեգործության մասնագետ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր (2000), պրոֆեսոր (2002), Մոսկվայի Կ.Ա. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսության (2002), Ռուսաստանի քաղաքային (2004), էկոլոգիայի և քնապահպանության միջազգային (2004) ակադեմիաների, ՌԴ ԲԳԱ (2003) անդամ:



1971թ. ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտը: 1972-1979թթ. եղել է Երևանի Օրջոնիկիձեի շրջգործկոմի, 1981-1996թթ.՝ Երբաղխորհրդի գործկոմի, 1981-1996թթ.՝ ՀՀ բնակարանային-կոմունալ տնտեսության նախարարության գլխավոր ծառաբան, 1996-1999թթ.՝ «Մուլեսուպարկ» կառավարման տարածքային արտադրական միավորման Մոսկվայի կանաչ ծառատունկերի մոնիթորինգի բաժնի վարիչ: 1999թ.-ից ղեկավարել է Մոսկվայի կառավարման «Քաղկանաչունտ N07» ձեռնարկությունը: 2001թ. նշանակվել է Մոսկվայի էկոլոգիայի և բնօգտագործման ակադեմիայի ֆլորայի բաժանմունքի նախագահ: Աշխատանքները վերաբերում են կանաչապատման էկոլոգիաանտառագիտության խնդիրներին: Հեղինակել է մի շարք կատալոգ-տեղեկատուներ:





ՕՂԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ՍԵՐԳԵՅԻ

(1969)

Գագիկ Սերգեյի Օհանյան (ծնվ.՝ 1969, գ.Հաթերք), բժշկական գիտությունների թեկնածու (2006), «Մարտակերտի Ռ.Բազիյանի անվան շրջանային բուժմիավորում» ՓԲԸ-ի տնօրեն (2007թ.-ից)։

1986թ. ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը։ 1988-1989թթ. ծառայել է խորհրդային բանակում։ 1994թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը։ 1992-

1994թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է Մարտակերտի շրջանային հիվանդանոցում։ 1994-1997թթ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում։ Եղել է 5-րդ պաշտպանական շրջանի բուժժառայության պետ, 1998-2000թթ.՝ Մարտակերտի շրջհիվանդանոցի վիրաբույժ և վիրաբուժական բաժանմունքի վարիչ։ 2000-2003թթ. ավարտել է ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի «Նեղ վիրաբուժական մասնագիտությունների» ամբիոնի կլինիկական օրդինատուրան և ստացել բժիշկ-ընդհանուր վիրաբույժի որակավորում։ 2010թ. ընտրվել է ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր։ Եղել է «Արցախատուն» պատգամավորական խմբի, ինչպես նաև սոցիալական ոլորտի հարցերի (2012թ.-ից՝ սոցիալական և առողջապահության հարցերի) մշտական հանձնաժողովի անդամ։



ՕՂԱՆՅԱՆ ՇՈՒՐԱ ՍՈՒՐԵՆԻ

(1949)

Շուրա Սուրենի Օհանյան (ծնվ.՝ 1949թ, գ.Թալիշ), 3-րդ դասի դատավոր, վաստակավոր իրավաբան։

1969-1970թթ. աշխատել է Հայաստանի Արմյան քաղաքի կիսահաղորդիչների գործարանում։ 1970-1976թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ հեռակա, միաժամանակ, աշխատել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարանում։ 1977-1979թթ. աշխատել է ԼՂ մարզպառնությունում որպես ավագ իրավախորհրդատու։ 1979-1994թթ. եղել է Ստեփանակերտի քաղժողդատարանի դատավոր, 1994-1995թթ.՝ Ստեփանակերտի քաղվարչակազմի իրավախորհրդատու, 1995-1996թթ.՝ ԼՂՀ արդարադատության պետվարչության գլխավոր խորհրդական, 1996-2001թթ.՝ ԼՂՀ Գլխավոր դատախազության կարևորագույն գործերով ավագ քննիչ։ 2002թ. նշանակվել է ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր։ 1994թ.-ից դասավանդում է Արցախի պետական համալսարանում։ Ակտիվորեն մասնակցել է 1988-1994թթ. Արցախյան ազատագրական շարժմանը։ Աշխատելով սաֆոնդյան ռեժիմի պայմաններում՝ նրա նախագահությամբ բեկանվել են շարժման լիդերներին դատական պատասխանատվության ենթարկելու մասին բազմաթիվ անօրեն որոշումներ։ 1992թ. հուլիսի 10-ին Օհանյանի նախագահությամբ կայացվել է արդարացնող առաջին դատավճիռը՝ հօգուտ ԼՂՀ-ի։ 1990թ. արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքի վետերան» մեդալի։ Պարգևատրվել է «Մայրական երախտագիտության Արցախի քաջորդիներին» հուշամեդալով (2009թ.)։ 2009թ. Միրվարդ Մարգարյանի հեղինակությամբ լույս է տեսել Շ. Օհանյանի 60-ամյակին նվիրված «Արդար դատիր՝ արդար կդատվես» փաստավավերագրական գիրքը։





ՕՂՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄՈՒՎԻ

(1945-2020)

Մերգեյ Մռավի Օհանյան (ծնվ.՝ 1945, գ.Հաթերք- մահ.՝ 2020, Մարտակերտ), ԼՂՀ վաստակավոր բժիշկ:

1963թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1963-1969թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում: Նշանակումով աշխատել է Կապանի շրջանի Արծվանիկի տեղամասային հիվանդանոցում՝ որպես գլխավոր բժիշկ և վիրաբույժ:

1970-1977թթ. եղել է Մարտակերտի շրջանի Լենինավանի տեղամասային հիվանդանոցի գլխավոր բժիշկ և վիրաբույժ, 1977-1980թթ.՝ Մարտակերտի շրջանային հիվանդանոցի վիրաբույժ, տնօրենի բուժական գծով տեղակալ, 1986-2007թթ.՝ Մարտակերտի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ, տնօրեն: 1988թ. սկզբից եղել է Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից, շրջանի ինքնապաշտպանության շտաբի անդամ: 2000-2005թթ. եղել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր: Հաթերքում ստեղծել է հիմնադրամ, հայրենակիցների համատեղ ուժերով կառուցել արցախյան պատերազմում զոհված հաթերքցի ազատամարտիկների հուշահամալիր: 2007-2010թթ. եղել է Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար, 2011թ.-ից՝ Մարտակերտի շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժնի վարիչ:



ՕՂՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

(1878-)

Տիգրան Օհանյան (ծնվ.՝ 1878, գ.Թալիշ), գյուտարար, մեքենավար:

Ապրել է Թուրքմենիայում, 12 տարեկանից զբաղվել է այնպիսի միջոցների ստեղծմամբ, որոնք պիտի կանխեն երկաթգծերի խափանումներն ու վթարները: 1928թ. ստեղծել է մեխանիզմ, որը առանց մեքենավարի միջամտության՝ ավտոմատ կերպով կանգնեցվում է երկաթուղին, երբ առաջանում են վթարային պահեր:

ՕՂՆՁԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՎՐՈՒՇԱՅԻ

(1968)



Աշոտ Գավրուշայի Օհանջանյան (ծնվ.՝ 1968, գ.Հաթերք), աֆղանական պատերազմի մասնակից, ազատամարտիկ:

1978թ. ավարտել է Հաթերքի միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել Երևանի ֆիզկուլտուրայի տեխնիկումը: 1986թ. գորակոչվել է Խորհրդային բանակի շարքերը և 1986-1988թթ. ծառայել Աֆղանստանում: Աշոտը (Դուշման)

մարտնչել է Հաթերքի, Աղդաբանի, Օմարի և «Պուշկեն- Յալ» բարձունքների, Մատաղիսի, Թալիշի, Լյուլասագի, Մալականների, Մաղավուզի և մյուս գյուղերի ազատագրման համար մղված մարտերում: Պատերազմից հետո տեղափոխվել է Վոլգոգրադ և ծառայության անցել տանկային զումարտակում որպես տանկային բրիգադի հրամանատար և աչքի ընկել իր քաջագործություններով Չեչնիայում: Աֆղանստանում ծառայելու տարիներին մարտերում ցուցաբերած արիության համար 1988թ. մայիսին Աֆղանստանի նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Աֆղանական ժողովրդի կողմից ինտերնացիոնալիստ մարտիկին» մեդալով: 1988թ. դեկտեմբերի 28-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով պարգևատրվել է «Ինտերնացիոնալ մարտիկ» պատվոգրով, 1989թ. մայիսի 9-ին՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով՝ «ԽՍՀՄ Ջինված ուժերի յոթանասուն տարի» հորեյանական մեդալով:





ՕՂԱՆՁԱՆՅԱՆ ՊԵՏԻԿ ՍԵՐՊԵՅԻ

(1959 -)

Գագիկ Սերգեյի Օհանջանյան (ծնվ.՝ 1959, գ. Հաթերք), տեխնիկական գիտությունների թեկնածու (1988), ՌԴ բնական գիտությունների պրոֆեսոր (2016), ՌԴ բնական գիտությունների գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (2015), ՌԴ բնական գիտությունների գիտության և կրթության վաստակավոր գործիչ (2016), գրող, ՌԴ գրողների միության անդամ, Եվրասիական ստեղծագործական գիլդիայի անդամ (Լոնդոն), բազմաթիվ համառոտական և միջազգային գրական մրցույթների մրցանակակիր: 1976թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1976-1981թթ. սովորել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետա-շինարարական ֆակուլտետում: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԽՍՀ պետական-շինարարության և ճարտարապետության գիտահետազոտական ինստիտուտում: 1983թ. ընդունվել է ԽՍՀՄ պետական շինարարության Մոսկվայի ԳՀԻ: Դասավանդում է Մոսկվայի պետական շինարարական համալսարանում և հանդիսանում է շինարարական նորարարությունների բնագավառում թեմաների ղեկավար: 1989թ. ղեկավարում է ձեռնարկատիրական գործունեություն՝ շինարարության և շինարարության նախագծման նորարարությունների ոլորտում: Հանդիսանում է «Մոնո-Ստրոյ» ԲԲԸ գլխավոր տնօրենը: Ընկերությունը մասնակցել է Մոսկվայի և Մոսկվայի մարզի բազմաթիվ շենքերի և շինությունների կառուցմանը: Դրանցից են՝ Մոսկվայի պետական համալսարանի Լոնոնոսովի անվան գրադարանը, «Մեզասպորտ» սառցե պալատը և այլ կառույցներ: Ի՞նչ Ժանի գրական անվամբ հեղինակել է բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք տպագրվում են «Проза» Ռուսաստանի գրողների միության կալքեջում: «Արաբադյան գամբիտ» գրքի համար բազմաթիվ գրական փառատոններում հաղթող է ճանաչվել:



ՕՂԱՆՁԱՆՅԱՆ ՇԱՀԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ

(1931-1985)

Շահեն Նիկոլայի Օհանջանյան (ծնվ.՝ 1931, Մարտակերտ - մահ.՝ 1985, Մարտակերտ), լրագրող, բանաստեղծ, արձակագիր, բանասիրական գիտությունների թեկնածու: Ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականություն բաժնում: Հետագայում, աշխատանքին զուգընթաց, հեռակա կարգով սովորել և ավարտել է ասպիրանտուրան: 1954թ. անցել է աշխատանքի Լեհինավանի դպրոցում՝ որպես հայոց լեզվի ուսուցիչ: 1955թ. տեղափոխվել է Մարտակերտ: 1961-1969թթ. եղել է թիվ 1 դպրոցի տնօրեն: 1969թ. նշանակվել է շրջժողկրթբաժնի վարիչ: Հեղինակել է «Վերելքի ճանապարհին» և «Որոնողները» գրքերը, բազմաթիվ ակնարկներ և հոդվածներ: Պարգևատրվել է շքանշաններով և պատվոգրերով:



ՕՂԱՆՁԱՆՅԱՆ ՍԵՂՈՒԿ ԿԱՐԱՊԵՏԻ

(1924-1985)

Սեդրակ Կարապետի Օհանջանյան (ծնվ.՝ 1924, Մարտակերտ - մահ.՝ 1985, Մարտակերտ), մանկավարժ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ: Սովորել է Մարտակերտի թիվ 1 դպրոցում: Արտակարգ ընդունակություններ ունենալու համար 9-10-րդ դասարաններում սովորելու տարիներին, միաժամանակ մաթեմատիկա է



դասավանդել նույն դպրոցի ցածր դասարաններում: 1950թ. ավարտել է Մտեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետի հեռակա բաժինը: 1957թ. դասավանդելուց զուգահեռ, հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Շրջանի մաթեմատիկայի ուսուցիչների մեթոդական, մասնագիտական որակավորման գործընթացում մեծ է նրա դերը: Անորոշ հավասարումների, երկրաչափական պատկերների կառուցումների, ֆունկցիաների հետազոտման հարցերով հանդես է եկել հանրապետական և միութենական պարբերականներում: Երկար տարիներ եղել է շրջանի մաթեմատիկայի ուսուցիչների առարկայական հանձնաժողովի նախագահը, կրթության շրջանային բաժնի տեսուչը և մեթոդատը: Արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչմանն ու պարգևատրվել կառավարական պատվոգրերով, գովասանագրերով:



ՖԱՆՅԱՆ ՋԱԼԱԼ ՍՈՂՈՄՈՆԻ

(1925-1985)

Ջալալ Սողոմոնի Ֆանյան (ծնվ.՝ 1925, գ.Մոխրաքաղ-մահ.՝ 1985, Մոլդովիա), պատմական գիտությունների դոկտոր:

Ավարտել է Երևանի պետական համալսարանը: Գործուղվել է Մոլդովիա, աշխատանքի անցել Մոլդովիայի գիտահետազոտական ինստիտուտում:



ՅԱՆԿ

**ՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՑ ԱՆՈՒՆՆԵՐԻ,
ՈՐՈՆՑ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԳՐՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԻՆ ԶԻ ՀԱԶՈՂՎԵԼ ՀՎԱՔԱԳՐԵԼ**

- Հարությունյան Բագրատ Իվանի - բժշ.գ.թ. (գ.Թալիշ)
- Հարությունյան Աշոտ Իվանի- բժշ.գ.թ. (գ.Թալիշ)
- Սողոմոնյան Էդիկ Ասատուրի-բժշ.գ.թ. (գ.Թալիշ)
- Դալլաքյան Բագրատ Միմոնի- բժշ.գ.թ. (գ.Թալիշ)
- Ծիրունյան Արմենակ Գադանի - տնտ. գ.թ. (գ.Թալիշ)
- Դալլաքյան Ռոմանոս Հայրապետի - մանկ. գ.թ. (գ.Թալիշ)
- Բայունց Յուրիկ - գյուղ. գ.թ. (գ.Թալիշ)
- Ստեփանյան Մարատ Գուրգենի - տեխ. գ.թ. (գ.Թալիշ)
- Մովսիսյան Աշոտ Մովսեսի - ֆիզ.գ.թ. (գ.Թալիշ)
- Հարությունյան Էդուարդ Բագրատի - հաս.-քաղ. գործիչ (գ.Թալիշ)
- Պոլատով Էդուարդ Դմիտրիի - հաս.-քաղ. գործիչ (գ.Թալիշ)
- Ղահրամանյան Սլավիկ Արմիկի-հաս.-քաղ. գործիչ (գ.Թալիշ)
- Խալափյան Թեմիկ Երվանդի - հաս.-քաղ. գործիչ (գ.Թալիշ)
- Ստեփանյան Մարատ Գուրգենի - տեխ.գիտ.թ. (գ.Թալիշ)
- Մայիլյան Ռաֆիկ- դոկտոր, պրոֆեսոր (գ.Մեծ Շեն)
- Բաբայան Ջալալ - գյուղ. գ.դոկտոր (գ.Մեծ Շեն)
- Դանիելյան Շահեն Պողոսի- վաստակավոր բժիշկ (գ.Մեծ Շեն)
- Պողոսյան Լևոն - բժշ. գ.դոկտոր (գ.Մեծ Շեն)
- Պողոսյան Նելսոն - գիտ.թ.դոցենտ (գ.Մեծ Շեն)
- Պողոսյան Արամ- գիտ. թ. (գ.Մեծ Շեն)
- Պողոսյան Էդիկ - ֆիզմաթ գ.թ. (գ.Մեծ Շեն)
- Մայիլյան Սերգեյ - բժշ.գ. դոկտոր (գ.Մեծ Շեն)
- Պողոսյան Նելսոն - գիտ. թ.դոցենտ (գ.Մեծ Շեն)
- Դանիելյան Վաղարշակ - գիտ.թ. (գ.Մեծ Շեն)
- Դուկասյան Համլետ - գիտ.թ. (գ.Մեծ Շեն)
- Հովսեփյան Շավարշ - մտտոելի եռակի չեմպիոն (գ.Մեծ Շեն)
- Հակոբյան Համլետ - փիլ.գ.թ., դոցենտ (գ.Մաղավուզ)
- Սարգսյան Լենոր - տ.գ.թ. (գ.Մաղավուզ)
- Գրիգորյան Գրիգոր - գնդապետ (գ.Մաղավուզ)

Ղազարյան Արգար - ճարտարապետական գ.թ., ԽՍՀՄ ավտոնոմի-
ային ճանապարհների վարչության գլխավոր ինժեներ (գ.Մաղավուզ)

Գրիգորյան Գուրգեն-իրավաբան, բարձրագույն ռազմական ակադե-
միայի շրջանավարտ (գ.Մաղավուզ)

Ավետիսյան Վ. Ի.-ֆիզմաթ գ. դոկտոր (գ.Ծմակահող)

Սարուխանյան Կ.Գ.- ֆիզմաթ գ. թ. (գ.Ծմակահող)

Աբրահամյան Արմենակ -բժշ.գ.թ. (գ.Մատաղիս)

Ավանեսով Ռուբեն -բժշ.գ.թ. (գ.Մատաղիս)

Եղիզարյան Ռոզա -բժշ.գ.թ. (գ.Մատաղիս)

Մովսիսյան Սահակ -բժշ.գ.թ. (գ.Մատաղիս)

Մովսիսյան Գրիշա -ռազմական գործիչ (գ.Մատաղիս)

Մովսիսյան Լևոն - ռազմական գործիչ (գ.Մատաղիս)

Միրզոյան Էմիլ - գնդապետ (գ.Մատաղիս)

Մովսիսյան Ահարոն-գյուղ.գիտ.թ. (գ.Մատաղիս)

Աղաբեկյան Հենրիկ Բենիկի - տնտ.գ. դոկտոր ((գ.Վարդաձոր (Գյուլա-
բաղ))

Դանիելյան Բորիկ Զինավորի - երկր.գիտ.թ. (գ.Վարդաձոր)

Հովհաննիսյան Լևոն Միքայելի - պատմ.գիտ.թ. (գ.Վարդաձոր)

Աղաբեկյան Ասյա Ավանեսի - բժշ.գ.թ. (գ.Վարդաձոր)

Աղաբեկյան Սերգեյ Ավանեսի - տեխ.գ.թ. (գ.Վարդաձոր)

Միրզոյան Արմո - տեխ.գ.թ. ((գ.Վարնկաթաղ (Լյուլյասազ))

Միրզաբեկյան Նելլի- օտար լեզուների գ. դոկտոր (Լյուլյասազ)

Բեջանյան Ռաֆիկ-ֆիզմաթ գիտ. դոկտոր (Լյուլյասազ)

Ավանեսյան Անդրեյ Միքայելի-տեխ.գ.թ. (գ.Մոխրաթաղ)

Առուշանյան Փաշա Ասատուրի -ԽՍՀՄ պետականի սեկտորի վարիչ
(գ.Մոխրաթաղ)

Խոնդկարյան Նելլի Գարեգինի - բան.գ.թ. (գ.Մոխրաթաղ)

Իսրաելյան Ռոբերտ Իվանի-բժշ.գ.թ. (գ.Մոխրաթաղ)

Իսրաելյան Գրիշա Իսրայելի- ֆիզմաթ գ.թ. (գ.Մոխրաթաղ)

Հովսեփյան Վալերի Գեորգիի -տեխ.գ.թ. (գ.Մոխրաթաղ)

Ավագյան Ռոմա Սերգեյի-տեխ.գ.թ. (ք.Մարտակերտ)

Գասպարյան Պերճ Հարությունի-1918թ. Սևծովյան նավատորմի
օդաչու (ք.Մարտակերտ)

Եղիզարյան Թերեզա Կոլյայի-մարշալ Ռակասովսկու անձնական
գեկուցողը (ք.Մարտակերտ)

Հարությունյան Գրիգոր Սարգսի-ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր
գործիչ (ք.Մարտակերտ)

Նանագույան Լաուրա Հակոբի-բժշ.գ.թ. (ք.Մարտակերտ)

Աղաբեկյան Ռաֆիկ-ԽՍՀՄ բանակի գնդապետ ((գ.Այգեստան
(Չայլու))

Շահբազյան Ռաֆիկ-ինժեներ, նավթամշակման գործարանի տնօրենի
տեղակալ (գ.Չայլու)

Աղաբեկյան Ռուբիկ-ԽՍՀՄ բանակի գնդապետ (գ.Չայլու)

Հարությունյան Ջամիլ-չեկիստ (գ.Չայլու)

Բադալյան Լենոր-օդաչու (գ.Չայլու)

Սայիկյան Լյովա- օդաչու (գ.Չայլու)

Բաբայան Սուրեն-դրամատուրգ (գ.Չայլու)

Բաբայան Բուդդան-դերասան (գ.Չայլու)

Աբրահամյան Ռուբեն-վաստակավոր մանկավարժ (գ.Չայլու)

Շահբազյան Դարչո-վաստակավոր մանկավարժ (գ.Չայլու)

Աբրահամյան Յուրա - վաստակավոր բժիշկ (գ.Չայլու)

Իվիկյան Իմելս -ՌԳ վաստակավոր մանկավարժ (գ.Չայլու)

Խաչատրյան Ռուբեն -Լենինգրադի Հեղափոխության թանգարանի
տնօրեն (գ.Չայլու):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մոսունց Ա., Կենաց ծառեր - Ս. Մոսունց, Գիրք առաջին, Ստեփանակերտ, հեղ. հրատ., 2016, -1014 էջ:
2. Աղաջանյան Ա., Հաբերքի քաջարի զավակները, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2015, -432 էջ:
3. Արցախի պետական համալսարանի դասախոսները, Ստեփանակերտ, 2009, -168 էջ:
4. Բախչինյան Ֆ., Մեծ շենը շենացնող մեծերը, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012, -132 էջ:
5. Գաբրիելյան Դ., Խանյան Ա.Ա., Սարգսյան Ա.Ջ., Գիտության արցախածին աստղերը: 19-20-րդ դարեր: Համառոտ պատմություն/ ԼՂՀ ԿԳՆ Մ. Մաշտոց համալսարան: Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., 2011, -192 էջ:
6. Դաշտային հուսալիտալ, Մարտակերտ-Օմար, 1994թ. հունվար-մարտ» /Բունիաթյան Արցախ Ասլանի/, Վավերագրություն, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2009, -328 էջ:
7. Դավթյան Բ., 20-րդ դարի լավագույն մանկավարժները, Ստեփանակերտ, 2001, -124 էջ:
8. Կրթությունը Արցախում 405 - 2005թթ., Երևան, «Անտարես» հրատ., 2005, -476 էջ:
9. Հայագն Տ., Ղազարյան Գ., 1000 հայագրի գեներալներ, ծովակալներ, Երևան, 2009, -696 էջ:
10. Հայկական համառոտ հանրագիտարան, 4 հատորով, հատ. 1. Ա-Դ, Երևան, 1990, -768 էջ: Հատ. 2. Դ-Կ, Երևան, 1995, -768 էջ: Հատ. 3. Կ-Ն, Երևան, 1999, -896 էջ: Հատ. 4. Ն-Ֆ, Երևան, 2003, -972 էջ:
11. Հանրագիտարան, «Հայտիներ», Երևան, «Ամարաս» հրատ., 2001:
12. Մելքունյան Ա., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, -303 էջ:
13. Մեծ շենը և Թաթաղանք /Կառլեն Եսայան/, Վավերագրություն, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 2006, -160 էջ:
14. Ով ով է (Հայեր: Կենսագրական հանրագիտարան), 2 հատորով: Հատ. 1. Ա-Դ, Երևան, 2005, -728 էջ: Հատ. 2. Ե-Ֆ, Երևան, 2007, -740 էջ:
15. Սարգսյան Ա., Ներքին Հռաքաղ, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2014, -184 էջ:

16. Փառքի հուշամատյան: ԼՂՀ ազատագրական պայքար 1988-2009.- Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2009, -952 էջ:

17. Օհանջանյան Շ., Վերելքի ճանապարհին, Աղրբեջանի պետական հրատարակչություն, Բաքու, 1982, -150 էջ:

18. Օհանյան Շ., Արցախապատուն: Գիրք 4, Թալիշ: Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2015. -196 էջ + 40 էջ ներդիր:

19. Асрян А.Е, Герои армяне, Ереван, 2015, -360 с.

20. Саркисян А., Армяне - военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века, в 3-х томах. Т. 1, Ереван, 1998, -328 с.; Т. 2, Ереван, 2005, -444с.; Т. 3, Ереван, 2005, - 388 с.

21. Саркисян С.Т., Энциклопедия Арцах-Карабах, Санкт-Петербург, 2007, -626 с.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՉԵՐ

1. <http://www.anunner.com>
2. <https://hy.wikipedia.org>
3. <http://am.hayazg.info>
4. <http://findarmenia.org/arm/culture>
5. <http://www.ysu.am/persons>
6. http://www.armin.am/historyofarmenia/am/Encyclopedia_of_armenian_history

ԱՐՅԱՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ԱՐՅԱԽՅԻ ԱՆՎԱՆԻ
ԳՈՐԾԻՉՆԵՐ**

**ՄԱՐՏԱԿԵՐՏԻ
ՇՐՋԱՆ**

ԳԻՐՔ II

Սրբագրիչ՝

Լ. Միրզոյան, Ն. Ավագիմյան

Էջադրու՞ն՝

Թ. Հարությունյանի

Կազմի ձևավորումը՝

Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափը՝ 60x84¹/16,
ծավալը՝ 15.5 տպ. մանուկ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Գիգակ պլյուս» հրատարակչության տպարանում:
375000, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25
Հեռ. /+374/47946360, /+374/97302002 էլ. huagb՝ dizak-plus@mail.ru